613
15-98

ՄՈՍԿՎԱՅԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԲԱԺԻՆ

ՎԱՂ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ՄՈՍԿՎԱՅԻ ՄԱՐԶԱՅԻՆ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԽՍՀ ԱՌԺՈՂԿՈՄԱՏ

ՄՍՈՒՐՆԵՐ

ՀՐԱՀԱՆԳՉԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

613
Մ-98

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1938

ՄՈՍԿՎԱՅԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԲԱԺԻՆ

ՎԱՂ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ՄՈՍԿՎԱՅԻ ՄԱՐԶԱՅԻՆ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

29 JUL 2010

613
Ն-98 պր.

ՄՍՈՒՐՆԵՐ

ՀՐԱՀԱՆԳՉԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

314

ԱՌԺՈՂԿՈՄԱՏԻ ՀԽՍՀ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1937

04 JUL 2013

Ներկա ժողովածուի նյութերը մշակել և սիստեմատիզացիայի են ենթարկել վաղ մանկության առողջացման Մոսկվայի մարզային գիտահետազոտական ինստիտուտի մանկական սոցիալական հիգիենայի սեկտորի աշխատակիցների բրիգադը հետևյալ կազմով՝ Ն. Ի. Միլման, Մ. Ի. Նեյշտադ, Լ. Լ Բեգամ, Գ. Բ. Բրաուդե, Ցե. Ի. Աբրամովիչ, Վ. Բ. Կվաշա, Մ. Մ. Սամես, Ա. Ա. Ցայվուսիովիչ և Տ. Բ. Դիներ-Վլոսկո:

ՀՍՍՀ ... ՀՍՍՌ
2939
38

ԱՌԱՋԱԲԱՆ

Սանհիգիենիկ, բուժ. պրոֆիլակտիկ և մանկավարժական ռեժիմի ճիշտ կազմակերպումը մսուրներում հաստատ ուղին է այդ հիմնարկներում՝ վաղ հասակի մանուկների առողջացման, մահացության և հիվանդացումների իջեցման ուղղությամբ:

Ներկա առաջադրած «Մսուրներ» ժողովածուի խնդիրն է ծառայել վորպես մեթոդական ձեռնարկ մսուրների պրակտիկ աշխատողների, առաջին հերթին բժիշկների համար:

Ժողովածուի մեջ մտել են մսուրների բուժ. պրոֆիլակտիկ, մանկավարժական և կազմակերպչական-տնտեսական աշխատանքների կարևոր բաժինների վերաբերյալ հրահանգներն ու կան նագրությունները:

Հրահանգները հաստատված են Մոսկվայի մարզային առբաժնի մայրության և մանկության պահպանության վարչության կողմից:

Հրահանգների հիմք են ծառայել Մոսկվայի մարզային վաղ հասակի մանկան առողջացման գիտահետազոտական ինստիտուտի կողմից սիստեմատիզացիայի ենթարկված այն նյութերը, վորոնք հավաքված են [illegible] վորպես ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքի արդյունք, ինչպես ինստիտուտում, նույնպես և Մոսկվայի մարզի մանկական հիմնարկներում:

ՄՍՈՒՐՆԵՐԻ ՇԵՆՔԸ, ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ ՅԵՎ ՀԱՍՏԻՔՆԵՐԸ

ՄՍՈՒՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Մսուրների համար պետք է կառուցվեն հատուկ, առանձնացված շենքեր։

Մսուրների շենքերի նախագծման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը.

Մանկավարժական և բժշկա-սանիտարական աշխատանքները կանոնավոր հիմքերի վրա դնելու համար մսուրներում երեխաներին պետք է բաժանել խմբերի՝ յուրաքանչյուրում 15-ական յերեխա։ Այսպես՝ 100 յերեխա ունեցող մսուրները պետք է ունենան 6 խմբից վոչ պակաս, 60 յերեխա ունեցող մսուրները՝ 4 խումբ և այլն։

Ամեն մի խմբի համար հատկացվող շենքը պետք է բաղկացած լինի հետևյալ սենյակներից. ֆիլտր-զգեստարան, ընդունարան, խաղարան, ննջարան, պետքանոթարան (горшечная), *հարդարանքի սենյակ (ծծկերների համար վաննայի սենյակ), պատշգամբ։*

Մինչև 8 ամսական յերեխաների համար՝ խաղարան, պետքանոթարան և հարդարանքի սենյակ պետք չեն։

Յերեխաների խմբերը տեղավորվում են այնպես, վոր նրանք բոլորը ներքին անցքերով կապված լինեն տնտեսական գետեղարանների՝ խոհանոցի, սպիտակեղենի սենյակի և այլ նման սենյակների հետ։

Խմբերի սենյակները պետք է այնպես մեկուսացված լինեն, վոր մի խմբում վարակիչ հիվանդություններ յերևան գալու դեպքում համաճարակը չկարողանա տարածվել մյուս խմբերի մեջ։

Ամեն մի խումբ պետք է առանձին մուտք ունենա փողո-

ցից, վորտեղից մայրերը յերեխաների հետ անցնում են ընդունարանը։

Հիվանդ յերեխաների համար մսուրներին առանձին կցվում է մեկուսարան-ստացիոնար, վորը պետք է ունենա առանձին մուտք ու յելք փողոցից և նույնպես կապված լինի խոհանոցի հետ։

Մեկուսարանում մահճակալների թիվը պետք է կազմի մսուրների մահճակալների հաստիքային թվի 10%-ից վոչ պակաս։

Մսուրները պետք է գտնվեն առողջ, վոչ մալարիական վայրում։

Մսուրների կառուցման համար հատկացվող հողամասը պետք է լինի բավարար տարածությամբ, վորպեսզի, համաձայն բուժհիմնարկների համար սահմանված կանոնների, շինարարության տարածությունը լինի մսուրների համար հատկացված ամբողջ տարածության 15%-ից վոչ ավելի։

Յերեխաների սենյակները և պատշգամբները չպետք է լինեն շենքի հյուսիսային կողմում։

Ամենից ավելի հարմար է մսուրները կառուցել մի հարկանի, բայց թույլատրվում է կառուցել նաև յերկհարկանի մսուրներ։ Այդ դեպքում յերկրորդ հարկում տեղավորվում են ծծկեր և սողացող յերեխաների խմբերը։

Յեթե յերկրորդ հարկում տեղ չի լինում բոլոր խմբերի համար, ապա վերևի հարկում տեղավորվում են մինչև 8 ամսական յերեխաները և 2 տարեկանից բարձր հասակի յերեխաները։

Մսուրի շենքում բացի յերեխաների սենյակներից, անհրաժեշտ են նաև հետևյալ շենքերը. բժշկի առանձնասենյակ, սենյակներ՝ մաքուր և կեղտոտ սպիտակեղենի համար, խոհանոց, մառան, սենյակ՝ անձնակազմի համար։

ԱՌԱՆՁԻՆ ՇԵՆՔԵՐԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԸ

Զգեստարան-ֆիլտրը պետք է լինի լուսավոր և այնպիսի տարածությամբ, վոր յուրաքանչյուր յերեխային ընկնի 0,7 քառ. մետր։

Զգեստարանում անհրաժեշտ է բոքս շինել 3—4 քառ. մետր

տարածությամբ՝ հիվանդ յերեխաներին մինչև բժշկի քննելը մեկուսացնելու համար։

Ծծկեր խմբի ընդունարանը կարելի յե միացնել կերակրելու համար հատկացված սենյակի հետ այն պայմանով, վոր ընդունարանի տարածությունն ավելացվի մինչև 18 քառ. մետր։

Ընդունարանում անհրաժեշտ է պատրաստել պատի պահարաններ՝ տնային հագուստը պահելու համար և լվացարան դնել՝ ձեռքերը լվանալու համար։

Հարդարանքի սենյակը պետք է լինի 12 քառ. մետր տարածությամբ. այդտեղ տեղավորում են յերկու ցածր լվացարան և դուշը։

Մինչև մեկ տարեկան յերեխաների համար հարկավոր է վաննայի սենյակ 8 քառ. մետր տարածությամբ։

Պետքանոցթարանը պետք է լինի լուսավոր՝ լավ ոդափոխվող սենյակ 10 քառ. մետր տարածությամբ, խեցակով (առանց նստոցի)։

Հարդարանքի սենյակը (туалетная) կարելի յե միացնել պետքանոցթարանի հետ 18 ք. մետր տարածությամբ մի սենյակի մեջ, վորը մինչև առաստաղը պետք է բաժանված լինի ապակյա միջնապատով։

Խաղարանը պետք է լինի այնպիսի մեծության, վոր մեկ տարեկանից բարձր յուրաքանչյուր յերեխային ընկնի 3,5 ք. մ. տարածություն և 8 ամսականից մինչև 12 ամսական ամեն մի յերեխային՝ 3 քառ. մետր տարածություն։

Դռները պետք է լինեն յերկփեղկ և, ինչպես պատուհանները, ներկված սպիտակ գույնով։

Պատուհանների լուսական մակարդակը պետք է լինի հատակի մակարդակի $1/5$—$1/7$ չափ։ Ոդափոխության համար բոլոր պատուհաններում պետք է վերնափեղկեր լինեն։

Ննջարանի տարածությունը վորոշվում է՝ յուրաքանչյուր յերեխային 2,5 քառ. մ. տարածության հաշվով։

Ննջարանները պետք է ունենան մեկական կամ յերկուական պատի պահարաններ՝ սպիտակեղեն և հագուստ պահելու համար։

Մինչև 8 ամսական յերեխաների ննջարանի տարածությունը վորոշվում է ամեն մի յերեխայի 3—5 քառ. մետր տարածության հաշվով, վորովհետև նրանք խաղարան չունեն։

Ծծկեր յերեխաների ննջարաններում դրվում է մեծ լվացարան՝ յերեխաների լվացման համար։

Բոլոր մանկական սենյակների բարձրությունը պետք է լինի 3,2 ք. մետրից վոչ պակաս։

Մանկական սենյակների դասավորման համար անհրաժեշտ է նախատեսել հետևյալ կարգը.

Ընդունարանը հաղորդակցում է հարդարանքի սենյակի և խաղարանի հետ.

Հարդարանքի սենյակը գտնվում է պետքանոթարանի կողքին և հաղորդակցում է այդ սենյակի, խաղարանի և ննջարանի հետ։

Պատշգամբը տեղավորվում է ննջարանի կողքին և նրա տարածությունը վորոշվում է ամեն մի յերեխային 2,5—3 քառ. մ. տարածության հաշվով։

Պատշգամբը մի կողմից դրկից պետք է լինի մսուրների շենքին, մյուս յերեք ազատ կողմերը պետք է ունենան լայն բացվող պատուհաններ։

Պատշգամբը պետք է ունենա առաստաղ և տանիք՝ ամառը գերտաքացումից պաշտպանվելու համար։

Պատշգամբի բարձրությունը պետք է լինի 3 մետր, լայնությունը՝ առնվազն 6 մետր։

Պատշգամբի առաջ պետք է գտնվի մի սենյակ (6 ք. մ)՝ խաղալիքներ և տաք իրեր պահելու համար։

Սանատորիական խմբերում պատշգամբը տաքացվում է։

Մեկուսարան-ստացիոնարը բաղկացած է հետևյալ սենյակներից.

1. զգեստարաններ՝ առանձին մուտք ու յելքով, յուրաքանչյուր յերեխային 0,7 ք. մ. տարածության հաշվով.

2. ընդունարան 12—15 ք. մ.՝ մեկ կամ յերկու բոքսով.

3. բոքսերով պալատ՝ հիվանդ յերեխաների համար.

4. տնտեսական սենյակ 12 ք. մ. տարածությամբ.

5. վաննայի սենյակ.

7. արտաքնոց՝ անձնակազմի համար.

7. առանձին մուտք ու յելք ունեցող մի փոքր բոքս։

Բոքսի լայնությունը՝ 1,8 մ., խորությունը՝ 2 մ., միջնապատի բարձրությունը՝ 2 մետր։

Ընդունարանում պետք է լվացարան լինի։

Մսուրի շենքի տնտեսական մասում գտնվում են. սենյակ՝ կվարցային լամպի համար 15 ք. մ. տարածությամբ, բժշկի առանձնասենյակ՝ 10—12 ք. մ., սենյակ՝ անձնակազմի համար 10—12 ք. մ. տարածությամբ, բոլոր խմբերի համար՝ ընդհանուր խոհանոց՝ մթերքները լվանալու և կերակուր պատրաստելու բաժանմունքներով 25—35 քառ. մետր տարածությամբ, մառան խոհանոցի կողքին 10 ք. մ տարածությամբ, սպիտակեղենի սենյակ՝ մաքուր սպիտակեղենի համար՝ 10—12 ք.մ. տարածությամբ, սպիտակեղենի սենյակ՝ կեղտոտ սպիտակեղենի համար՝ 8 ք.մ. տարածությամբ. վերջինս կարող է տեղավորվել ներքնահարկում. սպիտակեղենը իջեցվում է իջանցքով։

Մսուրներին կից անհրաժեշտ է սարքավորել լվացքատուն չորանոցի հետ միասին 18—20 ք. մ. ընդհանուր տարածությամբ։

Լվացքատունը ներքնահարկում չպետք է լինի։ Տնտեսական կարիքների համար ծառայող բոլոր սենյակները պետք է կենտրոնացած լինեն մի տեղում, առաջին հարկում։

Մսուրի համար շենք կառուցելիս անհրաժեշտ է նախատեսել առանձին տեղ փայտ պահելու համար, սառցարանի համար, կառք և սահնակ պահելու, ինչպես և բակի այլ կառուցումների տեղ։

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԱՆԵՐ ՄՈՍԿՎԱՅԻ ՄԱՐԶԻ ՅԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՅԵՎ ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ՀԱՐՄԱՐԵՑՎՈՂ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՆԿԱՄՍՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հաստատել է Մոսկվայի մարզի բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների պատգամավորների խորհրդի գործադիր Կոմիտեյի նախագահությունը 1935 թ. հունվարի 29-ի № 117 վորոշումով։

1. Արտադրական ձեռնարկություններին և խորհտնտեսություններին կից վոչ հատկապես մսուրի համար կառուցված շենքը մսուրի համար հարմարեցնելը, մսուրները բացելը ինչպես և այն ուրիշ շենք փոխադրելը, կարող է տեղի ունենալ միայն պետսանտեսչության և Մոսկվայի մարզի առողջբաժնի մայրության

և մանկության պահպանության վարչության թույլտվությամբ։

Մսուր բացելու համար թույլտվություն ստանալիս պետք է ներկայացնել.

ա) շենքի նախագիծը՝ բացատրագրով.

բ) տնամերձ հողամասի նախագիծը.

գ) տեղական հանձնաժողովի (շրջանային սանիտարական տեսչության ներկայացուցիչների, մայրության և մանկության պահպանության տեսչի և միկրոմանկաբան բժշկի մասնակցությամբ) կատարած հետազոտության և եզրակացության ակտը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Մսուրների նոր շենքեր և նախագծերի հաստատումը և նոր շենքերի ընդունումը կատարվում է սահմանված ընդհանուր կարգով։

2. Մսուրների համար հարմարեցվող շենքերում առժողկոմատի և շինարարական նախագծման նորմաներն ապահովելն անհնարին լինելու դեպքում, այդ նորմաները պակասեցնել թույլատրվում է հետևյալ սահմաններում.

ա) բարձրությունը թույլ է տրվում 2,8 մետրից ոչ պակաս, մանկական սենյակների նորմալ տարածություն լինելու դեպքում։

բ) խաղարանի մեծությունը 3,0 ք. մ. յուրաքանչյուր երեխային.

ննջարանի	»	2,0	»	»	»
պատշգամբի	»	2,5	»	»	»

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Տարածության հիշյալ նորմաները թույլատրվում են միայն այդ երեք էլեմենտների՝ խաղարանի, ննջարանի և պատշգամբի առկայության դեպքում։

գ) Ննջարանների համար առանձին շենքեր հատկացնելն անհնարին լինելու դեպքում թույլատրվում է միացնել այն խաղարանների հետ, բայց վերջիններիս տարածությունը համապատասխան կերպով մեծացնելու պայմանով և այն հաշվով, որ յուրաքանչյուր երեխային ընկնի ոչ պակաս, քան 4 քառ. մետր։ Միացնել թույլատրվում է ապակյա պատշգամբ լինելու դեպքում (ամեն մի երեխային 2,5 ք. մ. տարածություն) և այն պայմանով, որ այդ մասը չօգտագործվի երեխաների ամբողջ օրվա սպասարկման համար։

դ) Առանց պատշգամբի, միայն խաղարան և ննջարան լինելու դեպքում, վերջիններիս մեծությունը պետք լինի. խաղարանինը՝ 3,0 ք. մետրից ոչ պակաս և ննջարանինը՝ 2,25 քառ. մետրից ոչ պակաս — յուրաքանչյուր երեխայի համար։

Ծծկեր հասակի երեխաների բաժանմունքի տարածությունը յուրաքանչյուր երեխայի համար պետք է լինի 4,0 քառ. մետր։

3. Հարմարեցվող շենքերում թույլատրվում է մեկ ընդունարան 2 խմբի համար, ամեն մի երեխային 0,5 ք. մ. տարածության հաշվով պայմանով, որ անպայման ֆիլտր ու բոքս լինեն, որոնք չեն մտնում ընդունարանի տարածության հաշվի մեջ։

Միացում թույլատրվում է երկու բարձր խմբերի կամ սողացողների ու ծծկերների խմբերի հետ։

4. Հարդարանի սենյակը և պետքանոթարանը թույլատրվում է միացնել մի շենքում, որը պետք է ունենա 12 ք. մ. ոչ պակաս տարածություն։

5. Բնակելի շենքերում տեղավորված մսուրի մահճակալների թիվը չպետք է 45-ից ավելի լինի. այսինքն՝ այդպիսի մսուրը պետք է սպասարկի 500—700 մարդ բնակչություն ունեցող բնակելի շենքեր։

6. Մսուրների համար հարմարեցվող շենքերը, որպես մինիմում, պետք է ապահովված լինեն մեկուսարանով՝ հիվանդացած երեխաներին ժամանակավորապես տեղավորելու համար։

Մեկուսարանը պետք է ունենա ոչ պակաս, քան երկու փակ բոքս։

7. Այն դեպքերում, երբ շենքի պայմանները հնարավորություն են տալիս մեկուսարան ստացիոնարն առանձնացնել, վերջինս պետք է կոմպլեկտվի հետևյալ պահանջների համաձայն. մեկուսարանը կոմպլեկտվում է մսուրներում եղած մահճակալների ընդհանուր թվի 10%-ի հաշվով.

Մեկուսարանը պետք է ունենա՝

ա) 1—2 բոքսացրած սենյակ այն հաշվով, որ ամեն մի երեխային ընկնի 5 քառ. մետր տարածություն.

բ) առանձին մուտք ու կլեքով փակ բոքս 6 ք. մ. տարածությամբ.

գ) ընդունարան 7 ք. մ. տարածությամբ.

դ) վաննայի սենյակ.

ե) արտաքնոց.

զ) սպասարկման սենյակ (6 ք. մ. ոչ պակաս).

8. Հարմարեցվող շենքերում պետք է նախատեսվի շենք՝ խոհանոցի համար, մթերքների մառան, սենյակ՝ անձնակազմի համար, բժշկի առանձնասենյակ, մաքուր և կեղտոտ սպիտակեղենի սենյակներ, մաքրման առարկաներ պահելու սենյակ։

Բոլոր սենյակների պատուհանները պետք է վերնափեղկեր ունենան.

9. Մսուրները պետք է ապահովված լինեն մառանով, սառցարանով և սպիտակեղենը լվանալու ու չորացնելու համար հատուկ շենքով (այն դեպքում, երբ սպիտակեղենը լվացվում է մսուրում).

Լվացքատուն պետք է լինի ամեն մսուրում և որպես մինիմում՝ բաղկացած լինի 2 սենյակից (լվացքարան և չորանոց)։

10. 60 մահճակալ կարողությունից բարձր մսուրների համար պարտադիր է կոյուղի և ջրմուղ անցկացնել։ Ջրմուղի և կոյուղու ռակայության դեպքում մսուրը պարտադիր կերպով պետք է միացվի տեղական ցանցին, կամ պետք է ունենա մաքրման սեփական կառուցումներ։ Կոյուղի չունեցող մսուրների շենքերը պետք է ապահովված լինեն համապատասխան կահավորումով, սանիտարական պահանջներին համապատասխանող արտաքնոցներով և ազդահորերով։

11. Մսուրը պետք է ապահովված լինի հատուկ առանձնացված կանաչապատ տարածությամբ։

12. Ձեռնարկություններին և խորհտնտեսություններին կից նոր բացված մսուրներ հայտաբերելու դեպքում, երբ այդ մսուրների բացումը տեղի չի ունեցել առանց այստեղ շարադրված սանիտարական կանոններն ու նորմաները պահպանելու, շրջանային սանիտարական բժիշկները, համապատասխան ձեռնարկությունների ղեկավարները, որոնք չեն կատարել մայրության և մանկության պահպանության տեսչի և սանիտարական հսկողության մարմինների կարգադրությունները, ինչպես և մսուրն սպասարկող բժիշկները պետք է դատական պատասխանատվության կանչվեն սանհսկողության վերաբերյալ օրենսդրության հիման վրա։

13. Առողջապահության օրգանները շրջանային պետսանտեսչության հետ պետք է մահճակալների հաստիքային թիվ սահմանեն գոյություն ունեցող բոլոր մսուրների համար (թե քաղաքներում և թե արդյունաբերական ձեռնարկություններին և թե խորհտնտեսություններին կից) յուրաքանչյուր երեխայի համար բերված սան. նորմաների համեմատ։

Եթե երեխաների թիվը գերազանցում է սահմանված նորմաները, մսուրների վարիչները և բժիշկները պարտավոր են՝

ա) կրճատել երեխաների թիվը մեծացածներին դուրս գրելու միջոցով, համապատասխան կերպով սահմանափակել նորերի ընդունելությունը.

բ) ձեռնարկության գործարկոմի և մսուրային կոմիտեի ներկայացուցիչների հետ միասին որոշել մսուրի քիչ կարիք զգացող երեխաների թիվը՝ նրանց աստիճանաբար դուրս գրելու համար, ժամանակին նախազգուշացնելով ծնողներին.

14. Մսուրների վարիչները և բժիշկները պետք է ժամանակին պահանջներ ներկայացնեն տնտեսվարներին անհրաժեշտ վերակահավորման և նորոգման աշխատանքների վերաբերյալ սանիտարական նորմաները կատարելու մասին, իսկ այդ պահանջները չկատարելու դեպքում պետսանտեսչության առաջ հարց դնել անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու համար։

15. Ֆաբրիկաների և գործարանների վարչություններին, ինչպես և գործարկոմներին արգելվում է կարգադրություններ անել մսուրը խտացնելու մասին, թեկուզ այդ վերաբերի նվազագույն թիվ կազմող երեխաների։

16. Առողջապահության շրջանային բաժինները լուրջ պատասխանատվություն են կրում այս որոշման մեջ նշված պահանջների կատարման համար։ Այն դեպքերում, երբ այս որոշումից բխող նրանց կարգադրությունները փոխվեն կամ նրանց կատարման համար արգելքներ հարուցվեն ֆաբրիկա-գործարանային կազմակերպությունների կողմից, շրջառաժինները պարտավոր են անմիջապես հարցը դնել շրջանի ղեկավար կազմակերպությունների առաջ։ Աջակցություն չգտնելու դեպքում պետք է այդ մասին հայտնել առողջապահության վերադաս մարմիններին։

Մշտական տիպի մսուրների համար կոշտ յեվ փափուկ գույքի նորմաներ

№ №	Առարկաների անունները	Մսուրներ 50 յերեխա	80 յերեխա	100 յերեխա
1	Բաք 12 լիտրանոց	1	1	2
2	» պղնձե 36 »	1	1	2
3	» ցինկապատ 72 »	1	1	2
4	Կաթսաներ կոմպլեկտ 36 »	1	1	1
5	» » 18 »	1	1	2
6	» » 10 12 »	1	1	1
7	» » 3—5 »	1	1	2
8	» » 1—2 »	2	2	3
9	Սոտեյնիկ » 1–3 »	2	2	2
10	» » ովալ	1	1	2
11	Դրուշլակ մեծ	1	1	2
12	» միջակ	1	1	2
13	Ֆրանսիական քամիչներ	1	1	1
14	Քափկիրներ	1	2	3
15	Սուպի գդալներ	1	2	2
16	Շերեփներ	1	2	2
17	Թիակներ՝ ձկան	1	1	1
18	Շերեփ-գդալներ մեծ	1	1	1
19	Քափկիրներ մեծ	1	1	2
20	Յերկաթե թերթեր չկլայեկած	1	1	1
21	» » կլայեկած	1	2	2
22	Թավաներ կլայեկած	1	1	1
23	Թավաներ մեծ	2	3	4
24	» միջակ	1	1	2
25	Մատուցարան մեծ	1	2	3
26	» միջակ	4	5	6
27	Քերիչներ	3	4	4
28	Քերիչներ լվացքի համար	2	4	5
29	Գդալներ դեսերտի	1	2	2
30	» թեյի	50	60	80
31	» լցնելու	50	60	80
32	Սկուտեղ յերկգույն	4	5	6
33	Բիդոն կաթի համար՝ 25 լիտրանոց	2	4	4
34	» » » 16 »	—	1	1
35	Կավե բանկա՝ խմորի համար	1	2	2
36	Փայտե գդալներ	1	2	2
37	Թեյաման՝ ջուր յեռացնելու համար 12 լ.	2	4	5
38	» թեյ յեփելու համար 1 լիտ.	2	3	3
39	Գիշերային պետքանոթ	1	2	2
40	Վաննաներ	40	70	80
41	Կերոսինկա	1	2	2
42	Պրիմուս	1	1	1
43	Մսի մեծ դանակներ	1	1	1
44	Միսը մանրացնող դանակներ	1	1	1
45	Եմալապատ մեծ ամաններ	1	1	1
46	Մսաղաց № 18	1	1	2

№ №	Առարկաների անունները	Մսուրներ 50 յերեխա	80 յերեխա	100 յերեխա
47	Բաք խուփով՝ կեղտոտ սպիտակեղենի համար	4	5	7
48	Դանակներ հացի համար	3	3	3
49	Հավանգ պղնձե	1	1	1
50	Հոշելու դանակներ	1	1	1
51	Մանկական կշեռք	1	2	2
52	Կացին	1	1	1
53	Ցինկապատ տաշտակ	2	2	2
54	Դանակներ արմտիքի համար	1	2	2
55	Ճեղքիչ կացին	1	1	1
56	Դույլեր	10	10	10
57	Սեղանի կշեռք	1	1	1
58	Տասնորդական կշեռք	1	1	1
59	Սղոց	1	1	1
60	Հատակ մաքրելու խոզանակ	3	5	7
61	Յերկաթե արկղներ մսերի համար	2	2	2
62	Հարթուկներ սալօջախի	2	2	2
63	» դուխավոր	2	2	2
64	Ժամացույց	3	3	3
65	Կրակամարիչ	2	2	3
66	Ցինկապատ կոնքեր (ամաններ լվանալու համար)	3	4	5
67	«Տիտան»	—	1	1
68	Ափսեներ խոր	40	60	80
69	» մանր	40	60	80
70	» դեսերտի	40	60	80
71	Կավե ափսեներ	15	20	40
72	Սկուտեղներ մեծ	3	5	5
73	Կճուճ	3	5	5
74	Փոքր սկուտեղներ	40	60	80
75	Թեյի չաշկաներ	40	60	80
76	Սուպաման մեծ	3	5	5
77	Սոուսաման	3	3	5
78	Ափսեներ կարկանդակի համար	3	5	5
79	Կաթնամաններ	3	5	5
80	Սուպաման միջակ	3	5	5
81	Աղաման	4	4	5
82	Սալաթամաններ	3	5	5
83	Բաժակներ	15	30	30
84	Գրաֆին ջրի համար	5	5	5
85	Զանազան մեծության վազեր	4	6	8
86	Բանկաներ կափարիչով՝ բամբակի համար	3	4	5
87	Ջերմաչափ ջրի համար	3	4	5
88	Սենյակի ջերմաչափ	3	4	5
89	Ջերմաչափ մաքսիմալ	4	6	8
90	Շշեր խցանով՝ կաթի համար	30	40	50
91	Ջագար	1	2	2

№ №	Առարկաների անունները	Մսուրներ 50 յերեխա	Մսուրներ 80 յերեխա	Մսուրներ 100 յերեխա
92	Տաշտակ լվացքի համար	2	2	3
93	Հատոցներ	1	1	1
94	Դեղորայքի պահարաններ	1	1	1
95	Դարակներ ծաղիկների համար	5	5	5
96	Դեղապահարաններ պատի	3	5	7
97	Գրանակ	2	2	2
98	Նստարաններ	5	7	10
99	Նստարաններ ջրկոր	2	2	2
100	Բազմոցներ յերեխաների համար	4	5	8
101	Բարուրասեղաններ	3	6	6
102	Նստարան մայրերի համար	4	5	8
103	Մահճակալներ կողմնային պատերով	30	50	60
104	Մահճակալներ առանց կողմնային պատերի	20	30	40
105	Բաշխիչներ	20	40	60
106	Լվացարաններ	4	6	7
107	Մանեժներ	1	2	2
108	Աթոռներ	24	24	24
109	Սեղաններ մանկական 4—6	6	10	13
110	Աթոռակներ	40	50	70
111	Սեղաններ կտրուճներով՝ ծծկեր և սողացող յերեխաների համար	2	3	5
112	Բազկաթոռ մանկական	10	20	20
113	Բուֆետ մանկական	2	3	4
114	Կախարան սրբիչների համար՝ 17 կեռիկով	2	3	4
115	Պահարան սպիտակեղենի համար	3	4	5
116	» մանկական	3	4	5
117	» մթերքների համար	2	3	3
118	Ջամբյուղ սպիտակեղենի համար՝ բռնակներով	2	3	3
119	Կողապահարանիկներ մեկուսարանում	5	8	10
120	Փակ սեղաններ խոհանոցի համար	1	1	1
121	» » ամանեղենի համար	3	3	3
122	Թաս՝ ամանեղենը լվանալու համար	15	20	25
123	Կախարաններ սավանների համար	3	4	5
124	Գրասեղաններ	1	1	1
125	Գրասենյակային սեղաններ	2	2	3
126	Հասարակ սեղաններ	4	6	6
127	Պահարաններ բաժանմունքներով՝ 15 յերեխայի համար	3	5	6
128	Կախարաններ վերարկուների համար՝ 10 յերեխայի համար	3	5	7
129	Հանդերձարան անձնակազմի համար	1	2	2
130	» ծնողների համար	1	2	3

Կոշտ կահույքի նորմաները մեկ մսուրային մահճակալի համար

Մահճակալներ	1,1	Նստարան մեծերի համար	0,3
Ծալովի մահճակալներ	1,0	Բազմոցներ մանկական	0,03
Կողապահարանիկներ մեկուսարանների համար	0,1	Մարզարան	0,04
Կախարաններ սրբիչների համար	0,1	Պահարաններ բաժանմունքներով յերեխաների անձնային զգեստների համար	0,07
Առմահճակալային աթոռներ	1,0	Պահարաններ մեծերի զգեստների և խալաթների համար	0,07
Մանկական սեղաններ	0,2	Պահարաններ մանկական ամանեղենի համար	0,07
Բոքսացված ընդունարանների սեղաններ	0,2	Պահարաններ դեղորայքի համար	0,01
Հարդարանքի (տուալետի) սեղաններ	0,1	» պետքանոթների համար	0,07
Սեղաններ կշեռքների համար	0,02	Բաք՝ սպիտակեղենի համար	0,07
» խմբերում	0,07	Լվացարան՝ մեծերի համար	0,07
» գրանցումների համար	0.07	Լվացարաններ մանկական	0,07
» սովորական	0,07	Պահարաններ մանուկների վերնազգեստների համար	0,07
Խոհանոցային սեղաններ	0,02	Լեռնակներ	0,06
Աթոռներ մանկական	0,7	Պահարան խոհանոցի ամանեղենի համար	0,01
» մեծերի համար	0.3		
Բազկաթոռներ	0,15		

Յերեխայի սպիտակեղենի նորմաներ արդյունաբերական մսուրներում

Սառը բարուրներ	14	Վերմակ բամբակով	0,25
Տաք »	3	Վերարկու տաք	1
Փոքր բաճկոնակներ	3	» միջսեզոնային	1
Լիզը բաց շապիկներ	2	Խալաթներ ֆլանելից	1
Շապիկներ	4	Ռեյտուզներ	1
Գիշերային շապիկներ	0,75	Փոքր բաճկոններ ծծկերների համար, կիմոնո	6,0
Լիֆչիկներ	2	Տաք գլխարկներ կամ սաղավարտներ	0,7
Վարտիքներ	5	Թաշկինակներ	3,5
Կոստյումներ տղաների համար՝ սատինից և բամբակեղենից	1,5	Պանամկաներ	1
Սավաններ	4	Գուլպա	3 զույգ
Վերմակասավաններ	2,5	Կոշիկներ	1 »
Սրբիչներ	3	Կրկնակոշիկներ	0,7
» թավոտ	2	Կոճյակներ	0,7
Ամառային վարտիքներ բրետելներով	4	Բրդե ձեռնոցներ	0,7
Բարձի յերեսներ՝ տակի	2	Շարֆեր	0,7
» » վրայի	4	Սանդալներ	0,7
Պարկ բամբակով՝ քնելու համար	1	Առմահճակալային գորգեր	0,5
Ներքնակի պարկեր	1,2	Մոմլաթե կրծքակալներ	0,5
Տաք վերմակ բայկայից	1,5	Անձեռոցներ	1
Վերմակ ամառային	1,2		

1939

Բժշկական սարքավորման նորմաները մեկ մահճակալի համար

Ջերմաչափներ մաքսիմալ 0,3
Բանկաներ շպատելների (թանակների) համար 0,07
Մկրատներ 0,07
Նշտարներ 0,02
Ունելիներ (պինցետներ) . . . 0,1
Զոնդ 0,02
Ներարկիչ 0,04
Կվարցե լամպ 0,01
Կշեռք 0,02
Հասակաչափ 0,02
Գդալներ 0,15
Ջեռոցներ 0,03
Բալոն հոգնայի համար 0,15
Տակը դնելու բոլորակներ . . . ,02
Կափարիչով գավաթներ բորային լուծույթի համար . . . . . . ,15
Ջերմաչափ սենյակի 0,2
Փոքր վաննաներ 0,1
Բոբրովի ապարատ 0,01
Տակը դնելու մոմլաթ 0,75
Բանկաներ բամբակի համար . . 0,07
Կապույտ լամպ ռեֆլեկտորով . . 1,0

Մոսկվայի մարզի արդյունաբերական ձեռնարկներին կից մսուրներն ապասարկող անձնակազմի որինակելի հաստիք

	Վոչ անընդհատ վեցօրյակով աշխատելու դեպքում						Անընդհատ վեցօրյակով աշխատելու պայմաններում					
	Մսուրի համար հարմարեցված շենքերում			Մսուրի համար կառուցված հատուկ շենքերում			Մսուրի համար հարմարեցված շենքերում			Մսուրի համար կառուցված հատուկ շենքերում		
	10 ժամ	14 ժամ	Շուրջօրյա	10 ժամ	14 ժամ	Շուրջօրյա	10 ժամ	14 ժամ	Շուրջօրյա	10 ժամ	14 ժամ	Շուրջօրյա
25—40 մահճակալ ունեցող մսուրներ												
Բժիշկ	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5
Տնտեսվար	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Քույր-հրահանգչուհի	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Պատրոնաժ քույր .	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Քույրեր	3	4	5	3	4	5	4	5,25	6,25	4	5,25	6,25
Դայակներ	2	3	4	2	3	4	2,5	4	5	2,5	4	5
Հավաքարարուհիներ	—	—	—	—	—	—	1	0,5	0,5	1	0,5	0,5
Խոհարարուհիներ .	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Աման լվացողներ .	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Սևագործ բանվորներ	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Պահակ	—	—	—	—	—	—	—	—	-	—	—	—
Վառարան վառող .	--	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Լվացարարուհիներ	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Հաշվետար	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Հանդերձապահուհի	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Ընդամենը հաստիքային միավորներ	10,5	12,5	14,5	10,5	12,5	14,5	13	15,25	17,25	13	15,25	17.25

45—60 մահճակալ ունեցող մսուրներ

	Ոչ անընդհատ վեցօրյակով աշխատելու դեպքում						Անընդհատ վեցօրյակով աշխատելու դեպքում					
	Մսուրի համար հարմարեցված շենքերում			Մսուրի համար կառուցված հատուկ շենքերում			Մսուրի համար հարմարեցված շենքերում			Մսուրի համար կառուցված հատուկ շենքերում		
	10 ժամ	14 ժամ	Շուրջօրյա	10 ժամ	14 ժամ	Շուրջօրյա	10 ժամ	14 ժամ	Շուրջօրյա	10 ժամ	14 ժամ	Շուրջօրյա
Բժիշկ	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5
Տնտեսվար	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Բույր-հրահանգչուհի	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Պատրոնաժ քույր .	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Քույրեր	5	6	7	5	6	7	6,5	8	8,75	6,5	8	8,75
Դայակներ	3	4	5	3	4	5	4	5	6,25	4	5	6,25
Համաքարարուհիներ	1	1	1	1	1	1	2	2,25	2,25	2	2,25	2,25
Խոհարարուհիներ .	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Աման լվացողներ .	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Սևագործ բանվորներ	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Պահակ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Վառարան վառող .	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Լվացարարուհիներ	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2
Հաշվետար	1/3	1/3	1/3	1/3	1/3	1/3	1/3	1/3	1/3	1/3	1/3	1/3
Հանդերձապահուհի	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Ընդամենը հաստիքային միավորներ	15,5 և 1/3	17,5 և 1/3	19,5 և 1/3	15,5 և 1/3	17,5 և 1/3	19,5 և 1/3	19 և 1/3	21,75 և 1/3	23,75 և 1/3	19 և 1/3	21,75 և 1/3	23,75 և 1/3

65—85 մահճակալ ունեցող մսուրներ

	Ոչ անընդհատ վեցօրյակով աշխատելու դեպքում						Անընդհատ վեցօրյակով աշխատելու դեպքում					
	Մսուրի համար հարմարեցված շենքերում			Մսուրի համար կառուցված հատուկ շենքերում			Մսուրի համար հարմարեցված շենքերում			Մսուրի համար կառուցված հատուկ շենքերում		
	10 ժամ	14 ժամ	Շուրջօրյա	10 ժամ	14 ժամ	Շուրջօրյա	10 ժամ	14 ժամ	Շուրջօրյա	10 ժամ	14 ժամ	Շուրջօրյա
Բժիշկ	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Տնտեսվար	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Բույր-հրահանգչուհի	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Պատրոնաժ քույր .	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Քույրեր	7	8	9	8	9	10	9,5	10,5	11,25	10,5	11,5	12,25
Դայակներ	5	6	7	6	7	8	6	7,5	8,75	7	8,5	9,75
Համաքարարուհիներ	1	1	1	1	1	1	2	2	2	2	2	2
Խոհարարուհիներ .	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Աման լվացողներ .	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Սևագործ բանվորներ	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Պահակ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Վառարան վառող .	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5
Լվացարարուհիներ	2,5	2,5	2,5	2,5	2,5	2,5	3,5	3,5	3,5	3,5	3,5	3,5
Հաշվետար	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5
Հանդերձապահուհի	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Ընդամենը հաստիքային միավորներ	24,5	26,5	28,5	26,5	28,5	30,5	30	32,5	34,5	32	34,5	36,5

100—120 մահճակալ ունեցող մսուրներ

	Վոչ անընդհատ վեցօրյակով աշխատելու դեպքում						Անընդհատ վեցօրյակով աշխատելու դեպքում					
	Մսուրի համար հարմարեցված շենքերում			Մսուրի համար կառուցված հատուկ շենքերում			Մսուրի համար հարմարեցված շենքերում			Մսուրի համար կառուցված հատուկ շենքերում		
	10 ժամ	14 ժամ	Շուրջօրյա	10 ժամ	14 ժամ	Շուրջօրյա	10 ժամ	14 ժամ	Շուրջօրյա	10 ժամ	14 ժամ	Շուրջօրյա
Բժիշկ	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Տնտեսվար	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Քույր-հրահանգչուհի	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Պատրոնաժ քույր .	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Քույրեր	9	12	14	10	13	15	11	14	17,5	12	15	18,5
Դայակներ	6	7	8	7	8	9	7	9	10	8	10	11
Հավաքարարուհիներ	1	1	1	1	1	1	2	2	2	2	2	2
Խոհարարուհիներ .	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Աման լվացողներ .	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Սևագործ բանվորներ	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Պահակ	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Վառարան վառող .	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5
Լվացարարուհիներ	3	3	3	3	3	3	3,5	3,5	3,5	3,5	3,5	3,5
Հաշվետար	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5
Հանդերձապահուհի	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Ընդամենը հաստիքային միավորներ	29	33	36	31	35	38	33,5	38,5	43	35,5	40,5	45

125—150 մահճակալ ունեցող մսուրներ

	Վոչ անընդհատ վեցօրյակով աշխատելու դեպքում						Անընդհատ վեցօրյակով աշխատելու դեպքում					
	Մսուրի համար հարմարեցված շենքերում			Մսուրի համար կառուցված հատուկ շենքերում			Մսուրի համար հարմարեցված շենքերում			Մսուրի համար կառուցված հատուկ շենքերում		
	10 ժամ	14 ժամ	Շուրջօրյա	10 ժամ	14 ժամ	Շուրջօրյա	10 ժամ	14 ժամ	Շուրջօրյա	10 ժամ	14 ժամ	Շուրջօրյա
Բժիշկ	1,5	1,5	1,5	1,5	1,5	1,5	1,5	1,5	1,5	1,5	1,5	1,5
Տնտեսվար	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Քույր-հրահանգչուհի	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2
Պատրոնաժ քույր .	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Քույրեր	12	14	16	13	15	17	15	17	20	26	18	21
Դայակներ	8	9	11	9	10	12	9	10,5	13,75	10	11,5	14,75
Հավաքարարուհիներ	1	1	1	1	1	1	2	2	2	2	2	2
Խոհարարուհիներ .	1,5	1,5	1,5	1,5	1,5	1,5	1,5	1,5	1,5	1,5	1,5	1,5
Աման լվացողներ .	1	1	1	1	1	1	1,5	1,5	1,5	1,5	1,5	1,5
Սևագործ բանվորներ	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Պահակ	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Վառարան վառող .	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5
Լվացարարուհիներ	4	4	4	4	4	4	5	5	5	5	5	5
Հաշվետար	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5	0,5
Հանդերձապահուհի	1	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Ընդամենը հաստիքային միավորներ	37	40	44	39	42	46	43,5	47	53,25	45,5	49	55,25

Վերոհիշյալ հաստիքներից օգտվելու դեպքում անհրաժեշտ է ուշադրության առնել հետևյալը.

1. 25—50 մահճակալ ունեցող մսուրներում՝ ա) մսուրի վարիչը, եթե նա բժիշկ չէ, միաժամանակ հանդիսանում է մսուրի տնտեսվար. բ) քույր-հրահանգչուհին միաժամանակ պատրոնաժ քույր է, գ) սեզոնային աշխատակից... գ) սևագործ բանվորը միաժամանակ թե վառարան վառող է և թե պահակ։

2. 65—150 մահճակալ ունեցող մսուրներում՝ ա) պահակը մտցվում է հաստիքի մեջ միայն այն մսուրներում, վորոնք տեղավորված են առանձին շենքերում, բ) վառարան վառողը վորպես սեզոնային աշխատակից համարվում է 0,5 միավոր միայն այն մսուրներում, վորոնք ունեն ինքնուրույն ջեռուցում։

3. 150-ից ավելի մահճակալ ունեցող մսուրներում ամեն մի խմբի (15—20 յերեխա) վրա ավելացվում է՝

Մսուրում աշխատում են.

	10 ժամ	14 ժամ	ամբողջ օրը
Քույր	1,5	2,0	2,0
Դայակ . . .	1,0	1,0	1,0

4. 100 և ավելի մահճակալ ունեցող մսուրներում հաստիքները տրված են առանց մեկուսարանի։ Մեկուսարանի հաստիքը հետևյալն է. քույր՝ 5, դայակ՝ 2,5։

ԲՈՒԺՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ՄՍՈՒՐՆԵՐՈՒՄ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ՄՍՈՒՐԻ ԲԺՇԿԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մսուրի բժիշկը պատասխանատվություն է կրում իրեն հանձնված յերեխաների առողջության և կյանքի համար։

Բժշկի վրա յե դրված ամբողջ բուժպրոֆիլակտիկ աշխատանքը և մանկավարժական աշխատանքի ընդհանուր ղեկավարությունը։

Բժշկի աշխատանքը հետևյալն է՝

ա) բուժպրոֆիլակտիկ աշխատանքը մսուրում.

բ) հսկողություն հիվանդ յերեխաների նկատմամբ ստացիոնար-մեկուսարանում.

գ) հիվանդ յերեխաների սպասարկում տանը։

Բժիշկը պարտավոր է ամեն օր հաճախել մսուրները, բժշկական զննություն կատարել, ստուգելով յերեխաների առողջության վիճակը։ Զննումը կատարվում է քույր-հրահանգչուհու հետ միասին, իսկ այդպիսին չլինելու դեպքում՝ խմբի քրոջ հետ միասին։

Բժիշկը պարտավոր է ներկա լինել յերեխաների առավոտյան ընդունելությանը վոչ պակաս քան մեկ անգամ հնգօրյակում (ցանկալի յե հանգստյան օրից հետո), յերեխաների վերադարձման ժամանակ՝ ն մանապես հնգօրյակում առնվազն մեկ անգամ։

Մսուր նոր ընդունվող յերեխաներին բժիշկը պետք է քննի ընդունելությունից մեկ օր առաջ։

Բժիշկը պարտավոր է ամեն օր քննել բոլոր յերեխաներին, առաջին հերթին քույր-հրահանգչուհու կողմից առանձնացված

հիվանդ յերեխաներին, թե առավոտյան ընդունելության ժամանակ և թե ամբողջ օրվա ընթացքում։

Բոլոր նշանակումները բժիշկը գրանցում է քրոջ անհատական որագրի մեջ և մյուս օրն ստուգում է նրա կատարումը։

Յերեխային հիվանդանոց ուղարկելու անհրաժեշտության դեպքում բժիշկը պետք է միջոցներ ձեռք առնի յերեխային տեղավորելու հիվանդանոցում և պետք է տեղեկություններ ստանա յերեխայի հիվանդության ընթացքի մասին։

Մսուրում գիշեր-ցերեկ կենող յերեխաների խմբեր լինելու դեպքում բժիշկն առնվազը տասնօրյակում մեկ անգամ գիշերային ընդհանուր զննություն է կատարում։

Մսուրի բժիշկը պարտավոր է հոգ տանել, վոր գիշեր-ցերեկ մսուրում կենող յերեխաները գիշեր ժամանակ ապահովված լինեն շտապ բժշկական օգնությամբ։

Մսուրում վարակիչ (ինֆեկցիոն) հիվանդություններ յերեվան գալու դեպքում բժիշկը, համաձայն գոյություն ունեցող հրահանգների, անմիջապես միջոցներ է ձեռք առնում հիվանդ յերեխաներին մեկուսացնելու և հիվանդանոցային պայմաններում պահելու համար։

Միաժամանակ պետք է միջոցներ ձեռք առնել մսուրում ախտահանություն կատարելու համար։

Ստացիոնար-մեկուսարան լինելու դեպքում բժիշկը, համաձայն գոյություն ունեցող հրահանգների, հիվանդ յերեխաներին այդտեղ է տեղավորում։

Բժիշկն ամեն օր այցելում է ստացիոնար-մեկուսարանը և հետևում հիվանդների առողջության վիճակին։

Բժիշկն ամեն օր պարզում է յերեխաների հաճախումը, հաշվառման է յենթարկում բացակայող յերեխաներին և միջոցներ է ձեռք առնում պարզելու ամեն մի յերեխայի բացակայության պատճառը վոչ ուշ, քան հաջորդ օրը։

Մսուրի բժիշկը բժշկական օգնությամբ ապահովում է հիվանդացած յերեխային նաև նրա տանը, ըստ վորում կամ ինքն է անձամբ այցելում հիվանդին, կամ քույր է ուղարկում։

Մսուրի բժշկի միջոցով են կատարվում բոլոր պրոֆիլակտիկ սրսկումները։

Բժշկի պարտականությունն է հայտաբերել մսուրում թո-

քերի տուբերկուլյոզի, ռախիտի, վորդային, վեներական և այլ հիվանդությունների դեպքերը։

Մսուրի օրվա առողջապահական և մանկավարժական ռեժիմը մշակվում է բժշկի կողմից բժշկական և մանկավարժական հրահանգիչների հետ միասին և քննության է առնվում անձնակազմի խմբակային ժողովներում։

Մսուրի բժիշկն ամեն կերպ օգնում է մանկավարժին նյութական միջավայր կազմակերպելու գործում։

Մսուրի բժիշկը տնտեսվարի և խոհանոցի աշխատակիցների հետ միասին սահմանում է ճաշերի կանոնավոր և հիգիենիկ պատրաստման մեթոդներ, զանազան ճաշացուցակներ է կազմում տարվա յեղանակի և յերեխաների հասակի համեմատ, ամեն օր ստուգում է պատրաստ կերակրի վորակը և վերահսկողություն է կազմակերպում մթերքների ծախսման և ճաշերի պատրաստման վերաբերմամբ։

Մսուր ընդունվող ամեն մի յերեխայի համար բժիշկը պարտավոր է կազմել նրա զարգացման պատմությունը, վոր տարվում է յերեխայի՝ մսուրում յեղած ամբողջ ժամանակամիջոցում։

Յերեխայի զարգացման պատմության մեջ բժիշկը լրացնում է ժառանգականության վերաբերյալ սյունակը, մոր նախորդ հղիությունների և նրանց վախճանի վերաբերյալ անամնեզային տեղեկություններ է տալիս, գրում է անտրոպոմետրիկ չափումների տվյալները, անցկացրած վարակիչ հիվանդությունների և պատվաստումների մասին։

Զարգացման պատմության առաջին յերեսի մյուս բոլոր բաժինները (սյունակները) լրացնում է քույրը։

Բժիշկը պարտավոր է սիստեմատիկ կերպով, վոչ պակաս քան ամիսը յերկու անգամ քննել մինչև մեկ տարեկան յերեխաներին և ամիսը մեկ անգամ մեկ տարեկանից բարձր յերեխաներին։ Քննության արդյունքները բժիշկն անպայման գրանցում է զարգացման պատմության մեջ։

Յերեխաների մեջ հայտաբերված ամեն մի հիվանդագին փոփոխություն պետք է անմիջապես նշվի։

Մինչև մեկ տարեկան յերեխաների անտրոպոմետրիկ չափումները բժիշկը կատարում է ընդունելության ժամանակ յուրաքանչյուր յերեք ամսից հետո, և մեկ տարեկանից բարձր յե-

րեխաներին յուրաքանչյուր վեց ամսից հետո, գրանցելով այն զարգացման պատմության մեջ:

Յերեխայի դուրս գրման ամեն մի դեպքում (մեկնում ծնողների հետ, ուրիշ մսուրներ կամ մանկապարտեզ փոխադրվելը) բժիշկը յեզրափակիչ գրանցում է կատարում դուրս գրվելու պատճառների մասին:

Յերեխայի մահվան դեպքում բժիշկը պարտավոր է ժամանակին եպիկրիզ կազմել, վորտեղ մանրամասն կերպով նշում է յերեխայի զարգացման առանձնահատկությունները և մահվան պատճառը:

Յերեխաների առկա կազմի զարգացման բոլոր պատմությունները պահվում են ամեն մի խմբի համար հատկացված առանձին գրքերում:

Դուրս գրված յերեխաների զարգացման պատմությունները հանձնվում են արխիվ, վորտեղ նրանք պահվում են ըստ որացույցային տարիների և այբուբենական կարգով:

Մսուրի բժիշկը հետևում է, վոր համաճարակային հիվանդությունների վերաբերյալ տեղեկությունները և մսուրների գործունեյության վերաբերյալ սահմանված հաշվետվությունները ժամանակին ուղարկվեն:

Մսուրի բժիշկը պարտավոր է ամեն որ ստուգել ամբողջ շենքի սանհիգիենիկ դրությունը, մաքրումը, յերեխաների սենյակների և օժանդակ շենքերի օդափոխումը, առանձին ուշադրություն դարձնելով խոհանոցի, լվացքարանի, արտաքնոցի և բակի վիճակի վրա:

Հնգորյակում մեկ անգամ բժիշկը տնտեսվարի, հրահանգչուհու և համաքարարուհիներից մեկի հետ կատարում է ամբողջ շենքի վիճակի (հաշված նաև բոլոր օժանդակ շենքերը) վարչատնտեսական զննում:

Բժիշկն անձնակազմի և ծնողների վերաբերմամբ սանկուլտուրական աշխատանք է կատարում, այն է՝

ա) զրույցներ է կազմակերպում մայրերի հետ կրծքով կերակրելու և յերեխաներին վերադարձնելու ժամանակ.

բ) վոչ սակավ, քան յերկու ամիսը մեկ անգամ բժիշկը զրույց է կազմակերպում սեզոնային և վարակիչ հիվանդությունների մասին.

գ) հրահանգչուհու հետ միասին ծնողների հետ անց է կացնում ժողովներ, արտադրական խորհրդակցություններ և խորհրդակցություններ մսուրների բժշկական և մանկավարժական աշխատանքների վերաբերյալ.

դ) արտադրության մեջ մասնակցում է ակումբային աշխատանքներին և պատի թերթերին.

յե) քույրերի և տեխնիկական անձնակազմի վորակավորումը բարձրացնելու նպատակով նրանց հետ սիստեմատիկ ցիկլային պարապմունքներ է անցկացնում և սանիտարական-կուլտուրական աշխատանք է կատարում:

Մսուրի բժիշկն անձնակազմի հետ միասին տանում է կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների բժշկական շեֆությունը:

Տեղկոմի հետ միասին մշակում է ներքին կարգապահության կանոնները և աջակցում է աշխատանքի ստախանովյան մեթոդներ կիրառելուն:

Մսուրի բժիշկն հանդիսանում է օժանդակող հանձնաժողովի անդամ, ակտիվ կերպով կապ է պահպանում ֆաբրիկա-գործարանային կազմակերպությունների սոցկենցաղային սեկցիաների հետ, պարբերաբար հաշիվ տալով մսուրների աշխատանքի մասին:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄՍՈՒՐԱՅԻՆ ՔՈՒՅՐԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

1. Յերեխաների սպասարկումը մսուրներում հիմնականում տարվում է քույր-դաստիարակչուհիների կողմից:

2. Քույր-դաստիարակչուհու կողմից սպասարկվող յերեխաների թիվը 15-ից ավել չպետք է լինի:

3. Խմբակային քույր-դաստիարակչուհիներն աշխատում են քույր-հրահանգչուհու անմիջական ղեկավարությամբ:

4. Քույր-դաստիարակչուհիների պարտականությունն է նաև յերեխաների ամենորյա ընդունելությունն ու վերադարձումը, յերեխաների հիգիենիկ խնամքը, տուալետը, լողացնելը, կերակրումը, խնամքով հագցնելը, զբոսանքի տանելը և բաց օդում քնացնելը, յերեխաների կշռումը, բժշկական պատվերների կատարումը և մանկավարժական աշխատանքը:

5. Խմբակային քույրը հետևում է շենքի և յերեխաների մահճակալների մաքրությանը, ժամանակին շենքն օդափոխելուն, շենքում սահմանված ջերմություն ապահովելուն, խմբակի ինվենտարի պահպանմանը, ժամանակին կեղտոտ սպիտակեղենը հավաքելուն և մաքուրով փոխարինելուն։ Խմբակային քույրը հետևում է, վոր յերթևեկ մայրերը ժամանակին կերակրեն յերեխաներին և կատարեն բոլոր հիգիենիկ պահանջները։

6. Ընդունելության ժամանակ խմբակային քույրը հայտաբերում է հիվանդ յերեխաներին և նրանց մասին հայտնում է բժշկին կամ բժշկական հրահանգչին։ Դժբախտ պատահարների դեպքում գիշերային հերթապահության ժամանակ քույրը հիվանդ յերեխայի մոտ անմիջապես բժիշկ կամ շտապ օգնություն է կանչում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Բժշկի և հրահանգչի բացակայության դեպքում քույրն ինքնուրույնաբար միջոցներ է ձեռք առնում հիվանդ յերեխային մեկուսացնելու համար։

7 Աշխատանքը վերջացնելուց հետո խմբակային քույրը հերթապահությունը հանձնում է հերթափոխող քրոջը։ Հերթապահությունը հանձնելու ժամանակ անհրաժեշտ է գրավոր կերպով նշել յերեխաների առողջության դրության մեջ կատարված բոլոր փոփոխությունները։

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄՍՈՒՐԱՅԻՆ ԴԱՅԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Մսուրներում տեխնիկական աշխատանքը հիմնականում կատարում են դայակները։

2. Դայակն անմիջապես յենթարկվում է խմբակային քրոջը։ Դայակները պետք է կցվեն խմբակներին։

3. Դայակի պարտականությունն է՝

Կեղտոտ սպիտակեղենի հաշվումը, հավաքումը և մաքուր սպիտակեղեն բերելը, խոհանոցից յերեխաների համար կերակուր բերելը, խմբին տաք ջուր մատակարարելը, օգնում է քրոջը յերեխաներին լողացնելու, կերակրելու և զբոսանքի ժամանակ (ծալովի մահճակալները պատրաստելը, յերեխաներին հագցնելը և նրանց մաքուր օդ դուրս բերելը)։

4. Խմբակային քրոջ հսկողությամբ և պատասխանատվու-

թյամբ դայակները կարող են առանձին հանձնարարություններ կատարել յերեխաների խնամքի վերաբերյալ։

5. Հերթապահությունը հանձնելու ժամանակ դայակները հանձնում են ամբողջ տնտեսական գույքը և սպիտակեղենը։

ՊԱՏՐՈՆԱԺ ՔՈՒՅՐԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Պատրոնաժ քույրը մտցվում է մսուրի հաստիքի մեջ, յեթե մսուրն սպասարկում է 65 և ավելի յերեխաներ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Մինչև 65 մահճակալ ունեցող մսուրներում պատրոնաժ աշխատանքը կատարում է հրահանգչուհին։

2. Պատրոնաժ քրոջ աշխատանքը կատարվում է մսուրի բժշկի անմիջական ղեկավարությամբ։ Պատրոնաժ քույրը տանում է բժշկական և պրոֆիլակտիկ պատրոնաժ։

Պատրոնաժ քույրը պարտավոր է ամեն օր լինել մսուրում, ամեն օր հայտաբերել բացակայող յերեխաների թիվը և առաջին հերթին այցելել բացակայող յերեխաներին։

3. Պատրոնաժ քույրը պարտավոր է հնգօրյակում 1—2 անգամ ներկա լինել յերեխաներին մսուր ընդունելուն։

4. Իր հաճախումների արդյունքի մասին պատրոնաժ քույրը պարտավոր է հաղորդել մսուրի բժշկին։ Այն դեպքերում, յերբ պատրոնաժի վերցված յերեխայի համար բժշկական միջամտություն է պահանջվում, պատրոնաժ քույրն անմիջապես հաղորդում է այդ մասին մսուրի բժշկին։ Արտակարգ դեպքերում մսուրի բժշկի բացակայության ժամանակ պատրոնաժ քույրը պարտավոր է յերեխայի հիվանդանալու մասին հաղորդել մոտակա բուժ-հիմնարկի (կոնսուլտացիա, հիվանդանոց) բժշկին։

5. Բժշկի բոլոր նշանակումները (բանկաներ, ներարկումներ, բուժական վաննաներ, փաթաթումներ) քույրը պարտավոր է բժշկի մատնանշած ժամկետին կատարել։

6. Պատրոնաժ քույրը բժշկի հանձնարարությամբ միջոցներ է ձեռք առնում հիվանդ յերեխային ժամանակին տեղավորելու հիվանդանոցում և կապ է պահպանում հիվանդանոցի հետ։

7. Մսուրի յերեխաների մեջ վարակիչ հիվանդություններ յերևան գալու դեպքում պատրոնաժ քույրը հայտաբերում է այն յերեխաներին, վորոնք շփման մեջ են յեղել յերեխայի հետ

(հանրակացարանում, բնակարանում) և անմիջապես հաղորդում է նրանց մասին շահագրգռված կազմակերպություններին (մսուր, բնակարանային վարչության սանբժիշկ, կոնսուլտացիա, մանկական պարտեզ, դպրոց) և ստուգում է, թե ախտահանությունը կատարված է արդյոք տվյալ շենքում։

8. Մսուրի յերեխայի բնակարանում վարակիչ հիվանդության յերևան գալու դեպքում քույրը պարտավոր է միջոցներ ձեռք առնել յերեխային ըստ հնարավորության մեկուսացնելու համար և նույն օրը հայտնել այդ մասին մսուրի բժշկին։

9. Մսուրում կամ մսուրային վորևե խմբակում կարանտին յեղած ժամանակ պատրոնաժ քույրը պարտավոր է յերեխաներին այցելել տանը՝ հիվանդության նոր դեպքեր հայտաբերելու նպատակով։

10. Պատրոնաժ քույրը պարտավոր է մսուր ընդունվող ամեն մի յերեխային տանն այցելել ընդունվելու նախօրյակին։

11. Առողջ յերեխաների պատրոնաժը կատարվում է սոցիալ-կենցաղային ցուցմունքների համաձայն։ Այցելելով այդ նպատակով յերեխայի ընտանիքը, պատրոնաժ քույրն անհրաժեշտության դեպքում մորն ուղարկում է սոցիալ-իրավական կաբինետ։

12. Պատրոնաժ քույրը սան-կուլտ աշխատանք է կատարում հանրակացարաններում և տներում, կազմակերպելով զրույցներ, ցուցահանդեսներ, մոր և մանկան անկյուններ, գրադարան և այլն։

13. Պատրոնաժ քույրը պետք է ունենա պայուսակ հետևյալ անհրաժեշտ պիտույքներով. ջերմաչափ, սրսկիչ, սպիրտ կամ յեթեր (փոքր սրվակներով), կամֆորա, յոդ, բամբակ (բանկայի մեջ) և խալաթ։

14. Քույրն իր սկզբնական հաճախումների արդյունքը գրանցում է յերեխայի զարգացման պատմության մեջ։

15. Աշխատանքի հաշվառման համար պատրոնաժ քույրը օրագիր է պահում, ճշտորեն գրանցելով ամսաթիվը, պատրոնաժի վերցրած յերեխաների ազգանունը և հասցեն ու բոլոր կիրառված միջոցառումները։

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ՄՍՈՒՐԻ ՔՈՒՅՐ-ՀՐԱՀԱՆԳՉԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ԱՎԱԳ ՔՐՈՋ)

1. Վորպես քույր-հրահանգիչ մսուրում կարող են աշխատել այն մսուրային և բժշկական քույրերը, վորոնք ունեն լրիվ միջնակարգ բժշկական կրթություն։

2. Քույր-հրահանգիչն անմիջականորեն յենթարկվում է մսուրի բժշկին և հանդիսանում է նրա օգնականը մսուրի բժշկական և դաստիարակչական աշխատանքի գծով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այն դեպքերում, յերբ մսուրի հաստիքում ըստ աշխատանքի ծավալի չկա հատուկ պատրոնաժ քույր, մսուրի յերեխաների բժշկական պատրոնաժի պարտականությունները տանն օգնություն ցույց տալու գծով դրվում են քույր-հրահանգչի վրա։ Բժշկական պատրոնաժի ֆունկցիաներ կատարելիս քույր-հրահանգչուհին պարտավոր է ղեկավարվել մսուրի պատրոնաժ քրոջ իրավունքների և պարտականությունների վերաբերյալ հրահանգով։

3. Քույր-հրահանգիչն անմիջականորեն ղեկավարում է մսուրային քույրերի աշխատանքը՝ յերեխաներին խնամելու և դաստիարակելու բնագավառում։ Հրահանգիչն իր ղեկավարությունը կենսագործում է հետևյալ ձևով. նա ամեն օր անձամբ հրահանգներ է տալիս մսուրային քույրերին ընթացիկ աշխատանքի պրոցեսում, ինչպես և հետևում է, վոր քույրերն իրենց վրա դրված պարտականությունները ճշտությամբ կատարեն։

4. Քույր-հրահանգիչը պատասխանատու յե յերեխաների համար խմբում սահմանված ռեժիմը ճշտությամբ կատարելու և նյութական միջավայրն ու աշխատանքային պրոցեսները կանոնավոր կերպով կազմակերպելու համար։

5. Քույր-հրահանգիչը պարտավոր է վոչ պակաս, քան հնգօրյակում 3 անգամ ներկա լինել յերեխաների ընդունելությանը և հանձնելուն։

6. Քույր-հրահանգիչը կատարում է այն բոլոր բժշկական պատվերները, վորոնք բժշկի կողմից դրված են անձամբ նրա վրա։

7. Քույր-հրահանգիչն անհրաժեշտ մթերքներ և դեղորայք

է դուրս գրում խոհանոցի, կաթնախոհանոցի, դեղատան համար, ինչպես և հետևում է կերակուրը և դեղորայքը ստանալուն և բաշխելուն։

8. Մսուրում սահմանված որվա ռեժիմի համեմատ քույր-հրահանգիչը նախորոք պլանավորում է քույրերի աշխատանքը։ Աշխատանքի ժամանակը պլանավորելիս հրահանգիչը նկատի յե առնում մսուրային քրոջ պարտականությունը և անմիջական ակտիվ շփման մեջ է լինում յերեխաների հետ՝ նրանց արթուն յեղած ամբողջ ժամանակամիջոցում։

9. Քույր-հրահանգիչը մսուրի վարիչի հետ միասին մշակում է խմբային անձնակազմի աշխատանքի ցուցակ և հետևում նրա կատարմանը։

10. Քույր-հրահանգիչն ամեն որ կատարում է յերեխաների չափման հաշվառում, այն է՝ մսուր այցելած, այնտեղ ընդունված և դուրս գրված յերեխաների հաշվառումը։

11. Քույր-հրահանգիչը հետևում է, վոր ժամանակին բժշկական հաշվետվություն ուղարկվի համապատասխան կազմակերպություններին։

12. Քույր-հրահանգիչը մասնակցում է այն կազմակերպչական աշխատանքներին, վորոնք կապ ունեն մսուրի կահավորման և հագուստ կարելու հետ։

13. Քույր-հրահանգիչն ամեն որ ստուգում է մսուրի սանհիգիենիկ վիճակին և հետևում, վոր մսուրում ժամանակին ախտահանություն կատարվի։

14. Քույր-հրահանգիչը բժշկի ղեկավարությամբ աշխատանք է կատարում անձնակազմի նկատմամբ՝ վերջինիս բժշկական և մանկավարժական վորակավորումը բարձրացնելու ուղղությամբ (զրույցներ, ցուցադրական պարապմունքներ, պարապմունքներ սանտեխմինիմումի գծով)։

15. Քույր-հրահանգիչն ոգնում է բժշկին սանլուսաշխատանք կատարել ծնողների վերաբերմամբ՝ յերեխաների խնամելու, նրանց դաստիարակելու, մանկական վարակիչ հիվանդությունների դեմ մսուրներում և հանրակացարաններում պայքարելու հետ կապված հարցերի շուրջը, կազմակերպելով զրույցներ, ցուցահանդեսներ, մոր և մանկան անկյուններ, գրադարաններ և այլն։

ՄՍՈՒՐԻ ՎԱՐԻՉԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(առանց բժշկական կրթության)

1. Մսուրի վարիչը նշանակվում է և աշխատանքից ազատվում շրջ (քաղ) առբաժնի կողմից։

2. Մսուրի վարիչը պատասխանատու յե մսուրի ֆինանսական և վարչատնտեսական գործունեյության համար, ինչպես և մսուրը բժշկական հսկողությամբ ապահովելու և սանլուսավորական աշխատանք կատարելու համար։

3. Մսուրի վարիչը բաշխում է մսուրին տրվող վարկերը և պատասխանատու յե այդ վարկերի կանոնավոր ծախսման համար։

4. Բժշկական կրթություն չունեցող մսուրի վարիչը պարտավոր է իր աշխատանքի պրոցեսում մսուրների վարիչների դասընթացներ անցնել։

5. Մսուրի վարիչն ընդունում և արձակում է մսուրի աշխատակիցներին, ինչպես և տուժանք է դնում ծառայության հետ կապված պարտականությունները չկատարելու համար։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Մսուրի բժշկական անձնակազմի ընդունելությունը և արձակումը (հրահանգիչ, քույր, խմբի դայակ) կատարում է, ինչպես և բժշկական անձնակազմի վրա տուժանք է դնում մսուրի վարիչը, համաձայնեցնելով մսուրի բժշկի հետ։

Այն դեպքում, յերբ մսուրի վարիչի և բժշկի միջև տարաձայնություն է առաջանում, հարցը տեղափոխվում է շրջ (քաղ) առբաժին և լուծվում նրա կողմից։

6. Մսուրի վարիչը բժշկի հետ միասին հաստատում է մսուրի ներքին կարգապահության կանոնները։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այն դեպքում, յերբ կանոնները կազմելիս տարաձայնություն է առաջանում մսուրի վարիչի և բժշկի միջև, հարցը լուծում է շրջ (քաղ) առբաժինը։

7. Մսուրի վարիչը յերեխաներ ընդունում է, ղեկավարվելով շրջ (քաղ) առբաժնի հատուկ հրահանգներով։

8. Մսուրի վարիչը պատասխանատու յե մսուրի արտադրական պլանը կատարելու համար։

9. Մսուրի վարիչն ապահովում է մսուրը սննդով. հոգ է տանում, վոր մսուրի համար անխափան կերպով մթերքներ մատակարարվեն. ստուգում է մթերքների վորակը և մթերքները

պահելը. բժշկի և խոհանոցի աշխատակիցների հետ միասին ճաշացուցակ (մենյու) է կազմում. սիստեմատիկ կերպով հետևում է մթերքներն օգտագործելուն (կերակրի մեջ գցելու մոմենտին) և կերակրի համին. հիգիենիկ պայմաններ է ստեղծում կերակուր պատրաստելու համար։

10. Մսուրի վարիչը կազմակերպում է սպիտակեղենի լվացքը, ստուգում է լվացքի որակը, հետևում է կեղտոտ սպիտակեղենը հավաքելուն և պահելուն, ինչպես և մաքուր սպիտակեղենը պահելուն։

11. Մսուրի վարիչն ապահովում է մսուրի կահավորությունը փափուկ և կոշտ կահույքով, խաղալիքներով, դեղորայքով և այլն և հետևում, որ պակաս իրերը ժամանակին ձեռք բերվեն և ընդհանրապես գույքը չփչացնեն։

12. Մսուրի վարիչը պարտավոր է հետևել մսուրի սանհիգիենիկ վիճակին և բժշկի հետ միասին հնգօրյակում մեկ անգամ ստուգում է մսուրի և օժանդակ շենքերի տնտեսական վիճակը։

13. Մսուրի վարիչը, յեթե նա կցված է մի որոշ ձեռնարկության, պարտավոր է կանոնավոր կապ պահպանել ձեռնարկության պրոֆեսիոնալ կազմակերպությունների հետ։

14. Մսուրի վարիչն ակտիվ աշխատանք է կատարում մսուրի անձնակազմի մեջ՝ աշխատանքի սոցիալիստական մեթոդներ արմատացնելու գծով։

15. Մսուրի վարիչը պայմաններ է ստեղծում, որ մսուրի աշխատողները հնարավորություն ունենան բարձրացնելու իրենց որակավորումը։

ՄՍՈՒՐԻ ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՑՈՒՅՑ ՏՐՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

Մսուրի յերեխաներին ցույց տրվող բժշկական ոգնության ձևերը հետևյալներն են.

1. ոգնություն մսուրում.
2. ոգնություն տանը.
3. մասնագիտական ոգնություն մանկական կոնսուլտացիաների կողմից.
4. հիվանդանոցային ոգնություն։

I. Ոգնություն մսուրում

ա) Մեկուսարան-ստացիոնար լինելու դեպքում այդտեղ տեղավորվում են այն յերեխաները, վորոնք հիվանդ են գրիպով, պիելիտով, թոքերի բորբոքումով, դիսպեպսիայով, կոլիտով, մաշկի, աչքի, ականջի հիվանդություններով, ռեկոնվալեսցենտները, ինչպես և բացիլակիրները։ Մեկուսարանում այդ յերեխաներն ստանում են բուժական ոգնություն — տաք վաննաներ, մանանեխի ծեփելիք, փաթաթում, բանկաներ, ներարկում, ֆիզիոլոգիական հոգնաներ, աչքերի և ականջի բուժում, վիրակապում։

Սուր վարակիչ հիվանդություններով հիվանդ յերեխաներին չեն տեղավորում մեկուսարան-ստացիոնարում, բացիլակիրները տեղավորվում են։

Ծանր հիվանդ յերեխաների համար մեկուսարան-ստացիոնարում պետք է սահմանել անհատական խնամք (հաճախակի վերցնել ձեռքերի վրա, փոխել դիրքը, հաճախակի խմելիք տալ։ Մսուրի աշխատակիցների ուժերով անհատական խնամք իրականացնելն անհնարին լինելու դեպքում, վորպես բացառություն, կարելի յե մորը հնարավորություն տալ լինել մեկուսարան-ստացիոնարում՝ հիվանդ յերեխայի մոտ, տալով նրան հիվանդության թերթիկ։

բ) Ստացիոնար-մեկուսարան չունեցող մսուրները կարող են ընդունվել հետևյալ հիվանդություններով յերեխաները — բրոնխիտով, ոտիտով (ականջի հիվանդություններ), պիուրիայով, դիսպեպսիայով, ինչպես և ռեկոնվալեսցենտները (ապաքինվածները) վոչ վարակիչ հիվանդություններից հետո (պլևրիտ, թոքերի բորբոքում և այլն)։

II. Ոգնություն տանը

Մսուրի բժիշկը պարտավոր է այցելել հիվանդ յերեխաներին նրանց տանը և հետագայում կանոնավոր կերպով այցելել նրանց հիվանդության ամբողջ ընթացքում, ցույց տալով ամեն տեսակի անհրաժեշտ բուժական ոգնություն, վորի կիրառման համար գործի յե կանչվում պատրոնաժ քույրը կամ խմբակային քույրը։

Յեթե յերեխան ապրում է մսուրից հեռու, ապա նրան բուժական օգնություն ցույց է տրվում մոտակա կոնսուլտացիայի, բուժարանի կամ հիվանդանոցի կողմից։

Վարակիչ հիվանդություններ հայտաբերելու դեպքում, այդ հիմնարկների բժիշկները պարտավոր են անմիջապես հաղորդել մսուրի բժշկին։

Այն մսուրներում, վորտեղ մեկուսացված առանձին շենքեր կան, թույլատրվում է հիվանդ յերեխաներ ընդունել՝ բժշկի կողմից տանը նախնական քննություն կատարելուց հետո։

III. Մասնագիտացված օգնություն կոնսուլտացիայի կողմից

Կոնսուլտացիան մսուրային յերեխաներին ըստ հնարավորության ցույց է տալիս ամեն տեսակի մասնագիտացված բուժական օգնություն. օրինակ, կվարց-լամպ, ինչպես և օգնություն ականջի, աչքի, մաշկի, վեներական հիվանդությունների մասնագետ բժիշկների կողմից։

Վոչ մի յերեխա չի կարող ընդունվել մսուր առանց վեներական հիվանդությունների մասնագետ բժշկի քննության։ Բոլոր աղջիկները պետք է հետազոտվեն գոնորեայի վերաբերմամբ։

Այն մսուրներում, վորտեղ մեկուսարան-ստացիոնար կա, անհրաժեշտ է սերտ կապ սահմանել մասնագետների հետ, վորոնք անհրաժեշտության դեպքում պետք է հաճախեն մեկուսարանը մսուրի բժշկի պահանջով։

Մսուրի մնացած յերեխաներն, անհրաժեշտության դեպքում ուղարկվում են կոնսուլտացիա մասնագետների մոտ նշանակված ժամերին։

IV. Հիվանդանոցային օգնություն

Վարակիչ հիվանդություններով (քութեշ, դիֆտերիա) հիվանդ յերեխաներն ուղարկվում են հիվանդանոց։ Հիվանդանոց են ուղարկվում նաև վոչ վարակիչ հիվանդություններով ծանր

հիվանդ յերեխաները, վորոնք ապրում են վատ բնակարանային և կենցաղային պայմաններում։

Մսուրի բժիշկը սերտ կապ է պահպանում հիվանդանոցի հետ յերեխայի այնտեղ մնալու ամբողջ ժամանակամիջոցում։

Հիվանդանոցային բուժման կարիք ունեցող և հիվանդանոցում գտնվող յերեխաների հաշվառումը կատարում է մսուրի բժիշկը։

ՀՐԱՀԱՆԳ

ՄԵԿՈՒՍԱՐԱՆ-ՍՏԱՑԻՈՆԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

1. Մեկուսարան-ստացիոնար կազմակերպվում է մսուրի հաստիքային մահճակալների ընդհանուր թվի 10%-ի հաշվով։

2. Մեկուսարան-ստացիոնարի շենքը մսուրից պետք է առանձնացված լինի, ունենա փողոցից առանձին մուտք, առանձին ընդունարան, օժանդակ շենք՝ կերակուր տաքացնելու, ամանեղեն լվանալու համար և այլն։

3. Չի թույլատրվում մեկուսարան-ստացիոնարում տեղավորել ուրիշ մսուրների յերեխաներ։

4. Մեկուսարանում յուրաքանչյուր 10 մահճակալ բաշխվում է յերկու սենյակի վրա (2 փակ բոքս և 4 բաց բոքս)։ Բոքսերը մի սենյակում պետք է լինեն շարժական, և այդ սենյակը պետք է պատշգամբ ունենա։

5. Մեկուսարան-ստացիոնարի սարքավորումը.

ա) բաց բոքս. մահճակալ, մերձմահճակալային փոքր սեղան, լվացման համար թաս և պետքանոթ.

բ) փակ բոքս. մահճակալ, մերձմահճակալային փոքր սեղան, սպիտակեղենը պահելու փոքր պահարան, լվացարան՝ կափարիչով, աման՝ կեղտոտ սպիտակեղենի համար.

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ամեն մի փակ բոքսում անձնակազմի համար պետք է խալաթ լինի։

գ) ընդունարան. 2 բաց բոքս, լվացարան, սեղաններ, աթոռներ, պահարան՝ անձնակազմի հագուստը պահելու համար, կախարան՝ մայրերի վերարկուների համար.

դ) օժանդակ շենք. լվացարան, սեղան՝ կերակուրը բաժանե-

նու համար, յերկու աթոռ, պահարան՝ գործիքները և խնամքի առարկաները պահելու համար, պահարան՝ մաքուր սպիտակեղենով, հարմարանքներ՝ կերակուր տաքացնելու համար։

6. Մեկուսարան-ստացիոնարը վորպես կանոն աշխատում է 24 ժամ անընդհատ, ամբողջ որը, սակայն հնարավոր է, վոր յերեխան մեկուսարանում մնա միայն մոր աշխատելու ժամանակ (ցերեկը)։

Ծծկեր յերեխաները մեկուսացվում են միայն մոր աշխատանքի ժամանակամիջոցում։

7. Ցուցմունքներ յերեխային մեկուսարան-ստացիոնար տեղավորելու համար։

ա) գրիպ, կոնյունկտիվիտ, ստոմատիտ, պեմֆիգուս, իմպետիգո, ֆուրունկուլեզ, թոքերի բորբոքման վոչ ծանր դեպքեր, ստամոքսա-աղիքային հիվանդություններ և այլն.

բ) այն յերեխան, վորն ընդունելության ժամանակ բարձր տաքություն ունի, բայց քութեշի, դիֆտերիայի, ջրծաղկի վերաբերմամբ կասկած չկա, մինչև բժշկի գալը տեղավորվում է փակ բոքսում.

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Սուր վարակիչ հիվանդություն կասկածելու դեպքում յերեխան անմիջապես տուն է ուղարկվում։

գ) կոլիտով և կապույտ հազով հիվանդ յերեխաները տեղավորվում են փակ բոքսում։

8. Հիվանդ յերեխաներին խնամելու համար նշանակվում է առավել վորակյալ բժշկական քույր։

Դայակ-հավաքարարուհին մաքրում է շենքը, բերում է կերակուր, մաքուր սպիտակեղեն, հավաքում է կեղտոտը։ Քույրը, վորը մեկուսարանում սպասարկում է հիվանդ յերեխաներին, մի բոքսից մյուսն անցնելու ժամանակ պետք է ձեռքերը լվանա (փակ բոքս մտնելիս քույրը խալաթ է հագնում)։

9. Մեկուսարան-ստացիոնարի հաստիքը 10 յերեխայի համար՝ 5 քույր և յերեք հավաքարարուհի (24 ժամ անընդհատ աշխատանքի համար)։

10. Մսուրի նախահաշիվը կազմելիս մեկուսարան-ստացիոնարի նախահաշիվը պետք է կազմել առանձին։

ՊԱՅՔԱՐ ՄՍՈՒՐՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

Յերեխաների ընդունելության կանոնները

1. Յերեխաներին մսուր ընդունելուց առաջ պետք է, ըստ հնարավորության, քննության յենթարկել վեներական հիվանդությունների մասնագետի կողմից։

2. Վեներական հիվանդությունների մասնագետ չլինելու դեպքում քննությունը կատարում է մանկաբան բժիշկը, պահպանելով հետևյալ կանոնները.

ա) մանրակրկիտ կերպով զննում է բերանի խոռոչը և յերախը, աչքերի լորձաթաղանթը, մաշկը և սեռական օրգանները, ավշային գեղձերը և վոսկրային համակարգությունը.

բ) սրբանից և աղջիկների հեշտոցից արտազատվող արտաթորությունների պարտադիր մանրադիտական հետազոտում, ըստ վորում մինչև հետազոտման արդյունքն ստանալը յերեխան մսուր չի ընդունվում.

գ) սեռական օրգանները կլինիկական նորմալ տեսք ունենալու դեպքում, յեթե յերեխայի մեզի անալիզը տեսողության դաշտում 30—40 լեյկոցիտ է տալիս, և բազմապիսի ֆլորայի առկայությամբ, ապա յերեխային թույլատրվում է մսուր հաճախել միայն անհատական խնամք և մշտական բժշկական հսկողություն ապահովելու պայմանով (կրկնակի հետազոտումներ պրովակացիայի միջոցով).

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Մսուրում գոնորեայի դեպքեր նկատվելու դեպքում հիվանդ յերեխաները խմբակ չեն ընդունվում։

դ) յեթե սեռական օրգանների կլինիկական նորմալ տեսք ունենալու դեպքում զգալի քանակությամբ թարախային արտաթորանք է արտազատվում (30—40 լեյկոցիտից ավելի), անպայման պետք է ստուգում կատարել վորդերի վերաբերմամբ և կրկնակի քսուկ վերցնել.

յե) թարախի առկայության դեպքում (40—50 լեյկոցիտից ավելի) յեթե մի քանի անգամ կատարած անալիզներից հետո գոնոկոկ չի հայտաբերվում, յերեխային թույլատրվում է մսուր հաճախել այն պայմանով, վոր յերեխայի համար անհատական

խնամք ապահովվի և յերեխան ամեն որ հետազոտման յենթարկվի։

3. Սեռական օրգանների կողմից բորբոքման յերևույթներ նկատվելու և քունքներում թարախ հայտաբերվելու դեպքում (Նեյսերի գոնոկոկները չլինելու դեպքում) անհրաժեշտ ե յերեխաներին վաննաներ նշանակել յեղեսպով (շալֆեյի) և յերիցուկով (ռոմաշկա)։ Այդպիսի յերեխաները ժամանակավորապես մսուր չեն ընդունվում.

4. Սրտաթորանքի մեջ Նեյսերի գոնոկոկներ հայտաբերելու դեպքում յերեխային պետք ե հիվանդանոց ուղարկել և միաժամանակ այդ մասին տեղեկացնել առկայանին կամ վեներական հիվանդությունների մասնագետ բժշկին՝ յերեխայի ընտանիքը հետազոտման յենթարկելու համար։

Այդպիսի յերեխաներին չի թույլատրվում մսուրներում մնալ։

5. Գոնորեայով հիվանդացած յերեխաները կարող են մսուր հաճախել հետևյալ պայմաններում.

ա) յերբ բազմիցս կատարված բակտերիոլոգիական հետազոտություններից և պրովակացիաներից հետո գոնոկոկ չի հայտաբերված.

բ) յերբ չկան թարախային բջիջներ և եոզինոֆիլներ.

գ) Ներքին օրգանների հիվանդություն կասկածելիս Բորդե-Ժանգուի բացասական ռեակցիա ստացվելու դեպքում.

դ) մեկ տարի դիտողություններ կատարելուց հետո։

6. Կասկածելի տվյալներ լինելու դեպքում յերեխաներին մսուր ընդունելիս նրանց և նրանց մայրերի վերաբերմամբ անհրաժեշտ ե պրովոկացիա կատարել։

7. Մոր մեջ սիֆիլիս կասկածելու դեպքում անհրաժեշտ ե յերեխային նույնպես քննել սիֆիլիս հայտաբերելու նպատակով։

8. Սիֆիլիսով հիվանդ յերեխաներին կրկին մսուր կարող են ընդունել վոչ պակաս, քան բուժման յերեք կուրս ստանալուց հետո այն դեպքում, յեթե բուժման ընթացքում ռեցիդիվ տեղի չի ունեցել և առնվազն յերկու անգամ Վասերմանի բացասական ռեակցիա յե նկատվել։

9. Սիֆիլիսով հիվանդացած յերեխաները պետք ե գտնվեն

վեներական հիվանդությունների մասնագետ բժշկի հետագա հսկողության տակ և պետք ե ժամանակին բուժման ուղարկվեն կլինիկական կուրսեր ստանալու համար։

Յերեխաների սպասարկման կանոնները

1. Մսուրն ըստ հնարավորության պետք ե ունենա կցված վեներոլոգ բժիշկ, վորը յերեք ամիսը մեկ անգամ հաճախում ե մսուրը՝ յերեխաներին և անձնակազմին քննելու և կասկածելիներին բակտերիոլոգիական հետազոտման յենթարկելու համար։

2. Բույրերի կողմից կատարվող ամենօրյա ընդունելության ժամանակ մաշկը և լորձաթաղանթները քննելու հետ միասին կատարվում ե նաև սեռական օրգանների ուշադիր զննում։

3. Բորբոքում կամ թարախահոսություն հայտաբերելու դեպքում յերեխան մինչև բժշկի գալը տեղավորվում ե մեկուսարանում։

4. Կասկածելի յերեխաներից հետո բարուրման սեղանը մաքրվում ե ախտահանիչ լուծույթով (սուլեմա 1:1000)։

5. Յերեխայի մեջ վուլվովագինիտ (բունոցի և հեշտոցի բորբոքում) հայտաբերելու դեպքում յերեխան ուղարկվում ե վեներական հիվանդությունների մասնագետի մոտ, իսկ յեթե այդպիսին չկա, բակտերիոլոգիական հետազոտման ե յենթարկվում։ Մինչև հետազոտման արդյունքն ստանալը յերեխան մսուր չի ընդունվում, և հետագայում պետք ե ղեկավարվել վերևում բերված՝ մսուրը յերեխաներ ընդունելու վերաբերյալ կանոնների 2—5 կետերով։

6. Հիմնարկի անձնակազմը յերեխաների տուալետը անցկացնելիս ամեն մի յերեխայից հետո պարտավոր ե ձեռքերը լվանալ։

7. Խնամքի բոլոր առարկաները (պետքանոթ, տաշտի խոզանակ, ձեռնոց) պետք ե լինեն անհատական և մաքուր պահվեն։

8. Ծծկեր յերեխաների լվացումը կատարվում ե հոսող տաք ջրով, ըստ վորում լվացումը պետք ե սկսել սեռական օրգաններից։

9. Ամեն մի յերեխայի լողացնելուց հետո վաննան պետք ե լվանալ ախտահանիչ լուծույթով կամ սպիրտով դաղել։

10. Գոնորեայի վերաբերմամբ կասկածելի կամ արտաթորանք ունեցող յերեխաները պետք է ունենան առանձին վաննա։

11. Յերեխայի ամբողջ տուալետը կատարվում է բացառապես քրոջ միջոցով։

12. Յերեխաների տաքության չափումը կատարվում է միմիայն անութում (թևի տակից)։

13. Հիմնարկում ներքնակները և գորգերը պետք է ծածկված լինեն մոմլաթով։

14. Թե քայլող և թե սողացող յերեխաներին պետք է վարտիկ հագցնել։

15. Կոնյունկտիվիտ (աչքի լորձաթաղանթի բորբոքում) հայտաբերելու դեպքում անհրաժեշտ է աչքերի արտաթորանքը բակտերիոլոգիական հետազոտման յենթարկել և ըստ հնարավորության յերեխային ցույց տալ ակնաբուժին։

16. Բլենորեայի և գոնորեական վուլվովագինիտի կլինիկական կասկածելի դեպքեր նկատվելիս՝ մինչև հիվանդության բնույթը պարզվելը, յերեխաները պետք է առանձնացված լինեն բոքսում։

17. Մսուրում սիֆիլիսի նկատմամբ կասկածելի յերեխա հայտաբերելու դեպքում վերջինս ուղարկվում է վեներոլոգի մոտ և մսուր չի թողնվում։

18. Հիմնարկի ամբողջ անձնակազմը և յերեխաները՝ վերջիններիս մեջ սիֆիլիս և գոնորեա հայտաբերելու դեպքում, անմիջապես զննվում են վեներոլոգ բժշկի կողմից, վորը տանը քննության է յենթարկում ընտանիքին։

Վեներոլոգ բժիշկ չլինելու դեպքում այդ կատարվում է հիմնարկի բժշկի կողմից, վորը տեղեկացնում է վենկազմակերպությանը կամ թաղամասի բժշկին։

19. Անձնակազմի մեջ գոնորեայի դեպք հայտաբերելու դեպքում հիվանդը մսուրից պետք է հեռացվի մինչև բորբոքման յերևույթների կայուն անհայտացումը, վորի մասին վեներոլոգ բժշկից պետք է տեղեկանք ներկայացվի։

20. Անձնակազմի մեջ սիֆիլիսի դեպքեր հայտաբերվելու դեպքում հիվանդին թույլատրվում է աշխատանքի գալ միայն սպեցիֆիկ բուժման յերեք կուրս ստանալուց հետո և յերբ մշտական

բժշկական հսկողության տակ է լինում և բուժհիմնարկությունից տեղեկանք է ներկայացնում։

Սիֆիլիսով հիվանդացած յերեխաները նորից մսուր են ընդունվում վերև բերված կանոնների համաձայն (տես կետ 7)։

21. Մսուրի բժիշկը գոնորեայի և սիֆիլիսի դեմ պայքարելու նպատակով սանլուսավորական աշխատանք է կատարում թե մայրերի և թե անձնակազմի մեջ։

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ՄՍՈՒՐՆԵՐՈՒՄ ՄԱՇԿԻ ՅԵՎ ԱՉՔԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Ընդունելության կանոնները

1. Մինչև մսուրն ընդունվելը ամեն յերեխա յենթարկվում է բժշկական քննության, ըստ վորում հատուկ ուշադրություն է դարձվում մաշկի վրա և մաշկի հիվանդությունները հայտաբերելու վրա։

2. Երիտրոդերմիայի, եկզեմայի (առանց հիվանդագին, թարախածին վարակի յերևույթների), ստրոֆուլյուսի, պրուրիգոյի յերևույթներ ունեցող յերեխաները մսուր են ընդունվում ընդհանուր հիմունքներով։

3. Թարախածին վարակով ու ֆուրունկուլյոզով բարդացած եկզեմայի յերևույթներ ունեցող յերեխաները մսուր ընդունվում են այն պայմանով, վոր նրանք խիստ մեկուսացված լինեն մյուս յերեխաներից։

4. Պիոդերմիա, իմպետիգո, պեմֆիգուս և մաշկի պարազիտային հիվանդություններ (տրիխոֆիտիա, քոս, գոնջուկ) ունեցող յերեխաները չեն ընդունվում։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՅԵՎ ՊԱՅՔԱՐ ՄԱՇԿԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

1. Ամեն օր յերեխաներին մսուր ընդունելիս և նրանց տուալետը կիրառելիս հերթապահ անձնակազմն ուշադրությամբ զննում է յերեխաների մաշկը։

2. Մաշկի կողմից վորևէ փոփոխություն հայտաբերվելու դեպքում անձնակազմը հատուկ թերթի վրա նշումներ է կատարում (հաշվառման թերթի սխեման տրվում է ստորև)։

3. Առողջ յերեխայի տուալետը և զննումը կատարվում է ընդհանուր սեղանի վրա, տվյալ յերեխայի բարուրի վրա։

4. Յերեխաների լվացումը կատարվում է հոսող ջրով։

5. Փոքր յերեխաների տուալետը կատարելիս նրանց մաշկի բոլոր ծալքերին ստերիլ վազելին են քսում, կամ տալկ կամ դերմատոլ են ցանում։

6. Յերեխայի ամբողջ հագուստը պետք է լինի ազատ, առանց կոպիտ կարերի ու ծալքերի։ Յերեխան չպետք է գերտաքանա։

7. Առանձնապես պետք է հետևել եքսուդատիկ և մաշկի շփաբորբի հակում ունեցող յերեխաներին (շուտ-շուտ շրջել և լվացում կատարել)։

8. Ամեն մի յերեխայից հետո խնամող անձնակազմը պետք է ձեռքերը լվանա։

9. Մինչև 6 ամսական յերեխաները լողացվում են ամեն օր. վեց ամսականից մինչև մեկ տարեկան հասակի յերեխաները՝ յերկու օրը մեկ անգամ, մեկ տարեկանից բարձր յերեխաները՝ հնգօրյակում մեկ անգամ. բացի դրանից՝ վերջիններս ամեն օր դուշ են ստանում։

10. Ամեն խումբ պետք է ունենա իր առանձին վաննան, վորն ամեն յերեխայից հետո լվացվում է լիզոլի լուծույթով։

11. Յուրաքանչյուր յերեխա լողանալուց հետո մարմինը չորացնելու համար գործ է ածում անհատական սավան կամ սրբիչ։

12. Յերեխաների ամբողջ սպիտակեղենը պարտադիր կերպով յեռացվում է։

13. Անհայտ բնույթի մաշկի հիվանդություններ հայտաբերվելու դեպքում մինչև նրանց բնույթը պարզելը, յերեխաները մեկուսացվում են։

14. Հիվանդության բնույթը պարզելուց հետո յերրորդ կետում նշված մաշկի հիվանդություններով տառապող յերեխաները հեռացվում են մսուրից։

15. Մաշկի հիվանդությամբ տառապող յերեխաների մեկուսացումը կատարվում է բոքսացրած հատուկ շենքում կամ խմբակի շենքում շարժական բոքսերով. այդ կախված է հիմնարկի հնարավորություններից և յերեխայի հիվանդության բնույթից։

16. Ամեն մի բոքս ունենում է առանձին խալաթ և ախտահանիչ լուծույթ։

Մեկուսացված յերեխայի տուալետը կատարվում է իր անկողնում։ Նրա կեղտոտ սպիտակեղենը պահվում է առանձին, այդտեղ գտնվող հատուկ փակ ամանում, ըստ վորում սպիտակեղենի վրա լիզոլի լուծույթ են լցնում։

17. Ամեն մի մեկուսացված յերեխայից հետո խնամող անձնակազմն օճառով և տաք ջրով խնամքով լվանում է ձեռքերը։

18. Մեկուսացված յերեխաների լողացումը կատարվում է նրանց համար հատկացվող առանձին վաննաներում, վորն ամեն յերեխայից հետո խնամքով լվացվում է լիզոլի լուծույթով։

19. Մեկուսացված յերեխաների համար գործ են ածվում անհատական պետքանոթներ։

20. Հերթապահությունը հանձնելու ժամանակ անձնակազմը հատուկ ուշադրություն է դարձնում մեկուսացված յերեխաների վրա։

21. Հիմնարկում միաժամանակ մի քանի յերեխաների մեջ 3-րդ և 4-րդ կետերում նշված մաշկի հիվանդություններ յերեվան գալու դեպքում, բժիշկն առանց հետաձգելու բոլոր յերեխաների քննություն է կատարում և կասկածելիների վերաբերմամբ մասնագետների հետ կոնսուլտացիա յե կազմակերպում։

2. Պայքար աչքի հիվանդությունների դեմ

1. Մսուր ընդունվող յերեխայի ընդհանուր բժշկական քննություն կատարելիս զննվում է նաև աչքի շաղկապենին։

2. Տրախոմայի, բլենորեայի և շաղկապենու բորբոքման (թարախահոսության յերևույթներով) դեպքեր հայտաբերելու դեպքում յերեխաները մսուր չեն ընդունվում։

3. Ամեն օր ընդունելություն և տուալետ կատարելիս խնամող անձնակազմը զննում է յերեխաների աչքերը։

4. Աչքի հիվանդություններ հայտաբերելու դեպքում, մին-

չէ հիվանդության բնույթը պարզելը, մեծ յերեխաները խիստ մեկուսացվում են, իսկ սողացող և ծծկեր յերեխաները մեկուսացվում են շարժական բոքսերով, կամ նրանց մահճակալները քաշվում են մի կողմի վրա, և մահճակալների վրա համապատասխան նշումներ են կատարվում։

5. Հիվանդության բնույթը պարզելուց հետո 2-րդ կետում նշված հիվանդություններ ունեցող յերեխաները հեռացվում են մսուրից։

6. Հիվանդ յերեխայի տուալետը կատարվում է իր մահճակալում։

7. Հիվանդ յերեխայի տուալետից հետո խնամող անձնակազմը ձեռքերը լվանում է օճառով և տաք ջրով։

8. Ամեն օր առավոտյան տուալետի ժամանակ յերեխայի աչքերը լվացվում են բորաթթվի 2%-ային լուծույթով։ Ընդսմին յուրաքանչյուր աչքը լվացվում է բամբակի տամպոնով։

9. Յերեխաների աչքերը լվանալուց առաջ քույրը լվանում է իր ձեռքերը։

10. Առողջ յերեխայի տուալետը կատարվում է ընդհանուր բարուրասեղանի վրա, սակայն տվյալ յերեխայի համար հատկացված բարուրի վրա։

11. Յերեխային լողացնելիս նրա յերեսն ընդհանուր ջրով չի լվացվում։

12. Ամեն մի յերեխա պետք է ունենա իր առանձին սրբիչը։

13. Սրբիչների կախարանները պետք է ունենան առանձին բներ։

14. Սրբիչը փոխվում է վոչ պակաս, քան հնգօրյակի ընթացքում մեկ անգամ։

15. Յերբ բժիշկը քննում է յերեխային, վերջինիս յերեսը չպետք է կպչի քրոջ խալաթին (վորը նրան բռնում է). բարուրի ծայրը դրվում է քրոջ ուսին։

16. Միաժամանակ մի քանի յերեխաների մեջ աչքի հիվանդություններ յերևան գալու դեպքում անհապաղ բոլոր յերեխաների աչքերի զննում է կատարվում։

Կասկածելի դեպքերն առանձնացվում են և նրանց համար մասնագետների հետ կոնսուլտացիա յե կազմակերպվում։

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ՊԻՐԿԵՅԻ ՌԵԱԿՑԻԱ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՅԵՎ ԱՅՆ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Պիրկեյի ռեակցիան տեխնիկապես կատարվում է այսպես. զանազան թնդություն ունեցող տուբերկուլին են քսում մաշկի տրավմացման յենթարկված մասին։

Տրավմացման յենթարկված հյուսվածքի ռեակցիան, վորն արտահայտվում է տուբերկուլին դրած տեղում բորբոքման ինֆիլտրատ յերևան գալու ձևով, ցույց է տալիս, վոր օրգանիզմում տուբերկուլյոզի վարակ կա։

2. Մաշկի տրավմացումը նպատակ ունի բացահայտել յենթաէպիդերմիալ շերտերի ավշային ուղիները, վորտեղ տուբերկուլինի ներծծում է տեղի ունենում.

Այդ դեպքում անհրաժեշտ է օգտագործել այնպիսի տեխնիկա, վորը տալիս է մինիմալ տրավմատիկ, այսինքն՝ վոչ սպեցիֆիկ բորբոքային ռեակցիա, վորի շնորհիվ ավելի յե ճշտվում տուբերկուլինի առաջացրած սպեցիֆիկ բորբոքային ռեակցիան Այդ նպատակով հանձնարարվում է մաշկը քերծել և նրա վրա բարակ մակերեսային գծանման կտրվածք անել։

3. Մաշկի քերծման համար կարելի յե օգտագործել վորևէ բութ մակերես ունեցող կտրող գործիք՝ ծաղկապատվաստման ասեղ, բութ լանցետ և այլն։

4. Ռեակցիան բոլորից հարմար է կատարել ուսի արտաքին կողմնային մակերեսի վրա՝ արմունկից վերև, ինչպես և նախաբազուկի վրա։ Մաշկի այն տեղը, վորտեղ քերծվածք են առաջացնում, չպետք է սպիացած տեղ լինի, վորովհետև այդ կարող է խանգարել բորբոքման ռեակցիայի նորմալ զարգացմանը։ Նմանապես պետք է խուսափել արմունկի մոտի մաշկամասերից, վորոնք հարուստ են ելաստիկ հյուսվածքներով։ Կրկնվող ռեակցիաներ կատարելիս պետք է ընտրել մաշկի անձեռնամուխ մասերը։

5. Ընտրած մաշկամասը պետք է համապատասխան կերպով նախապատրաստել, այսինքն մաքրել կեղտից և ըստ հնարավորության ճարպազուրկ անել։ Այդ նպատակի համար սպիրտ չի հանձ-

նարարվում, վորովհետև նա կարող է տուբերկուլինի ակտիվ նյութերի նստվածք առաջացնել։ Մաշկը կարելի յե մաքրել բենզինով, կամ յեթերով, կամ կարբոլաթթվի 2%-ային լուծույթով թրջած բամբակով։ Սակայն այս դեպքում պետք է հոգ տանել, վոր մաքրված մաշկը, մինչև ռեակցիա կատարելը, չորանա։ Հակառակ դեպքում տուբերկուլինը թաց մաշկի մակերեսից կարող է անբավարար կերպով ներծծվել և ռեակցիան կարող է բացասական արդյունք տալ։ 100%-անի տուբերկուլինը պետք է մինչև մաշկը քերծելը կաթեցնելով կաթեցնել մաշկի վրա, առանց մաշկին դիպչելու։

Մաշկի քերծումը կատարվում է հետևյալ կերպ. սկզբում կատարվում է վերահսկիչ չոր կտրվածք, ապա կատարվում է կտրվածք տուբերկուլինի կաթիլի մեջ։

Բացի 100%-անի տուբերկուլինից, գործածական են նաև նրա լուծույթները՝ 3%, 10%, 30%, բայց այդ լուծույթների գործածումը զուտ դիագնոստիկ հետազոտությունների ժամանակ ավելորդ է։ Այդ նպատակահարմար է միայն այն դեպքում յերբ անհրաժեշտ է հետևել ռեակցիայի աստիճանի փոփոխմանը։ Նշված լուծույթներով ռեակցիա կատարելիս անհրաժեշտ է օգտագործել նաև կոնտրոլ (վերահսկիչ) լուծույթ, այսինքն՝ 100,0 ֆիզիոլոգիական լուծույթին 0,5 ac. carbolici և 5,0 glicerini։ Հեղուկն ստերջացվում է։

6. Մաշկի քերծում կատարելիս յերեխայի ձեռքերը պետք է յերկու մատով բռնել։ Այդ դեպքում մաշկի ծածկույթի լարվածությունը թույլ չի տալիս, վոր մատները սահեն և ապահովում է գործիքի ճնշման ուժը և համաչափությունը։ Տրավման պետք է խախտի մաշկի միայն մակերեսային շերտերի անվթարությունը։ Համենայն դեպս պետք է խուսափել արյունահոսությունից, վորը խանգարում է ներծծմանը։

Կանոնավոր քերծման յերաշխիք է այն կեղանքը, վորը մակերեսորեն ու գծանման առաջանում է քերծված տեղում։

Բացասական ռեակցիայի դեպքում կեղանքի բացակայությունը հիմք է տալիս կասկածելու, վոր տեխնիկան ճիշտ չի կատարված։

7. Քերծվածքի յերկարությունը պետք է լինի միատեսակ և հավասար 5—10 մմ։ Հանձնարարվում է քերծվածքները դա-

սավորել յերկայնակի, իրարից հավասար (1,5—2 սմ) հեռավորության վրա։

8. Վորպեսզի տուբերկուլինը ներծծվի մաշկի մեջ՝ պահանջվում է վորոշ ժամանակ—5 րոպեյից վոչ պակաս։ Այդ ժամկետից հետո տուբերկուլինը կարելի յե բամբակով զգուշությամբ հեռացնել։

Այն դեպքում, յերբ ռեակցիան կատարվում է տուբերկուլինի ջրախառն լուծույթով, տուբերկուլինը բամբակով պետք է հեռացնել, սկսելով կոնտրոլ քերծվածքից և թույլերից անցնելով ավելի ուժեղ լուծույթների։

Յեթե տուբերկուլինը մաշկից հեռացվում է այդ ժամկետից շուտ, ռեակցիան կարող է ստացվել ավելի թույլ կամ բացասական։

Ռեակցիայի տեղը բինտով կապելն ավելորդ է։

9. Պիրկեյի ռեակցիա կատարելու դեպքում սովորաբար գործ են ածում Koch'ի Alt. tuberkulin-ը։

Պրեպարատը գործածելիս նշանակություն ունի վոչ այնքան ֆիրմայի (օրինակ՝ եքսպերիմենտալ բժշկականության ինստիտուտ) մարկան, վորքան արտադրման սերիան, վորովհետև առանձին սերիաների թունավորությունը տարբեր է։ Ուստի մասսայական հետազոտությունների ժամանակ, վորպեսզի հնարավոր լինի համապատասխան պրեպարատ ունենալ, հետևաբար հնարավոր չլինի ամեն ժամանակ իրար հետ համեմատվող արդյունքներ ստանալ, հանձնարարվում է հենց սկզբից պատրաստել միևնույն սերիայի տուբերկուլինի բավարար պաշար

10. 100%-անի տուբերկուլինը և նրա բոլոր ջրախառն լուծույթները պետք է պահվեն հարմար կաթոցիկներ ունեցող շագանակագույն ապակյա սրվակներում։

100%-անի տուբերկուլինը կարող է գործածության համար պիտանի համարվել այնքան ժամանակ, քանի նա դեռ բոլորովին թափանցիկ է։ Ամենաչնչին պղտորություն առաջանալու դեպքում նա պետք է հանվի գործածությունից։

Ամեն տաս օրը մեկ անգամ տուբերկուլինի լուծույթները պետք է փոխարինվեն թարմ ջրախառն լուծույթներով։ Այն դեպքերում, յեթե նրանք այդ ժամկետից շուտ են պղտորվում, անմիջապես պետք է գործածությունից հանվեն։

11. Տուբերկուլինի առաջացրած ռեակցիայի (մաշկի վերաբերմամբ) արդյունքները չափվում են քանակապես։ Դրա համար վորոշվում է բորբոքային ինֆիլտրատի տրամագիծը, վորը (ինտերնատը) յերևան է գալիս քերծված տեղում։ Չափվում է քերծվածքի ուղղությանն ուղղահայաց՝ ցանի տրամագիծը։ Չափումը կատարվում է միլիմետրային կարկինով կամ միլիմետրային քանոնով։ Այն դեպքում, յերբ ինֆիլտրատի սահմաններն իրենց արտաքին տեսքով պարզորոշ չեն, նրանք նախապես վորոշվում են շոշափելու միջոցով, իսկ նրանց սահմանները, չափելու հարմարության համար, նշվում են կետերով (թանաքով)։ Բացի ինֆիլտրատի մեծությունը միլիմետրով վորոշելուց, անհրաժեշտ է նաև նշել ռեակտիվ բորբոքման այնպիսի մորֆոլոգիկ (ձևաբանական) առանձնահատկություններ, ինչպիսին է շճային եքսուդատի, տարածուն հիպերեմիայի առկայությունը, կեղեր, նեկրոզ առաջանալը, թեփոտումը, գունավորում յերևան գալը և այլն։

12. Ռեակցիայի հետազոտումը կատարվում է 48 ժամից հետո։

Տուբերկուլինի առաջացրած դրական ռեակցիան այն է, յերբ 5 մմ վոչ պակաս տրամագծով ցան է յերևան գալիս։ Պակաս տրամագիծ ունեցող ցանի առաջացրած ռեակցիան, վորը միայն հիպերեմիա յե առաջացրել առանց ցանի, պետք է համարվի կասկածելի։ Այդպիսի դեպքերում պահանջվում է Պիրկեյի ռեակցիայի կրկնական կատարում՝ առաջին ռեակցիայից 5—7 որ անցնելուց հետո։

Յեթե 48 ժամից հետո Պիրկեյի ռեակցիան բացասական արդյունք է տալիս, ապա պետք է իսկույն ևեթ Մանտուի ռեակցիա կատարել։

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆԻ ՆԵՐՄԱՇԿԱՅԻՆ ՓՈՐՁ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՅԵՎ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ (ՄԱՆՏՈՒԻ ՌԵԱԿՑԻԱ) ՄԱՍԻՆ

1. Մանտուի ռեակցիան կատարվում է մաշկի մեջ վորոշ խտության տուբերկուլինի լուծույթ սրսկելու միջոցով։

Սրսկելու տեղում առաջացող ինֆիլտրատը վկայում է, վոր որգանիզմի մեջ տուբերկուլյոզի վարակ կա։

2. Մանտուի ռեակցիա կատարելու համար պահանջվում է մեկ գրամանոց սրսկիչ՝ 0,1 մ բաժանումներով և բարակ ասեղ (ցանկալի յե պլատինե)։ Սրսկիչը և ասեղը պետք է ստերիլ լինեն։

3. Ավելի հարմար է Մանտուի ռեակցիա կատարել բազկի առջևի մակերեսին։

4. Մաշկի նախապատրաստումը կատարվում է նույն կերպ, ինչ վոր Պիրկեյի ռեակցիա կատարելու դեպքում։

5. Մանտուի ռեակցիան կատարելու ժամանակ յերեխայի բազկի մաշկը բռնում են ձախ ձեռքով այնպես, վոր բազկի առջևի մակերեսի մաշկը լինի ձգված։ Նախորոք սրսկիչով վերցնելով 0,1 սմ տուբերկուլինի լուծույթ, ասեղը մտցվում է մաշկի հաստքի մեջ տափակ կողմով, մաշկի մակերեսին զուգահեռաբեն, ըստ վորում ասեղի անցքն ուղղվում է դեպի վեր։ Յերբ ասեղի անցքն անհայտանում է մաշկի հաստքում, ցուցամատով սկսում են ճնշում գործ դնել սրսկիչի մխոցի վրա, ներմուծելով 0,1 սմ լուծույթ։

Հաջող ներարկման դեպքում մաշկի մեջ առաջանում է սպիտակ «վոսպահատ», վորը շոշափելիս առաձգական է լինում։ Յեթե հեղուկն ընկնում է մաշկի տակ, «վոսպահատ» չի առաջանում։ Հետագայում «վոսպահատը» տարածծվում է և նրա տեղը դրական ռեակցիա առաջանալու դեպքում ինֆիլտրատ և հիպերեմիա յե ստացվում։

6. Մանտուի ռեակցիա կատարելու համար հարմար է ոգտագործել ԽՍՀՄ-ում և Գերմանիայում տարածված Alt. tuberkulin պրեպարատը։

7. Տուբերկուլինի լուծույթ պատրաստելու համար հեղուկ են գործածում հետևյալ բաղադրությամբ. 100,0 ֆիզիոլոգիական լուծույթին վերցնում են 0,5 ac. carbolici. Հեղուկն ստերջացվում է։ Ջրախառն լուծույթ ստացվում է յերկու աստիճանավորված ստերիլ կաթոցիկների կամ սրսկիչների ոգնությամբ (10,0 հեղուկ և 1,0 տուբերկուլին)։ Ստերիլ խցանով փակվող ստերիլ սրվակի մեջ լցնում են մեկ մաս 100%-անի Alt. tuberkulin և 9 մաս ստերիլ հեղուկ՝ լուծույթ պատրաստելու համար։ Խառ-

նուրդը լավ թափահարում են, և ստացվում է ջրախառն լուծույթ: Մյուս սրվակի մեջ լցնում են մեկ մաս առաջին ջրախառն լուծույթից և 9 մաս կոնտրոլ հեղուկից: Ստացվում է 2 ջրախառն լուծույթ: Հետևյալ լուծույթներն ստացվում են նույն յեղանակով: Տուբերկուլինի լուծույթները հաճախակի գործածելու դեպքում, յեթե պղտորություն չկա, կարող են պահվել 10 օրից վոչ ավելի:

8. Մանտուի ռեակցիան դիագնոստիկ նպատակների համար կատարվում է այն դեպքում, յեթե անմիջապես դրանից առաջ կատարված Պիրկեյի ռեակցիան բացասական արդյունք է տվել:

Վորպես սկզբնական դոզա գործածվում է յերրորդ ջրախառն լուծույթը:

Յեթե կլինիկական հիմք կա տուբերկուլյոզի ակտիվ պրոցես յենթադրելու, չնայած Պիրկեյի կրկնակի բացասական ռեակցիային, հանձնարարվում է վորպես սկզբնական դոզա գործածել 4-րդ ջրախառն լուծույթը:

Յեթե 48 ժամից հետո բացասական արդյունք է արձանագրվում, ռեակցիան կրկնում են հետևյալ ջրախառն լուծույթով:

Սովորաբար Մանտուի ռեակցիան կատարվում է բացասական արդյունք ստանալու դեպքում մինչև 2-րդ ջրախառն լուծույթը ներառյալ, սակայն յեթե 2-րդ ջրախառն լուծույթը բացասական ռեակցիա յե տալիս, ապա կարելի յե զգայնությունը հետազոտել տուբերկուլինի ավելի ուժեղ լուծույթով (1-ին ջրախառն լուծույթ և զուտ տուբերկուլին):

9. Տուբերկուլինը մաշկի մեջ ներարկելու դեպքում առաջացող ռեակցիան արտահայտվում է նրանով, վոր 48 ժամից հետո ինֆիլտրատ է յերևան գալիս սովորաբար հիպերեմիայի հետ միասին:

Ինֆիլտրատի մեծությունը չափվում է միլիմետրային քանոնով, ըստ վորում նշվում է ինֆիլտրատի առավելագույն մեծությունը: Բացի դրանից, նկարագրվում են ցանի ձևաբանական տարրերը, ինֆիլտրատի բնույթը (կարծր, փափուկ) և հիպերեմիայի ինտենսիվությունը: Կլինիկական կողմից յերբեմն հաշվի յեն առնվում տուբերկուլինի առաջացրած ջերմային և ակումբային ռեակցիաները:

10. Դրական ռեակցիա յե համարվում 8 մմ տրամագիծ ունեցող ցանը: Յեթե ցանի տրամագծի չափը 8 մմ-ից քիչ պակաս է, ապա հետազոտման արդյունքը պետք է կասկածելի համարել: Այդպիսի դեպքերում անհրաժեշտ է կրկնակի հետազոտություն կատարել նույն ջրախառն լուծույթով: Յեթե ռեակցիան հասնում է 8 մմ, ապա հետազոտության արդյունքը համարում ենք դրական: Հակառակ դեպքում հետազոտությունը կատարվում է տուբերկուլինի հետևյալ ավելի խտացրած լուծույթով:

Այն դեպքում, յեթե միաժամանակ կոնտրոլ հեղուկ (բուլյոն) ենք ներարկում, այդ դեպքում պահանջվում է առանձին ներարկիչ և ասեղ:

Կաշվի հիվանդությունների հաշվառման տետրի սխեմա ——— ամսի համար

(Տանում է խմբի քույրը)

Ամսա-թիվ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31
Անուն ազգանուն	Մաշկ	Մաշկ	Մաշկ	Մաշկ	Մաշկ	Մաշկ	Մաշկ	Մաշկ	Մաշկ	Մաշկ	Մաշկ	Մաշկ	Մաշկ	Մաշկ	Մաշկ	Մաշկ	Մաշկ	Մաշկ	Մաշկ	Մաշկ	Մաշկ	Մաշկ	Մաշկ	Մաշկ	Մաշկ	Մաշկ	Մաշկ	Մաշկ	Մաշկ	Մաշկ	Մաշկ

ՊԱՅՔԱՐ ՎԱՐԱԿԻ ԴԵՄ ՄՍՈՒՐՆԵՐՈՒՄ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ՄՍՈՒՐ ՄՈՒՏՔ ԳՈՐԾՈՂ ՄԱՆԿԱԿԱՆ ՎԱՐԱԿԸ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼՈՒ ՅԵՎ ՆՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

I. *ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ*

1. Մսուր ընդունվող յերեխան պետք է քննվի մսուրի բժշկի և վեներական հիվանդությունների մասնագետ բժշկի կողմից ընդունելության նախօրյակին (տես «Հրահանգ մսուրում վեներական հիվանդությունների դեմ պայքարելու մասին»)։

2. Մսուր հաճախելուց առաջ յերեխան պետք է տանը հետազոտվի պատրաստված քրոջ կողմից, վորը պարզում է սուր վարակիչ հիվանդությունների առկայությունը յերեխային շրջապատող անձանց մեջ։

3. Բժիշկը յերեխային մսուր ընդունելիս պետք է պարզի, թե յերեխան անցյալում հիվանդացե՞լ է արդյոք վարակիչ հիվանդություններով և պատվաստումներ կատարվե՞լ են արդյոք ծաղկի, քութեշի և դիֆտերիայի դեմ։ 3 ամսական հասակից բարձր բոլոր յերեխաներին պարտադիր կերպով ծաղկապատվաստում է կատարվում։ 6 ամսական հասակից մեծ յերեխաներին առաջին պատվաստումը դիֆտերիայի դեմ պետք է կատարվի վոչ ուշ, քան յերեխայի մսուրում մնալուց մեկ ամիս հետո։ Պատվաստումներ կատարելիս պետք է ղեկավարվել դիֆտերիայի դեմ ակտիվ իմունացման կատարելու հրահանգով։

4. Այն դեպքում, յեթե յերեխան դադարում է մսուր հաճախել, անհրաժեշտ է վոչ ուշ, քան մեկ որ հետո պարզել նրա

բացակայության պատճառը՝ նրա բնակարանում հետազոտություն կատարելու միջոցով։ Նմանապես անհրաժեշտ է ժամանակին պարզել անձնակազմի բացակայության պատճառը, եթե անձնակազմն աշխատանքի չի գալիս։

5. Անհրաժեշտ է մորը ներշնչել, որ նա պարտավոր է մսուրին հայտնել երեխայի հիվանդացման յուրաքանչյուր դեպքի մասին, ինչպես և երեխայի ապրած բնակարանում տեղի ունեցող վարակիչ հիվանդացումների բոլոր դեպքերի մասին։

6. Նույնը վերաբերում է մսուրի անձնակազմին, եթե նրա բնակարանում, մանավանդ երեխաների մեջ հիվանդության դեպքեր են տեղի ունենում։

7. Անհրաժեշտ է երեխաների հաճախումների ցուցակ կազմել և յուրաքանչյուր անգամ նշել այդ ցուցակում երեխայի բացակայության պատճառը։

Բացի դրանից, մսուրում պետք է կատարվի համաճարակների ցուցակագրություն հետևյալ ձևերով (ձևերը տես ստորև). ա) սուր վարակիչ հիվանդությունների մատյան, բ) պրոֆիլակտիկ պատվաստումների մատյան, գ) ինֆեկցիոն աղյուսակ, յուրաքանչյուր խմբի համար։

8. Այս կամ այն հիվանդությունն անցկացրած երեխան պետք է մսուր վերադառնալիս տեղեկանք ունենա այն բժշկից, որը բուժել է նրան։

9. Երեխաների ամենօրյա ընդունելության ժամանակ պետք է յուրաքանչյուր երեխա խնամքով քննվի (երախը, մաշկը), պետք է չափեն նրա տաքությունը, հարց ու փորձ անեն մորը։ Երեխաների ընդունելությունը կանոնավոր կերպով կատարելու համար պետք է առանձնացվի ամենից ավելի հմուտ անձնակազմը (քույր-հրահանգչուհին կամ բժշկական քույրը), որը պետք է լինի բժշկի հսկողության տակ, ըստ որում նրա աշխատանքը պետք է վերստուգվի բժշկի կողմից ոչ սակավ, քան հնգօրյակում մեկ անգամ։

10. Այն դեպքում, երբ կասկած է առաջանում որևէ վարակի նկատմամբ, մի վարակ, որի առկայության դեպքում երեխային չի կարելի մսուր ընդունել, երեխաներին հենց ընդունելության վայրից տուն են ուղարկում։ Այն դեպքում, եթե այսպիսի երեխային ընդունելը խիստ անհրաժեշտ է, կարելի է

նրան ժամանակավորապես տեղավորել մեկուսարանում (եթե վերջինս ապահովում է երեխայի լիակատար մեկուսացումը)։

11. Վարակիչ հիվանդություն անցկացրած երեխաները մսուր վերադառնալուց առաջ պետք է ամենայն խնամքով լողացվեն, իսկ նրանց հագուստը պետք է ախտահանվի։

12. Վարակիչ հիվանդության յուրաքանչյուր դեպքի մասին նույն օրը պետք է տեղեկացնել սանիտարական բժշկին կամ համաճարակագետին և ՄՄՊ-ի հրահանգիչ բժշկին։ Սուր վարակիչ հիվանդություն նկատվելու յուրաքանչյուր դեպքի մասին պետք է կազմել հատուկ ծանուցման քարտ և համապատասխան տեղեկություններով ուղարկել սանիտարական բժշկին։

Արտակարգ ծանուցում պետք է լինի հետևյալ հիվանդությունների մասին.

1) կարմրուկ, 2) քութեշ, 3) դիֆտերիա, 4) կապույտ հազ, 5) բնական ծաղիկ, 6) համաճարակային մենինգիտ, 7) դիզենտերիա, 8) որովայնատիֆ, 9) պարատիֆ։

13. Մսուրում անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել, որ ըստ հնարավորության երեխաների առանձին խմբերը միանգամայն մեկուսացված լինեն, այն է՝ որ հնարավորության սահմաններում լինեն առանձին ընդունարաններ. չլինեն միջանցիկ սենյակներ և այլն։ Այն երեխաները, որոնք մնում են մսուրում գիշերելու համար, նրանց չպետք է միացնել մի խմբում։

Մսուրը որևէ վարակ մուտք գործելու դեպքում երեխաների խմբերը պետք է առավելագույն չափով մեկուսացված լինեն միմյանցից։

14. Կատեգորիկ կերպով արգելվում է մսուրում հիվանդ երեխաների ամբուլատորիական ընդունելություն կատարել։

Մսուրի հիվանդ երեխաները չպետք է հաճախեն ընդհանուր բուժարան (ամբուլատորիա), այլ ըստ հնարավորության պետք է բժշկական օգնություն ստանան տանը։

15. Հիվանդ երեխաներին հիվանդանոց ուղարկելիս մսուրը պարտավոր է զգուշացնել վարակի առկայության կամ մսուրում կարանտին սահմանելու մասին (մանավանդ կարմրուկի վերաբերմամբ)։

16. Մսուրի ամբողջ անձնակազմը պետք է ամեն ամիս բժշկական քննության ենթարկվի, իսկ այն աշխատակիցները,

որոնք կապված են կերակուր պատրաստելու և ալիտակեղեն լվանալու հետ, աշխատանքի ընդունվելուց առաջ հետազոտվում են տիֆի բացիլներ հայտաբերելու նպատակով (հետագայում հետազոտվում են յեռամսյակում մեկ անգամ)։

II. ԿԱՆՈՆՆԵՐ ՄՍՈՒՐՈՒՄ ԱՌԱՆՁԻՆ ՎԱՐԱԿՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մսուրում սուր վարակիչ հիվանդություններ յերևալու դեպքում բժիշկը պետք է իր ձեռնարկումների մեջ նկատի առնի հիվանդացման յուրաքանչյուր դեպքի առանձնահատկությունները։ Այս հրահանգն ընդհանուր ղեկավար բնույթ ունի։

Կարմրուկ

1. Կարմրուկով հիվանդացած յերեխան մսուրից հեռացվում է և կարող է նորից մսուր ընդունվել վոչ շուտ, քան ցան յերեվալուց 7 որ հետո, յեթե բարդություններ չկան։

2. Կարմրուկով հիվանդանալու առաջին դեպքից հետո հիվանդ յերեխայի հետ շփում ունեցած մյուս յերեխաները յենթարկվում են հակակարմրուկային պատվաստման։ Պատվաստումը ըստ հնարավորության կատարվում է հիվանդությունը հայտաբերելու որը, բայց վոչ ուշ, քան առաջին հիվանդացածի վրա ցան յերևալուց մեկ-յերկու որ հետո (խմորման—ինկուբացիայի 5—6-րդ որը)։ Յեթե շիճուկը սրսկվում է հիշյալ ժամկետից ուշ, ապա այդ հանգամանքը թուլացնում է շիճուկի պրոֆիլակտիկ ազդեցությունը։

Յերեխաները շարունակում են մսուր հաճախել։ Այն խմբերը, վորոնք կարմրուկով հիվանդ յերեխայի հետ շփում են ունեցել, կարանտինի ժամանակամիջոցում ամենախիստ մեկուսացման են յենթարկվում և առանձնացվում մյուս խմբերից (առանձին ընդունարան, պետքանոթարան, խմբերի միջև յեղած դռները պետք է կնքված լինեն, դռան ճեղքերն ու ծակերը խցված և այլն)։

3. Յեթե մսուր հաճախող յերեխայի տանը կարմրուկի դեպք է նկատվել և հիվանդը հիվանդանոց չի ուղարկվել, ապա յերեխան այս դեպքում կարող է մսուր հաճախել վոչ շուտ, քան բնակարանում տեղի ունեցած վերջին հիվանդացման դեպքից (հիվանդությունն սկսվելու որից) 28 որ հետո, հաշվելով ցանը յերևալու մոմենտից, իսկ այն յերեխան, վորին պատվաստում է արված, մսուր կարող է հաճախել միայն 35 որից հետո։ Յեթե մսուր հաճախող յերեխայի բնակարանում կարմրուկով հիվանդանալու դեպք է յեղել և հիվանդը չի մեկուսացվել հիվանդանոցում կամ չի հեռացվել բնակարանից, յերեխան կարող է մսուր հաճախել վոչ շուտ, քան հիվանդի հետ ունեցած վերջին շփումից 21 որ անցնելուց հետո։

Այն յերեխան, վորին պատվաստում է արված, այս դեպքում կարող է մսուր հաճախել 28 որ անձնելուց հետո։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Վերոհիշյալ կանոնը վերաբերում է միայն այն յերեխաներին, վորոնք կարմրուկով չեն հիվանդացել։ Իսկ այն յերեխաները, վորոնք կարմրուկով հիվանդացել են և կարմրուկով հիվանդի հետ շփում են ունեցել, կարող են մսուր հաճախել։ Անցկացրած հիվանդության մասին պետք է բժշկից համապատասխան տեղեկանք ներկայացվի։

4. Յեթե անձնակազմի ընտանիքում հիվանդության դեպք է նկատվում, անձնակազմը կարող է մսուր հաճախել։

5. Այն դեպքում, յեթե հիվանդացման առաջին դեպքից հետո հակակարմրուկային պատվաստում կատարելն անհնարին է, և յեթե պարզվում է, վոր հիվանդն առանձնացվել է պրոդրոմալի (նախանշաններ յերևալու) շրջանում և կարող էր ուրիշներին վարակել, ապա մսուրը շարունակում է նորմալ կերպով գործել 9 որվա ընթացքում, հաշվելով հիվանդությունն սկսվելու մոմենտից կամ հինգ որվա ընթացքում՝ հիվանդացածի վրա ցանը յերևալու մոմենտից։ Հետագա 12—16 որերի ընթացքում հիվանդացած յերեխայի հետ շփում ունեցած խմբերը կարմրուկ չանցկացրած նոր յերեխաներ չեն ընդունվում։

6. Մսուրում կարմրուկ լինելու դեպքում, 28 որվա ընթացքում, հաշվելով վերջին հիվանդացման պահից, նոր յերեխաներ չեն ընդունվում. այն խմբերը, վորոնք հիվանդացածների հետ շփում են ունեցել, յեթե խմբի յերեխաներին պատվաստում է արված, և 21 որվա ընթացքում, յեթե պատվաստում չի արված։

7. Հատուկ ախտահանություն չի կատարվում։ Շենքը խնամքով մաքրվում է և ոդափոխվում։

Քութեշ

1. Քութեշով հիվանդացած յերեխան անմիջապես հեռացվում է մսուրից և ուղարկվում հիվանդանոց: Քութեշից ապաքինված յերեխան կարող է նորից մսուր հաճախել վոչ շուտ, քան հիվանդությունն սկսվելուց 40 օր հետո, յեթե չկան սուր թարախային բարդություններ: Հիվանդանոցից դուրս գրված յերեխան մսուր ընդունվելուց առաջ յենթարկվում է տնային մեկուսացման վոչ պակաս, քան 10 օրով:

2. Յեթե մսուր հաճախող յերեխային շրջապատողների մեջ տանը հիվանդացման դեպքեր են նկատվել և հիվանդները հիվանդանոց չեն ուղարկվել, յերեխան կարող է մսուր հաճախել միայն հիվանդի ապաքինվելուց և նրա բնակարանում վերջնական ախտահանություն կատարելուց 12 օր հետո: Իսկ յեթե հիվանդը հիվանդանոց է ուղարկվել կամ անմիջապես մեկուսացվել է, ապա մսուր հաճախող յերեխան կարող է նորից հաճախել հիվանդին մեկուսացնելուց և բնակարանում ախտահանություն կատարելուց 12 օր հետո:

3. Մսուրում քութեշի առաջին դեպքը հայտաբերելուց հետո ախտահանություն է կատարվում և մսուրը շարունակում է գործել: Այն խումբը, վորտեղ հիվանդություն է նկատվել, 12 օրով մեկուսացվում է մյուս խմբերից: Այդ խումբը քութեշով չհիվանդացած նոր յերեխաներ չեն ընդունվում: Այդ խմբի յերեխաներն ամեն օր խնամքով քննվում են բժշկի կողմից: Յեթե յերեխան վորևե թույլ կասկած է առաջացնում անգամ թեթև անգինայի նկատմամբ, ապա նա անմիջապես հեռացվում է:

4. Այն դեպքերում, յեթե վորևե խմբում կամ տարբեր խմբերում քութեշի կրկնվող դեպքեր են նկատվում և յերբ հիմք է լինում յենթադրել, վոր վարակման աղբյուրը մսուրն է, ապա վերջինս պետք է 12 օրով փակվի: Յերեխաների համար սնունդ տրվում է, ըստ վորում նախազգուշական միջոցներ են ձեռք առնվում, վորպեսզի մսուրը վարակ մուտք չգործի: Խմբի կամ մսուրի փակումը պետք է համաձայնեցվի սանիտարական բժշկի և բժշկական հրահանգչի հետ:

5. Յեթե հիվանդացում է տեղի ունենում անձնակազմի տանը, ապա վերջինս (անձնակազմը) մսուր չի կարող հաճախել

մինչև նրա բնակարանում ախտահանություն կատարվելը: Հետագայում հիվանդության խմորման (ինկուբացիոն) շրջանում (12 օր) անձնակազմը գտնվում է բժշկի հսկողության տակ:

6. Նկատի առնելով քութեշի հարուցչի կայունությունը, քութեշով հիվանդանալու դեպքերում պետք է լուրջ ուշադրություն դարձնել, վոր ախտահանությունը խնամքով կատարվի: Բոլոր փափուկ իրերը պետք է անցկացնեն ախտահանման կամերայի միջով, իսկ սպիտակեղենը և ամբողջ ամանեղենը պետք է յեռացվեն:

7. Քութեշի դեմ մասսայական պատվաստումներ Մոսկվայի մարզի մսուրներում կիրառվում են ըստ համաճարակային ցուցմունքների, սանհսկողության առաջարկությամբ:

Դիֆտերիա

1. Բոլոր վեց ամսականից մեծ յերեխաներին պետք է դիֆտերիայի դեմ պատվաստում կատարել (տես «Ընդհանուր մասը»):

2. Այն անձնակազմին, վորն ըստ Շիկի դրական ռեակցիա յե ունեցել և չփում ունի յերեխաների հետ, ցանկալի յե ակտիվ իմունացում կատարել:

3. Հիվանդացած յերեխան մսուրից անմիջապես հեռացվում է և կարող է նորից մսուր հաճախել կլինիկական յերևույթները վերանալուց հետո (չհաշվելով պարալիչները), յեթե բացիլակրության հայտաբերելու նպատակով յերկու անգամ կատարված հետազոտությունը բացասական արդյունք է տվել: Առաջին հետազոտությունը կատարվում է վոչ շուտ, քան հիվանդությունն սկսվելուց 14 օր հետո: Այն ժամանակ, յերբ յերեխան հիվանդանոցից վերադառնում է և յերբ նա պետք է նորից մսուր ընդունվի, անհրաժեշտ է յերեխայի յերախից և քթից արտաթորած լորձը վերահսկչական հետազոտման յենթարկել:

Յեթե յերեխան ապաքինվելուց հետո շարունակում է բացիլակիր մնալ, ապա նա կարող է մսուր հաճախել միայն հիվանդությունն սկսվելու օրից յերկու ամիս անցնելուց հետո:

4. Յեթե մսուր հաճախող յերեխայի տանը դիֆտերիայի դեպք է նկատվել, ապա նա կարող է մսուր հաճախել հիվանդի ապաքինվելուց, ախտահանություն կատարելուց և բացիլակրու-

թյան վերաբերմամբ հետազոտություն կատարելուց հետո։ Յեթե պարզվի, վոր յերեխան դիֆտերիական ցուպիկներ չունի, նա կարող է մսուր հաճախել, բայց պետք է 7 որվա ընթացքում լինի բժշկի հսկողության տակ։ Այն դեպքում, յեթե Լեֆլերի ցուպիկներ են հայտաբերվում, ապա յերեխան կարող է մսուր հաճախել յերկու անգամ կատարված բացասական հետազոտությունից հետո, ըստ վորում յերկրորդ հետազոտությունը կատարվում է առաջինից 2—3 որ անցնելուց հետո։ Այն դեպքում, յեթե ցուպիկներ են հայտաբերվում, յերեխան կարող է մսուր հաճախել։

5. Մսուրն սպասարկող աշխատակիցների բացիլակրության վերաբերմամբ կիրառվում են նույն կանոնները, ինչ և յերեխաների վերաբերմամբ։

6. Դիֆտերիայով հիվանդանալու առաջին իսկ դեպքից հետո յերեխաների խմբում հետազոտություն է կատարվում՝ յերեխաների և հիվանդի հետ շփում ունեցած անձնակազմի մեջ բացիլակրություն հայտաբերելու նպատակով։

Հայտաբերված բացիլակիրներին արգելվում է մսուր հաճախել (ժամկետը համաձայն 4-րդ կետի)։

7. Մսուրը շարունակում է գործել ախտահանություն կատարելուց հետո։ Յերեխաների յերախն ամեն որ քննվում է։

8. Յեթե դիֆտերիայի կրկնվող դեպքեր են նկատվում և յեթե պարզվում է, վոր վարակի աղբյուրը մսուրն է, այդ դեպքում բոլոր յերեխաները և անձնակազմը գլխովին հետազոտման են յենթարկվում (լորձը՝ յերախից)։ Բացիլակիրները հեռացվում են, համաձայն վերոհիշյալ կանոնների։ Մսուրն ախտահանվում է։

9. Այն դեպքում, յեթե անձնակազմի ընտանիքում հիվանդության դեպք է լինում, ապա վերջինիս թույլատրվում է մսուր հաճախել համաձայն վերոհիշյալ կանոնների, վորոնք վերաբերում են այն յերեխաներին, վորոնց բնակարանում դիֆտերիայով հիվանդանալու դեպքեր են տեղի ունեցել։

Ջրծաղիկ

1. Մսուրում ջրծաղիկով հիվանդանալու առաջին իսկ դեպքը հայտաբերելիս հիվանդ յերեխան մսուր չի թողնվում մինչև կեղևը թափվելը, բայց վոչ շուտ, քան հիվանդությունն սկսվելուց 14 որ հետո։ Կրկնվող հիվանդացումների դեպքում յերեխաները կարող են մսուր հաճախել հիվանդության սուր շրջանն (բարձր տաքություն) անցնելուց հետո։

2. Այն դեպքում, յեթե յերեխայի բնակարանում ջրծաղիկով հիվանդանալու դեպք է տեղի ունեցել և հիվանդը չի մեկուսացվել, ապա այդպիսի յերեխան կարող է մսուր հաճախել առաջին 12 որը, հաշվելով այդ բնակարանում տեղի ունեցած առաջին հիվանդացման սկզբից։ Հետագայում յերեխան չպետք է մսուր թողնվի մինչև հիվանդի ապաքինվելը, պլյուս 21 որ հնարավոր ինկուբացիոն շրջանը (մսուրի յերեխայի)։

3. Յեթե հիվանդը մեկուսացվել է, ապա յերեխան կարող է մսուր հաճախել հնարավոր ինկուբացիայի առաջին 12 որվա ընթացքում։ 12—21 որերի միջև ընկած ժամանակամիջոցում յերեխան չի կարող մսուր հաճախել։ Հնարավոր սխալներից խուսափելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր դեպք ուսումնասիրել վարակման մոմենտը պարզելու համար։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Յերկրորդ և յերրորդ կետերը վերաբերում են միայն այն դեպքին, յեթե այդ միջոցին մսուրում ջրծաղկի համաճարակ չկա և յեթե հիշյալ յերեխան ջրծաղկով չի հիվանդացել։

Ջրծաղկի համաճարակ լինելու դեպքում մսուրը չի փակվում։

4. Ջրծաղկի դեպքում մսուրում ախտահանություն չի կատարվում։ Շենքը մաքրվում է և խնամքով ոդափոխվում։

5. Յեթե անձնակազմի ընտանիքում ջրծաղկով հիվանդանալու դեպքեր են նկատվում, անձնակազմին թույլ է տրվում մսուր հաճախել։

Խոզուկ

1. Մսուրում խոզուկ յերևալու առաջին իսկ դեպքում հիվանդ յերեխային թույլ չի տրվում մսուր հաճախել հիվանդության ամբողջ վարակի շրջանում (այսինքն՝ հիվանդությունն սկսվելուց 3 շաբաթվա ընթացքում)։

2. Հիվանդության կրկնվող դեպքեր նկատվելիս յերեխաները կարող են մսուր հաճախել սուր յերևույթներն անցնելուց հետո։ Յեթե յերեխայի բնակարանում խոզուկով հիվանդանալու

դեպք է յեղել և յեթե հիվանդը չի մեկուսացվել, այդպիսի յերեխային արգելվում է մսուր հաճախել մինչև հիվանդի ապաքինվելը, պլյուս հնարավոր ինկուբացիայի 21-օրյա ժամանակամիջոցը։ Յեթե հիվանդը մեկուսացվել է, յերեխան չի կարող մսուր հաճախել 21 օրվա ընթացքում, հաշվելով մեկուսացման մոմենտից։

3. Խոզուկի համաճարակի դեպքում մսուրը չի փակվում։ Ախտահանություն չի կատարվում։ Շենքը մաքրվում է և խնամքով հողմահարվում։ Անձնակազմի ընտանիքում հիվանդացում նկատվելու դեպքում անձնակազմին թույլ է տրվում մսուր հաճախել։

Կարմրատապ

1. Վարակիչ է համարվում հիվանդանալու մոմենտից 10 օրվա ընթացքում։

2. Կանոնները նույնն են, ինչ վոր խոզուկի դեպքում։

Կապույտ հազ

1. Կապույտ հազով հիվանդացած յերեխան մսուրից հեռացվում է և նորից մսուր է ընդունվում վոչ շուտ, քան կոնվուլսիվ (ջղաձգական) շրջանն սկսվելուց 42 օր հետո։

2. Յեթե կապույտ հազով հիվանդանալու դեպք է տեղի ունենում վորևե բնակարանում, վորտեղ ապրում է մսուր հաճախող յերեխա, վերջինս՝ հիվանդին մեկուսացնելու դեպքում, կարող է մսուր հաճախել, վորտեղ սակայն նա 14 օր շարունակ պետք է գտնվի մեկուսարանում, անհատական բոքսում, բժշկի հսկողության տակ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Մեկուսացման գնահատումը կատարում է բժիշկը։

3. Յեթե հիվանդը չի մեկուսացվել իր բնակարանում, յերեխան կարող է մսուր հաճախել այն պայմանով, վոր նա մսուրում մեկուսացվի այն ամբողջ ժամանակամիջոցում, յերբ դեռ նրա բնակարանում հիվանդությունը չի վերջացել, ավելացրած հնարավոր ինկուբացիայի 14-օրյա շրջանը։

4. Հիշյալ դեպքերում կապույտ հազ անցկացրած յերեխա-

ները կարող են մսուր հաճախել առանց մեկուսացման յենթարկվելու։

5. Այն դեպքում, յեթե մսուրում կապույտ հազով հիվանդանալու մի քանի դեպք է տեղի ունենում, հանձնարարվում է կազմակերպել կապույտ հազի խումբ, յեթե ապահովված են ստորև հիշված սանհիգիենիկ պայմանները։

6. Կապույտ հազի խումբը պետք է ապահովված լինի ընդարձակ լուսավոր, արևոտ մեկուսացված շենքով, վորը պետք է ունենա առանձին մուտք և առանձին ընդունարան։ Մեկ խմբում 15 յերեխայից ավելի չպետք է լինի։

7 Կապույտ հազով հիվանդ յերեխաների խումբը պետք է ունենա վերանդա և ըստ հնարավորության՝ մեկուսացված բակամաս՝ բացօթյա քնելու և զբոսնելու համար։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այն դեպքում, յեթե վերանդա չկա և հնարավոր չէ յերեխաների քունը բացօթյա անցկացնել, յերեխաների քունը կազմակերպվում է բաց պատուհաններ ունեցող հատուկ սենյակում։

8. Կապույտ հազի խումբը պետք է ապահովված լինի առանձին վորակյալ անձնակազմով։

9. Կապույտ հազի համաճարակի դեպքում մսուրը չի փակվում, ախտահանություն չի կատարվում։ Շենքը խնամքով մաքրվում է և օդափոխվում։ Յեթե անձնակազմի ընտանիքում կապույտ հազով հիվանդներ կան, անձնակազմին թույլ է տրվում մսուր հաճախել։

10. Վարակված խմբերը կապույտ հազ չանցկացրած նոր յերեխաներ չեն ընդունվում 14 օրվա ընթացքում, հաշվելով վերջին հիվանդին հեռացնելու մոմենտից։

Բնական ծաղիկ

1. Հիվանդացած յերեխան անմիջապես հեռացվում է մսուրից և ուղարկվում է հիվանդանոց։

2. Բոլոր յերեխաներին և անձնակազմին կրկնապատվաստում է կատարվում։ Մսուրն ախտահանվում է և շարունակում է գործել։

3. Հիվանդացած յերեխան նորից կարող է մսուր հաճախել

կեղերը թափելուց և բնակարանում ախտահանություն կատարելուց հետո։

4. Յեթե յերեխայի բնակարանում բնական ծաղկով հիվանդանալու դեպք է յեղել, այդպիսի յերեխան կարող է մսուր հաճախել կրկնապատվաստում կատարելուց և հիվանդին մեկուսացնելուց հետո տասնչորս օր անցնելու դեպքում։

5. Յերեխաների մասին ասվածը վերաբերում է և անձնակազմին։

Համաճարակային ցերեբրոսպինալ (ցանցուղեղա-փողնուղեղային) մենինգիտ

1. Հիվանդացած յերեխան մսուրից հեռացվում է և հիվանդանոց ուղարկվում։ Յերեխան նորից մսուր կարող է ընդունվել այն ժամանակ, յերբ նրա յերախից արտաթորված լորձի մեջ մենինգոկոկեր հայտաբերելու նպատակով յերկու անգամ կատարված հետազոտությունը բացասական արդյունք է տվել։ Առաջին հետազոտությունը կատարվում է սուր կլինիկական յերևույթները վերանալուց հետո, բայց վոչ շուտ հիվանդության սկսվելուց 21 օր հետո։ Յերկրորդ հետազոտությունը կատարվում է առաջինից 5—7 օր անցնելուց հետո։ Այն դեպքում, յեթե հնարավոր չէ մանրէաբանական հետազոտություն կատարել, յերեխաները կարող են մսուր ընդունվել վոչ շուտ, քան հիվանդությունն սկսվելուց 30 օր հետո, յեթե վերացել են սուր կլինիկական յերևույթները։

2. Մսուրի բոլոր յերեխաները և հիվանդացածի հետ շփում ունեցած անձնակազմը հետազոտման են յենթարկվում բացիլակրություն հայտաբերելու նպատակով։ Հայտաբերված բացիլակիրները մսուրից հեռացվում են այնքան ժամանակով, վորքան ժամանակով նրանք բացիլակիրներ են հանդիսանում։

3. Ախտահանություն չի կատարվում։ Շենքը մաքրվում է և խնամքով օդափոխվում։

Գրիպ

1. Գրիպով հիվանդացած յերեխան խմբից հեռացվում է և տեղավորվում մեկուսարան-ստացիոնարում՝ անհատական բոքսում, իսկ այդպիսին չլինելու դեպքում տուն է ուղարկվում։

Մսուրում գրիպի համաճարակ առաջանալու դեպքում թեթև գրիպոզ յերևույթներ ունեցող յերեխաներին թողնում են խմբում։ Ընդ սմին միջոցներ են ձեռք առնվում յերեխաներին անհատական մեկուսացման յենթարկելու համար (շարժական բոքսեր, պարտակներ, սավաններ կախելը)։ Յերեխայի հարդարանքը (տուալետը) կիրառվում է նրա մահճակալում, առանց նրան բարուրասեղանի վրա դնելու և այլն։

2. Գրիպով հիվանդացող անձնակազմը նախազգուշական միջոցներ է ձեռք առնում, վոր յերեխաներին չվարակի, մանավանդ ծծկերների բաժանմունքում (հազի և հարբուխի դեպքում մարլյա յե կապում)։ Յեթե գրիպով հիվանդացել են կերակրող մայրերը, ապա նրանց հանձնարարվում է յերեխային կերակրելու ժամանակ մարլյա կապել։ Անձնակազմը պետք է խնամքով լվանա ձեռքերը։ Ամանեղենը, բարուրները, հիվանդ յերեխաների թաշկինակները պետք է հեռացվեն։

3. Ախտահանություն չի կատարվում, շենքը մաքրվում է և խնամքով օդափոխվում։ Պետք է ուշադրություն դարձնել, վոր չհիվանդացած յերեխաները լիարժեք սնունդ ստանան և բավականաչափ ժամանակ մաքուր օդում անցկացնեն։

ՀՐԱՀԱՆԳ
ՄՍՈՒՐՆԵՐՈՒՄ ՀԱԿԱԿԱՐՄՐՈՒԿԱՅԻՆ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մսուրներում յերեխաների մեջ կարմրուկից առաջացող մահացության դեմ պայքարելու համար հակակարմրուկային պատվաստումներ են կատարվում Դեգվիցի առաջարկած յեղանակով, համաձայն հետևյալ հրահանգի.

1. յերեխաներին մսուր ընդունելիս անհրաժեշտ է ծնողների մեջ լայն բացատրական աշխատանք կատարել այն մասին, վոր կարմրուկը կանխարգելելու նպատակով հակակարմրուկային շիճուկ պատրաստելու համար անհրաժեշտ է արյուն տալ.

2. մսուրում կարմրուկի դեպք նկատվելիս հիվանդացած յերեխան մեկուսացվում է։ Այն բոլոր յերեխաներին, վորոնք

շփում են ունեցել տվյալ յերեխայի հետ մսուրում կամ հանրակացարանում, պետք է սրսկել 20—30 խոր. սմ հակակարմրուկային շճուկ վոչ ուշ, քան ինկուբացիայից 6—7 որ անցնելուց հետո (հիվանդացածի վրա ցան յերեվալու. որ համարվում է շփում ունեցողների ինկուբացիայի չորրորդ որը):

Յեթե շճուկը սրսկվում է հիշյալ ժամկետից ուշ, ապա այդ հանգամանքը թուլացնում է շճուկի կանխարգելիչ ազդեցությունը: Հակակարմրուկային պատվաստում չի կատարվում միայն այն յերեխաներին, վորոնք գտնվում են առանձին մեկուսացված շենքում՝ առանձին ընդունարանով, և վորոնք շփում չեն ունեցել կարմրուկով հիվանդի հետ:

3. Հակակարմրուկային շճուկը ներգործում է 30 որվա ընթացքում, հաշվելով պատվաստման որից: Յեթե կարմրուկի համաճարակը 30 որից ավելի յե տեվում, հակակարմրուկային շճուկ նորից սրսկվում է 31-րդ որը նույն քանակությամբ:

4. Պատվաստված յերեխաները կարող են մսուր հաճախել մինչև նրանց մեջ հիվանդության առաջին նշանների յերևալը (բարձր տաքություն, կատարրալ յերևույթներ): Կարմրուկ չանցկացրած յերեխաների ընդունելությունը (մսուր) համաճարակի ժամանակամիջոցում դադարում է:

5. Հակակարմրուկային շճուկ սրսկվում է բոլոր յերեխաներին, սկսած յերեք ամսական հասակից:

6. Հակակարմրուկային շճուկ սրսկելու հակացուցմունքներ չկան նույնիսկ այն դեպքում, յեթե յերեխան հիվանդացել է այլ վարակիչ հիվանդությամբ:

7. Սրսկելու տեխնիկան. հակակարմրուկային շճուկ սրսկվում է ներմկանային յեղանակով 20—30 խոր. սմ քանակությամբ (10,0 կամ 20,0 սրսկիչով). շճուկը սրսկվում է յերասատանի կամ ազդրի մեջ, պահպանելով ասեպտիկայի (ապանեխում) բոլոր կանոնները:

8. Հակակարմրուկային շճուկ չլինելու դեպքում կարելի յե ոգտագործել մաքուր ցիտրատային արյուն, վորը վերցվում ծնողների մեկի յերակից և անմիջապես սրսկվում է յերեխային ներմկանային յեղանակով 40—60 խոր. սմ քանակությամբ, ավելացնելով 0,5 խոր. սմ յերկու տոկոսանի Natr. Citrici:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Սիֆիլիսով և մալարիայով հիվանդ ծնողներից արյուն չեն վերցնում յերեխաներին սրսկելու համար:

9. Այն դեպքում, յեթե բավարար քանակությամբ հակակարմրուկային շճուկ չկա, անհրաժեշտ է առաջին հերթին պատվաստում կատարել այն յերեխաներին, վորոնց մեջ կարմրուկը ավելի մեծ մահացություն է առաջացնում, այն է.

ա) մինչև մեկ տարեկան յերեխաներին, բ) տուբերկուլյոզի վերաբերմամբ կասկածելի յերեխաներին կամ տուբերկուլյոզով հիվանդ մարդկանցով շրջապատված յերեխաներին, գ) թուլացած յերեխաներին, հիպոտրոֆիկներին, եկսուդատիվ դիատեզով, ծանր ռախիտով հիվանդ յերեխաներին և այլն:

10. Յեթե մեծ քանակությամբ շճուկ կա, ապա ցանկալի յե յերեխաների վերոհիշյալ խմբերին սրսկել 50—60 խոր. սմ շճուկ նրա համար, վորպեսզի այդպիսով հնարավոր լինի նրանց միանգամայն ապահովել առաջիկա ամիսը կարմրուկով հիվանդանալուց:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՀԱԿԱԿԱՐՄՐՈՒԿԱՅԻՆ ՇԻՃՈՒԿ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՐՅՈՒՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՅԵՎ ԱՅՆ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Գյուղի պայմաններում հակակարմրուկային շճուկի համար արյուն կարելի յե վերցնել ամեն մի սենյակում, յեթե վերջինս խնամքով լվացված և մաքրված է, և վորտեղից հեռացված են բոլոր ավելորդ առարկաները: Այդպիսի սենյակի կահավորությունը կազմում են հետևյալ իրերը. սեղան, յերկու աթոռ, տաբուրետ, կուշետկա կամ լայն նստարան, լվացարան, կոնք:

2. Արյունը վերցնում են ստերիլ փորձանոթների մեջ, վորոնց ծավալը պետք է հավասար լինի 150—200 խոր. սմ, վորոնք պետք է խցվեն լավ, խորը մտնող բամբակե խցանով, ըստ վորում խցանի վրա մարլյաե անձեռոց են փաթաթում:

3. Արյուն վերցնելիս պետք է ղեկավարվել Առժողկոմատի համապատասխան հրահանգով: Մեկ մարդուց միջին հաշվով վերցնում են մոտավորապես 100 խոր. սմ արյուն:

4. Փորձանոթի մեջ արյուն են լցնում վոչ ավելի, քան նրա ծավալի կեսի չափ, քանի վոր մեծ քանակությամբ արյուն վերցնելիս փորձանոթի խցանը թրջվում է և դրա հետևանքով արյունը կարող է փչանալ։ Յեթե ձեռքի տակ չկա 150—200 խոր. սմ ծավալ ունեցող փորձանոթ, այդ դեպքում արյուն են վերցնում յերկու փորձանոթով, յուրաքանչյուրը 100—150 խոր. սմ ծավալով։

5. Արյունը լաբորատորիա փոխադրելիս (մշակելու համար) պետք է հոգ տանել, վոր փորձանոթների խցանները չթրջվեն։ Փոխադրելու համար կարելի յե ոգտագործել հասարակ պայուսակ, վորը պետք է բավականաչափ բարձր լինի, վորպեսզի փորձանոթները կարելի լինի տեղավորել ուղղահայաց դիրքով և բավականաչափ ազատ կերպով։ Պայուսակի հատակին բամբակե բարակ շերտ են փռում։

Փորձանոթները պետք է մարլայով կապել (6—10 փորձանոթ) և տեղավորել պայուսակի պատի յերկայնությամբ, ընդ վորում փորձանոթների արանքներում պետք է կիպ բամբակ դնել։ Այդպիսի պայուսակի մեջ կարելի յե փորձանոթների համար հատուկ բներ սարքել։

Պայուսակից բացի, արյուն փոխադրելու համար կարելի յե ոգտագործել նաև դույլ, վորի մեջ փորձանոթները նմանապես պետք է տեղավորել իրար մոտ ուղղահայաց դիրքով, ընդ վորում դույլի հատակին այս դեպքում էլ պետք է բամբակ դնել և մաքուր անձեռոցով ծածկել։ Յեթե արյունը փոխադրվում է սայլի խորդուբորդ ճանապարհով, ապա պայուսակը կամ դույլը պետք է ձեռքին պահել։

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ԴԻՖՏԵՐԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Դիֆտերիայի դեմ յերեխաներին պատվաստումներ են կատարում վեց ամսական հասակից սկսած՝ անկախ Շիկի ռեակցիայի բնույթից։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Յեթե մսուր ընդունվող յերեխաները վեց ամսականից մեծ են, ապա ցանկալի յե, վոր պատվաստում կատարվի մինչև մսուր ընդունվելը։

2. Դիֆտերիայի դեմ իմունացում կատարելու համար գործ է ածվում դիֆտերիական անատոքսին։ Անատոքսինով պատվաստումներ կատարում են առաջնային յերկնվագ իմունացման ձևով, ընդ վորում դրանից հետո պարտադիր կերպով կատարվում է նաև միանվագ «հետավոր» կրկնապատվաստում (ռեվակցինացիա)։

3. Այն բոլոր յերեխաները, վորոնք նկատի յեն առնված հակադիֆտերիական պատվաստում կատարելու համար, նախապես պետք է բժշկական քննության յենթարկվեն՝ պատվաստման հակացուցմունքները հայտաբերելու համար։

ՀԱԿԱՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ

ա) Սուր ինֆեկցիոն հիվանդություններ, ներառյալ ապաքինման շրջանը (մեկ ամսվա ընթացքում բարձր տաքությունը կամ սուր շրջանն անցնելուց հետո).

բ) տենդային վիճակ.

գ) սուր ստամոքսա-աղիքային խանգարումներ.

դ) շնչական ուղիների սուր հիվանդություններ.

ե) ակտիվ տուբերկուլյոզ.

զ) արյան հիվանդություններ (լեյկեմիա, պերնիցիոզ անեմիա, հեմոռագիկ դիաթեզ).

է) յերիկամների և յերիկամային ավազանների հիվանդություններ.

ը) սրտի բոլոր որգանական արատները դեկոմպենսացիայի շրջանում.

թ) կենտրոնական ներվային համակարգության ծանր որգանական հիվանդություններ.

ժ) եքսուդատիվ դիաթեզ՝ խիստ արտահայտված յերևույթներով մաշկի կողմից.

ի) տարածված պիոդերմիկ հիվանդություններ.

ւ) սպազմոֆիլիա.

խ) խիստ արտահայտված հիպոտրոֆիա և ատրոֆիա։

Հակացուցմունքներ ունեցող յերեխաներն ազատվում են պատվաստումից մինչև հակացուցմունքների վերանալը։

4. Անատոկսինով կատարվող պատվաստումներին կարող է ընթացակցել և տեղական ռեակցիա (կարմրում, այտուց և ցավեր պատվաստման տեղում և ընդհանուր ռեակցիա (տաքություն, ընդհանուր թուլություն)։ Փոքրահասակ յերեխաների մեջ ռեակցիա սակավ է պատահում. ավելի հաճախ պատահում է մեծ յերեխաների մեջ։ Նկատվող ռեակցիաները վոչ մի վտանգ չեն ներկայացնում և սովորաբար 24—48 ժամից հետո վերանում են։

5. Պատվաստումների մեթոդիկայի համար գործնական նշանակություն ունեն ուժեղ ռեակցիաները, *վորոնց ընթացակցում են՝*

ա) այտուց 10×10 սմ *և ավելի տարածությամբ. բ) բարձր տաքություն մինչև 38,0—38,5 աստիճան և ավելի բարձր, անկախ տեղական ռեակցիայից, գ) սուր արտահայտված ընդհանուր թուլություն, անկախ տեղական ռեակցիայից և տաքությունից։ Այսպիսի դեպքերում հետագա պատվաստումների ժամանակ անատոկսինը գործ է ածվում ավելի փոքր դոզայով (տես ստորև 11-րդ կետը)։*

6. Իմունացումից առաջ բոլոր յերեխաների տաքությունը չափում են՝ առավոտյան սրսկելուց առաջ, այնուհետև 2-րդ անգամ չափում են վոչ շուտ քան սրսկելուց 6 ժամ հետո, և 3-րդ անգամ հաջորդ որն առավոտյան սրսկումից հետո։ Նորմալ տաքություն ունեցող յերեխաների տաքությունը հետագայում չեն չափում, իսկ տենդողների տաքությունը շարունակում են չափել մինչև տենդի դադարելը։ Սրսկումից հետո, հետևյալ որը պատվաստված յերեխաներին քննում են և քննության տվյալները՝ տաքությունը, ընդհանուր վիճակ, տեղական ռեակցիա՝ գրանցվում են յերեխայի զարգացման պատմության մեջ։

7. Դիֆտերիայի դեմ պատրաստումներ կատարում են դիֆտերիական անատոկսինով, վորը պարունակում է վոչ պակաս քան մեկ խոր. սմ *20 ի. մ. (իմունացնող միավորներ, վորոնք նշվում են պիտակի վրա)։*

8. Առաջին անգամ իմունացում կատարվում է յերկու պատվաստման միջոցով, ըստ վորում 2-րդ պատվաստումը կատարվում է 20-որյա ընդմիջումից հետո. սրսկելի անատոկսինի ընդհանուր քանակը պետք է պարունակի վոչ պակաս քան 60 ի. մ.։

Օրինակներ

1 խոր. սմ	*20*	*ի. մ.*	*պարուն.*	*անատոկ.*	*գործած.*	*կատ.*	*1*	*սր.*	*1*	*խոր.* սմ
»	*25*	»	»	»	»	»	*1*	»	*1*	»
»	*25*	»	»	»	»	»	*2*	»	*1,5*	»
»	*30*	»	»	»	»	»	*1*	»	*1*	»
»	*30*	»	»	»	»	»	*2*	»	*1*	»

9. Հեռավոր կրկնապատվաստում կատարվում է առաջին իմունացումից 6—12 ամիս հետո անատոկսինի միանվագ պատվաստումով մեկ խոր. սմ *դոզայով (20 և ավելի ի. մ.)։*

10. Այն յերեխաները, վորոնք յենթակա յեն պարտադիր պատվաստման և վորոնք անցյալում վերոհիշյալ մեթոդներով ավարտված պատվաստում են ստացել, յենթակա յեն պարտադիր միանվագ կրկնապատվաստման (պատվաստումը կատարվում է մեկ խոր. սմ *անատոկսինով), անկախ նախկին պատվաստման ժամկետից, բայց վոչ շուտ, քան վերջինից 6 ամիս անցնելուց հետո։*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Անցյալում պատվաստված համարվում են միայն այն յերեխաները, վորոնց մասին համապատասխան վկայագրեր կամ տեղեկանքներ են ներկայացվում պատվաստումը կատարվելու մասին, նշելով գործածված վակցինը, սրսկելու ժամանակը և այլն։

11. Պատվաստումների հիշյալ սխեմայի համար նախատեսվում է հետևյալ փոփոխությունը. յեթե առաջին պատվաստումը (1 խոր. սմ*) ուժեղ ռեակցիա յե առաջացնում (տես 5-րդ կ.), ապա յերկրորդ պատվաստումը կատարվում է 20 որ հետո անատոկսինի նույն դոզայով (մեկ խոր.* սմ*) այն դեպքերում, յերբ գործածված անատոկսինը պարունակել է մեկ խոր.* սմ *30 ի. մ.-ից պակաս։ 15 որից հետո արվում է 3-րդ լրացուցիչ պատվաստումը մեկ խոր.* սմ *դոզայով։*

12. Դիֆտերիա անցկացրած յերեխաներին, նկատի ունենալով նրանց մեջ առաջացող իմունիտետի անկայունությունը, պետք է կանխարգելիչ պատվաստումներ կատարել (մանավանդ

շիճուկով բուժելու դեպքերում), բայց այս դեպքում անհրաժեշտ է առանձնապես նկատի առնել այն, թե անատոքսինը վորպիսի ռեակցիա յէ առաջացնում:

Շիկի ռեակցիայի բարձրորակ դրվածք ապահովելու դեպքում հանձնարարվում է դիֆտերիայով հիվանդացած յերեխաներին պատվաստել ըստ Շիկի ռեակցիայի ցուցմունքների. այն յերեխաները, վորոնք ըստ Շիկի դրական են նկատված, դիֆտերիայով հիվանդանալուց 6—12 ամիս անցնելուց հետո յենթարկվում են յեռանվագ պատվաստման, ըստ վորում պատվաստումը կատարվում է անատոքսինի պակասեցրած դոզաներով. 0,5 խոր. սմ—1 խոր. սմ—1 կամ 2 խոր. սմ (նայած թե նախորդ պատվաստումն ինչպիսի ռեակցիա յէ առաջացրել). պատվաստումները կատարվում են 20 կամ 15-որյա ընդմիջումով:

Այն յերեխաները, վորոնք ըստ Շիկի բացասական են նկատված, ինչպես և դիֆտերիայով հիվանդացած բոլոր յերեխաները, վորոնց վերաբերմամբ Շիկի ռեակցիա չի գործադրվել, պատվաստման են յենթարկվում մեկ անգամ:

13. Այն դեպքերում, յերբ առանձնապես թուլացած յերեխաներին դիֆտերիայով վարակելու լուրջ վտանգ կա (որինակ՝ յերբ հնարավոր չի լինում դիֆտերիայով հիվանդին մեկուսացնել շրջապատից, յերբ մանկական ստացիոնարներում դիֆտերիա յէ առաջանում և այլն), հանձնարարվում է պասսիվ-ակտիվ իմունացում կատարել: Այդ նպատակով առաջին պատվաստման (մեկ խոր. սմ անատոքսին) հետ միաժամանակ պատվաստում է կատարվում հակադիֆտերիական անտիտոքսիկ շիճուկի 3—5000 միավորներով. հետագայում անատոքսինով կիրառվող իմունացումն ավարտվում է սովորական կարգով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Պետք է խուսափել պասսիվ իմունացումից և այդ միջոցին դիմել միայն բացառիկ դեպքերում:

14. Անատոքսինով պատվաստումներ կատարում են հետևյալ ձևով. դեղանյութը սրսկում են մաշկի տակ, թիակատակի շըրջանում կամ անրակի տակ: Անատոքսին սրսկելիս պետք է պահպանել ասեպտիկայի (ապանեխում) պահանջները: Անատոքսին պարունակող ամպուլը բաց անելուց հետո պետք է անմիջապես օգտագործել և վոչ մի դեպքում չպահել մինչև մյուս որը:

15. Յուրաքանչյուր սրսկում վերջանալուց հետո պետք է յերեխային առնվազն 30 րոպե պահել բժշկի հսկողության տակ: Պատվաստում կատարող յուրաքանչյուր բժիշկ պարտավոր է իր մոտ ունենալ ադրենալին (1:1000) և կամֆորայի յուղ: Ադրենալինի դոզան 0,3-ից մինչև 1 խոր. սմ, նայած հասակին:

16. Անատոքսինը պետք է պահել մութ և զով տեղում: Այսպիսի պայմաններում պահելու դեպքում անատոքսինը գործածելու համար պետքական է լինում յերկու տարվա ընթացքում: Սառած պրեպարատներն անպետք են գործածության համար:

17. Դիֆտերիայով հիվանդանալը և բացիլակրություն ունենալը հակացուցմունք չեն պատվաստում կատարելու համար:

18. Մսուրը պետք է պարտադիր կերպով ունենա «պրոֆիլակտիկ պատվաստումների հաշվառման մատյան» կցված ձևով:

ՄՍՈՒՐՆԵՐՈՒՄ ԴԻՖՏԵՐԻԱՅԻ ԲԱՑԻԼԱԿՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Դիֆտերիայի բացիլակրություն հայտաբերելու նպատակով անհատական հետազոտություն կատարվում է յերեխային մսուր ընդունելուց առաջ, յեթե կենցաղային պայմանների հետազոտումը ցույց է տալիս, վոր յերեխայի ընտանիքում մոտ անցյալում դիֆտերիայով հիվանդանալու դեպքեր են յեղել կամ յերեխային շրջապատողների մեջ դիֆտերիայով հիվանդներ կան: Յերկրորդ դեպքում դիֆտերիայի բացիլակիրը չի կարող մսուր հաճախել (մսուրից հեռացվում է), մինչև վոր բացիլակրություն հայտաբերելու նպատակով յերկու անգամ կատարվող (2—3-որյա ընդմիջումով) հետազոտությունը բացասական արդյունք տա (ապաքինվելուց կամ հիվանդին հիվանդանոցում տեղավորելուց հետո): Այն դեպքում, յեթե բացիլակրությունը յերկարատև է լինում, յերեխան կարող է մսուր հաճախել միայն հիվանդի ապաքինվելուց կամ նրան հիվանդանոց ուղարկելուց 8 շաբաթ հետո:

2. Բացիլակրության մասսայական հետազոտումներ կատարվում են ամեն անգամ, յերբ մանկական հիմնարկում դիֆտերիայով հիվանդանալու դեպքեր են նկատվում: Հետազոտման յենթարկվում են այն խմբերը, վորոնք շփման մեջ են յե-

պել հիվանդացածների հետ։ Բացիլակիրները հեռացվում են մսուրից մինչև վոր յերկու անգամ կատարվող (2—3-որյա ընդմիջումով) հետազոտությունը բացասական արդյունք տա։ Յերկարատև բացիլակրության դեպքում յերեխան կարող է մսուր հաճախել միայն ութ շաբաթ անցնելուց հետո։

3. Չպետք է բացիլակիր յերեխաներին կենտրոնացնել հիմնարկի մեկուսարանում։ Դիֆտերիայի առանձին բացիլակիրներին կարելի յե պահել հիմնարկում այն պայմանով, վոր յերեխան այնտեղ բացարձակ անհատական մեկուսացման յենթարկվի։

4. Պետք է խուսափել դիֆտերիայի նկատմամբ բացիլակրության պլանային հետազոտություն կատարել այն դեպքերում, յերբ հիմնարկը համաճարակի տեսակետից բարենպաստ պայմաններում է գտնվում, վորովհետև փորձը ցույց է տալիս, վոր համաճարակ չլինելու դեպքում այդպիսի անձինք վարակի տարածման աղբյուր չեն հանդիսանում։

5. Տերապեվտիկ ներգործության միջոցներից հանձնարարվում է հետևյալը. ըստ հնարավորության յերկար ժամանակ մաքուր օդում և արևի տակ անցկացնելը։

6. Յեթե բացիլակրություն է նկատվում անձնակազմի մեջ, ապա վերջինիս նկատմամբ պահպանվում են նույն կանոնները, ինչ վոր յերեխաների նկատմամբ։

7. Անհրաժեշտ է նկատի առնել, վոր ընդհանուր սանիտարական պայմանների բարելավումը և բոլոր յերեխաներին հակադիֆտերիական պատվաստում կատարելն առանձնապես մեծ նշանակություն ունի մանկական հիմնարկում բացիլակրության դեմ մղվող պայքարի համար։

ԱԿՏԻՎ ԻՄՈՒՆԱՑՈՒՄ ՔՈՒԹԵՇԻ ԴԵՄ

Քութեշի դեմ ակտիվ իմունացում կատարվում է մեկ տարեկանից մինչև 9 տարեկան յերեխաների ըստ համաճարակային ցուցմունքների և համաձայն մարզաբաժնի ցուցմունքների կամ նրա հետ նախապես համաձայնեցնելու միջոցով։ Առանց մարզ (քաղ) առբաժնի հետ համաձայնեցնելու արգելվում է քութեշի դեմ պատվաստումներ կատարել։ Պատվաստումներ կատարելու նկատմամբ համաճարակային ցուցմունքներ պետք է համարել հետևյալը. ա) տվյալ վայրում քութեշի համաճարակ տարածվելը, բ) տվյալ վայրի հետ աշխույժ կապ ունեցող հարևան շրջաններում քութեշի համաճարակ յերևալը, գ) համաճարակային հիվանդությունների առանձնապես բարձր տոկոսը տվյալ վայրում։

Վտանգավորության սպառնալիքի տեսակետից պատվաստում կատարում են առաջին հերթին կազմակերպված յերեխաներին՝ մանկլեկի տներում, մսուրներում, մանկապարտեզներում, մանկատներում և դպրոցների առաջին դասարաններում. այնուհետև պատվաստման յենթարկվում են նույն հասակի յերեխաները հանրակացարաններում, և վերջապես՝ չկազմակերպված յերեխաները։

1—9 տարեկան յերեխաները պատվաստման յենթարկվում են անկախ Դիկի ռեակցիայի ցուցմունքներից։

Քութեշով հիվանդացած յերեխաները պատվաստման յենթակա չեն։ Պատվաստումների համար գործ է ածվում համակցված վակցին և քութեշի տոկսին։ Սրսկումները կատարվում են 7—14-որյա ընդմիջումներով։ Այն դեպքերում, յերբ առաջին յերեք սրսկումների միջև յեղած ժամանակամիջոցը յերեք շաբաթից ավելի յե, կրկնվում է նախորդ դոզան։

Համակցված վակցինի մեկ խոր. սմ պարունակում է մեկ միլիարդ ստրեպտոկոկ և տոկսինի 2000 մաշկային դոզա։ 3 անգամ վակցին են սրսկում և 2 անգամ զուտ տոկսին հետևյալ չափերով.

Տարիքեր	Համակցված վակցին			Տոկսին	
	1	2	3	4	5
	խոր. սմ			Մաշկ. դոզա	
1—2 տար. ներ.	0,2	0,4	0,8	5000	10000
3—5 » »	0,3	0,5	1,2	6000	12000
6—10 » »	0,4	0,8	0,8	9000	15000
10-ից բարձր	0,5	1,0	2,0	10000	18000

Վակցինը գործածելուց առաջ պետք է լավ թափահարել և խառնել։ Վակցինը պետք է պահել մութ և հով տեղում, և այս

դեպքում նա գործածության համար պիտանի կլինի յերկու տարի շարունակ, հաշվելով ինստիտուտից ստանալու որից։ Ուժեղ ռեակցիայի դեպքում դոզան համապատասխան կերպով պակասեցվում ե, կամ կրկնվում ե նախորդ դոզան։ Հետագա դոզաները համապատասխան կերպով պակասեցվում են։ Զուտ տոկսինով իմունացում կատարելիս տոկսինի դոզան պետք ե լինի հետևյալը.

1-ին սրսկում	2-րդ սրսկում	3 րդ սրսկում	4-րդ սրսկում	5-րդ սրսկում
	Մաշկ. դոզա			
1—5 տարեկ. 500 մաշկի դոզա . . .	2000	6000	10000	20000
5 տարեկ. և ավելի մեծերին 500 մաշկի դոզա	2000	6000	20000	30000

ԾԱՆՈԹՈԹՅՈՒՆ.— Ուժեղ ռեակցիայի դեպքում դոզան համապատասխան կերպով պակասեցվում ե, կամ կրկնվում ե նախորդ դոզան։ Հետագա դոզաները համապատասխան կերպով պակասեցվում են։ Քութեշի ստրեպտոկոկային տոկսին իմունացման համար պատրաստում ե Մոսկվայի՝ Մեչնիկովի անվան ինստիտուտը 4 տեսակի լուծույթի ձևով։

Լուծույթ	№ 1—1000	մաշկ.	դոզ. 1	խոր. սմ	1-ին	պատվաստման	համար
»	№ 2—2000	»	» 1	»	2-րդ	»	»
»	№ 3—10000	»	» 1	»	3-րդ	»	»
»	№ 4—20000	»	» 1	»	4-րդ և 5-րդ	»	»

Այսպիսի լուծույթներ ունենալով կարելի յե տոկսինը ներարկել հետևյալ ծավալով.

1-ին պատվաստ.		—500	մաշկ. դ.	կամ 0,5	խոր. սմ	№ 1	լուծ. ամեն տարիքի համ.
2-րդ	»	—2000	» »	» 1,0	»	№ 2	» » » »
3-րդ	»	—6000	» »	» 0,6	»	№ 3	» » » »
4-րդ	«	—10000	» »	» 0,5	»	№ 4	1—5 տ. յերեխ. համար
		20000	» »	» 1,0	»	№ 4	5 տ. բարձր յեր. համար
5-րդ	»	—20000	» »	» 1,0	»	№ 4	1—5 տ. յեր. համար
»	»	—30000	» »	» 1,5	»	№ 4	5 տ. բարձր յեր. համար

Սրսկումը պետք ե կատարել ներմկանային յեղանակով կամ մաշկի տակ, թիակից ցած, պահպանելով ասեպտիկայի բո-

լոր կանոնները։ Սրսկելուց առաջ բոլոր յերեխաների տաքությունը չափվում ե, այնուհետև տաքությունը չափում են նույն օրը յերեկոյան վոչ շուտ, քան սրսկելուց 6—7 ժամ հետո և հետևյալ որն առավոտյան։ Նորմալ տաքություն ունեցող յերեխաների տաքությունը հետագայում չեն չափում, իսկ տենդոտների տաքությունը շարունակում են չափել մինչև տենդի դադարելը։ Անհրաժեշտ ե ուշադրությամբ հետևել տեղական յերևույթներին և ընդհանուր ինքնազգացմանը։ Պատվաստումից հետո հետևյալ օրը ռեակցիայի ստուգում ե կատարվում։ Ստուգման տվյալները՝ տաքություն, ընդհանուր վիճակ (թուլություն), փսխում, գլխացավ, անգինա, ցան և տեղական ռեակցիայի ախտանիշներ,—այդ բոլորը գրանցվում ե յերեխայի զարգացման պատմության մեջ։ Բոլոր սրսկումների հիման վրա կատարվում ե ռեակցիայի ընդհանուր գնահատումը։

1. Ռեակցիան բացակայում ե, յեթե չեն յեղել վոչ տեղական և վոչ ընդհանուր յերևույթներ, վոր հիշված են վերևում։

2. Թույլ ռեակցիա, յեթե չկան ընդհանուր յերևույթներ և տաքությունը 37,5 աստիճանից բարձր ե յեղել և տեղական ռեակցիան չափավոր ե։

3. Միջին ռեակցիա, յեթե նկատվել են ընդհանուր թույլ յերևույթներ, տաքությունը 38 աստիճանից բարձր չի յեղել կամ այդպիսի տաքություն չի յեղել, բայց տեղական յերևույթները զգալի յեն յեղել։

4. Խիստ ռեակցիա, յերբ միաժամանակ առկա յեն ընդհանուր և տեղական ծանր յերևույթներ։

ՀԱԿԱՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ

ա) տենդային վիճակ.

բ) սուր ստամոքսա-աղիքային հիվանդություններ.

գ) շնչական ուղիների սուր հիվանդություններ.

դ) ապաքինման շրջանը սուր վարակիչ հիվանդություններից հետո (մեկ ամսվա ընթացքում բարձր տաքությունը վերջանալուց կամ սուր շրջանն անցնելուց հետո).

ե) խիստ հիպոտրոֆիայի և ատրոֆիայի վիճակ մինչև յերեք տարեկան յերեխաների մեջ և ծանր ռախիտ ու սուր արտահայտված հյուծվածություն մեծ յերեխաների մեջ.

զ) եքսուդատիվ դիաթեզ, յերբ միաժամանակ սուր արտահայտված յերևույթներ են նկատվում մաշկի կողմից.

է) տարածված պիոդերմիկ հիվանդություններ.

ը) սպազմոֆիլիա.

թ) ակտիվ տուբերկուլյոզ.

ժ) սրյան հիվանդություններ (լեյկեմիա, պերնիցիոզ անեմիա, հեմոռագիկ դիաթեզ).

ի) յերիկամների և յերիկամային ավազանների հիվանդություններ.

լ) կենտրոնական նյարդային համակարգության ծանր օրգանական հիվանդություններ.

խ) սիֆիլիս (կլինիկական արտահայտությունների առկայությամբ) և մալարիա, յեթե վերջին ամսվա ընթացքում (պատվաստումից առաջ) սուր նոպաներ են յեղել.

ծ) ալերգիկ վիճակ՝ ասթմա, սննդային և այլ իդիոսինկրազիա, վոր կան յերեխայի անամնեզում և հաստատված են բժշկի կողմից.

կ) կլինիկորեն արտահայտված ռևմատիզմի վարակ յերեխաների մեջ (արտրիտ, կարդիտ, խորեա).

հ) սրտի բոլոր օրգանական ախտահարումները դեկոմպենսացիայի շրջանում:

ՀՐԱՀԱՆԳ
ԾԱՂԿԻ ՊԱՏՎԱՍՏՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ծաղկի վակցինը ծաղկի վարակիչ տարրն է՝ թուլացրած ճագարի կամ հորթի օրգանիզմի միջով անցկացնելու միջոցով:

Ծաղկի թուլացրած մանրէն մարդու պատվաստելիս միայն տեղական ախտահարում է առաջացնում, բայց վոչ ընդհանուր հիվանդացում: Այդպիսի տեղական ախտահարումները մարդուն դարձնում են անախտընկալ դեպի բնական վարակումը

ծաղկով՝ քիչ թե շատ յերկարատև ժամանակամիջոցում: Անախտընկալություն ստանալու համար պետք է վակցինի պատվաստումը կատարվի ամենայն խնամքով և ձեռք առնելով բոլոր նախազգուշական միջոցները: Ուստի և չնայած վոր պատվաստման ակտը շատ պարզ մի գործողություն է, այնուամենայնիվ պետք է այդ աշխատանքը հանձնարարել բժշկի կամ հատուկ պատրաստություն ստացած անձնավորության:

Վակցինը պետք է պահել մութ և զով տեղում: Այսպիսի պայմաններում վակցինը պատվաստման համար պիտանի է լինում յերեք ամիս շարունակ, հաշվելով այն ժամկետից, վորը նշված է պիտակի վրա: Ծաղկի վակցինը բաց է թողնըվում ամպուլներով և ապակե փոքրիկ անոթներով: Ամպուլների մեջ պարունակվող վակցինը գործ է ածվում մեծ թվով մարդկանց համար, իսկ ապակե փոքրիկ անոթների մեջ պահվող վակցինը՝ 10—20 մարդու համար: Ապակե անոթները յերկու ծայրից գոցված են լինում և վորպեսզի նրանց միջի վակցինը կարելի լինի օգտագործել, պետք է անոթի յերկու ծայրերն զգուշությամբ կոտրել: Ամպուլի վակցինը կարելի յե օգտագործել անմիջականորեն, մինչդեռ ապակե փոքրիկ անոթներում պարունակվող վակցինը պետք է նախապես դատարկել վորևե ստերիլ ամանի մեջ կամ ժամացույցի ստերիլ ապակու վրա:

Ծաղկի վակցինի պատվաստումը սովորաբար կատարվում է բազկի արտաքին մակերեսի վրա: Այն անձանց, վորոնք չեն ցանկանում իրենց մարմնի բաց մասերում սպիներ ունենալ, պատվաստում կարելի յե անել ազդրի դրսի մակերեսին: Պատվաստման տեղը պետք է նախապես լավ մաքրել սպիրտով կամ յեթերով: Այլ վարակազերծիչ նյութեր չպետք է գործածել, քանի վոր սրանք կարող են խառնվել վակցինի հետ և թուլացնել նրա ակտիվությունը: Նախապես մաքրած մաշկի վրա գրչով կամ այլ գործիքով (նախապես վակցինի մեջ թաթախած) քերծվածքներ են առաջացնում մոտավորապես մեկ սմ յերկարությամբ, ըստ վորում քերծվածքները միմյանցից լինում են մոտավորապես 5 սմ հեռավորության վրա:

Քերծվածքները պետք է շատ խոր չլինեն, այն է՝ նրանք չպետք է մաշկի պտկիկաշերտից ավելի խորն անցնեն, վորովհետև այլապես արյունհոսություն կառաջանա: Պատվաստումը վերջացնելուց հետո պետք է թողնել վոր ավիշը չորանա 5 10

բողեյի ընթացքում։ Սակայն այս դեպքում ավիշն ամբողջովին չի չորանում, վորովհետև վակցինը գլիցերին է պարունակում։ Վակցինի ներշփում կատարելն ավելորդ է։ Պատվաստված մակերեսը պետք է ըստ հնարավորության մաքուր պահել, վորպեսզի այդպիսով կանխվի վնասված մաշկի վարակումը։ Այն դեպքում, յեթե շիթ (պուստուլա) է առաջանում, ապա պետք է խուսափել այն ամենից, վոր կարող է նրա ամբողջությունը խախտել, վորովհետև այդպես կարող է խոցիկ առաջանալ, վորը յերկար ժամանակ չի ապաքինվի, և, բացի դրանից, կարող է հեշտությամբ աղտոտվել։

Նմանապես չպետք է յոդ քսել կամ կոմպրես դնել։ Այնուհետև նպատակահարմար չէ պատվաստման տեղը վորևէ շորով կապել, վորովհետև կապի տակ շիթը հեշտությամբ կարող է պատռվել, իսկ պատռված պուստուլայի արտաթորանքը ծծած կապը շատ նպաստավոր միջավայր է բակտերիաների առաջացման համար, մի հանգամանք, վորը կարող է գոյացած խոցիկի վարակման պատճառ դառնալ։

Անհրաժեշտ է փոքր յերեխաների յեղունգները կարճ կտրել, վորպեսզի նրանք չկարողանան քորել պուստուլաները և այդպիսով վարակը տարածել մարմնի մյուս մասերում։

Մեկ անգամ պատվաստվածների մեջ պատվաստման ամբողջ պրոցեսը վերջանում է 3—4 շաբաթվա ընթացքում, 2-րդ անգամ պատվաստվածների մեջ՝ դրական արդյունքի դեպքում՝ պրոցեսը վերջանում է 7—16 որում։ Պատվաստման ստուգումը կատարվում է վոչ շուտ, քան 7 որից հետո, կրկնապատվաստման ստուգումը՝ 3—5 որում։

Պատվաստման արդյունքը դրական է համարվում, յեթե պարզորոշ արտահայտված շիթ է առաջանում (գոնե մեկ շիթ)։ Կրկնապատվաստման դեպքում դրական արդյունք է համարվում յեթե շուտ (պապուլա), լուսապսակ և քոր են առաջանում։

Յերբեմն մեկ անգամ պատվաստման յենթարկվածների մաշկի վրա զանազան տեղերում բշտիկներ են գոյանում, վորոնք չպետք է վոչ մի յերկյուղ առաջացնեն և վորոնք սովորաբար ապաքինվում են առանց վորևէ հետք թողնելու։

Պատվաստում կատարվում է միանգամայն առողջ յերեխաներին։ Չի կարելի պատվաստում կատարել՝ ա) հիվանդ յերեխաներին,

թուլացած կամ ծանր հիվանդություններից հետո ապաքինման շրջանում գտնվող յերեխաներին.

բ) մաշկի տարածված հիվանդություններով՝ եկզեմայով, իմպետիգոյով, ֆուրունկուլյոզով տառապող յերեխաներին.

գ) սուր վարակիչ հիվանդություններով հիվանդ (քութեշով, դիֆտերիայով և այլն) յերեխաներին։

Յեթե յերեխան ապրում է մի բնակարանում, վորտեղ սուր վարակիչ հիվանդություններով հիվանդ մարդիկ կան, այդ դեպքում այդպիսի յերեխաներին չպետք է պատվաստակայան թողնել, վորպեսզի այդպիսով վարակը չտարածվի մյուս յերեխաների մեջ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ծաղկի վտանգ լինելու դեպքում բոլոր հակացուցմունքները, բացի «բ» կետից, վերանում են։

ՍՈՒՐ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ, ՆՐԱՆՑ ՀԵՏ ՇՓՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԲԱՑԻԼԱԿԻՐՆԵՐԻ ԻՆԿՈՒԲԱՑԻԱՅԻ ԵՎ ՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

Հիվանդության անունը	Ինկուբացիայի ժամկետը	Այն ժամկետի տևողությունը, վորից հետո վարակիչ հիվանդություն անցկացրած հիվանդն անվտանգ է համարվում	Վարակիչ հիվանդների հետ շփում ունեցած անձանց մեկուսացման ժամկետի տևողությունը	Բացիլակիրների մեկուսացման տևողությունը
Վորովայնատիֆ և պարատիֆ	14 օր	Բացիլակրություն հայտաբերելու նպատակով կղկղանքը յերկու անգամ հետազոտելու դեպքում բացասական արդյունք ստանալուց հետո. առաջին հետազոտությունը կատարվում է կլինիկական ախտանիշները վերանալուց և մասնավորապես տաքությունն իջնելուց հետո: 2-րդ հետազոտությունը կատարվում է հնգօրյա ընդմիջումից հետո (հետազոտությունը կատարվում է լուծողական տալուց հետո): Այն դեպքում, յեթե հնարավոր չե բակտերիոլոգիական հետազոտություն կատարել—վոչ շուտ քան կլինիկական ախտանիշները վերանալուց և մասնավորապես տաքությունն իջնելուց յերկու շաբաթ հետո:	Մեկուսացման յենթակա յեն միայն կերակուր պատրաստելու և սպիտակեղեն լվանալու հետ կապված անձինք: Նրանք կարող են աշխատանքի գնալ միայն այն դեպքում, յեթե բացիլակրություն հայտաբերելու նպատակով մեկ անգամ կատարված հետազոտությունը բացասական արդյունք է տալիս, ըստ վորում նրանք մեկ ամսվա ընթացքում գտնվում են բժշկական հսկողության տակ:	Մեկուսացումը դադարեցվում է, յերբ յերկու անգամ կատարված հետազոտությունը բացասական արդյունք է տալիս: Յեթե բացիլակրություն հայտաբերվի նաև յերկու անգամ կատարված հետազոտությունից հետո, այդ դեպքում բացիլակիրին թույլ է տրվում մանկհիմնարկ հաճախել, բայց նա բժշկական հսկողության տակ է լինում բացիլակրության ամբողջ ժամանակամիջոցում: Բացիլակիրները բացիլակրության ամբողջ ժամանակամիջոցում չեն կարող կատարել այնպիսի աշխատանքներ, վորոնք կապված են սննդամթերքների հետ:
Բնական ծաղիկ	14 օր	Կեղևերն ամբողջովին թափվելուց հետո, բայց վոչ շուտ, քան հիվանդությունն սկսվելուց 40 օր հետո:	Մեկուսացումը դադարեցվում է ծաղիկը պատվաստելուց հետո, ըստ վորում բժշկական հսկողություն է սահմանվում 14 օրվա ընթացքում: Շրջապատողների ծաղիկը պատվաստվում է հիվանդության բնույթը վորոշելուց անմիջապես հետո:	
Կարմրուկ	21 օր (պատվաստվածների համար 28 օր)	Ցանը յերևալուց 7 օր հետո, յեթե բարդություններ չկան:	Մեծերի (չափահասների), ինչպես և կարմրուկ անցկացրած յերեխաների համար մեկուսացում չի կիրառվում: Կարմրուկով չհիվանդացածների համար՝ ա) չպատվաստվածների համար՝ 21 օր: բ) պատվաստվածների համար՝ 28 օր:	
Քութեշ	12 օր	Հիվանդությունն սկսվելուց 40 օր հետո, յեթե չկան սուր թարախային բարդություններ: Հիվանդանոցից դուրս գրված յերեխան մանկական հիմնարկ ընդունվելուց առաջ անվազն տաս օր տնային մեկուսացման է յենթարկվում:	Հիվանդություն չանցկացրած յերեխաների համար՝ 12 օր, հաշվելով հիվանդին մեկուսացնելու մոմենտից: Քութեշ անցկացրած յերեխաների համար, ինչպես և այն չափահասների համար, վորոնց յերախի և քթըմպանի կողմից բորբոքային սուր յերևույթներ չեն նկատվում, մեկուսացումը դադարեցվում է հիվանդին մեկուսացնելու հաջորդ օրը, բնակարանում ախտահանություն կատարելուց և անհատական սանմշակում անցնելուց հետո:	
Դիֆթերիա	7 օր	Հիվանդի յերախից և քթից արտազատված արտաթորանքը յերկու-յերեքօրյա ընդմիջումով յերկու անգամ հետազոտելու դեպքում բացասական արդյունք ստանալուց հետո: Առաջին հետազոտությունը	Այն դեպքում, յեթե յերախում և քթի մեջ սուր բորբոքային յերևույթներ չկան և յեթե յերախի և քթի լորձաթաղանթների արտաթորանքի բակտերիոլոգիկ հետազոտությունը բացասական արդյունք է տվել:	Վիրուլենտ բացիլներ կրողները մեկուսացման յենթակա յեն մինչև վոր յերեք անգամ կատարված բակտերիոլոգիկ հետազոտությունը (յերկ՝ քերյա ընդմիջումով) բացասական

Հիվանդության անունը	Ինկուբացիայի ժամկետը	Այն ժամկետի տևողությունը, վորից հետո վարակիչ հիվանդություն անցկացրած հիվանդն անվտանգ է համարվում	Վարակիչ հիվանդների հետ շփում ունեցած·անձանց մեկուսացման ժամկետի տևողությունը	Բացիլակիրների մեկուսացման տևողությունը
		կատարվում է սուր կլինիկական յերևույթները վերանալուց հետո, բայց վոչ շուտ, քան հիվանդությունն սկսվելուց 14 որ հետո։ Մեկուսացման ընդհանուր ժամկետը 8 շաբաթից ավելի չպետք է լինի, հաշվելով ապաքինման որից։ Այն դեպքում, յերբ հնարավոր չէ բակտերիոլոգիկ հետազոտություն կատարել—վոչ շուտ, քան կլինիկական յերևույթներն ամբողջովին վերանալուց 14 որ հետո, բայց վոչ շուտ, քան հիվանդությունն սկսվելուց 21 որ հետո։	Այն դեպքում, յերբ հնարավոր չէ բակտերիոլոգիկ հետազոտություն կատարել—վոչ շուտ, քան հիվանդին մեկուսացնելուց 7 որ հետո, յերբ բացակայում են սուր բորբոքային յերևույթներ յերախի և քթի կողմից։	արդյունք տա։ Սակայն մեկուսացման ընդհանուր ժամկետը 8 շաբաթից ավելի չպետք է լինի։
Կապույտ հազ	14 որ	Հազն սկսվելուց 40 որ հետո։	Կապույտ հազ չանցկացրած յերեխաների համար 14 որ հիվանդին մեկուսացնելուց հետո։ Հիվանդություն չանցկացրած չափահասների նկատմամբ մեկուսացում չի կիրառվում, բայց նրանք բժշկական հսկողության տակ են առնվում։ Կապույտ հազով չհիվանդացած յերեխաները կարող են մանկհիմնարկ հաճախել, յերբ հիմնարկում նրանց մեկուսացման յենթարկվեն։	
Ջրծաղիկ	21 որ	Կեղևը թափվելուց հետո, բայց վոչ շուտ, քան ցանը յերևալուց 14 որ հետո։ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Այն դեպքում, յերբ մանկական հիմնարկում համաճարակ է առաջանում, ջրծաղիկ անցկացրածները կարող են հիմնարկ հաճախել հիվանդության սուր յերևույթները վերանալուց հետո։	Մեծերի, ինչպես և ջրծաղկով հիվանդացած յե, եխաների վերաբերմամբ մեկուսացում չի կիրառվում։ Ջրծաղկով չհիվանդացած յերեխաների վերաբերմամբ — 21 որ։ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Այն դեպքում, յերբ մանկհիմնարկում համաճարակ է առաջանում, մեկուսացում չի կիրառվում նաև ջրծաղկով չհիվանդացածների վերաբերմամբ։	
Կարմրատապ	12 որ	Ցանը յերևալուց 7 որ հետո։ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Այն դեպքում, յերբ մանկական հիմնարկում համաճարակ է առաջանում, հիվանդությունն անցկացրածները կարող են հաճախել հիվանդության յերևույթները վերանալուց հետո։	Նույնը, ինչ վոր ջրծաղկի վերաբերմամբ։	
Խոզուկ	21 որ	Հիվանդության կլինիկական յերևույթները վերանալուց 14 որ հետո—յերեխաների և մանկհիմնարկ սպասարկող չափահասների համար։ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Այն դեպքում, յերբ մանկհիմնարկում համաճարակ է առաջանում, խոզուկով հիվանդացածները կարող են հիմնարկ հաճախել հիվանդության կլինիկական յերևույթները վերանալուց հետո։	Նույնը, ինչ վոր ջրծաղկի վերաբերմամբ։	

Հիվանդության անունը	Ինկուբացիայի ժամկետը	Այն ժամկետի տևողությունը, վորից հետո վարակիչ հիվանդություն անցկացրած հիվանդն անվտանգ է համարվում	Վարակիչ հիվանդների հետ շփում ունեցած անձանց մեկուսացման ժամկետի տևողությունը	Բացիլակիրների մեկուսացման տևողությունը
Համաճարակային ցերեբրոսպինալ մենինգիտ	4 որ	Ցերախից արտաթորված լորձը մենինգոկոկեր հայտաբերելու նպատակով յերկու անգամ հետազոտելու դեպքում՝ բացասական արդյունք ստանալուց հետո: Առաջին հետազոտությունը կատարվում է սուր կլինիկական յերևույթները (ուղեղապատյանների կողմից) վերանալուց հետո, բայց վոչ շուտ, քան հիվանդությունն սկսվելուց 21 որ հետո: Այն դեպքում, յեթե հնարավոր չե բակտերիոլոգիկ հետազոտություն կատարել—վոչ շուտ, քան հիվանդությունն սկսվելուց 30 որ հետո, յեթե ուղեղապատյանների կողմից սուր յերևույթներ չեն նկատվում:		
Կարմիր քամի	—	Կլինիկական յերևույթները դադարելուց հետո:	Մեկուսացում չի կիրառվում:	
Դիֆթերիա	8 որ	Բակտերիոլոգիկ յեղանակով հիվանդության բնույթը վերջնականապես պարզելու դեպքում—կոկղանքը համապատասխան մանրեներ հայտաբերելու նպատակով յերկու անգամ հետազոտելիս բա-	Մեկուսացում չի կիրառվում:	

		ցասական արդյունք ստանալուց հետո (5-որյա ընդմիջումով): Այն դեպքում, յեթե հետազոտություն կատարելն անհնարին է—վոչ շուտ, քան դիֆթերիայի կլինիկական յերևույթները վերանալուց հետո:		

Կախել պատից

ՓՈԽՐԱՀԱՍԱԿ ՑԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՌՈՂՋԱՑՄԱՆ ՄՈՍԿՎԱՅԻ ՄԱՐԶ ՑԻՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Առանց ճիշտ ու կանոնավոր հաշվառման չի կարող լուրջ պայքար լինել մսուրներում առաջացող վարակիչ հիվանդությունների դեմ։

Մոսկվայի մարզի . . . .

. . . .

(քաղաքի, բանվորական ավանի անունը)

Մսուր . . . .

. . . .

(մսուրի կողմից սպասարկվող արդձեռնարկության անունը)

Խումբ

ԱՂՅՈՒՍԱԿ՝ ԱՆՑԿԱՑՐԱԾ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՑԵՎ ԱՎԱՐՏՎԱԾ ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ ՑՈՒՑԱԿԱԳՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Սկսված է « . . » . . . . . . 193 . . թ.

Մսուրի վարիչ . . . .

Բժիշկ . . . .

№№	Ազգանուն և անուն	Ծննդյան ամսաթիվ և տարեթիվ	Կարմրուկ	Քութեշ	Դիֆթերիա	Կապույտ հազ	Ջրծաղիկ			Վարակման պատճառ №	Ավարտված պատվաստումներ		
											Ծաղիկ	Դիֆթերիա	Քութեշ

ՊԱՅՔԱՐ ԱՄԱՌԱՅԻՆ ԼՈՒԾԻ ԴԵՄ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ՄՍՈՒՐՆԵՐՈՒՄ ՍՈՒՐ ԿՈԼԻՏ ՑԵՎ ԴԻԶԵՆՏԵՐԻԱ ԱՌԱՋԱՆԱԼԻՍ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մսուրում արյան և լորձի խառնուրդով կղկղանքի հայտնվելիս անհրաժեշտ է.

1. կապվել մոտակա բակտերիոլոգիկ լաբորատորիայի հետ կղկղանքը անալիզի յենթարկելու համար, լաբորատորիայից ստերիլ խողովակիկներ և խառնուրդով բանկաներ ստանալ կղկղանքը կոնսերվացիայի յենթարկելու համար.

2. կղկղանքի նմուշը պետք է վերցնել ստերիլ ապակե խողովակիկով, վորը մտցվում է ուղիղ աղիքի մեջ։ Այն դեպքում, յերբ հնարավոր չէ խողովակիկի միջով թարմ կղկղանք հավաքել, ապա այդպիսին պետք է վերցնել մաքուր ճարուրից կամ յեռացրած ջրով մաքուր լվացած պետքանոթից՝ ստերիլ շպադելով կամ գդալով։

Ընդ սմին պետք է աշխատել, վոր կղկղանքի հետ լինեն նաև լորձի կույտեր, վորոնք հետո կղկղանքի հետ միասին պետք է խառնել բանկայի մեջ գտնվող խառնուրդի հետ։

Բանկան պետք է լավ ծածկել, վրան թուղթ կպցնել և նշանակել հիմնարկության անունը, հիվանդի ազգանունը, հիվանդանալու ժամանակը և լաբորատորիա ուղարկել։

Բացիլներ հայտաբերելու դրական տոկոսը հիվանդության առաջին օրերին ավելի բարձր է լինում, քան հետագա օրերին։ Յեթե կղկղանքը լաբորատորիա ուղարկելուց առաջ մի քանի

ժամ մնացել է առանց պահածոյող խառնուրդի, ապա հետազո-տության համար անպետք է:

Պահածոյող խառնուրդով բանկաները պետք է լաբորատո-րիա ուղարկվեն առաջին իսկ ժամերին:

3. Հիվանդության սկսվելուց հինգ օր հետո դիագնոզը պարզելու համար փորձանոթի մեջ պետք է վերցնել մեկ խոր. սմ արյուն՝ ագլյուտինացիայի ռեակցիայի համար և ուղեկցող գրու-թյամբ (հիվանդի ազգանունը, հիվանդանալու օրը և այլն) ուղարկել ամբուլատորիա:

4. Այն դեպքում, յեթե դիզենտերիայի կամ վորևէ տիֆի նկատմամբ լաբորատորիական հետազոտությունը դրական ար-դյունք է տալիս, անհրաժեշտ է, բացիլակրություն հայտաբե-րելու նպատակով, շտապ հետազոտել կոլիտ ունեցող բոլոր յե-րեխաների, ինչպես և կերակուր պատրաստող և սպիտակեղենը լվացող անձնակազմի կղկղանքը:

5. Այն դեպքում, յեթե լաբորատորիական հետազոտու-թյունը բացասական արդյունք է տալիս, ապա այդ չի նշանա-կում, վոր հետազոտվածները հիվանդ չեն դիզենտերիայով կամ պարատիֆով: Ուստի և այն դեպքերում, յերբ հիվանդությունը լայն տարածում է ստացել, ցանկալի յե հետազոտման յենթար-կել կոլիտի յերևույթներ ունեցող բոլոր հիվանդներին:

ՀՐԱՀԱՆԳ

ՄՍՈՒՐՆԵՐՈՒՄ ԱՄԱՌԱՅԻՆ ԼՈՒԾԻ ԴԵՄ ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿ ՄԻՋՈՑՆԵՐ ՁԵՌՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ամառային լուծի պրոֆիլակտիկան կիրառվում է հետևյալ ուղղությամբ.

1. մսուրի շենքում և նրա տերիտորիայի սահմաններում սանմինիմում պահպանելու հիմնական միջոցառումներ.

2. ընդհանուր և սննդի ռեժիմի կանոնավոր դրվածք.

3. աղիքային հիվանդությունների դեմ պայքարելու հա-տուկ հիմնական միջոցներ.

4. վորոշ կազմակերպչական միջոցառումներ.

5. մասսայական սանկուլտ աշխատանք ծնողների մեջ:

I. Մսուրի շենքում յեվ տերիտորիայի սահմաններում սանմինիմում կիրառելու հիմնական միջոցառումներ

1. Մսուրի շուրջը յեղած հրապարակն անհրաժեշտ է կա-նաչազարդել՝ թփեր, ծառեր տնկելով և գազոններ (մարգախոտ) պատրաստելով:

2. Մսուրի շենքի շուրջը յեղած հողամասը պետք է շատ մաքուր պահել՝ բակն ավլել և ջրել (մսուրում աշխատանքն սկսվելուց առաջ կամ աշխատանքը վերջանալուց հետո):

3. Աղբահորերը և կեղտաջրերի հորերը պետք է կիպ ծածկ-վեն և ժամանակին մաքրվեն:

Տաք յեղանակներն սկսվելուն պես այդ հորերը պետք է ամեն օր ախտահանել քլորակրի 20%-ային լուծույթով, վոր-պեսզի ճանճերը չբազմանան:

4. Պատուհանները պետք է պաշտպանվեն ցանցով, ըստ հնարավորության՝ մետաղյա (ուշադրություն դարձնել, վոր ճեղ-քեր չմնան): Առաջին հերթին պետք է ցանցապատել խոհանոցի, մթերանոցի, մառանի, արտաքնոցների և պետքանոթարանների պատուհանները:

5. Մսուրին կից գոյություն ունեցող տնտեսական շենքե-րը, վորտեղ անասուն և թռչուն են պահվում, պետք է ամեն օր մաքրվեն: Գոմերը պետք է գտնվեն մսուրի շենքից ըստ հնա-րավորության հեռու:

6. Մսուրը պետք է ապահովված լինի խմելու լավորակ ջրով: Ջրհոր ունենալու դեպքում անհրաժեշտ է պահպանել ջըր-հորները պահելու վերաբերյալ սահմանված սանիտարական կա-նոնները: Ջուրն ըստ հնարավորության պետք է հետազոտվի լաբորատորիայում:

7. Ամառվա ամիսներին մսուրը պետք է սառցարան ունենա:

8. Ցանկալի յե, վոր խոհանոցն առանձին շենքամասում լինի:

9. Կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների մսուրները պետք է տեղավորվեն շուկայի հրապարակներից և ընդհանուր գոմերից հեռու գտնվող շենքերում:

Անհրաժեշտ է կոլտնտեսությունների կամ խորհտնտեսությունների ադմինիստրացիայի ուշադրությունը հրավիրել այն ընդհանուր գոմերի սանիտարական վիճակի վրա, վորոնք գըտնըվում են մսուրների մոտ։

Մսուրի շենքը

1. Անհրաժեշտ է մսուրի շենքն ամեն որ մաքրել խոնավ յեղանակով (հատակը սրբել, դռները, պատուհանները, կահկարասու վրայի փոշին մաքրել և այլն)։

2. Շենքն ոդափոխվում է պատուհանները բաց անելու միջոցով՝ ամբողջ որվա ընթացքում և ըստ հնարավորության նաև գիշերը։

3. Տաք յեղանակներին շենքն ոդափոխելիս ոդի միջանցիկ հոսանքից չպետք է վախենալ։

4. Սաստիկ շոգերին շենքն արևի ճառագայթներից պաշտպանվում է փաթվարագույրներով (шторы) կամ լվացվող կտորից պատրաստված վարագույրներով։

5. Սաստիկ շոգերին առանձին սենյակների (ննջարան, խաղարան, ճաշարան) դերը փոխվում է, վորպեսզի յերեխաները յերկար ժամանակ չմնան արևից գերտաքացած սենյակներում։

6. Յերեխաների անկողնի պարագաները (խոտկուլներ, ներքնակներ, բարձեր, վերմակներ) պետք է ամեն որ դուրս բերել մաքուր ոդ և թափ տալ։

7. Համառ պայքար ճանճերի դեմ (թե ինչպես պետք է պայքար մղել ճանճերի դեմ, այդ մասին տես 103—106 եջերը)։

II Յերեխաների ընդհանուր յեվ սննդի ռեժիմի ճիշտ դրվածքը

Ամառվա շրջանում և մանավանդ ամառվա շոգերին հատուկ նշանակություն են ստանում այն հարցերը, վորոնք կապված են յերեխայի մաշկը խնամելու, թարմ ոդից ոգտվելու հետ, ինչպես և կարևոր են ռացիոնալ հագուստի՝ վորպես գերտաքացման դեմ պայքարելու միջոցի ու սննդի հետ կապված հարցերը։

1. Յերեխայի մաշկի խնամքը

ա) Ամառվա ամիսներին անհրաժեշտ է ծծկեր յերեխաներին ամեն որ գոլ վաննաներ անել։ Մեծ յերեխաները պետք է ամեն որ դուշ ստանան կամ նրանց վրա պետք է ցնցուղով ջուր ցանել։ Դուշ և վաննա ընդունելու համար ամենալավ ժամանակը նախաճաշյա ժամն է, ինչպես և արևի տակ մնալուց հետո ներս գալու ժամը։

բ) Հատուկ ուշադրություն պետք է դարձնել յերեխաների ձեռքերի և վոտքերի մաքրության վրա և ժամանակին կտրել նրանց յեղունգները. յերեխաների մազերը խուզելը պետք է համարել պարտադիր։

2. Թարմ ոդ շնչելը

ա) Յերեխաներն ապրում են բաց պատուհաններով սենյակներում, և այնտեղ, վորտեղ թեկուզ փոքր հնարավորություն կա, պետք է յերեխաների ամբողջ կյանքն անցնի շենքի պատերից դուրս. յերեխաների քունը, նրանց կերակրումը, նրանց պարապմունքները և խաղերը տեղի յեն ունենում հրապարակում, պարտեզում կամ պատշգամբում։

բ) Այն մսուրներում, վորտեղ պատշգամբ չկա, ցանկալի յե պարտեզում ունենալ փոքրիկ ծածկ։

գ) Այնտեղ, վորտեղ հնարավորություն չկա ծածկ շինել, վորպեսզի յերեխաները շարունակ բացոթյա անցկացնեն, անհրաժեշտ է մսուրի այգում կամ բակում այնպիսի տեղ ընտրել, վորն ավելի յե պաշտպանված արևի ճառագայթներից։

3. Յերեխայի հագուստը

ա) Յերեխան պետք է ազատ լինի ամեն ավելորդ հագուստից։

բ) Ծծկեր յերեխաները քնելիս կամ արթուն ժամանակ պետք է հագնեն վիզը բաց շապիկ։

գ) Մեծ յերեխաները հագնում են կիսավարտիկ, կրծքի վանդակը մնում է մերկ, յերեխայի գլուխն արևից պաշտպան-

12. Ամառվա շրջանում չպետք է աղած միս և ձուկ գործածել: Չպետք է յեփած մթերքները թողնել մինչև հաջորդ օրը: Բոլոր շուտ փչացող մթերքները պետք է պահել սառույցի մեջ:

13. Աղիքային հիվանդությունների տարածման դեմ պայքարելու համար անհրաժեշտ է.

ա) ըստ հնարավորության մեկուսացնել հիվանդացած յերեխաներին. հիվանդության առաջին նշանները յերևալիս յերեխան պետք է մնա իր մահճակալում և չմիացվի մյուս յերեխաների հետ. յերեխայի հարդարանքը կատարվում է իր մահճակալում (յերեխային չի կարելի դնել ընդհանուր բարուրասեղանի վրա).

բ) կոլիտի յերևույթներ ունեցող յերեխաներին պետք է տեղավորել մեկուսարանում: Յեթե մսուրում մեկուսարան չկա, կոլիտով հիվանդացած յերեխան մսուրից հեռացվում է: Արյունախառն կոլիտ ունեցող հիվանդներն անմիջապես հեռացվում են մսուրից: Անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել, վոր ըստ հնարավորության ժամանակին լաբորատորիական հետազոտություն կատարվի և յեթե հետազոտությունը հաստատի դիզենտերիայի առկայությունը, այդ դեպքում պետք է շտապ հետազոտել կոլիտի յերևույթներ ունեցող բոլոր յերեխաներին՝ բացիլակրությունը հայտաբերելու նպատակով (նույնիսկ այն յերեխաներին, վորոնք թեև կոլիտ ունեն, բայց առանց արյան խառնուրդի): Նույնը վերաբերում է և տիֆին.

գ) արգելվում է յերեխաներին պետքանոթ նստեցնելուց հետո նրանց ընդհանուր բարուրով մաքրել.

դ) յերեխաները, մանավանդ աղիքային հիվանդություններով տառապողները պետք է առանձին պետքանոթներ ունենան.

ե) կոլիտի սուր յերևույթներ ունեցող յերեխաներին չպետք է պետքանոթ նստեցնել, այլ թողնել, վոր յերեխան իրեն կեղտոտի մահճակալում բարուրի վրա.

զ) կոլիտով տառապող յերեխաների բարուրները պետք է հավաքել հատուկ ցինկապատ բաքերի մեջ. լվացքից առաջ բարուրները պետք է մեկ ժամով թաթախել սոդա-կարբոլյան 4%-ային լուծույթի մեջ: Պետք է հետևել, վոր յերեխաների սպիտակեղենը բարեխղճորեն լվացվի.

է) աղիքային հիվանդություններով տառապող յերեխաների պետքանոթները պետք է ախտահանվեն լիզոլի 10%-այի լուծույթով կամ 3%-անի ծծմբա-կարբոլյան լուծույթով:

IV. Մի քանի հատուկ կազմակերպչական միջոցառումներ

1. Մսուրի բժիշկը քննում է իր կողմից սպասարկվող յերեխաներին, նպատակ ունենալով հայտաբերել հատուկ հսկողության կարիք ունեցող յերեխաներին: Հատուկ հաշվառման են յենթարկվում այն յերեխաները, վորոնք ամառային լուծի նկատմամբ առանձնապես կասկածելի յեն համարվում: Այդ խմբին են պատկանում այն յերեխաները, վորոնք արհեստական կերակրում են ստանում, այնուհետև՝ դեբիլիկները և որապակասները, սննդի խանգարում ունեցող յերեխաները, եկսուդատիկները, հակահիգիենիկ կենցաղային պայմաններում գտնվող յերեխաները, ծանր հիվանդ յերեխաները:

2. Առաջին կետում հիշված յերեխաների խմբի զարգացման պատմության մեջ հատուկ գրանցում է կատարվում. «լուծի նկատմամբ կասկածելի»:

3. Հատուկ հաշվառքի յենթարկված յերեխաների խմբերը հանձնվում են խմբային քույրերին՝ պատրոնաժ սպասարկման համար (պրոֆիլակտիկ հաճախումներ տանը՝ յերեխայի կյանքի պայմանները պարզելու նպատակով):

Բոլոր այցելությունների տվյալները գրանցվում են զարգացման պատմության մեջ կամ հատուկ տետրում:

4. Մսուրն ամեն միջոց ձեռք է առնում, վորպեսզի յերեխաները, մանավանդ մինչև կես տարեկանները և կասկածելիները (լուծի նկատմամբ) կերակրվեն կնոջ կաթով (բնական և խառը կերակրում), այն է.

ա) յեռանդուն ագիտացիա յե մղում, վոր յերեխային կրծքով կերակրեն, ինչպես և մայրերին սովորեցնում է ճիշտ կերակրելու տեխնիկան.

բ) միջոցներ են ձեռք առնվում, վոր ձեռնարկություններում պարտադիր կերպով պահպանվեն աշխատանքի ընթացքում

յերեխային կերակրելու համար ընդմիջում տալու վերաբերյալ կանոնները.

գ) կասկածելի յերեխաներին ուղարկում են մոր աշխատանքի վայրում գտնվող արտադրական մսուրը։

Կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների մսուրներում, վորտեղ հնարավորություն չկա աշխատանքի ժամերին կանանց մսուր հրավիրել՝ յերեխաներին կրծքով կերակրելու համար, անհրաժեշտ է.

ա) վոր մայրերը յերեխային մսուր ուղարկելուց առաջ կրծքով կերակրեն.

բ) կրծքի թորած կաթ պահեն մաքուր ապակե ամանում, նախապես յեփջրով լվանալով ստինքները և ձեռքերը։

5. Անհրաժեշտ է սերտ կապ հաստատել կոնսուլտացիայի և մանկական ստացիոնարների հետ այն վայրերում, վորտեղ այդպիսիք կան։ Կոնսուլտացիաները և մսուրները միմյանց տեղեկացնում են աղիքային հիվանդությունների հնարավոր ակութների մասին, միաժամանակ իրազեկ դարձնելով այդ մասին շրջանային բժշկին կամ համաճարակագետին։

V. Մասսայական սանկուլտ աշխատանք ծնողների մեջ

Այդ ուղղությամբ կազմակերպվում են.

1. Դասախոսություններ և զրույցներ՝ ա) մսուրներում, բ) ձեռնարկություններում (ցեխերում, ակումբում), գ) կենցաղում (ժակտերում, կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների հանրակացարաններում, առանձին բնակարաններում և գյուղական խրճիթներում)։

2. Կազմակերպվում են ցուցահանդեսներ, հարցերի ու պատասխանների տախտակներ, տարածում են հանրամատչելի գրականություն, թռուցիկներ, մասնակցում են պատի թերթերին և այլն։

Պրոֆիլակտիկ միջոցառումներ կիրառելու մասով հատուկ ուշադրություն է դարձվում այն հանրակացարանների վրա, վորոնք սպասարկվում են մսուրի կողմից։ Հանրակացարաններում միջոցներ են ձեռք առնվում ըստ հնարավորության մեկուսացնելու ստամոքսա-աղիքային հիվանդության առաջին նշաններ ունեցող յերեխաներին։

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ՄՍՈՒՐՆԵՐՈՒՄ ՃԱՆՃԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ճանճերի դեմ հաջողությամբ պայքարելու համար ամենից առաջ անհրաժեշտ է բոլոր շենքերը մաքուր պահել։ Պետք է հատուկ ուշադրություն դարձնել այն շենքամասերի վրա, վորտեղ կերակուր են պատրաստում, պահում և մշակում այն, այդ շենքամասերը շրջապատող տերիտորիայի վրա (բակ, բակում յեղած շինություններ և այլն), ինչպես և տնային կենդանիներին հեգիենիկ պայմաններում պահելու վրա։

Առաջին հերթին անհրաժեշտ է վոչնչացնել ճանճերի թրթուրներին, վորպիսի նպատակով պետք է զանազան մնացորդները և գոմաղբը պահելու տեղերը պահել համապատասխան սանհիգիենիկ վիճակում, այդ նպատակով գործադրելով վարակազերծիչ և վախեցնող—փախցնող միջոցներ (քլորակիր և այլն)։

1. Պատուհանները պետք է պաշտպանել մետաղյա ցանցով, վորի վրայի փոշին պետք է մաքրել սիստեմատիկ կերպով վոչ պակաս, քան հինգ որ մեկ անգամ, կամ ցանցառ մարլայով, վորը պետք է շուտ-շուտ փոխել։ Մարլայի գործածությունն այնքան էլ ցանկալի չպետք է համարել, քանի վոր մարլան շուտ պատռվում է և մետաղյա ցանցի համեմատությամբ ավելի յե դժվարացնում օդի ազատ հոսանքը դեպի շենքը։

Առաջին հերթին ցանցապատվում են խոհանոցը, մառանները, արտաքնոցները և պետքանոթարանները։ Ցանց չլինելու դեպքում կարելի յե պատուհանների վրա կախել լրագրական թղթի կտրատած զոլակներ մինչև լուսամուտի գոգը։

2. Անհրաժեշտ է ճաշարաններում սեղանների վրա դնել ապակե կամ ցանցավոր ճանճորսներ, վորոնք որվա վերջին դատարկվում են և մաքրվում։

3. Շենքի ներսը թռչող ճանճերին վորսալու համար սեղանների վրա պետք է կախ տալ մածուցիկ թղթի թերթեր, վորոնք ճանճերով լցվելուց հետո հանվում են և փոխարինվում նորերով։

4. Մանկական հիմնարկներում կտրականապես արգելվում է

ճանճերի համար թունավոր նյութեր գործածել, օրինակ՝ ճանճասպան, մկնդեղի լուծույթներ և այլն։

5. Արգելվում է կեղտոտ ամանեղեն, մնացորդներ պահել այն շենքամասերում, վորտեղ կերակուրը է պատրաստվում։ Նմանապես այդպիսի տեղերում չպետք է պահել այն մթերքները, վորոնք գործածության յենթակա չեն ընթացիկ օրվա ընթացքում։

6. Մառաններում և պահեստներում սննդամթերքները պետք է պահվեն կիպ ծածկվող արկղներում. դարակները պետք է մարլայով ծածկել։

7. Ուտելուց հետո սեղանները պետք է արագորեն և խնամքով մաքրել։

8. Ամանեղենը գործածելուց հետո պետք է անմիջապես լվացվի և պահվի չոր վիճակում։

9. Ուտելուց հետո պետք է անմիջապես կատարել յերեխայի տուալետը։

10. Արգելվում է արտհագուստը պահել հատուկ պահարաններից դուրս այն շենքերում, վորտեղ կերակուրը է պատրաստվում և պահվում։ Այդ մանավանդ վերաբերում է գործածության մեջ յեղած արտհագուստին։

11. Կեղտոտ սպիտակեղենը մինչև լվացվելը պետք է պահվի ամուր ծածկվող ամանում (ցինկապատ բաքում)։

12. Հատուկ ուշադրություն պետք է դարձնել պետքանոթարանների մաքրության վրա։ Պետքանոթարանների պատուհանները պետք է անպայման ցանցապատվեն։ Պետքանոթներն օգտագործելուց հետո պետք է անմիջապես դատարկել և լվանալ։

13. Զանազան մնացորդներ և կեղտաջուրը հավաքելու համար պետք է լինեն ընդունիչներ (յերկաթե դույլեր, կիպ ծածկվող կափարիչներ ունեցող արկղներ և այլն)։ Այդ ընդունիչները պետք է մաքրել ամեն անգամ, յերբ նրանք լցվեն իրենց տարողության $^2/_3$-ի չափ։ Այդ ընդունիչների պարունակությունը պետք է թափել բակերում յեղած աղբարկղները և կեղտաջրի հորերը։ Աշխատանքը վերջանալուց հետո ընդունիչները պետք է տաք ջրով լվանալ։

14. Բակում յեղած աղբարկղները պետք է ունենան կիպ ծածկվող կափարիչներ, ջուր չանցկացնեն և բացի այդ, ճանճե-

րին վախեցնելու և փախցնելու համար նրանց ներսից պետք է ձյութ կամ չզտված կարբոլաթթվի լուծույթ քսել։

15. Արկղը կարելի յե լցնել մինչև նրա տարողության $^2/_3$-ը, վորից հետո պետք է աղբն անմիջապես դուրս տարվի։

16. Այն աղբահորերը, վորտեղ ջրի մնացորդներ և կեղտաջուր են լցնում, պետք է ջուր չանցկացնեն, ունենան լավ ծածկվող կափարիչներ (ցանկալի յե ավտոմատիկ) և իրենց շուրջն ունենան ցեմենտով կամ ասֆալտով պատած հրապարակ, վորը հնարավոր լինի խնամքով մաքրել։ Ամառվա ամիսներին կեղտաջրի հորերը պետք է մաքրել առնվազն 5 որը մեկ անգամ։

17. Յուրաքանչյուր անգամ աղբարկղները և կեղտաջրի փոսերը մաքրելուց հետո պետք է այնտեղ առատորեն շաղ տալ թարմ պատրաստված քլորակրի 20%-ային լուծույթ։

18. Աղբարկղների և կեղտաջրի հորերի կափարիչները պետք է ունենան մետաղյա ցանցից շինված ճանճորսներ։

19. Բակում յեղած խոշոր գոմաշենքերը պետք է տեղափոխել մանկական հիմնարկի տերիտորիայից առնվազն մեկ կիլոմետր հեռու։ Այն դեպքում, յեթե հնարավոր չե տեղափոխել հիշյալ շենքերը, անհրաժեշտ է, վոր նրանք բավարարեն հետևյալ պահանջներին.

ա) հատակը պետք է ջուր չանցկացնի և ունենա փոքրիկ թեքություն դեպի մի կողմը.

բ) գոմաղբը պետք է ամեն օր դուրս տարվի. յեթե հնարավոր չե նույն օրը գոմաղբը դուրս տանել բնակավայրի սահմաններից, ապա պետք է այն կիտել գոմաղբի պահեստարանում։ Գոմաղբի պահեստարանը շինվում է գոմի արտաքին պատին կից՝ անթափանցիկ ձյութապատ արկղի ձևով, վորը գոմի ներսի կողմից անցք է ունենում՝ գոմաղբը վերցնելու համար և դրսի կողմից առանձին անցք է ունենում աղբը հանելու համար։ Այդ անցքերը պետք է ծածկվեն ամուր ծածկվող կափարիչներով։ Գոմաղբի պահեստարանում և այնտեղ, վորտեղ կիտված է գոմաղբը, ամեն անգամ գոմաղբը հեռացնելուց հետո պետք է քլորակրի լուծույթ շաղ տալ։

20. Վոչ կոյուղացրած տիպի արտաքնոցները պետք է ունենան ջուր չանցկացնող փոս, վոր պետք է ծածկվի կիպ ծածկվող

կափարիչով: Հատակը, պատերը, առաստաղը պետք է լինեն առանց ճեղքերի ու ծակերի. պատուհանները պետք է պատած լինեն մետաղյա ցանցով. դուռը պետք է ունենա զսպանակ կամ ճախարակից կախած վորևէ ծանրություն՝ ավտոմատիկ կերպով ծածկվելու համար: Ամառն արտաքնոցը պետք է քլորակրով վարակազերծել վոչ ուշ, քան յերկու որը մեկ անգամ:

ՑԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՆՈՒՆԴԸ ՄՍՈՒՐՆԵՐՈՒՄ

Ցերեխային՝ նրա կյանքի առաջին իսկ որերից պետք է կերակրել ըստ ժամերի: Մինչև 6 ամսական հասակը պետք է կրծքով կերակրել $3^1/_2$ ժամը մեկ անգամ: Գիշերային ընդմիջումը պետք է լինի 6 ժամ: Ցերեխայի ստամոքսին հանգիստ է հարկավոր:

Հասակը	Ժամի 6-ին	Ժամը 9 և 30 րոպե	Ժամի 1-ին	Ժամը 4 և 30 ր.	Ժամի 8-ին
5—6 ամսական	Ծիծ տալ	$^3/_4$ բաժակ սպիտակահատ ձավարի շիլա և $^1/_4$ բաժակ մրգի կիսել:	Ծիծ: 2—3 թեյի գդալ մրգի կամ բանջարեղենի հյութ:	Ծիծ: 2—3 թեյի գդալ մրգի կամ բանջարեղենի հյութ:	Ծիծ տալ
7 ամսական	Ծիծ տալ	$^3/_4$ բաժակ սպիտակահատ ձավարի, հնդկացորենի ձավարի (гречневая) կամ բրնձի տրորած շիլա և $^1/_2$ բաժակ մրգի կիսել:	Ծիծ: 3—4 թեյի գդալ մրգի կամ բանջարեղենի հյութ:	$^1/_2$ բաժակ բանջարեղենի պյուրե (կարտոֆիլ, գազար) և $^1/_2$ բաժակ կիսել:	Ծիծ տալ
8—9 ամսական	Ծիծ տալ	1 բաժակ սպիտակահատ ձավարի, հնդկացորենի ձավարի կամ բրնձի տրորած շիլա և տրորած հում խնձոր կամ կիսել:	Ծիծ: Մրգի հյութ:	$^3/_4$ բաժակ բանջարեղենի պյուրե (կարտոֆիլ, գազար) և կիսել կամ տրորած խնձոր:	Ծիծ տալ
10—12 ամսական	Ծիծ տալ	1 բաժակ սպիտակահատ ձավարի, հնդկացորենի ձավարի կամ բրնձի տրորած շիլա, կամ խնձոր, կամ կիսել:	$^3/_4$ բաժակ բանջարեղենի պյուրե, $^1/_2$ բաժակ մրգի կիսել:	1 բաժակ կաթ, կամ սուրճ, կամ մածուն կամ կեֆիր, կամ լոռ՝ կաթով, պեչենյե, պաքսիմատ, կամ բուլկի:	Ծիծ տալ

ՍՆՆԴԻ ՕՐԱԿԱՆ ՆՈՐՄԱՆ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 1½ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Միջին քաշը 10 կգ

№№	Մթերքների անունները	Քանակը գրամներով	Յուրացվելի նյութերի քանակը			
			Սպիտակուցներ	Ճարպեր	Ածխաջրատներ	Կալորիա
1	Հաց աշորայի (ржаной)	—	—	—	—	—
2	» ցորենի	50	3,68	0,19	23,56	113,5
3	Ալյուր ցորենի	10	0,94	0,1	7,06	33,7
4	» կարտոֆիլի	10	0,07	—	7,32	30,3
5	Կրուպա և բակլայաբույսեր	30	3,00	0,51	19,29	96,1
6	Կարտոֆիլ	100	1,1	0,12	13,99	63,0
7	Բանջարեղեն և արմատիք	150	1,26	0,27	7,22	37,1
8	Պտուղներ և մրգեր (այդ թվում նաև չորամրգի)	100	0,24	0,22	4,32	20,7
9	Կոմպոտ (15.0—20,0)	15	0,24	—	6 73	28,6
10	Շաքար և քաղցրեղեն	40	—	—	37,62	154,2
	Ընդամենը բուսական ծագում ունեցող մթերքներ	—	10,41	1,32	123,58	560.3
1	Միս և մսամթերք	20	3,19	0,62	—	18,8
2	Ձուկ	—	—	—	—	—
3	Կաթ	500	16,35	19,05	19,65	325,0
4	Յուղ	25	0,24	20,43	—	191,0
5	Լոռ	25	3,45	0,14	0,54	17,7
6	Հում սեր	10	0.48	1,78	—	18,5
7	Ձու	25	2,96	2,87	0,12	39,3
	Կենդանական ծագում ունեցող մթերքներ	—	26,67	44,89	20,31	610,4
	Ընդամենը	—	36,7	46,25	143,89	1170,7

ՍՆՆԴԻ ՕՐԱԿԱՆ ՆՈՐՄԱՆ 1½-ԻՑ ՄԻՆՉԵՎ 3 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Միջին քաշը 12 կգ

№№	Մթերքների անունները	Քանակը գրամներով	Յուրացվելիք նյութերի քանակը			
			Սպիտակուցներ	Ճարպեր	Ածխաջրատներ	Կալորիա
1	Հաց աշորայի	25	1,32	0,13	9,5	45,6
2	» ցորենի	75	5,47	0,30	35,33	170,0
3	Ալյուր ցորենի	15	1,41	0,15	10,59	50,4
4	» կարտոֆիլի	15	0,11	—	10,99	45,5
5	Կրուպա և բակլայաբույսեր	20	2,0	0,34	12,88	64,2
6	Մակարոն	10	0,92	0,05	7,33	34.3
7	Կարտոֆիլ	200	2,20	0,24	27,98	126,0
8	Բանջ և արմատիք	100	0,82	0,17	4,82	24,6
9	Պտուղներ և մրգեր, այդ թվում չորամրգի (15,0—20,0)	100	0,24	0,22	4,32	20,0
10	Կոմպոտ	15	0,24	—	6,73	28.6
11	Շաքար	40	—	—	37,62	154,2
	Բուսական ծագում ունեցող մթերքների գումարը	—	14,26	4,39	164,56	773,9
1	Միս և մսամթերք	35	5,56	1,08	—	32,8
2	Ձուկ	25	2,32	0,07	—	10,3
3	Կաթ	400	13.8	15,24	15,72	260,0
4	Յուղ	30	0,24	20,43	—	191,0
5	Լոռ	20	2,76	0,12	0,43	14,2
6	Հում սեր	15	0.72	2,68	—	27,9
7	Ձու	25	2,96	2,87	0,12	39.3
	Կենդանական ծագում ունեցող մթերքների գումարը	—	27,64	42,49	16,27	575,5
	Ընդամենը	—	41,9	46,88	180,83	1383,1

Մշակված է սննդի Պետ. ինստիտուտի կողմից։

ԱՇՆԱՆ ՅԵՎ ՁՄՌԱՆ ՄԵՆՅՈՒ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ $1^{1}/_{2}$ ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նախաճաշ.—*Կաթով և յուղով յեփած սպիտակահատ ձավարի, բրնձի, կորեկաձավարի, հնդկաձավարի շիլա կամ լոռ՝ կաթով ու շաքարով։ Քանակը՝ 150,0։*

1. Սուրճ կաթով. քանակը՝ 100,0։

2. Պաքսիմատ, պեչենյե, սպիտակ հաց։

Ճաշ.— *1. Սուպ-պյուրե բանջարեղենով, բանջարեղենի սուպ յուղով, հում սերով։ Սուպ կրուպայով կամ բորշ՝ քերած ճակնդեղով, հում սերով, կամ թարմ շչի՝ հում սերով։*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— *Տասնօրյակում յերեք անգամ կարելի յե տալ սուպ՝ աղացած մսով կամ ձկան սուպ։*

2. Թխվածքներ՝ բանջարեղենի, կրուպայի, լոռի սոուսով կամ բանջարեղենի, կրուպայի կոտլետ՝ սոուսով կամ լոռաքլիթ՝ հում սերով կամ սոուսով, կամ աղացած և խաշած միս, կամ լերդ՝ կարտոֆիլի պյուրեյով։ Քանակը՝ 200,0։

2. Միրգ, կիսել, կոմպոտ, մրգի դոնդողակ։

Կեսօրյակ.—*Մածուն, կեֆիր, կաթով սուրճ, կաթով թեյ, սպիտակ հաց՝ կարագով, պավիդլոյով, մեղրով, լոռով։ Պեչենյե, բուլկի, քանակը՝ 200,0։*

Ընթրիք.—*Բանջարեղենի թխվածքներ սոուսով, բանջարեղենի պյուրե, մանր կտրատած վինեգրետ՝ հում սերով, լոռ՝ կաթով կամ հում սերով, քանակը՝ 150,0։*

2. Կիսել, կոմպոտ, քերած հում խնձոր, խորոված խնձոր։

ԳԱՐՆԱՆ ՅԵՎ ԱՄԱՌՎԱ ՄԵՆՅՈՒ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ $1^{1}/_{2}$ ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նախաճաշ.—*Կորեկաձավարի, սպիտակահատ ձավարի, հնդկաձավարի, բրնձի շիլա կամ կաթով լոռ։ Քանակը 150,0։*

2. Պտուղներ՝ կաթով և շաքարով, կամ կաթով սուրճ. քանակը՝ 100,0։

Ճաշ.— *Սուպ՝ սպանախով, մատղաշ յեղինջով, թրթնջուկով, ծաղկակաղամբով և բրյուսելյան կաղամբով, մատղաշ սիսեռով, փոշով (բույսերի տերևներով և ցողուններով)։ Կամ սուպ-պյուրե բանջարեղենով կամ պամիդորով ու հում սերով, ձավարով սուպ կամ շչի, բորշ, սառը բորշ, մրգեղենով սուպ։ Տասնօրյակում յերեք անգամ կարելի յե տալ մսի սուպ՝ աղացած մսով կամ ձկան սուպ։*

*2. Լցոնած (*Фаршировонные*) պամիդոր, դդմիկ (կաբաչկի), խնձորի ոլադյա, ոլադյա դդմիկից, բանջարեղենի թխվածքներ, սպիտակ սոուսով, կրուպայի թխվածքներ՝ մրգի, պտղի սոուսով*

Բանջարեղենի կոտլետ՝ սպիտակ սոուսով, կրուպայի կոտլետ՝ մրգի կամ պտղի սոուսով, լոռաքլիթ՝ հում սերով կամ սպիտակ սոուսով։

3. Թարմ պտուղներ կամ միրգ, կիսել, կոմպոտ, մրգի և պտղի դոնդողակ։

Կեսօրյակ.— *Մածուն, կեֆիր, կաթ, կաթով սուրճ, պտուղներ՝ կաթով, պաքսիմատ, պեչենյե, սպիտակ հաց՝ կարագով և մեղրով, պավիդլո։*

Ընթրիք.— *1. Սալաթ, վինեգրետ՝ հում սերով, սալաթով, թարմ վարունգով և բողկով։ Շոգեխաշած բանջարեղեն, բանջարեղենի թխվածքներ՝ սպիտակ սոուսով կամ լոռ՝ կաթով կամ հում սերով։*

2. Միրգ, պտուղներ, կիսել, կոմպոտ։

ԳԱՐՆԱՆ ՅԵՎ ԱՄՌԱՆ ՄԵՆՅՈՒ $1^{1}/_{2}$-ԻՑ ՄԻՆՉԵՎ 3 ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նախաճաշ.— *1. Կրուպայով շիլա՝ կաթով և յուղով, քանակությունը՝ 200,0, կամ լոռ՝ կաթով կամ հում սերով ու շաքարով, կամ ոմլետ, կամ մատղաշ կարտոֆիլ՝ յուղով և հում սերով. քանակությունը՝ 150 գ։*

2. Պտուղներ՝ կաթով, կամ սուրճ՝ կաթով 1 0 գ։

Սպիտակ հաց՝ կարագով ու պանրով, լոռով, պավիդլոյով, մուրաբայով, մեղրով, ծովատառեխից կամ լերդից պատրաստած պաշտետ։

Ճաշ.— *1. Բանջարեղենով սուպ-պյուրե՝ յուղով և հում սերով. կամ կրուպայով սուպ, բորշ՝ հում սերով, թարմ շչի՝ հում սերով։ Կամ սուպ սպանախով, մատղաշ յեղինջով, թրթնջուկով, ծաղկակաղամբով, մատղաշ սիսեռով, փոշով։ Սառը բորշ, մրգով սուպ 150 գ։*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Տասնօրյակում 3 անգամ կարելի յե տալ մսի կամ ձկան սուպ։

2. Լցոնած պամիդոր, դդմիկ, խնձորի կամ դդմիկի ոլադյա, բանջարեղենի թխվածքներ՝ սպիտակ սոուսով։ Թխվածքներ՝ կրուպայից՝ մրգի կամ պտղի սոուսով։

Կոտլետ մսից, ձկան կոտլետ բանջարեղենով, թարմ վարունգով, սալաթով, բողկով. թխվածքներ արիշտայից, մակարոն՝ լոռով, մսով։ Բլիթներ՝ լոռով, բրնձով, մսով. թխվածքներ՝ բանջարեղենից, կրուպայից (մսով)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Մսով, ձկնեղենով կերակուրներ տալ տասնօրյակում 3 անգամ այն օրերին, յերբ չկա մսով սուպ։

3. Միրգ, պտուղներ, կիսել, կոմպոտ, ղոնդողակ, ձմերուկ, սեխ 100 գ։

Կեսօրյակ.— Մածուն, կեֆիր, կաթ, կաթով սուրճ 200 գ. Պտուղներ՝ կաթով և շաքարով, պաքսիմատ, պեչենյե, բուլկի, կարկանդակ, սպիտակ հաց՝ կարագով ու մեղրով, պավիդլոյով, մուրաբայով։

Ընթրիք։— Սալաթ, վինեգրետ՝ բողկով, թարմ վարունգով, հում սերով, շարլոտկա՝ պտուղներով, խնձորով։

Խնձորի ոլադյա, լոռ՝ կաթով, լոռաբլիթ՝ հում սերով, շոգեխաշած բանջարեղեն, բանջարեղենի թխվածքներ՝ սպիտակ սոուսով 150 գ։

Միրգ, պտուղներ, կիսել, կոմպոտ 100 գր։

ԱՇՆԱՆ ՅԵՎ ՁՄՌԱՆ ՄԵՆՅՈՒ $1^1/_2$-ԻՑ ՄԻՆՉԵՎ 3 ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նախաճաշ.— 1. Կաթով ու յուղով պատրաստած հնդկաձավարի, կորեկաձավարի, սպիտակահատ ձավարի, կամ բրնձի շիլա 200 գ, կամ խաշած կարտոֆիլ՝ յուղով և հում սերով, կամ լոռ՝ կաթով կամ հում սերով ու շաքարով, կամ ոմլետ 150 գր։

2. Սուրճ կաթով 100 գ։

Հաց՝ կարագով, պանրով, լոռով, պավիդլոյով, մեղրով, մուրաբայով, ծովատառեխով, պաշտետ՝ լերդից։

Ճաշ.— Բանջարեղենով սուպ-պյուրե՝ յուղով, հում սերով կամ կրուպայով սուպ, կամ բորշ՝ քերած ճակնդեղով, կամ թարմ շչի՝ հում սերով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Տասնօրյակում 3 անգամ կարելի յե տալ ծեծած մսով սուպ, ձկան սուպ 150 գ։

2. Սոուսով կոտլետ՝ մսից, ձկնից, ուղեղից, բանջարեղենից, կրուպայից։ Մսով և ձկնեղենով ճաշերի հետ պետք է տալ բանջարեղենի պյուրե, թթու դրած կաղամբ, աղ դրած վարունգ։

Թխվածքներ՝ բանջարեղենից, կրուպայից (յերբեմն կարելի յե մսով, ձկնով, լերդով), արիշտայից, մակարոն՝ լոռի, մսի հետ, բլինի, լոռաբլիթ, ոլադյա 200 գ։

3. Միրգ, կիսել, կոմպոտ, ղոնդողակ։

Կեսօրյակ.— Մածուն, կեֆիր, սուրճ՝ կաթով, թեյ՝ կաթով, սպիտակ հաց՝ կարագով, պավիդլոյով, մեղրով, լոռով, ինչպես և պաքսիմատ, պեչենյե, բուլկի, կարկանդակ, պանրակարկանդակ։

Ընթրիք.— Շոգեխաշած բանջարեղեն՝ բոված հացի կտորներով, շարլոտկա՝ խնձորով, խնձորի ոլադյա՝ շաքարով, բանջարեղենի սոուս. վինեգրետ, լոռ՝ կաթով կամ հում սերով, լոռաբլիթ։

ՀՐԱՀԱՆԳ
ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ ՅԵՎ ԱՎԵԼԱՍՆՈՒՆԴ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Յեփուկներ պատրաստելը

Յեփուկներ պատրաստվում են բրնձից, վարսակից, գարեձավարից։

Բրնձի յեփուկ 4% տորրած։

Մեկ լիտր յեփուկին 40 գ բրինձ, 1000 գ ջուր

Մեկ լիտր յեփուկի մեջ՝		կալորիա
Սպիտակուց	2,14	8,8
Ճարպ	0,304	2,8
Ածխաջրատ	29,82	122,3
		133,9

Պատրաստելու յեղանակը

Կրուպան յերեկոյան սառը ջրով խնամքով լվանում են. այնքան ջուր են լցնում, վոր նա միայն ծածկի կրուպան և մինչև առավոտ թողնում են սառը տեղում։ Առավոտյան կրուպան պետք է յեփել այն ջրով, վորի մեջ նա թրջվել է և ավելացնել այնքան ջուր, վորքան պահանջում է յեփուկը (մի պտղուց աղ ցանել)։ Յեփել 2 ժամ, մինչև վոր կրուպան բոլորովին փափկի։ Յեփելու ժամանակ ջուրը գոլորշիանում է, ուստի և պետք է ջուր ավելացնել։ Յերբ բրինձը պատրաստ լինի, ամբողջ զանգվածը պետք է քամել և թորել խիտ մաղի և մարլայի միջով, չափել և սառը ջուր ավելացնել այնքան, վորքան յեփուկ պետք է պատրաստել։

Բրնձի յեփուկ 8%

Մեկ լիտր յեփուկին 80 գ բրինձ, 1000 գ ջուր

Մեկ լիտր յեփուկի մեջ՝		կալորիա
Սպիտակուց	4,28	17,5
Ճարպ	0,608	5,6
Ածխաջրատ	59,66	244,6
		267,7

Բրնձի յեփուկ 10%

Մեկ լիտր յեփուկին 100 գ բրինձ, 1000 գ ջուր

Մեկ լիտր յեփուկի մեջ՝		կալորիա
Սպիտակուց	5 35	21,9
Ճարպ	0,76	7,0
Ածխաջրատ	74,58	305,8
		334,7

Վարսակի յեփուկ 4%

Մեկ լիտր յեփուկին 100 գ վարսակ, 1000 գ ջուր

Մեկ լիտր յեփուկի մեջ՝		կալորիա
Սպիտակուց	1,876	6,51
Ճարպ	0,10206	0,95
Ածխաջրատ	10,5462	42,23
		50,69

Վարսակի յեփուկ 8%

Մեկ լիտր յեփուկին 80 գ վարսակ, 1000 գ ջուր

Մեկ լիտր յեփուկի մեջ՝		կալորիա
Սպիտակուց	3,1752	13,02
Ճարպ	0,20412	1,90
Ածխաջրատ	21,0924	86,46
		101,38

Գարեձավարի յեփուկ 4%

Մեկ լիտր յեփուկին 40 գ գարեձավար, 1000 գ ջուր

Մեկ լիտր յեփուկի մեջ՝		կալորիա
Սպիտակուց	1,2	4,92
Ճարպ	1,5	14,95
Ածխաջրատ	36,4	149,2
		168,7

Գարեձավարի յեփուկ 8%

Մեկ լիտր յեփուկին 80 գ գարեձավար, 1000 գ ջուր

Մեկ լիտր յեփուկի մեջ՝		կալորիա
Սպիտակուց	2,4	9,84
Ճարպ	3,0	27,90
Ածխաջրատ	72,8	298,4
		336,14

Բ. Բրինձ 5%

Մեկ լիտր խառնուրդի մեջ կաթ՝ 500 գ, բրնձի յեփուկ տրորած՝ 500 գ, շաքար՝ 50,0

			Կալորիա
Կաթի սպիտակուց	17,0	18,8	74,0
Յեփուկի »	1,08		
Կաթի ճարպ	18,5	18,57	173,46
Յեփուկի ճարպ	0,52		
Կաթի շաքարի ածխաջրատ .	22,5	84,4	346,1
Լրացուցիչ ածխաջրատ	47,0		
Յեփուկի ածխաջրատ	14,9		
			593,56

Մեկ լիտր Բ/բրինձ +5% շաքար պատրաստելու համար պետք է 500 գ հում կաթը խառնել 500 գ սառեցրած բրնձի յեփուկի հետ, ավելացնել 50 գր շաքարի օշարակ, այդ բոլորը լավ խառնել և անհրաժեշտ քանակությամբ լցնել շշերի մեջ, խցանով փակել, ստերջացնել (ստերիլիզացիայի յենթարկել), սառեցնել և տալ սառը վիճակում։

Վ. Բրինձ

Մեկ լիտր խառնուրդի մեջ՝ 665 գրամ կաթ, 335 գրամ բրնձի յեփուկ (տրորած), 50 գ շաքար։

			Կալորիա
Կաթի սպիտակուց	22,61	23,62	95,6
Յեփուկի սպիտակուց	0,71		
Կաթի ճարպ	24,6	24,7	229,71
Յեփուկի ճարպ	0,1		
Կաթի շաքարի ածխաջրատ .	29,9	81,8	356,2
Լրացուցիչ ածխաջրատ . .	47,0		
Յեփուկի ածխաջրատ . .	4,99		
			681,5

Մեկ լիտր Գ/բրինձ +5% շաքար պատրաստելու համար պետք է վերցնել 665 գ հում կաթ, խառնել 335 գ սառեցրած բրնձի յեփուկի հետ, ավելացնել 50,0 գ շաքարի օշարակ։ Այս բոլորը լավ խառնել, պահանջված քանակությունը լցնել շշերի մեջ, խցանել, ստերջացնել, վորից հետո սառեցնել և տալ ուտելու։

Բ/Ո+5% շաքար

Մեկ լիտր խառնուրդի մեջ՝ 500 գ կաթ, 500 գ վարսակի յեփուկ, 50 գ շաքար

			Կալորիա
Կաթի սպիտակուց . . .	17,0	17,8	92,95
Յեփուկի սպիտակուց . .	0,79		
Կաթի ճարպ	18,5	18,55	173,5
Յեփուկի ճարպ	0,50		
Կաթի շաքարի ածխաջրատ .	22,5	74,8	306,6
Լրացուցիչ ածխաջրատ . .	47,0		
Յեփուկի » . .	5,27		
			553,0

Մեկ լիտր Բ/Ո+5% շաքար պատրաստելու համար պետք է 500 գ հում կաթ խառնել 500 գ վարսակի յեփուկի և 50 գ շաքարի օշարակի հետ, այդ բոլորը լավ խառնել, պահանջված քանակությունը լցնել շշերի մեջ, խցանել, ստերջացնել և սառեցնել։

Գ/Ո+5% շաքար

Մեկ լիտր խառնուրդի մեջ՝ 665 գ կաթ, 335 գ յեփուկ, 50 գ շաքար

			Կալորիա
Կաթի սպիտակուց . . .	22,6	23,13	94,8
Յեփուկի » . . .	0,53		
Կաթի ճարպ	24,6	24,63	229,09
Յեփուկի »	0,034		
Կաթի շաքարի ածխաջրատ .	29,9	80,43	329,85
Լրացուցիչ . . » .	47,0		
Յեփուկի . . » . .	3,53		
			553,74

Մեկ լիտր Գ/Ո+5% շաքար պատրաստելու համար պետք է 665 գ հում կաթը խառնել 335 գ վարսակի սառեցրած յեփուկի հետ, ավելացնել 50 գ շաքարի օշարակ, այդ բոլորը լավ

խառնել, պահանջված քանակությունը լցնել շշերի մեջ, խցանով փակել, ստերջացնել ու սառեցնել։

Կաթի կիսել

Մեկ լիտր խառնուրդի մեջ՝ կաթ 1000 գ, կարտոֆիլի ալյուր 30 գ, շաքար 50 գ

			Կալորիա
Կաթի սպիտակուց . . .	34,0	34,2	140,3
Կարտոֆիլի ալյուրի սպիտակուց	0,2		
Կաթի ճարպ	37,0	37,0	344,0
Կաթի շաքարի ածխաջրատ	45,0		
Լրացուցիչ . . »	47,0	113,9	467,2
Կարտ. ալյուրի »	21,9		
			951,7

Պատրաստելու եղանակը

Կաթը պետք է եռացնել և դանդաղորեն խառնելով լցնել փոքր քանակությամբ սառը կաթի մեջ բացած կարտոֆիլի ալյուրի վրա, եռացնել 2—3 անգամ, վերցնել կրակի վրայից, քամել, ավելացնել շաքարի օշարակ, այդ բոլորը լավ խառնել և լցնել շշերի մեջ։

Սպիտակահաց ձավարի շիլա 5%—5% շաքարի հետ

Կաթ՝ 500 գ, ջուր՝ 500 գ, ձավար՝ 50 գ, շաքար՝ 50 գ

			Կալորիա
Կաթի սպիտակուց . .	17,0	22,0	90,2
Ձավարի » . .	5,0		
Կաթի ճարպ	18,5	19,37	180,09
Ձավարի ճարպ . . .	0,865		
Կաթի շաքարի ածխաջրատ	22,3	101,5	416,9
Լրացուցիչ . . . »	47,0		
Ձավարի . . . »	32,2		
			688,0

Պատրաստելու եղանակը

Խիտ մաղով մաղած ձավարը լավ յեփել 500 գ ջրի մեջ (յեփել 15 րոպե) և աստիճանաբար լցնել տաք կաթի մեջ։ Յեռացնել 1—2 անգամ և վերցնել կրակի վրայից։

Շիլան թորել քամիչի միջոցով, ավելացնել շաքարի օշարակ, խառնել և լցնել շշերի մեջ։

Սպիտակահաց ձավարի շիլա 10%—5% շաքարի հետ

Մեկ լիտրի մեջ՝ կաթ 1000 գ, սպիտակահաց ձավար, 100 գ, շաքար 50 գ

			Կալորիա
Կաթի սպիտակուց . . .	34,0	44,0	180,4
Ձավարի » . . .	10,0		
Կաթի ճարպ	37,0	38,2	360,19
Ձավարի ճարպ	1,72		
Կաթի շաք. ածխաջ. . . .	45,0	156,4	641,24
Լրացուցիչ » . . .	47,0		
Ձավարի » . . .	64,4		
			1181,8

Յուղա-ալյուրային խառնուրդներ

Չեռնի № 1

Մեկ լիտրի մեջ (ջրի նկատմամբ)՝ կաթ 335 գ, ջուր 665 գ, կարագ 46 գ, 7%, ցորենի ալյուր 46 գ, 7%, շաքար 33 գ, 5%

			Կալորիա
Կաթի սպիտակուց . . .	11,4	16	65,74
Ալյուրի » . . .	4,6		
Կաթի ճարպ . . .	12,39	55,2	513,46
Յուղի ճարպ . . .	42,5		
Ալյուրի » . . .	0,31		
Կաթի շաքարի ածխաջրատ .	15,07	79,07	324,2
Լրացուցիչ ածխաջրատ . .	31,02		
Ալյուրի » . .	32,98		
			903,4

Ջերնի № 1 պատրաստելու համար պետք է յուղը լցնել կաթսայի մեջ, դնել սալօջախի վրա և յեռացնել մինչև փրփուրի վոչնչանալը։ Հետո յուղի մեջ գցել նախապես թավայի մեջ մինչև բաց դեղնավուն գույնի բոված ալյուր և այդ բոլորը խառնել փայտե գդալով մինչև բաց դարչնագույն դառնալը։ Հետո լցնել յեռացրած ջուր, ամբողջ զանգվածը լավ յեռացնել, հետո լցնել յեռացրած տաք կաթ. այդ բոլորը քամել մաղլայով և ավելացնել շաքարի օշարակ։ Այդ խառնուրդը պատրաստելու ժամանակ յեռալու հետևանքով ահագին ջուր է կորչում։ Ջրի այդ կորուստը լրացվում է (խառնուրդը չափելուց հետո) յեռացրած տաք ջրով, վորը լցվում է արդեն պատրաստի տաք խառնուրդի մեջ։ Խառնուրդը յեռացնել այլևս հարկավոր չէ։ Պատրաստի խառնուրդը պետք է սառեցնել, լցնել ստերջացրած շշերի մեջ և խցաններով փակել։

Ջ ե ր ն ի № 2

Մեկ լիտրի մեջ (ջրի նկատմամբ)՝ կաթ 400 գ, ջուր 600 գ, կարագ 42 գ՝ 7%, շաքար 30 գ, 5%, ցորենի ալյուր 42 գ, 7%

Կաթի սպիտակուց . . .	13,6	17,8	73,1
Ալյուրի » . . .	4,24		
Կաթի ճարպ . . .	14,8	53,44	501,14
Կարագի » . . .	38,8		
Ալյուրի » . . .	0,28		
Կաթի շաքարի ածխաջրատ .	18,0	76,31	312,2
Լրացուցիչ . . » .	28,2		
Ալյուրի . . . » .	30,1		
			887,9

Պատրաստելու յեղանակը նույնն է, ինչ № 1 Ջերնիինը։

Մորո № 2

Մեկ լիտրի մեջ՝ կաթ 1000 գ, ցորենի ալյուր 70 գ՝ 7%, կարագ 50 գ՝ 5%, շաքար 50 գ՝ 50%

Կաթի սպիտակուց	34,0	41	168,1
Ալյուրի »	7,0		
Կաթի ճարպ	37,0	83,67	778,18
Յուղի ճարպ	46,2		
Ալյուրի »	0,470		
Կաթի շաքարի ածխ . . .	45,0	142,12	582,69
Լրացուցիչ . . » . . .	47,0		
Ալյուրի . . . » . . .	50,12		
			1526,9

Մորո պատրաստելու համար յուղը լցնում են կաթսայի մեջ և անընդհատ յեռացնում են, խառնելով մինչև փրփուրի անհետանալը։ Թավայի մեջ մինչև բաց դեղնավուն գույնի բոված ալյուր են լցնում (յուղի մեջ) և փայտե գդալով շարունակ խառնում են, մինչև բաց դեղնագույն դառնալը և յեռացնում են։ Հետո շարունակ խառնելով, լցնում են յեռացրած տաք կաթ և ավելացնում պահանջված քանակությամբ շաքարի օշարակ։ Յերբ այդ խառնուրդը յեռում է, քամում են և լցնում ստերջացրած շշերի մեջ։

Սպիտակուցային կաթ (ըստ Ֆինկելշտեյնի)
Սպիտակուցային կաթ+3% շաքար

Մեկ լիտրի մեջ՝ կաթի սպիտակուց 1000 գ, շաքարի սպիտակուց 30 գ

			Կալորիա
Սպիտակուց	30 գ	—	123,0
Ճարպ	25 »	—	232,5
Կաթի շաքարի ածխաջրատ.	20	48,2	197,6
Լրացուցիչ . . . » .	28,2		
			553,1

Պատրաստելու յեղանակը

Մեկ լիտր անարատ կաթը պետք է յեռացնել, սառեցնել մինչև 28—30 աստիճան, հետո թթվեցնել յեվրոպական կուլտուրայով կամ մերանով։ Մեկ լիտր կաթին պետք է վերցնել 5 գ մերան կամ յեվրոպական կուլտուրա և 1,0 քիմ. զուտ կավիճ։ Թթվեցրած կաթը 3 ժամ թողնվում է խոհանոցում և հետո դրվում է սառը տեղ վոչ պակաս, քան 8 ժամ։ Յեթե կաթը յերեկոյան է թթվեցվում (մերվում), ապա թողնվում է մինչև առավոտ։ Առավոտյան հետազոտվում է նրա թթվությունը, վորը պետք է լինի 6—6½°։

Յեթե կաթը հասել է այդ թթվության, ապա այն դնում են գոլ ջուր լցրած ամանի մեջ, դնում են սալօջախի վրա և արագ խառնելով, նրա ջերմաստիճանը հասցնում են մինչև 60—65 աստիճան։ Յերբ կաթը հասնում է 60—65°, հանում են ջրով ամանի միջից, քամում են մարլայով և վրան 1000 գ յեռացրած ջուր են լցնում։ Լավ խառնելով այդ խառնուրդը, թողնում են վոր պարզի (վոչ պակաս, քան յերկու ժամ)։ Յերկու ժամից հետո պետք է սիֆոնով դուրս քաշել այնքան ջուր, վորքան լցված եր։ Այնուհետև պատրաստ սպիտակուցային կաթին ավելացնում են 30 գ շաքարի օշարակ, խառնում են և լցնում շշերի մեջ։ Ստերջացնել պետք չէ։

Սպիտակուցային կաթ+5% շաքար

Սպիտակուցային կաթ՝ 1000 գ, շաքար՝ 50 գ

			Կալորիա
Սպիտակուց	30 գ	—	123,0
Ճարպ	25	—	232,5
Կաթի շաքարի ածխաջրատ .	20	67	274,7
Լրացուցիչ . . » .	47		
			620,2

Սպիտակուցային կաթ+10% շաքար

Սպիտակուցային կաթ՝ 1000 գ, շաքար՝ 100 գ

			Կալորիա
Սպիտակուց	30 գ	—	123,0
Ճարպ	25 »	—	232,5
Կաթի շաքարի ածխաջրատ .	20 »	114	467,4
Լրացուցիչ . . » .	94 »		
			822,9

5% և 10% շաքարով սպիտակուցային կաթ պատրաստելու յեղանակը նույնն է, ինչ 3% շաքարինը։

Լոռ

Պատրաստելու յեղանակը

Մեկ լիտր կաթը պետք է յեռացնել, սառեցնել մինչև 28—30 աստիճան լցնել 5 գ մերան կամ յեվրոպական կուլտուրա, թողնել խոհանոցում 3 ժամ, այնուհետև սառը տեղ դնել և թողնել վոչ պակաս. քան 8 ժամ։ Յեթե կաթը յերեկոյան է մերվում պետք է թողնել մինչև առավոտ։ Առավոտյան պետք է ստուգել նրա թթվությունը. յեթե թթվությունը հավասար է 4—4½°-ի, ապա պետք է դնել տաք ջրով լցված բանկայի մեջ և սալօջախի վրա տաքացնել մինչև 40—45 աստիճան։ Խառնել պետք չէ, այլ միայն դանդաղորեն պետք է շրջել։ Յերբ կաթը տաքանում է մինչև 40—45 աստիճան, պետք է հանել բանկայի միջից, թողնել վոր 10—15 րոպե նստի, վորից հետո պետք է քամել մարլայով ու մաղով և լռացած գանգվածը թողնել մարլայի մեջ, վորպեսզի շիճուկը քամվի։

Պախտանյե +3% շաքար+1% ալյուր

Մեկ լիտր պախտանյեյի մեջ՝ պախտանյե 1000 գ, շաքար 30 գ, ցորենի ալյուր 10 գ

			Կալորիա
Կաթի սպիտակուց	34,0	35	143,5
Ալյուրի »	1,0		
Կաթի ճարպ	15,0	15,06	140,13
Ալյուրի »	0,068		
Կաթի շաքարի ածխաջրատ .	40,0	75,37	309,0
Լրացուցիչ . . » .	28,2		
Ալյուրի . . . » .	7,17		
			592,6

Պատրաստելու յեղանակը

Պախտանյե պատրաստելու համար պետք է վերցնել յերեկը քաշած կաթ։ Սերդատ լինելու դեպքում կաթը նրանով են սերդատում, չլինելու դեպքում՝ կաթի յերեսից տափակ գդալով սերը քաշում են։

Յերեկը քաշած կաթը յեռացվում է, հետո 28 աստիճան ջերմության մեջ մերանով թթվեցվում։ Մերանը պետք է բաց անել փոքր քանակությամբ կաթի մեջ և լցնել յերեսին։ Մեկ լիտր կաթին պետք է վերցնել 5,0 մերան և 1,0 քիմիական զուտ կավիճ։ Վերջիններս պետք է բաց անել փոքր քանակությամբ սառը կաթի մեջ։ Մերած կաթը պետք է անշարժ թողնել մի քանի ժամ (իրիկվանից մինչև առավոտ)։

Առավոտյան հետազոտվում է թթվությունը. նա պետք է լինի $5-5^{1}/_{2}{}^{0}$։ Երբ կաթի թթվությունը հասնում է $5-5^{1}/_{2}{}^{0}$, նրա վրա ավելացնում են փոքր քանակությամբ բացած կաթ և նախապես թավայի մեջ բոված ալյուր։ Կաթսան դնում են ջրով լցված բանկայի մեջ և տաքացնում են մինչև 75 աստիճան, շարունակ խառնելով կաթը։ Երբ կաթը հասնում է 75 աստիճանի, վերցնում են կրակի վրայից, քամում են մաքուր մարլայով, սառեցնում են և շարունակ խառնելով, ավելացնում են շաքարի ոշարակ ու լցնում շշերի մեջ։ Լավ պատրաստված պախտանյեն չպետք է խոշոր գնդիկներ պարունակի։ Ստերջացնել պետք չէ։

Մերան պատրաստելը

Կաթը յերկու անգամ սերզատվում է և յերկու անգամ ստերջացվում կամ յեռացվում մինչև յերկու ժամ։ Հետո յերեսը մարլայով ծածկում են, յերկու օր թողնում տաք տեղում։ Յերկու օրից հետո հետազոտվում է նրա թթվությունը։ 7—10 աստիճան թթվություն լինելու դեպքում մերանը համարվում է պատրաստի՝ կաթ մերելու համար։ Յուրաքանչյուր 3—4 օրը մեկ անգամ պետք է թարմ մերան պատրաստել։

Կեֆիրի մերան

Կեֆիրի յերկու տարեկա պետք է խնամքով տորել, լցնել շշի մեջ, մեջն ածել հարյուր գրամ յեռացրած անարատ ու ճարպազերծված կաթ և մեկ օր թողնել տաք տեղում։ Շիշը պետք է խցանով փակել։ Մեկ օրից հետո կաթը պետք է լցնել յերկու շշի մեջ (յուրաքանչյուրի մեջ 50-ական գրամ) և ավելացնել 28 աստիճան ջերմության յեռացրած անարատ կաթ մինչև 160—170,0։ Այնուհետև պետք է թափահարել և թողնել մեկ օր, վորից հետո մերանը պատրաստ կլինի։ Կեֆիր պատրաստելու ժամանակ մեկ լիտր յեռացրած անարատ կաթի համար պետք է վերցնել 7—8 գ մերան։ Այդ մերանը պահվում է 3—4 օր։

Կ Ե Ֆ Ի Ր

Մեկ լիտր յեռացրած անարատ կաթի համար պետք է վերցնել 7—8 գ կեֆիրի մերան։ Բոլորը լավ խառնվում է, լցվում շշերի մեջ, մեկ օր թողնվում տաք տեղում և այնուհետև տեղափոխվում սառը տեղ։ Մեկ օրից հետո կեֆիրը պատրաստ է լինում։

Հում բանջարեղենից յեվ մրգերից հյութեր պատրաստելու յեղանակը

Հում միրգն ու բանջարեղենը պարունակում են շատ արժեքավոր հանքային աղեր և կենսականորեն անհրաժեշտ նյութեր, վորոնք կոչվում են վիտամիններ։

Պետք է վերցնել թարմ միրգ և բանջարեղեն, քանի վոր սառած և թառամած միրգն ու բանջարեղենը վիտամիններ չեն պարունակում։

Հանքային աղերն ու վիտամինները պահպանելու նպատակով բանջարեղենն ու միրգը պետք է լվանալ տաք ջրով, բայց վոչ յեռացող ջրով։

Հյութերը պատրաստվում են ըստ տարվա յեղանակի՝ զանազան բանջարեղեններից, պտուղներից, մրգերից (գազար, սպիտակակաղամբ, պամիդոր, նարինջ, մանդարին, լիմոն, խաղող, խնձոր, սև հաղարճ, կարմիր հաղարճ, ազնվամոր, յելակ, մորի, բալ, լոռամրգի)։ Հյութերը պետք է պատրաստել անմիջապես գործածելուց առաջ։

Կարելի յե տալ մեկ տեսակի կամ մի քանի տեսակի պտուղներից, բանջարեղենից և մրգերից պատրաստած հյութերի խառնուրդ։

Հանձնարարվում է քաղցր հյութերը խառնել թթու հյութերի հետ։

Լավ է թթու հյութերին շաքարի ոշարակ ավելացնել։

Բանջարեղենից հյութեր պատրաստելու յեղանակը

1. Գ ա զ ա ր ը պետք է դանակով քերել, տաք ջրով լավ լվանալ, քերիչով քերել և հյութը մզել յեռացրած մարլայի միջով

2. Գամիգոռը պետք է լվանալ, կտրել և չորս մասի բաժանել, հյութը մզել մարլայի միջով։

3. Կաղամբը պետք է լվանալ յեռացրած ջրով, քերիչով քերել, հյութը մզել մաքուր մարլայի միջով։

Պտուղներից ու մրգերից հյութեր պատրաստելու յեղանակը

Պտուղները պետք է ընտրել, յեռացրած տաք ջրով լվանալ և փայտի գդալով հյութը թորել յեռացրած մարլայի միջով։

Խնձորը պետք է լվանալ յեռացրած ջրով, կճպել, քերիչով քերել և հյութը մզել յեռացրած մարլայի միջով։

Նարինջը և լիմոնը պետք է կիսել. հյութը մզել ապակյա անոթի մեջ և քամել յեռացրած մարլայի միջով։

Խաղողը պետք է լվանալ յեռացրած ջրով, հյութը մզել փայտի գդալով և քամել յեռացրած մարլայի միջով։

Կիսել պատրաստելու յեղանակը

(Լոռամրգից կամ ուրիշ պտուղներից)

Լոռամրգից կամ ուրիշ պտուղներից մեկ լիտր կիսել պատրաստելու համար պահանջվում է՝

Պտուղ	250 գ
Շաքար	200 գ
Կարտոֆիլի ալյուր	50 գ

Կիսելը պատրաստվում է զանազան պտուղների (լոռամրգի, սև հաղարճի, կարմիր հաղարճի, ազնվամորի, յելակի, մորի, բալի) յեփուկներից։

Պտուղները պետք է ընտրել, յեռացրած տաք ջրով խնամքով լվանալ, փռել մաղի վրա և թողնել, վոր ջուրը հոսի. Հետո փայտե գդալով պտուղները պետք է ճզմել մաղի վրա կամ սանդի մեջ, հյութը քամել մարլայի միջով և թողնել վոր նստի, վորպեսզի հետո լցնել պատրաստի կիսելի մեջ։

Ջեչը, այսինքն, պտուղների (կամ մրգերի) մնացուկը պետք է լցնել կաթսայի մեջ, վրան 900 գրամ ջուր ածել, այդ ջրով քաշել մաղի վրա մնացած հյութը, յեռացնել, քամել, թափել յեփուկի մի մասը, իսկ մնացած յեփուկի վրա շաքար լցնել և նորից դնել կրակի վրա։ Կարտոֆիլի ալյուրը պետք է բաց անել մնացած յեփուկի մեջ և լցնել յեռացող ոշարակի վրա։ Պետք է թողնել վոր կիսելը յեռա մեկ անգամ. շարունակ խառնել գդալով, հետո վերցնել կրակի վրայից ու լցնել եմալե կամ հենապակյա ամանի մեջ. Յերբ կիսելը մի քիչ սառչի, նրա վրա պետք է լցնել պատրաստած հում ոշարակը։

Կիսել պատրաստելու այս յեղանակը հնարավորություն է տալիս պահպանել նրա միջի վիտամինները։ Կիսել պետք է պատրաստել ամեն օր, վոր նա թարմ լինի, կարտոֆիլի ալյուրը պետք է բաց անել յեփուկի մեջ և վոչ թե ջրում։

Բանջարեղենից պյուրե պատրաստելու յեղանակը

Բանջարեղենի ճիշտ ու կանոնավոր մշակումը կարևոր դեր է խաղում արժեքավոր հանքային աղերը և վիտամինները պահպանելու մեջ։

Բանջարեղենից կերակուրներ պատրաստելիս անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները.

1. ընտրել թարմ, վոչ փտած և վոչ սառած բանջարեղեն.
2. բանջարեղենը քերելով մաքրել, բայց վոչ կտրելով վերևի կեղևը (կարտոֆիլը պետք է շատ բարակ մաքրել).
3. բանջարեղենը չպետք է ջրով թրջել, այլ սառը ջրով լվանալ պատրաստելուց անմիջապես առաջ.
4. մաքրած բանջարեղենը յերկար ժամանակ չպետք է թողնել բաց ոդում, վորովհետև ոդի թթվածնի ազդեցության տակ նրանք կորցնում են իրենց վիտամինները.
5. հանձնարարվում է բանջարեղենի պյուրեն վիտամինացման յենթարկել (վորովհետև բանջարեղենը յեփելիս՝ վիտամինները մասամբ քայքայվում են)։

Ուստի և յուրաքանչյուր բաժին պատրաստի պյուրեյին՝ ուտելուց առաջ ավելացնում են տաս գրամ հում հյութ (գազարի, կաղամբի, պամիդորի).

6. բանջարեղեն կերակրատեսակները պետք է պատրաստել մեկ անգամվա համար։ Պահելու և տաքացնելու հետևանքով նրանք կորցնում են իրենց վիտամինները և ուրիշ արժեքավոր հատկությունները.
7. պյուրեն պետք է պատրաստել մի քանի տեսակ բանջարեղենից միասին.
8. բանջարեղենը պետք է տաք ջրով լվանալ, մանր կտրտել

(գազարը քերիչով քերել) և այնքան ջուր լցնել, որ բանջարեղենը ծածկվի: Հետո աղ պետք է գցել ու յեփել մինչև պատրաստվելը: Այնուհետև բանջարեղենը պետք է տրորել մաղի մեջ և առանց ջուրը թափելու պետք է ավելացնել բոված ալյուր՝ յուղի հետ միասին, դարձյալ յեռացնել մեկ անգամ ու ավելացնել հում հյութ, ինչպես ցույց է տրված վերևում:

ՀՐԱՀԱՆԳ
ՄՍՈՒՐՆԵՐՈՒՄ ԽՈՀԱՆՈՑՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Խոհանոցի համար հատկացվող շենքը պետք է լինի լուսավոր, մաքուր, լավ ոդափոխվող, սվաղած ու սպիտակեցրած և առանձին մուտքով:

2. Խոհանոցը կարող է լինել կամ մսուրի շենքում, կամ նրանից դուրս: Խոհանոցը մսուրի շենքից պետք է անջատված լինի բաշխման սենյակով, որտեղ պատուհան է շինվում կերակուրը դուրս տալու համար:

3. Խոհանոցի մեծությունը՝ նայած մսուրի կարողությանը, պետք է լինի 20—25 քառ. մետր:

4. Խոհանոցի հատակը պետք է լինի տախտակե, ներկված, սալիկներից կամ ցեմենտից:

5. Բանջարեղենը մաքրելու համար խոհանոցում պետք է հատուկ անկյուն առանձնացնել կամ առանձին սենյակ ունենալ:

6. Խոհանոցում շինում են ջեռոց-պահարան (դուխավոյ շկաֆ), որին հնարավոր պիտի լինի մոտենալ ամեն կողմից:

7. Խոհանոցը պետք է ունենա ջուր, որի աղբյուրը ստուգված պետք է լինի սանբժշկի կողմից: Որտեղ ջրմուղ չկա, ցանկալի յե պոմպ շինել՝ թարմ ջուր տալու համար: Յեթե գործ են ածում կիստակառի ջուր, ապա հարկավոր է ամեն օր լվանալ տակառը և թարմ ջուր լցնել: Տակառը պետք է ունենա կիպ փակվող կափարիչ և ծորակ:

8. Աղբի համար պետք ունենալ կափարիչավոր աղբարկղ, որը դրված պետք է լինի շենքից հեռու: Նրա յեզրերին պետք է քլորակիր ցանել և կանոնավոր կերպով ախտահանել՝ ճանճերի բազմացումը կանխելու համար:

Որտեղ կոյուղի չկա, բացի կեղտաջրի համար յեղած աղբարկղից, շինում են նաև ծածկված աղբահորեր՝ հորափոսյավածքով:

9. Կլեպները և կերակրի մնացորդները հավաքում են կափարիչավոր բաքերի կամ դույլերի մեջ և տրվում անասուններին որպես կեր:

10. Խոհանոցի շենքը չպետք է ընտանի կենդանիներ թողնըվեն: Կրծողների և ուտիճների դեմ պետք է պայքար մղվի:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Արգելվում է կրծողներին և ուտիճներին վոչնչացնելու նպատակով թունավոր նյութեր գործադրել խոհանոցում կամ մառանում, որտեղ մթերքներ են պահվում: Վնասատուներին վոչնչացնելու համար պետք է դիմել սանիտարական կազմակերպությանը:

11. Ամառը ճանճերից պաշտպանվելու համար լուսամուտները պատում են մետաղե ցանցով կամ մարլայով ծածկված շրջանակներ են դնում, որպիսիք պետք է լվանալ վոչ պակաս, քան մեկ անգամ վեցօրյակում:

12. Խոհանոցի շենքում պետք է միայն կերակուր պատրաստել: Արգելվում է այնտեղ սպիտակեղեն լվանալ ու չորացնել և ուրիշ աշխատանքներ կատարել:

Խոհանոցի սարքավորումը

Սալոջախ՝ ջեռոց պահարանով, կշեռք, ժամացույց, սեղաններ ցինկապատ, թիթեղով ծածկված, աթոռակներ, պահարաններ՝ ամանեղենի և մթերքների համար, դարակներ, արկղներ՝ բանջարեղենի համար, աղբի դույլեր կամ բաքեր՝ կափարիչով:

Ամանեղեն. կաթսաներ՝ զանազան չափերի, մսաղաց, հարիչ, թավաներ, խոհանոցի դանակներ, շերեփներ՝ փայտե և ալյումինե, քերիչներ, դույլեր, սափորներ, ափսեներ, պատառաքաղներ, դանակներ:

Ուտելիք պատրաստելուց հետո անհրաժեշտ է ամեն օր խոնավ շորով խնամքով մաքրել: Հարկավոր է ամեն օր սեղանները լվանալ սապոնով և խոզանակով, հատակը խնամքով լվանալ, դարակները և պահարանները մաքրել խոնավ շորով, պատերը սրբել, լուսամուտները լվանալ վոչ ուշ քան հնգօրյակում մեկ անգամ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ — Արգելվում է գզրակներում կամ պահարաններում պահել կերակուր պատրաստելուն չվերաբերվող առարկաներ։

13. Կերակուր պատրաստելու համար գործածվող ամանները պետք է լինեն ալյումինե կամ էմալե՝ էմալի հաստ շերտով պատած, կամ պղնձե՝ լավ կլայեկած։ Պղնձե ամանեղենը պետք է կլայեկել 3 ամիսը մեկ անգամ։

14. Անհրաժեշտ է ամանեղենն ամեն օր տաք ջրով խնամքով լվանալ (խոզանակով ու սոդայով կամ մոխրաջրով). բացի դրանից, անհրաժեշտ է հնգօրյակում մեկ անգամ ամանեղենը յեռացնել սալօջախի վրա յերկտոկոսանի սոդայի կամ մոխրաջրի լուծույթով։

15. Ամանեղենը պետք է պահել պահարանում կամ դարակի վրա՝ հատակը դեպի վեր դրած։

16. Յուրաքանչյուր կերակուր պատրաստելու համար պետք է լինի հատուկ չափի աման։

17. Գավաթները, գդալները և ջրիկ կերակուր հանելու համար գործածվող այլ մանր ամանները պետք է դնել այդ նպատակին ծառայող հատուկ ափսեյի մեջ։

18. Կերակուրը փորձելու համար պետք է գործածել առանձին ափսե ու գդալ։

19. Երեխաների համար կերակուր պատրաստելիս մթերքները պետք է լինեն ամենաթարմ ու լավորակները։

20. Մթերքներն ստանալիս, ինչպես և պատրաստելուց առաջ պետք է զննվեն բժշկի կամ ավագ քրոջ կողմից։

21. Մթերքները կաթսայի մեջ պետք է դրվեն բժշկի կամ ավագ քրոջ ներկայությամբ։

22. Մսուրներում մենյուն պետք է կազմվի 5 օրվա համար և մշակված լինի բժշկի կողմից՝ քույր հրահանգչի հետ միասին։

23. Տնտեսական մասի վարիչը պետք է ամեն օր հաշվառում կատարի, հաշվի պահանջվող մթերքների օրական քանակը և կազմի ամենօրյա ցուցակ ըստ բաշխման սահմանված կարգի։ Անհրաժեշտ է յուրաքանչյուր կերակրի համար քարտադարան (կարտոտեկա) ունենալ։

24. Պետք է ամեն օր թարմ կերակուր պատրաստել։

25. Կերակուրը բաժանելուց առաջ բժիշկը կամ ավագ քույրը պետք է փորձեն այն և իրենց դիտողությունները գրեն հատուկ տետրակում։

26. Կերակուրը պետք է բաժանվի ավագ քրոջ ներկայությամբ սահմանված ժամերին և ճիշտ նշանակված քանակությամբ։

27. Խոհանոցի անձնակազմը պետք է պահպանի հետևյալ սանիտարական հիգիենիկ կանոնները.

ա) կերակուրը պատրաստելուց առաջ թևքերը քաշել մինչև արմունկները, ձեռքերը խնամքով լվանալ օճառով և խոզանակով, մաքուր խալաթ հագնել և գլուխը ծածկել գլխաշորով կամ թասակով.

բ) կարճ կտրել յեղունգները, լողանալ վոչ պակաս քան մեկ անգամ հնգօրյակում, հագնել մաքուր սպիտակեղեն և հագուստ.

գ) վերնազգեստը պահել խոհանոցի շենքից դուրս.

դ) խոհանոց չթողնել կողմնակի անձանց՝ ինչպես և այցելուներին՝ առանց խալաթի.

ե) կերակուր պատրաստելիս խիստ մաքրություն պահպանել, մթերքները և կերակուրները փոշուց և ճանճերից պաշտպանելու համար ծածկել մարլայով ու ծածկոցներով.

զ) աշխատանքի նոր ընդունվողներն անմիջապես և մշտական աշխատողներն ամեն ամիս պետք է բժշկական քննության յենթարկվեն։ Ցանկալի յե 6 ամիսը մեկ անգամ հետազոտություն կատարել՝ բացիլակրություն և վորդակրություն հայտաբերելու նպատակով.

է) խոհանոցի աշխատողի հիվանդանալու դեպքում, մանավանդ ստամոքսա-աղիքային հիվանդություններով հիվանդանալու դեպքում պետք է այդ մասին հայտնվի մսուրի բժշկին։

28. Խոհանոցում աշխատանքը կանոնավոր կերպով կազմակերպելու համար պետք է մշակվեն և պատին փակցվեն ներքին կարգապահության վերաբերյալ կանոններ։

29. Խոհանոցին պետք է կցված լինի սանհրահանգիչ։ Յուրաքանչյուր խոհանոց և խոհանոցային աշխատակից պետք է ունենա պետ. սան. տեսչի կողմից տրված սանիտարական գրքույկ։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՄՍՈՒՐՆԵՐՈՒՄ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ
ԴՈՒՇ ՍԱՐՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դուշի սենյակի հատակը և պատերը 150 սմ բարձրությամբ պետք է շարված լինեն սալիկներով։

Պատերը սալիկներից վերև և առաստաղը պետք է ներկված լինեն բաց գույնի յուղաներկով։

Պատի մոտ, հատակից 40 սմ բարձրության վրա շինվում է հարթակ, մեկ մետրից ոչ ավելի լայնությամբ, որը շրջապատվում է 35 սմ բարձրության բարյերով։

Հարթակի յերկու կողմերից շինվում են ցածր աստիճաններով փոքրիկ սանդուխքներ։

Հարթակը և դուշի սենյակի այն մասը, որտեղ հանվում են յերեխաները, ծածկվում են տախտակե ցանցով։

Հարթակի վրա, ցանցի տակ շինվում է հատուկ հորձանք՝ ջրի հոսելու համար։

Տաք ջրի համար շինվում է բաք՝ իր խառնիչով։ Բաքից ջուրն անցնում է դուշերը (ջրցանները), որոնք տեղավորվում են հարթակի հատակից 115 սմ բարձրության վրա և պատից 65 սմ հեռավորության վրա։

Ծորակները հարթակից դուրս այնպես պետք է շինված լինեն, որ յերեխաների ձեռքը նրանց չհասնի։

Դուշի սենյակում պետք է լինի մի փոքրիկ վաննա 35×85 սմ մեծությամբ։ Վաննան այնպես պետք է դրված լինի, որ նրա հատակը 65 սմ բարձր լինի սենյակի հատակից։

Դուշի սենյակի լուսամուտը պետք է ունենա մեծ վերնափեղկ. սենյակում տաքությունը պետք է լինի 21 աստիճան (Ց)։

Դուշի սենյակի սարքավորումը

1. Նստարան՝ հանվելու համար.

2. կախարան, որը յուրաքանչյուր յերեխայի համար պետք է ունենա յերկու քուն՝ սավանի և ձեռնոցների համար.

3. փոքրիկ դարան վաննայի վերևում.

4. պատի ջերմաչափ։

Հ Ր Ա Հ Ա Ն Գ
ՄՍՈՒՐՆԵՐՈՒՄ ԴՈՒՇԻՑ ՈԳՏՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դուշը մսուրներում օգտագործվում է հիգիենիկ նպատակով։ Դուշի նշանակությունն այն է, որ 1—3 տարեկան յերեխաների համար փոխարինում է վաննային և միաժամանակ յերեխայի մաշկի ամենօրյա կանոնավոր խնամքի միջոց է ծառայում։ Ջրային այդ պրոցեդուրան անկանոն կերպով կատարելու դեպքում նա կարող է վնասակար ազդեցություն ունենալ յերեխայի վրա, ուստի և առաջարկվում է խստիվ պահպանել հետևյալ կանոնները.

1. Դուշ ընդունում են մեկ տարեկանից բարձր հասակ ունեցող յերեխաներն ամեն օր, ամառը և ձմեռը (մեկուսարանում գտնվող յերեխաները դուշից չեն օգտվում)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—*Տանորյակում յերկուսից յերեք անգամ յերեխային դուշի տակ լողացնում են սապոնով և անհատական փոչառ ձեռնոցով։*

2. Յերեխաները դուշ ընդունում են առավոտը ժամը գալուց հետո, յերեք րոպեյի ընթացքում։

3. Դուշի ջրի ջերմաստիճանը Ց. 35—33° (Ռ. 28—29 աստիճան). տաք յեղանակին՝ Ց. 30 աստիճանից ոչ ցածր։

4. Դուշը պետք է ունենա մանր ծակեր ունեցող մաղ, որը պետք է տեղավորված լինի յերեխայի գլխից 20—30 սմ բարձր։

5. Դուշը պետք է ունենա ջերմաչափ ունեցող հատուկ խառնիչ, որպեսզի հնարավոր լինի կանոնավորել ջրի ջերմաստիճանը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ։ Քրոջ պարտականությունն է ուշիմությամբ հետևել ջրի ջերմաստիճանին։

6. Այն սենյակը, վորտեղ դուշ են ընդունում, պետք է տաք լինի, այն է՝ ջերմաստիճանը Ց. 20—21°-ից (Ռ 16—17) վոչ ցածր։

7. Հատակը կամ վաննան, վորտեղ յերեխան կանգնում է դուշի տակ, ծածկվում է տախտակե ցանցով։

8. Դուշից հետո յերեխայի մարմինը մաքրում և չորացնում են անհատական սրբիչով, հագցնում են սպիտակեղենը և խալաթը, վորից հետո ուղարկում են համապատասխան խումբը։

9. Յերեխայի բացոթյա քունը կամ զբոսանքը կատարվում է վոչ շուտ, քան դուշից $1^1/_2$ ժամ հետո։

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԲԱՑՈԹՅԱ ՔՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Յերեխաների բացոթյա քունն առողջացնող կարեվորագույն միջոցառումներից մեկն է և թարմ օդից օգտվելու ավելի հարմար ձևը։

2. Բացոթյա քունն անց է կացվում ամեն օր միևնույն ժամին և տարվա բոլոր յեղանակներին։

3. Բացոթյա քունն անց է կացվում բաց լուսամուտներով փակ վերանդաներում, ծածկ ունեցող բաց վերանդաներում կամ բակում՝ ծածկ լինելու դեպքում։

4. Այն տեղը, վորտեղ բացոթյա քուն է անց կացվում, պետք է սարքավորված լինի փոքրիկ մահճակալներով կամ փայտե ծալովի մահճակալներով և առանձին պառկելատեղերով, իսկ քնելու ժամանակ՝ ներքնակներով ու բարձերով։

5. Տարվա տաք յեղանակին յերեխաները բացոթյա քնում են յերկու շաբաթական հասակից, իսկ ցուրտ յեղանակին՝ մեկ ամսական հասակից սկսած։

6. Բացոթյա քնի տևողությունը կախված է տարվա յեղանակից և յերեխայի հասակից։

ա) տարվա տաք յեղանակին բոլոր հասակի յերեխաները

իրենց քնի համար սահմանված ամբողջ ժամանակն անց են կացնում բացոթյա.

բ) տարվա ցուրտ յեղանակին (վոչ պակաս Ց. 15°-ից մինչև մեկ տարեկան յերեխաների, և վոչ պակաս Ց. 20°-ից մեկ տարեկանից բարձր յերեխաների համար) յերեխաները յերեք ամսականից մինչև 6 ամսական հասակը բացոթյա քնում են 1—2 ժամ։ Վեց ամսականից սկսած յերեխաները ցերեկվա քնի համար հատկացված ամբողջ ժամանակն անց են կացնում բացոթյա.

գ) բժիշկը հատուկ ուշադրությամբ պետք է կանոնավորի հիվանդ, թուլացած և փոքրիկ (մինչև 3 ամսական) յերեխաների բացոթյա քունը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ։ 6-րդ հոդվածը վերաբերում է թարմ օդից կանոնավոր կերպով օգտվող յերեխաներին։ Անսովոր և նոր ընդունված յերեխաներն աստիճանաբար են ընտելացվում բացոթյա քնին։

7. Յերեխաների բացոթյա քնի նախապատրաստումը կատարում է հերթապահ ծառայողը հետևյալ կերպ.

ա) տարվա ցուրտ յեղանակին յերեխաները պետք է բավական տաք հագնված լինեն. բամբակե պարկերը պետք է ուշադրությամբ ու խնամքով կապված լինեն ու կոճկված, յերեխայի դեմքը պետք է օծված լինի վազելինով. տարվա շատ ցուրտ յեղանակին պարկի վրայից յերեխային պետք է ծածկել նաև վերմակով.

բ) տարվա տաք յեղանակին յերեխաները պետք է թեթև հագնված լինեն, վորպեսզի շատ չտաքանան։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Բացոթյա քնացնելու համար յերեխային հագցնելիս պետք է անհատական մոտեցում ունենալ և հաշվի առնել այն, թե ինչպես է յերեխան հակազդում ցրտին։

8. Յերեխաների բացոթյա քնի ժամանակ ծառայողի հերթապահելը պարտադիր է և հերթապահում է ինչպես քույրը, այնպես և դայակը։

9. Յերբ քնում է յերեխաների մի ամբողջ խումբ, ապա հերթապահությունը տանում է նույն այդ խմբի անձնակազմը։

10. Յեթե բացոթյա քնում են միաժամանակ մի քանի խումբ յերեխաներ, հերթապահությունը հերթով տանում է այդ խմբերի անձնակազմը։

11. Սառտիկ սառնամանիքների ժամանակ մեկ անձի հերթապահությունը տևում է մեկ ժամից ոչ ավելի։

12. Հերթապահ անձնակազմի պարտականություններն են.

ա) հետևել մանկան դիրքին (յերեխան պետք է պառկի հարմար դիրքով և բաց յերեսով).

բ) հետևել յերեխայի վիճակին, դեմքի մաշկին, շնչառությանը։

13. Անձնակազմի հերթափոխությունը կատարվում է անպայման հերթապահությունը հանձնելու միջոցով, ըստ որում հերթապահությունը հանձնվում է քնելու տեղում։ Հերթապահությունը հանձնելիս հայտնվում է յերեխաների թիվը և նրանց վիճակը։

14. Քունը վերջանալուց հետո, վերջին հերթապահ անձնավորությունն ստուգում է յերեխաների դրությունը, ինչպես և և այն, թե բոլոր յերեխաներն են արդյոք մսուր տարված։

Հ Ր Ա Հ Ա Ն Գ
ԱՐԵՎԻ ՎԱՆՆԱՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Յերեխաներն արևի վաննա յեն ընդունում յերկու ամսականից սկսած, բժշկի նշանակումով և նրա ղեկավարությամբ։

2. Արևի վաննան անց են կացնում քույրերը։

3. Հակացուցմունքներն են ամեն տեսակի սուր հիվանդությունները և փորլուծությունը։ Արևի վաննաներ նշանակելիս հարկավոր է հաշվի առնել յերեխայի առանձնահատկությունները, նրա ներվային սիստեմի և ստամոքսա-աղիքային տրակտի վիճակը տվյալ որը։

4. Արևի վաննաներ անց են կացվում ոդի 22—18° բարեխառնության պայմաններում և ոչ ուժեղ քամու ժամանակ։

5. Արևի վաննաներ անց են կացվում առավոտյան ժամը 10—12-ը, կամ յերեկոյան ժամը 4—6-ը։ Յեթե յերեխաներն արևի վաննա յեն ընդունում յերկու հերթի, ապա անհրաժեշտ է, որ առավոտյան և յերեկոյան ժամերը հերթագայեն։

6. Արևի վաննաները պետք է սկսել 6 րոպեյից և աստիճանաբար որ ու մեջ 1—2 րոպե ավելացնել ժամանակը և հասցնել

6 ամսականից մինչ 2 տարեկան յերեխաների համար 30 րոպեյի և 2 տարեկանից բարձր հասակ ունեցող յերեխաների համար մինչև 45 րոպեյի։

7. Արևի վաննաներ ընդունելիս հարկավոր է յերեխաներին շրջել փորի և մեջքի վրա, հավասարաչափ բաշխելով ճառագայթման ժամանակը։ Անհանգիստ յերեխաները կարող են արևի վաննա ընդունել նստած դիրքով։

8. Արևի վաննա ընդունելիս յերեխայի գլխին սպիտակ պանամա յեն դնում։ Անհրաժեշտ է յերեխային ջուր տալ խմելու։

9. Արևի վաննայից հետո յերեխայի վրա ջուր են լցնում։ Ջրի սկզբնական ջերմաստիճանը պետք է լինի Ռ. 28°, որն աստիճանաբար յուրաքանչյուր սեանսից հետո իջեցվում է 1°-ով և հասցվում մինչև 18°։

10. Արևի վաննայից հետո յերեխաները պետք է անպայման միայն ստվերում կամ ծածկի տակ։

11. Արևի վաննա ընդունելու համար ավելի հարմար են գործած մահճակալները ծծկեր յերեխաների համար և պարուսինով պատած ծալովի ցածր մահճակալները մեծերի համար։

Հ Ր Ա Հ Ա Ն Գ
ՈԴԻ ՎԱՆՆԱՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Ոդի վաննա նշանակում է բժիշկը՝ սկսած յերեխայի յերկու ամսական հասակից։ Հակացուցմունք են ամեն տեսակի սուր հիվանդությունները և փորլուծությունը, որոնց ժամանակ ոդի վաննաները դադարեցվում են։ Յերկար տևող սուբֆեբրիլ ջերմաստիճանը հակացուցմունք չէ։

2. Ոդի վաննա անց են կացնում քույրերը։

3. Առաջին վաննաներն ստվերում սկսվում են ջրի Ց. 22—23⁰ բարեխառնություն լինելու դեպքում (Ռ. 16—18⁰) և վոչ ուժեղ քամու ժամանակ:

Հետագայում, յերբ յերեխան ընտելանում է, ջրի վաննան անց է կացվում ջրի բարեխառնության ավելի ցածր աստիճանի պայմաններում:

4. Յերեխաներն սկսում են ջրի վաննա ընդունել հիմնարկում 4—5 օր մնալուց հետո, յերբ նրանք արդեն սովորել են թեթև հագուստով յերկար ժամանակ մնալ բաց օդում:

5. Ջրի վաննայի տևողությունն է՝

ա) ծծկեր յերեխայի համար առաջին ջրի վաննան տևում է 15—20 րոպե: Հետագայում կարելի յե ժամանակը յերկարացնել, որական ավելացնելով ½ ժամից մինչև 1½ ժամ.

բ) աստիճանաբար ընտելանալով՝ մեծերն ամբողջ որը լինում են բաց օդում, մերկ և կիսավարտիքով (տրուսիկ), սկսելով 30 րոպեյից և որական ավելացնելով 30-ական րոպե.

գ) ջրի վաննայի ժամանակ ծծկեր յերեխային հարկավոր է շրջել, վորպեսզի մեկ սեանսում ամբողջ մարմնի մակերեսը յենթարկվի ջրի ազդեցությանը:

6. Հարկավոր է հաշվի առնել յերեխայի անհատական առանձնահատկությունները և նրա ներվային սիստեմի և ստամոքսա-աղիքային տրակտի վիճակն այդ որը:

7. Ջրի վաննայի տևողությունը յերկարացնելու կամ կարճացնելու դեպքում հաշվի յեն առնվում ջրի խոնավությունը և քամու ուժը:

8. Ջրի վաննա ընդունելու համար ավելի հարմար են գործած մահճակալները ծծկեր յերեխաների համար և պարուսինով պատած ծալովի մահճակալները մեծերի համար:

ՀՐԱՀԱՆԳ
ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՄԱՌԱՆՈՑ ՏԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Մսուրի համար ամառանոց ընտրելը

1. Անհրաժեշտ է ամառանոցն ընտրել չոր տեղում՝ շուրջը բավականաչափ կանաչ տարածությամբ:

2. Ամառանոցը յերկաթգծի կայարանից մեկ կիլոմետրից ավելի հեռու չպետք է գտնվի: Կանոնավոր փոխադրական միջոցներ լինելու դեպքում թույլ է տրվում ամառանոց ընտրել կայարանից և տեղական հիվանդանոցից վոչ ավելի, քան 5 կիլոմետր հեռու: Ամառանոցի մոտերքում պետք է լինի լավորակ ջուր, ջրմուղ, արտեզյան բացվածք, ջրհոր:

3. Ամառանոցի շենքը պետք է առանձնացված լինի բնակելի տներից. ցանկալի յե, վոր շենքը տաքացվող շենք լինի:

4. Ամառանոցի ընտրումը պետք է համաձայնեցվի սանիտ. հսկողության մարմինների հետ:

5. Յերեխաներն ամառանոց են տարվում և հետ վերցվում ծնողների կողմից կազմակերպված ձևով, առանձին վագոնով կամ ավտոմեքենաներով:

6. Մսուրի համար հատկացվող ամառանոցը պետք է ունենա հետևյալ շենքերը.

ա) առանձին սենյակ յուրաքանչյուր խմբի համար, ըստ հնարավորության պատշգամբով (տերասով).

բ) պետքանոթի սենյակներ՝ ըստ խմբերի թվի.

գ) մեկուսարան, վորը պետք է գտնվի առանձին շենքում:

Այս պահանջի կատարելն անհնար լինելու դեպքում մեկուսարանը կազմակերպվում է նույն այդ շենքում, սակայն անպայման առանձին մուտքով: Մեկուսարանների մահճակալների թիվը պետք է լինի յերեխաների թվի 10%-ի չափ:

դ) խոհանոց և մառան՝ մթերքների համար.

ե) առանձին սենյակներ մաքուր և կեղտոտ սպիտակեղենի համար.

զ) լվացքատուն.

է) սենյակ՝ բժշկի համար (վերջինս պարտավոր է ապրել մսուրի շենքում կամ մոտակա վայրում).

ը) հանրակացարան անձնակազմի համար.

թ) արտաքնոցներ՝ բակում:

8. Թույլ է տրվում յերեխաներին տանել այնպիսի վայրեր, վորտեղ կարելի յե կարգավորել կաթի տեղական մատակարարումը կոլտնտեսություններից ու խորհտնտեսություններից:

9. Ամառանոցի շենքը մտնելը (բնակվելու համար) պետք է թույլատրվի շրջանային սանհսկողության մարմինների կողմից։

Յերեխաների ամառանոց տանելու պայմանները

1. Ամառանոց ուղարկվում են մեկից մինչև 4 տարեկան յերեխաները։

2. Տարվում են առողջ և վոչ շատ թուլացածները։ Չափազանց թույլ յերեխաները պետք է սանատորիա ուղարկվեն։

3. Յերեխաներին ամառանոց ուղարկելուց 1—2 օր առաջ պատրոնաժ է կիրառվում տանը, նպատակ ունենալով յերևան բերել վերջին յերեք շաբաթվա ընթացքում նրա բնակարանում յեղած ինֆեկցիան։ Հետազոտությունը կատարվում է բացիլակրությունը պարզելու համար։

4. Ամառանոց ուղարկելիս բոլոր յերեխաներին պետք է ծաղկի պատվաստումներ կատարել, ինչպես և ակտիվ իմունիզացիա՝ դիֆտերիայի դեմ։ Դիֆտերիայի դեմ արվող ակտիվ իմունիզացիան մինչև ամառանոց մեկնելը վերջացնելու հնարավորություն չլինելու դեպքում թույլ է տրվում վերջացնել այն՝ ամառանոցում։

5. Այն յերեխաները, վորոնք ամառանոցում հիվանդանում են ինֆեկցիոն հիվանդություններով՝ քութեշով, դիֆտերիայով և կարմրուկով, առաջին անգամ տեղավորվում են մոտակա շրջանային հիվանդանոցում, վորի հետ նախապես պետք է պայմանավորված լինել։

6. Կարմրուկի, ինչպես և ջրծաղկի և կարմրատապի կրկնվող դեպքերը պետք է առանձնացնել և այդպիսի հիվանդներին կարելի յե պահել մեկուսարանում։

7. Պայքարն ինֆեկցիոն հիվանդությունների դեմ կազմակերպվում է ընդհանուր կանոններով։ Անհրաժեշտ է ամառանոց մեկնող յերեխաներին ապահովել հակակարմրուկային շիճուկի ֆոնդով։

8. Կարմրուկով, քութեշով և դիֆտերիայով հիվանդ յերեխաների տեղափոխությունը յերկաթգծով կարող է թույլատրվել հատուկ վագոնում կամ տրանսպորտի մի այլ ձևով։

9. Ծանր հիվանդ յերեխաներին ցանկալի յե ամառանոցից քաղաք ուղարկել։

Ծնողների այցելության կանոնները

1. Ծնողների տեսակցությունը թույլ է տրվում ամիսը մեկ անգամ, յուրաքանչյուր խմբի համար սահմանված օրերին։

2. Ծնողներին չի թույլատրվում իրենց հետ յերեխաներ բերել։

3. Թույլ է տրվում նվերներ հանձնել կազմակերպված ձևով՝ անձնակազմի միջոցով և բժշկի թույլտվությամբ։

4. Ծնողներին չի թույլատրվում յերեխաներին դուրս տանել ամառանոցի հողամասից։

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ԱՄԱՌԱՆՈՑՈՒՄ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքից դուրս ամառային կյանքի սպեցիֆիկ պայմաններն առաջադրում են հետևյալ հիմնական դաստիարակչական խնդիրները.

1. կազդուրել մանկական օրգանիզմը.

2. մշակել նորմալ կյանքի տոնուս.

3. արագացնել մանկական մոտորիկան.

4. ընդլայնել յերեխայի մտահորիզոնը և դրանով իսկ ինտենսիվորեն զարգացնել նրա մտածողությունը և խոսելու կարողությունը։

Առաջադրված խնդիրների լուծումը հնարավոր է միայն յերեխաներին ամառանոց տանելու հետ կապված բոլոր աշխատանքները կանոնավոր կերպով կազմակերպելու և ամառանոցային կյանքի շրջապատող պայմանները նպատակահարմար կերպով օգտագործելու դեպքում։ Յերեխաների ամառանոցային

ամբողջ կյանքի կազմակերպումը բաղկացած է հետևյալ մոմենտներից.

1. շենքի նախապատրաստում և հարմարեցում.

2. հողամասի նախապատրաստում.

3. ամառանոց գնալը.

4. օրվա ռեժիմի հարմարեցումն ամառանոցային կյանքի պայմաններին.

5. ամառանոցում առաջին օրերն անցկացնելու առանձնահատկությունները.

6. ամառանոցում հիգիենիկ պրոցեսներն անցկացնելու առանձնահատկությունները յերևան բերելը.

7. բանվորական ուժերի բաշխումն ամառանոցում.

8. յերեխայի ազատ ժամանակը կազմակերպելու աշխատանքի առանձնահատկությունները.

9. ծնողների այցելությունների կազմակերպումը.

10. յերեխաների նկատմամբ կատարվող աշխատանքների պլանավորումը և հաշվառումը։

1. Շենքի նախապատրաստումը յեվ հարմարեցումը

1. Մինչև յերեխաների տեղ հասնելը, շենքը պետք է լվացված լինի և կահավորված՝ անհրաժեշտ փափուկ ու կոշտ ինվենտարով։

2. Յեթե յերեխաների սենյակները գտնվում են յերկրորդ հարկում, անհրաժեշտ է մինչև յերեխաների գալը հարմարեցնել սանդուղքները.

ա) տախտակներով փակել ճեղքերի արանքները.

բ) բռնակներ շինել յերեխաների համար՝ ըստ նրանց հասակի.

գ) սանդուղքի վերևում շինել փականավոր դռնակ։

3. Յեթե յերկրորդ հարկում լուսամուտներ կան, անհրաժեշտ է դնել ուղղաձիգ ցանցեր։

4. Յեթե էլեկտրական լույս չկա, լամպերը պետք է կախել առաստաղից կամ պատերից (ցանկալի չէ լամպերը փոխարինել լապտերներով)։

5. Լուսամուտները ճանճերից պետք է պաշտպանված լինեն ցանցերով։

6. Ցանկալի յե լուսամուտների համար ունենալ մուգ վարագույրներ։

7. Շենքում վորոշ տեղ պետք է հատկացված լինի՝ պլպուլքներ պահելու համար։

8. Ավելի թույլ և ներվային յերեխաների համար շենք հատկացվում է ավելի խաղաղ շրջապատ ունեցող տեղում։

9. Փոքրերի համար սենյակ պատրաստվում է ներքևի հարկում։

10. Մեծերին հատկացվում է այն շենքը, վորը գտնվում է նրանց համար ավելի հետաքրքրական վայրերի մոտ, ինչպես, որինակ՝ նրանց համար վոչ վտանգավոր գետի, անտառի և և այլնի մոտ։

11. Յեթե տերասն արևի տակ է, անհրաժեշտ է հովացնել այն, կախելով թաց սավաններ և այլն։

12. Յեթե տերասը մեկն է, ապա պետք է հատկացնել փոքրերին և յեթե կան չքայլող յերեխաներ, այնտեղ պետք է շինել բռնակներ կամ բարյերներ՝ վոտքի կանգնելու և քայլելու համար։

2. Հողամասի նախապատրաստումը

1. Հողամասը պետք է նախորոք հատակագծել ըստ տեղական պայմանների և մշակել համաձայն հատակագծի։

2. Յուրաքանչյուր խումբ պետք է ունենա իր վորոշակի հողակտորը։

3. Փոքրերի խումբը պետք է ստանա լավագույն և տանը մոտիկ գտնվող հողակտորը։

4. Հողամասն անպայման պետք ստանա իր ցանկապատը։ Շատ ցանկալի յե, վոր խմբերը ցանկապատով բաժանվեն իրարից։

5. Հողամասի հատակագծում ցանկալի յե յուրաքանչյուր խմբի համար մտցնել հետևյալ մասերը.

ա) ստվերոտ տեղ և հրապարակ արևի տակ.

բ) խոտով ծածկված և խոտից մաքրված տեղ.

գ) կերակրելու տեղ (ստվերում).

դ) քնելու տեղ (ծառերի ստվերում).

ե) դուշ ընդունելու և լվացվելու տեղ.

զ) տեղ՝ արևի և ոդի վաննաների համար.

է) սեղանների շուրջը հանգիստ պարապելու տեղ.

ը) ավազի հետ խաղալու տեղ։

Բացի դրանից, բոլոր խմբերի համար հատկացվում ե ընդհանուր ֆիզկուլտ-հրապարակ։

6. Բանջարանոցի, ինչպես և ծաղկաթմբի տեղը պետք ե հեռու լինի խաղերի համար նշանակված տեղից։

7. Փոքրերին հատկացված հրապարակում ծաղկաթմբերը պետք ե մոտ լինեն տերասին։

8. Ծաղկաթմբերն այն ձևի պետք ե լինեն, վոր յերեխաները հնարավորություն ունենան հեշտությամբ ջրել։

9. Մինչև յերեխաների գալը հրապարակը պետք ե ամբողջովին պատրաստված լինի ըստ հատակագծի և մաքրված լինի։

10. Հրապարակը պետք ե ունենա հետևյալ կահույքը. սեղաններ, աթոռներ, յերեխաների հասակին համապատասխան նստարաններ՝ գետնին ամրացրած կամ շարժական։ Ցանկալի յե, վոր նստարանների մի մասը թիկնակ ունենա, թեկուզ և պրիմիտիվ։

11. Հրապարակում չպետք ե լինեն վտանգավոր տեղեր (ջրհոր, խոր փոսեր և այլն)։

12. Հրապարակը պետք ե ունենա հետևյալ սարքավորումը. տախտակներ, գերաններ, կոճղեր, վեցանիստներ և ութանիստներ. ցանցաճոճեր (գամակ), ցանցեր՝ գնդակների համար, ավազի արկղներ կամ փորվածքներ գետնում՝ ավազի համար, ցածր նստարաններ, արկղներ։

3. Ամառանոց գնալը

1. Շենքը և հողամասը նախորոք պետք ե պատրաստված լինեն։

2. Ամբողջ գույքը նախորոք պետք ե բերված լինի։

3. Նախորոք մեկնում ե անձնակազմի մի մասը, վորը և տեղում դիմավորում ե յերեխաներին։

4. Պետք ե ապահովված լինի յեկող յերեխաների ճաշը և ցերեկվա քունը։

5. Տեղափոխելու համար պետք ե մոբիլիզացիայի յենթարկել հիմնարկի բոլոր ուժերը և ոգտագործել մայրերի ակտիվ ոգնությունը։

6. Տեղափոխությունը պետք ե կազմակերպել առավոտյան ժամերին։

7. Յերեխաները տեղափոխվում են խմբերով, աստիճանաբար, ըստ նախապես կազմված չվացուցակի։

8. Յեթե ամառանոցը գտնվում ե մի քանի տներում, ապա յերեխաների տեղավորումը կատարվում ե աստիճանաբար, այսինքն՝ նախ բնակեցվում ե մեկ տունը, հետո մյուսը, սակայն պահպանելով յերեխաներին տեղավորելու վերաբերյալ վերը հիշված կանոնները։

4. Որվա ռեժիմի հարմարեցումը ամառանոցային կյանքի պայմաններին

1. Ռեժիմ սահմանելիս անհրաժեշտ ե հաշվի առնել յերեխաների խիստ հոգնածությունը, ինչպես նաև առավոտյան վաղ արթնանալը։ Այդ նկատառումով հարկավոր ե ավելի թույլ յերեխաների համար սահմանել ցերեկվա յերկու քուն, կամ մեկ յերկարատև քուն։

2. Անհրաժեշտ ե բժշկի հետ ճշտորեն համաձայնեցնել արևի և ոդի վաննաներ և ջրցան ընդունելու ճիշտ ժամանակը։

3. Հեռավոր զբոսանքներ կարելի յե կատարել նախաճաշից հետո, կամ յերեկոյան կեսորյակից հետո։

4. Քանի վոր յերեխաներն իրենց ազատ ժամանակն անց են կացնում բաց ոդում, ոգտակար ե շոգ որերին մի քանի կազմակերպված պարապմունքներ անցկացնել սենյակներում, վորպեսզի յերեխաներին այդպիսով հնարավորություն տրվի հանգստանալ լույսից և տաքացած տպավորություններից։ Այդ պետք ե անել որը մի անգամ, այն ե՝ նախաճաշի և ճաշի միջև ընկած ժամանակամիջոցում։

5. Շատ ոգտակար ե հեռավոր զբոսանքից հետո յերեխաներին ճաշից առաջ սենյակ տանել։

6. Կազմակերպված ընդհանուր պարապմունքներ պետք ե

անցկացնել օրական 2—3 անգամ, իսկ մնացած ժամանակը պետք է տրամադրվի յերեխաներին՝ նրանց ինքնուրույն գործունեության համար։

7. Քնելուց առաջ պետք է ժամանակ հատկացվի վոտքերը լվանալու համար, յեթե մսուրում ցուղ չկա։

5. Առաջին օրերն ամառանոցում

1. Առաջին օրերին, քանի դեռ յերեխաները չեն ընտելացել, դաստիարակչուհու մերձավոր շփումը յերեխաների հետ առանձնապես կարեվոր է. ուստի և առաջին օրերին պետք է ընտրել այնպիսի պարապմունքներ, վորոնք ավելի մեծ չափով են ապահովում այդ կոնտակտը։

2. Յերեխաների ինքնուրույն պարապմունքներից սկզբում առաջին տեղը պետք է գրավեն ջրի և ավազի հետ կատարվող պարապմունքները։

3. Առաջին օրերին հարկավոր չէ հեռավոր զբոսանքներ կատարել։ Յերեխաներն ամենից առաջ ծանոթանում են իրենց հողամասին։

4. Հատուկ նշանակություն ունի յերեխաների շփումը կենդանիների հետ։

6. Բանվորական ուժի բաշխումը

1. Բանվորական ուժն այնպես պետք է բաշխվի, վոր հնարավոր լինի կատարել պլանով նախատեսված ամբողջ աշխատանքը։

2. Հրահանգիչը չպետք է կատարի տնտեսուհի վարիչի և քույր տնտեսուհու պարտականությունները, այն է՝

ա) մթերքներ մատակարարել.

բ) մթերքներ բաժանել.

գ) սպիտակեղեն բաց թողնել և այլն։

Նա պետք է հետևի պլանով նախատեսված ամբողջ աշխատանքի կատարմանը, աշխատանքի հաշվառք կատարի և աշխատանք տանի դաստիարակչուհիների հետ։

3. Դաստիարակչուհին չպետք է կատարի դայակի պարտականություններ, այն է՝

ա) ճաշամանները բերել և անկողին պատրաստել.

բ) կահույք բերել.

գ) ամեն ինչ պատրաստել զուգի համար.

դ) ջրհորից ջուր բերել և այլն։

Դաստիարակչուհին պետք է պլանով նախատեսված աշխատանքներ կատարի յերեխաների հետ և այդ աշխատանքի հաշվառք կատարի։

Դայակը չպետք է կատարի լվացարարուհու պարտականություններ. նա պետք է դաստիարակչուհուն օգնականը հանդիսանա հարկավոր մոմենտին, այսինքն ամենինչ նախապատրաստի՝ պրոցեսները և առողջապահական միջոցառումները կիրառելու համար։ Նա պետք է մասնակցի յերեխաների բոլոր հեռավոր զբոսանքներին և եքսկուրսիաներին։

Հրահանգիչը պետք է անպայման ապրի ամառանոցի շենքում։ Ցանկալի յե, վոր այնտեղ բնակվի նաև դաստիարակչուհին։

7. ՌԵԺԻՄԻ ԱՌԱՆՁԻՆ ՄՈՄԵՆՏՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Կերակրելը

Կերակրելու պրոցեսը պետք է սարքավորված լինի կահույքով և ամանեղենով և կատարվի սովորական ժամանակ։ Վոչ մի դեպքում չպետք է թույլ տալ, վոր կահույքի քանակը սահմանափակվի և կարեվորություն չտրվի կահույքը յերեխաների հասակին հարմարեցնելուն։ Յեթե աթոռները փոխարինվում են նստարաններով, ապա այս դեպքում էլ առաջադրվում են նույն պահանջները, այն է՝ յերեխաների համար հարմար կերպով նստելու հարմարություն ստեղծելու պահանջը։

2. Կերակրում են բացօթյա, սակայն անպայման ստվերում. յեթե չի կարելի այնպիսի տեղ ընտրել, վորը կարողանա ստվեր ապահովել բոլոր 4 կերակրումների համար, ապա պետք է օրեկ համեմատ փոխել կերակրելու տեղը, վորի համար պետք է տեղափոխվեն սեղաններն ու աթոռները։

3. Քանի վոր յերեխաները գյուղում ավելի լավ ախորժակ

են ունենում, քան քաղաքում, հարկավոր է հացի առաջին բաժինը կրկնակի ավելի տալ, քան քաղաքում է տրվել։

4. Ուտելուց առաջ երեխաները պետք է ամենաքիչը կես ժամ հանգստանան։

5. Դուրս գնալը՝ ա) ցերեկը պետքանոցները պետք է լինեն հրապարակում։

6. Քնացնելը՝ ա) անհրաժեշտ է մահճակալներն այնպես դասավորել, որ նրանք մոտ լինեն պետքանոցներին և լվացարաններին.

բ) եթե քնելու պայմանները սենյակում ավելի լավ են (ավելի հով է, ճանճեր չկան և այլն), պետք է այնտեղ էլ քնացնել.

գ) պայծառ օրերին երեխաների քնած ժամանակ հանձնարարվում է լուսամուտներից մուգ վարագույրներ կախել։

8. Երեխաների ազատ ժամերի կազմակերպման առանձնահատկությունները

1. Քանի որ երեխաները շատ են շարժվում, անհրաժեշտ է հետևել, որ որոշ պարապմունքների ոգնությամբ երեխաները հանգստանան նստած կամ փռվածքի վրա պառկած դիրքով։

2. Անհրաժեշտ է հետևել, որ երեխաներն արևի տակ և ստվերում մնան փոխեփոխ։

3. Անհրաժեշտ է հետևել, որ երեխաների գլուխն արևից պաշտպանված լինի պանամայով։

4. Երեխաների խաղերի և պարապմունքների մեջ առաջատար նշանակություն ունի բնական նյութը՝ ջուր, ավազ, քարեր, խոզակաղին, ծաղիկներ, ճյուղեր, խոտ և այլն։

Այդ նյութերն օգտագործելու համար պետք է ունենալ մի շարք գործիքներ ու հարմարանքներ՝ բահեր, գոգաթիակներ, պատգարակներ, զամբյուղներ, զանազան տեսակի ամաններ, ձեռնասայլակներ, արկղներ, ավտոմեքենաներ, թավալուկներ։

5. Բացի դրանից, մանկավարժը պետք է հնարավորություններ ստեղծի, որպեսզի խաղերի և պարապմունքների միջոցով ստացված նոր տպավորություններն ամրանան երեխայի մեջ։

Ուստի և խաղալիքների մեջ պետք է մտնեն այնպիսի առարկաներ, որոնք հարկավոր են խաղի մեջ շրջապատող կյանքն արտացոլելու համար։ Մինչև երեխաների գալը հրահանգիչը պետք է իրազեկ լինի շրջապատող միջավայրին և դրա համապատասխան էլ խաղալիքներ տա երեխաներին։ Օրինակ՝ եթե նա գիտե, որ երեխաները խոզեր ու կովեր կտեսնեն, պետք է ունենա այնպիսի խաղալիքներ և առարկաներ, որոնց օգնությամբ կարելի է պատկերացնել այդ կենդանիների կյանքն ու նրանց խնամքը։

6. Կազմակերպված պարապմունքների հիմնական բովանդակությունն է՝ օգնել երեխային տիրապետելու նրանց ստացած նոր տպավորությունների ամբողջությունը, ինչպես և ամրապնդել ստացած գիտելիքները, արտացոլելով այդպիսիք խաղի մեջ, շինվածքներում, նկարելու, ծեփելու մեջ և այլն։ Բացի դրանից, կազմակերպված խաղող պարապմունքների նպատակը պետք է լինի ամառանոցում երեխաներին շարժումներից հանգիստ տալը։

7. Անհրաժեշտ է, որ քաղաք վերադառնալիս երեխաները հետները վերցնեն բնական նյութեր՝ (խոզակաղին, ֆոտոնկարներ ամառային կյանքից և այլն)։

9. Ծնողների այցելությունների կազմակերպումը

1. Ծնողների այցելությունները կազմակերպում է մսուրի խորհուրդը։

2. Բոլոր ծնողները գալիս են մեկ գնացքով կամ այլ փոխադրական միջոցներով, և երեխաները նրանց հանդիպում են որոշված տեղում։

3. Այցելությունը տևում է մինչև ցերեկվա քունը և հենց որ երեխաները պառկում են քնելու, ծնողները հեռանում են։

4. Ծնողների բերած բոլոր ընծաները հանձնվում են տնտեսական մասի վարիչին, որը և ընծաները բաժանում է բոլոր երեխաների մեջ։

10. Աշխատանքների պլանավորումը յեվ հաշվառումը

1. Յերեխաներին ամառային բնությանը ծանոթացնելու պլանը կազմվում է համաձայն տեղական պայմանների։

2. Պլանը պետք է ունենա հետևյալ կետերը.

ա) Ի՞նչպիսի կենդանիների հետ պետք է ծանոթանան յերեխաները
բ) » թռչունների » » » »
գ) » միջատների » » » »
դ) » սողունների » » » »
ե) » ջրային կեն-
դանիների » » » »
զ) » բույսերի, բանջարեղենի, մրգերի, պտուղների, սունկերի.
է) » աշխատանքների (դաշտային, բանջարանոցային, կենդանիներին ու թռչուններին խնամելու և այլն).

ը) ի՞նչպիսի մթնոլորտային յերևույթների (անձրև, կարկուտ, փոթորիկ, քամի).

թ) ի՞նչպիսի պեյզաժների (լեռներ, անտառ, գետ և այլն).

ժ) ի՞նչպիսի աշխատանքի գործիքների և տեխնիկական հարմարանքների։

3. Պլանը պետք է բաժանված լինի ժամկետների (տասնօրյակների)։

4. Բացի դրանից, պետք է մշակվի և այն, թե ինչ ձևի աշխատանքի և գործիքների միջոցով պետք է յերեխաներն ամրապնդեն ստացած տպավորությունները։

5. Հաշվառքը պետք է տեղեկություններ տա, թե իսկապես ի՞նչ պարապմունքներ, եքսկուրսիաներ ու զբոսանքներ են անցկացված և քանի անգամ։

6. Այդ դյուղերի հաշվառումը պետք է կատարվի յերեխաների ազատ արտահայտությունների հիման վրա, ինչպես և պետք գիտել, թե հատկապես ինչ են պատկերավորում նրանք իրենց խաղերում և ստեղծագործության մեջ, այնուհետև՝ հարցերին պատասխանելու միջոցով, յեթե յերեխաները խոսում են։

7. Հաշվառման մեջ պետք է նշվի, թե ինչ նոր շարժումների յեն տիրապետել յերեխաները, ինչպես և այն, թե քանի յերեխայի նկատմամբ է հաջողվել նորմալ կյանքի հաստատուն տոնուս ստանալ։

Ս Խ Ե Մ Ա

Ամառանոցում կատարած մանկավարժական աշխատանքի եֆեկտավորության հաշվառման համար

Յերեխաները քաղաքում գիտեյին	Ի՞նչպես են գծավորում իրենց գիտելիքը խաղի մեջ, ազատ արտահայտություններում, հարցերում, պատասխաններում, նկարելու մեջ, ծեփելու մեջ, շարժ ու ձևի մեջ, կառուցումների մեջ և այլն։	Ի՞նչ գիտեն յերեխաները ամառանոցից վերադառնալուց հետո	Ի՞նչպես են գծավորում իրենց գիտելիքները
Ի՞նչ կենդանիներ են ճանաչում և ինչ գիտեն նրանց մասին։			
Ինչ թռչուններ, ինչ միջատներ, ինչ ջրային կենդանիներ, ինչ սողուններ, ինչպիսի սեզոնային աշխատանք, պրոցեսներ, ինչ բանջարեղեն, պտուղներ, մրգեր։			
Ինչ բույսեր, ինչպիսի մթնոլորտային յերևույթներ, ինչպիսի պեյզաժներ։			

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՍՈՒՐԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՄԱՐԶԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԲԱԶԱՅԻՆ ՄՍՈՒՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Բազային մսուրներն ամբողջ շրջանի համար մեթոդական կենտրոն են հանդիսանում՝ բժշկասանիտարական, մանկավարժական և կազմակերպչական հարցերը մսուրներում դնելու վերաբերմամբ։

2. Բազային մսուրները գործնական լուծում են տալիս նշված բոլոր հարցերին՝ մսուրների աշխատանքի վերաբերյալ հրահանգների հիման վրա։

3. Մսուրների մեթոդական ղեկավարությունն իրականացնելու համար բազային մսուրներն օգտագործում են իրենց ուժերը կամ մանկության պահպանության մյուս հիմնարկների առանձին աշխատակիցներին։

Ղեկավարությունն իրականացվում է՝

ա) տեղական մսուրների աշխատանքի դրվածքի հետ ծանոթանալու նպատակով տեղերը մեկնելու միջոցով.

բ) ծայրամասերի մսուրների աշխատակիցներին բազային մսուրները ներգրավելով, նրանց՝ աշխատանքի դրվածքի հետ ծանոթացնելու համար.

գ) բժշկա-սանիտարական և մանկավարժական հարցերի վերաբերյալ շրջանային կոնֆերանսներ կազմակերպելու և անցկացնելու աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցույց տալու միջոցով։

4. Բազային մսուրները հանդիսանում են շրջանային մեթոդական կենտրոն՝ անձնակազմի որակավորումը բարձրացնելու, միջին անձնակազմի նոր կադրեր պատրաստելու համար (կարճատև դասընթացների կազմակերպում, ծայրամասերի մսուրների անձնակազմի մի մասին բազային մսուրներին կցելը)։

5. Բազային մսուրները՝ մայրության և մանկության պահպանության շրջանային վարչության հետ միասին ակտիվ մասնակցություն են ունենում ամառվա մսուրային կամպանիայի մեթոդական ղեկավարման մեջ, մասնակցում են պլանի մշակմանը, մսուրային փնջերի կազմակերպմանը և հենակետային մսուրներ կազմակերպելու աշխատանքներին։

Բազային մսուրներն ակտիվ կերպով մասնակցում են ամառային մսուրների աշխատանքների վերաբերյալ հրավիրվող կոնֆերանսներին, և զեկուցումներ են տրվում մեթոդական հարցերի շուրջը՝ ռեժիմ, պայքար վարակի դեմ, սնունդ, բժշկական սպասարկում և այլն։

6. Բազային մսուրներն իրենց աշխատանքները կատարվում են վաղ հասակի մանկության առողջացման մարզային գիտահետազոտական ինստիտուտի ընդհանուր մեթոդական ղեկավարությամբ։

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱԶԱՅԻՆ ՄՍՈՒՐՆԵՐԻՆ ԿԻՑ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Մեթոդական բյուրոն հանդիսանում է շրջանի մեթոդական կենտրոն վաղ մանկության բոլոր հիմնարկների համար։

Մեթոդական բյուրոյի նպատակն ու խնդիրներն են՝ բարձրացնել բժշկա-սանիտարական և մանկավարժական աշխատանքների որակը շրջանային կենտրոնի և շրջանի մսուրներում, կոնսուլտացիաներում և մանկիկի տներում։

2. Որպես կանոն, մեթոդական բյուրոն կազմակերպվում է բազային մսուրներին կից։

3. Մեթոդական բյուրոն մշակում է բժշկա-սանիտարական

և մանկավարժական բնույթի հարցերը, ղեկավարում է հիմնարկների մեթոդական աշխատանքները վերոհիշյալ հարցերի բնագավառում, կազմակերպում է մի շարք սեմինարներ միջին անձնակազմի որակը բարձրացնելու համար (գլխավորապես բժշկա-սանիտարական սպասարկման և մանկավարժական աշխատանքի վերաբերմամբ), փորձի փոխանակում է կազմակերպում հիմնարկների միջև։ Միջին բժշկական անձնակազմի որակը բարձրացնելու համար խմբակների և սեմինարների կազմակերպման աշխատանքների ընթացքում առաջին հերթին մշակվում են այն հարցերը, վորոնք մի շարք հիմնարկներում թույլ են դրված։

4. Մեթոդական բյուրոն մշակում է հրահանգներ և կանոնադրություններ, վորոնք Մոսկվայի մարզի առբաժնի մայրության և մանկության պահպանության վարչության և վաղ մանկության առողջացման Մոսկվայի մարզային գիտահետազոտական ինստիտուտի կողմից ուղարկված են մարզը, ինչպես և լսում է մեթոդական բյուրոյի հատուկ առաջադրանքներով տրվող տեղական առանձին աշխատակիցների զեկուցումները։

5. Մեթոդական բյուրոն մշակում է յեռամսյակային և տարեկան պլաններ հետևյալ բաժիններով՝ բժշկա-սանիտարական և մանկավարժական աշխատանք։

6. Մեթոդական բյուրոն պետք է լսի հիմնարկների հաշվետվությունն իրենց կատարած աշխատանքների մասին։ Մեթոդական բյուրոն տարեկան 2-3 անգամ ընդլայնած շրջանային կոնֆերանսներ է գումարում, վորոնց մասնակից են դարձվում նաև մոտակա շրջանները։

7. Մեթոդական բյուրոն մշակում է գյուղական ցանցի սպասարկման հարցեր՝

ա) սեզոնային ցանցի ընդարձակում.

բ) կադրերի պատրաստում գյուղական ցանցի համար.

գ) սեզոնային մսուրների բժշկական սպասարկում.

դ) մսուրների սեզոնային ցանցը հակակարմրուկային շիճուկով ապահովելը, ինչպես և այլ հարցեր։

8. Մեթոդական բյուրոն կազմում է իր աշխատանքների պլանը, նախորոք նշելով զեկուցողներ հիմնարկների կողմից։

Մեթոդական բյուրոյի կողմից այս կամ այն հարցը մշակելուց հետո հիմնարկությունը տվյալ հարցի մշակման հիման վրա տեղում կազմակերպում է իր աշխատանքը վորոշ պլանով։

9. Մեթոդական բյուրոն ադմինիստրատիվ որգան չի հանդիսանում։

10. Մանկավարժական և բժշկա-սանիտարական աշխատանքի կազմակերպման բոլոր հարցերը պետք է համաձայնեցվեն մայրության և մանկության պահպանության տեսչի հետ։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԿԱԶՄԸ

Մեթոդական բյուրոն կազմված է տվյալ շրջանի մայրության և մանկության պահպանության ամեն մի հիմնարկի (մսուր, կոնսուլտացիա, մանկիկի տուն, ծննդաբերական տների յերեխաների սենյակներ) ներկայացուցիչներից, շրջանի բժիշկների ներկայացուցչից, վորոնք կցված են ամառային մսուրներին, մայրության և մանկության պահպանության տեսչից, շրջանի սանիտարական բժշկից և սննդի գծով աշխատող բժշկից։ Վաղ մանկության հիմնարկի ներկայացուցիչ պետք է լինի բժիշկը, քույր-հրահանգչուհին, քույր-մանկավարժը։

Քույր-հրահանգչուհի և մանկավարժ չլինելու դեպքում մեթոդբյուրոն վորպես ներկայացուցիչ կարող է ուղարկվել բարձր խմբի քույր-դաստիարակչուհուն և վորակյալ բժշկական քույրերից մեկին։

Մեթոդական բյուրոյի կողմից ընտրվում է նախագահ (բազային մսուրի կամ խոշոր կոնսուլտացիայի բժիշկը) և քարտուղար (յեթե նախագահը մսուրի բժիշկն է, ապա ցանկալի յե, վոր քարտուղար լինի կոնսուլտացիայի բժիշկը և ընդհակառակը)։ Մեթոդական բյուրոյի կազմից առանձնացվում է բանվորական խումբ հետևյալ կազմով—նախագահ, քարտուղար, շրջանի բժշկական հրահանգիչ (այդպիսին չլինելու դեպքում՝ մսուրի կամ կոնսուլտացիայի ակտիվ բժիշկներից մեկը)։ Բանվորական խմբի խնդիրներն են՝ մեթոդական բյուրոյի նիստերի համար հարցեր նախապատրաստելը, որացուցային պլանների կազմումը, առաջադրանքների կատարման ստուգումը և այլն։

Մեթոդական բյուրոն իր նիստերը գումարում է վոչ պակաս քան յերկու անգամ ամսվա ընթացքում։

Այդ նիստերից մեկը հատկացվում է մանկավարժական, իսկ մյուսը՝ բժշկա-սանիտարական հարցերին։

Մեթոդական բյուրոյի ամբողջ կազմը թե՛ մանկավարժական և թե՛ բժշկա-սանիտարական հարցեր քննելիս պետք է ներկա լինի նիստերին։

Մեթոդական բյուրոյի աշխատանքների պլանը կազմելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել վարակի պրոֆիլակտիկայի հարցերի, հիվանդ յերեխային ոգնություն ցույց տալու, մեկուսարան-սատացիոնարներ կազմակերպելու, ամառային լուծի պրոֆիլակտիկայի հարցերի և առողջացման միջոցառումներ կիրառելու վրա։

Բացի մեթոդական հարցերից, մեթոդական բյուրոն լսում է գիտահետազոտական բնույթի զեկուցումներ մեթոդական բյուրոյի առաջարկած թեմաների շուրջը կամ կազմակերպված առանձին աշխատակիցների նախաձեռնությամբ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Մեծ քանակությամբ հիմնարկներ ունեցող խոշոր շրջաններում մեթոդական բյուրոն կազմակերպվում է ընտրովի հիմնարկների ներկայացուցիչների մասնակցությամբ և հրավիրում է մեթոդական խորհրդակցություններ, վորտեղ պարտավոր են ներկա լինել մայրության և մանկության պահպանության բոլոր հիմնարկների ներկայացուցիչները։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ

1. Մայրության և մանկության պահպանության հիմնարկներում պայքարի կազմակերպում վարակիչ հիվանդությունների դեմ։
2. Պայքար ամառային լուծի դեմ մայրության և մանկության պահպանության հիմնարկներում։
3. Առողջապահական և աշխատանքային ռեժիմի ճիշտ կազմակերպում։
4. Առողջապահական միջոցառումներ։
5. Ոգնություն հիվանդ յերեխային։
6. Սննդի հարցը։
7. Կոնսուլտացիայի աշխատանքի կազմակերպման հարցեր (յերեխաների հաշվառում, ոգնություն տանը, պատրոնաժ ընդունելություններ մասնագետների կողմից)։

8. Շրջիկ կոնսուլտացիաների աշխատանքի ձևերը։
9. Մանկավարժական աշխատանքի հարցեր։
10. Սան-կուլտ աշխատանքի կազմակերպումը մայրության և մանկության պահպանության հիմնարկներում։

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԳԻՇԵՐ-ՑԵՐԵԿ ՍՊԱՍԱՐԿՈՂ ՄՍՈՒՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Մսուրներում յերեխաների շուրջօրյա սպասարկումը կազմակերպելիս գլխավորապես ուշադրության է առնվում յերկհերթ և յեռահերթ արտադրության մեջ աշխատող մայրերի թիվը։

2. Մսուրներում շուրջօրյա սպասարկում կազմակերպվում է՝

ա) գիշերային հերթին աշխատող բանվորուհիների յերեխաների համար.

բ) յերեկոյան և առավոտյան հերթին աշխատող բանվորուհիների համար այն դեպքերում, յերբ մոտիկները և հարազատները հնարավորություն չունեն սահմանված ժամերին յերեխաներին տանել մսուր և բերել այնտեղից, կամ յերբ բանվորուհին ապրում է մսուրից հեռու (2—5 կիլոմետր).

գ) վատ բնակարանային պայմաններում ապրող բանվորուհիների յերեխաների համար։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—«Ա», «Բ», «Գ» կետերում հիշված բանվորուհիների յերեխաները շուրջօրյա սպասարկման են ընդունվում այն դեպքում, յերբ մանրազնին հետազոտությամբ հաստատվում է յերեխայի գիշեր-ցերեկ մսուրում մնալու անհրաժեշտությունը։

3. Շուրջօրյա սպասարկում կազմակերպվում է 9 ամսականից մեծ յերեխաների համար։

4. Շուրջօրյա սպասարկման ընդունված յերեխաները մնում են մսուրում ամբողջ հնգօրյակը մինչև հանգստյան որը։

5. Յերեխաների շուրջօրյա սպասարկում կարելի յե կազմակերպել միայն այն մսուրներում, վորոնց շենքերը համապատասխանում են սահմանված սանիտարական նորմաներին։

6. Յերեխաների շուրջօրյա սպասարկում չի կարելի կազ-

մակերպել այն մսուրներում, վորտեղ չկա մեկուսարան, պատըշգամբ, լվացարան, պետքանոթարան:

7. Շուրջօրյա սպասարկումից օգտվող մեծ յերեխաների հետ ծնողներին չի թույլատրվում տեսակցություն ունենալ, իսկ սողացող յերեխաների հետ տեսակցության գալ ծնողներին թույլատրվում է հնգօրյակում յերկու անգամ:

8. Մսուրներում շուրջօրյա սպասարկումից օգտվող յերեխաները պետք է գտնվեն իրենց հասակի խմբերում:

9. Մեկուսացված, տարբեր խմբերում գտնվող և շուրջօրյա սպասարկումից օգտվող յերեխաները գիշերելու համար վոչ մի դեպքում չպետք է միացվեն, այլ պետք է մնան իրենց խմբերում:

10. Շուրջօրյա սպասարկումից օգտվող յերեխաների սպասարկման համար սպասարկող անձնակազմից գիշերները պետք է մնան վոչ պակաս քան յերկու հոգի:

11. Գիշերային հերթապահություն կատարելու համար նշանակվում է բացառապես վորակյալ բժշկական անձնակազմ:

12. Շուրջօրյա սպասարկումից օգտվող յերեխաների մսուրներում կանոնավոր կերպով պետք է կիրառվեն բժշկի գիշերային շրջումներ վոչ սակավ քան հնգօրյակում մեկ անգամ: Ամսվա ընթացքում մեկ անգամ կատարվում է մսուրի աշխատանքի վերստուգում գիշերը: Յեթե բժշկի բնակավայրը հեռու յե, մսուրը շտապ բժշկական օգնություն ստանալու համար պետք է կցվի մոտակա բուժհիմնարկին:

13. Շուրջօրյա սպասարկումից օգտվող յերեխաներն առավելագույն չափով պետք է օգտվեն մաքուր օդից: Ննջարանները պետք է խնամքով օդափոխվեն, մանավանդ գիշերվա քնից առաջ:

Գարնանը և ամառը յերեխաների գիշերային քունն անց է կացվում պատշգամբում:

14. Շուրջօրյա սպասարկում կիրառող մսուրները պետք է ապահովված լինեն լրացուցիչ սպիտակեղենով՝ մսուրների համար սահմանված սպիտակեղենի նորմայի $30^{0}/_{0}$-ի չափով:

15. Ռեժիմային բոլոր մոմենտները կիրառվում են սահմանված ռեժիմի համաձայն:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ՄՈՍԿՎԱՅԻ ՄԱՐԶԻ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ՊԱՏՐՈՆԱՏ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Մինչև յերեք տարեկան հասակի յերեխաներին խնամակալության հանձնելու աշխատանքի կազմակերպումը և այդ յերեխաներին հսկելու գործը գտնվում է մայրության և մանկության պահպանության վարչության իրավասության ներքո:

2. Ծնողներից զրկված յերեխաները տրվում են աշխատավորների այն ընտանիքներին, վորոնք կարող են դաստիարակել և նախապատրաստել նրանց հասարակականորեն օգտակար աշխատանքային գործունեության համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Յերեխաները դաստիարակության չեն կարող տրվել դատական կարգով ընտրական իրավունքից զրկվածներին, ինչպես և այլ հիմունքներով խնամակալ և հոգատար լինելու իրավունք չունեցող անձանց (Օրենսգրքի 77-րդ հոդվածն ամուսնության, ընտանիքի և խնամակալության մասին) կամ այն ընտանիքներին, վորտեղ կան դասակարգայնորեն խորթ տարրեր:

3. Խնամակալության (պատրոնատի) են տրվում այն յերեխաները, վորոնք զրկվել են ծնողներից, այն է՝ բոլորովին վորբ յերեխաները, ընկեցիկ յերեխաները և ծնողների կողմից առանց վորևէ հոգատարության թողնված յերեխաները: Վերջին յերկու կարգի յերեխաները դաստիարակության են հանձնվում սոցիալ-իրավական կաբինետի հետ համաձայնության գալու միջոցով, իսկ վորտեղ այդպիսին չկա, խնամակալության օրգանների հետ համաձայնության գալուց հետո:

4. Խնամակալության հանձնվում են արհեստական կերպով կերակրվող յերեխաները 6 ամսական հասակից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Յերեխաները կարող են հանձնվել նաև 8 ամսական հասակից, յեթե այն կինը, վորը ցանկանում է յերեխային դաստիարակության վերցնել, կերակրելու յե նրան կրծքով:

5. Խնամակալության տրվում են միայն առողջ, վոչ հիպոտրոֆիկ յերեխաները: Այն հիմնարկի բժիշկը, վորտեղից տրվում է յերեխան, պետք է տեղեկացություն տա յերեխայի առողջության մասին:

6. Այն ընտանիքը, ուր պատրոնատի յե հանձնվում յերե-

խան, պետք է հետազոտվի առողջության և սոցիալ-կենցաղային պայմանների վերաբերմամբ։

7. Ընտանիքը պետք է ազատ լինի սիֆիլիս, գոնորեա և տուբերկուլյոզ հիվանդություններից։ Ընտանիքում չպետք է լինեն ալկոհոլիկներ, նարկոմաններ։ Ընտանիքը պետք է լինի փոքրաթիվ, պետք է ունենա բավարար բնակարանային պայմաններ։

8. Յերեխաները դաստիարակության են տրվում գլխավորապես յերեխա չունեցող և փոքրաթիվ ընտանիքներին։

9. Յերեխաները չեն տրվում այն ընտանիքներին, վորտեղ կան մեկից ավելի նախադպրոցական հասակի յերեխաներ։

10. 50 տարեկանից բարձր անձերին յերեխաներ չեն տըրվում։ Դաստիարակության համար մի ընտանիքին խնամակալություն տրվում է միայն մի յերեխա և միայն վորպես բացառություն տրվում է ծծկեր հասակից բարձր յերկու յերեխա։

11. Յերեխաների պատրոնատը, վորպես կանոն, իրագործվում է կոնսուլտացիաների միջոցով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Խնամակալության կազմակերպումը կարելի յե հանձնարարել մանկիկի տանը կամ մսուրին, վորն այդպիսի դեպքերում հսկողություն է ունենում խնամակալության հանձնված յերեխաների վերաբերմամբ։

12. Յերեխային պատրոնատի հանձնել կարելի յե միայն այն դեպքում, յեթե դաստիարակչուհու բնակության շրջանում կա կոնսուլտացիա, մսուր կամ բուժհիմնարկ բժշկի առկայությամբ։

13. Յերեխային խնամակալության տալով, մսուրը, կոնսուլտացիան կամ մանկիկի տունը պարտավոր են գրավոր հայտնել այդ մասին շրջանային կամ գյուղական կոնսուլտացիային, իսկ այնտեղ, վորտեղ այդպիսիք չկան, պետք է հայտնեն մսուրին կամ բուժհիմնարկին, նշելով ազգանունը, անունը, հայրանունը և դաստիարակչուհու հասցեն։

Ծանուցագրի հետ միասին ուղարկվում է քաղվածք յերեխայի զարգացման պատմությունից։

14. Ծանուցագրի ստացման մոմենտից հնգօրյա ժամկետում շրջանային կոնսուլտացիան, մսուրը կամ բուժհիմնարկը պարտավոր են քննել յերեխային և հետազոտել նրան տանը։

15. Հետագայում դաստիարակչուհին պարտավոր է յերեխային բերել կոնսուլտացիա. մինչև 6 ամսական հասակը՝ ամիսը յերկու անգամ և 6 ամսական հասակից հետո՝ ամիսը մեկ ան-

գամ (ամեն մի հաճախում բժիշկը գրանցում է յերեխայի զարգացման պատմության և հատուկ տետրի մեջ, վորը պահվում է դաստիարակչուհու մոտ)։

16. Այն ընտանիքին, վորին յերեխան խնամակալության է տրվում, վոչ սակավ քան ամիսը մեկ անգամ այցելում է է կոնսուլտացիայի կամ մսուրի խնամակալ քույրը կամ հատուկ պատրոնաժ քույր։

17. Կոնսուլտացիայում պատրոնաժի վերցրած յերեխաներին հսկում է հատուկ բժիշկ։

18. Մինչև վոր կոնսուլտացիայի, մսուրի կամ բուժհիմնարկի բժիշկը յերեխային չքննի և հատուկ տետրում առողջության դրության մասին նշում չանի, դաստիարակչուհին չի կարող նպաստ ստանալ։

19. Յերեխային պատրոնատի յեն հանձնում հետևյալ պայմաններով.

ա) յերեխայի պահպանելու համար խնամակալ մայրն ստանում է վարձ՝ սահմանված յուրաքանչյուր ամսվա համար.

բ) յերեխային խնամակալության հանձնելիս՝ դաստիարակչուհուն յերեխայի համար օժիտ է տրվում, և նա սիստեմատիկ կերպով յերեխայի համար սպիտակեղեն, վոտնաման և վերնազգեստ է ստանում.

գ) դաստիարակչուհին յերեխայի համար մինչև նրա մեկ տարեկան հասակը կաթնախոհանոցից ձրի սնունդ է ստանում։ Մեկ տարեկանից բարձր յերեխաների համար մայրերը մանկիկի տնից ստանում են յերեխաների ամենամսյա սննդերիվ նորմա չոր մթերքներով։

Այնտեղ, ուր չկա կաթնախոհանոց, մինչև մեկ տարեկան յերեխաների համար սնունդը տրվում է մանկիկի տնից չոր մթերքներով, այդ հասակի յերեխաների համար սահմանված նորմայով.

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Բոլոր չոր մթերքները բաց են թողնվում ինքնարժեքով։

Յեթե յերեխան մտնում է մսուր, նա ստանում է կես սննդաբաժին։

20. Կոնսուլտացիայի բժիշկը (մսուրի կամ բուժհիմնարկի)

պատասխանատու չէ այդտեղ կցված պատրոնատ յերեխաների առողջության և դաստիարակչության համար։

Անկանոն խնամք նկատվելու դեպքում բժիշկն անմիջապես պետք է միջոցներ ձեռք առնի յերեխային տվյալ ընտանիքից հեռացնելու և հանձնելու նրան ուրիշ ընտանիքի կամ մայրության և մանկության պահպանության համապատասխան հիմնարկին, այդ մասին տեղեկացնելով մայրության և մանկության պահպանության տեսչին։

21. Այն դեպքերում, յերբ կոնսուլտացիան շրջան է մեկնում, սահմանված օրերին և ժամերին պատրոնաժի հանձնված յերեխաները պետք է առաջին հերթին քննվեն բժշկի կողմից։

22. Յերեխաները չորս տարեկան հասակից հանձնվում են լուսբաժնի հիմնարկներին։ Պատրոնատի վերցված յերեխաներին հսկող հիմնարկը պարտավոր է ժամանակին հայտնել լուսբաժնին իրեն հանձնվող յերեխաների մասին։

23. Յերեխային խնամակալության վերցնող անձի հետ պետք է կնքվի պայմանագիր, վորի մեջ պետք է նշվեն թե յերեխային դաստիարակության վերցնող անձի պարտականությունները և թե յերեխային հանձնող հիմնարկի պարտականությունները։

Պայմանագրով յերեխային խնամակալության վերցնող աշխատավորներին տրվում են հետևյալ արտոնությունները.

ա) հիմնարկություններում կամ արտադրության մեջ աշխատող մայրերին խնամակալության հանձնված յերեխաները մսուր են ընդունվում բանվորների յերեխաների հետ հավասար հիմունքներով.

բ) քաղաքներում և բանվորական ավաններում ապրողները, վորոնք դաստիարակվողի համար չունեն բավարար տարածությամբ և սանիտարական տեսակետից հարմար բնակարան, բնակարանային վարչությունն առաջին հնարավորության դեպքում սահմանված նորմաներով համապատասխան բնակարան է հատկացնում։

Նույնը վերաբերում է և բնակարանային բաժինների տրամադրության տակ անցնող բնակարաններին, յեթե այն բնակարանում, վորտեղ ապրում է դաստիարակչուհին, ազատվում է այդպիսի բնակելի տարածություն։

(ՌՍՖՍՀ Ժողկոմխորհի և Կենտգործկոմի 1928 թ. մայիսի

28-ի վորոշումը և Լուսժողկոմատի, Ներքգործժողկոմատի, Աշխժողկոմատի, Ֆինժողկոմատի, ԱԺԿ-ի 1936 թ. հունվարի 5-ի № 67 հրահանգը)։

24. Խնամակալություն սահմանելու նպատակով կոնսուլտացիան և մսուրը պետք է՝

ա) սերտ կապ հաստատեն մոտակա մանկիկի տան, իրենց կցված ֆաբրիկաների և գործարանների սոցիալ-կենցաղային սեկտորների և խորհտնտեսությունների բանվորական կոմիտեների հետ.

բ) այն վայրերում, վորտեղ հնարավոր է խնամակալությունը լայն կերպով ծավալել, մանկիկի տունը կամ կոնսուլտացիան հրավիրում են հատուկ քույր (պատրոնատի), վորը հավաքագրում է մայրեր՝ յերեխաներին խնամակալության հանձնելու համար և սիստեմատիկ կերպով հսկում է խնամակալության հանձնված յերեխաներին։

25. Կոնսուլտացիան, մանկիկի տունը կամ մսուրը պետք է ձգտեն խնամակալական աշխատանքի մեջ մտցնել սոցմրցման մեթոդներ, պարգևատրելով լավագույն դաստիարակչուհիներին յերեխայի լավ վիճակի համար։

26. Վարակիչ կամ վորևէ այլ հիվանդություն առաջանալու դեպքում, յերբ հիվանդանոցային բուժման կարիք է լինում, խնամակալության հանձնված յերեխան պետք է հիվանդանոց ընդունվի առաջին հերթին։

27. Յերեխայի մահվան դեպքում մայրության և մանկության պահպանության գումարներից դաստիարակչուհուն մահացած յերեխայի թաղման համար նպաստ է տրվում սոցապի նպաստի չափով։

ՏԻՊԱՅԻՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈԼՏՆՏՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Շրջան . . . . պայմանագիրը կնքելու վայրը . . . . ամսաթիվը . . . . . .
կոլտնտեսային արտադրության մեջ կանանց բանվորական ուժը մաքսիմալ չափով ընդգրկելու, կոլտնտեսությունների կուլտ-կենցաղային սպասարկումը բարելավելու և կոմունիստական

առողջ սնունդ պատրաստելու նպատակով . . . . շրջանբաժինը հանձինս . . . . մի կողմից . . . . կոլտնտեսության վարչությունը . . . . հանձինս . . . . մյուս կողմից կնքեցին այս պայմանագիրը . . . . մսուր կազմակերպելու . . . . յերեխաների համար 193 թ. գարնանացանի կամպանիայի ընթացքում և . . . . մսուր . . . . յերեխաների համար 1936 թ. բերքահավաքի ընթացքում։ Կոլտնտեսության վարչությունը պարտավորվում է մսուրի պահանջների համեմատ առանձնացնել դրամական ֆոնդ մսուրի կահավորման ու պահպանման համար և մթերքներ (շաքար, յուղ, կրուպա և այլն) յերեխաների սննդի համար։

1. Կոլտնտեսությունը պետք է մատակարարի հետևյալ մթերքները որվա նորմաներով՝

1. Միս 40 գր
2. Շաքար 40 »
3. Կրուպա
4. Բրինձ 30 »
5. Կարտոֆիլի ալյուր 10 գ
6. Թեյ 2 գրամ
7. Յուղ 26 »
8. Կաթ 200 »
9. Մակարոն 10 գրամ
10. Հաց 200 »
11. Կարտոֆիլ 100 »
12. Ձու սաս հատ (մեկ յերրորդական)
13. Բանջարեղեն 150 գրամ
14. Պանիր 15 »
15. Միրգ 150 »

Մսուրը կաթով ապահովելու նպատակով յուրաքանչյուր 20—25 յերեխայի համար առանձնացնել մեկ առողջ կով, իսկ լրացուցիչ սնունդ յերեխաների համար տրամադրել խոզ, հավ և այլ տեսակի թռչուն, համաձայն ցուցակի։

Բացի այդ, կոլտնտեսությունը պարտավորվում է ապահովել մսուրը թարմ բանջարեղենով, ցանելով նրա համար անհրաժեշտ բանջարանոցային կուլտուրաներ . . . . . . տարածությամբ։

2. Ապահովել մանկամսուրը պահանջվելիք փափուկ և կոշտ կահավորությամբ այն հաշվով, վոր ամեն մի յերեխա ունենա առանձին մահճակալ, յերկուական զույգ սպիտակեղեն, համաձայն կցված ցուցակի։ Մսուրը փակելու դեպքում վողջ կահավորու-

թյան հաշվառում կատարել, պակասորդի վերաբերյալ կազմել առանձին ցուցակ, առանձնացնելով համապատասխան գումարներ՝ պակաս ինվենտարը ձեռք բերելու աշխատանքից կանխիկ վճարով։

Այն դեպքում, յեթե կոլտնտեսությունն արհեստանոց ունի, ամբողջ կոշտ ինվենտարը պատրաստել այդ արհեստանոցում առաջին պահանջած ձևով։

Վողջ փափուկ և կոշտ ինվենտարը ստորագրությամբ հանձնել մսուրի վարիչին։

3. Մսուրի աշխատանքները ղեկավարելու համար նշանակել համապատասխան անձնավորություն, համաձայնեցնելով առաջին հետ։ Նմանապես հրավիրել այլ անհրաժեշտ աշխատակիցներ՝ մայրապետներ . . . . դաստիարակչուհիներ . . . . . . կազմակերպել ջրի և փայտի մատակարարումը և սննդի պատրաստումը համաձայն ՀԽՍՀ-ի Առժողկոմատի և Հողժողկոմատի 1935 թ. մայիսի 31-ի հրահանգի։

4. Առանձնացնել և նորոգել մսուրի համար հատկացված շենքերը։ Դաշտային շարժական մսուրների համար բրիգադների աշխատանքի վայրում վրաններ խփել, կամ գյուղից կամ աղյուսից շենքեր շինել։

5. Այն կոլտնտեսությունները, վորոնք ծծկեր յերեխաներ ունեն, առանձնացնել և կազմել առանձին բրիգադներ։

6. Բոլոր նախապատրաստական միջոցառումները, ինչպես նորոգում, մթերքի նախապատրաստում և այլն ավարտել այնպես, վոր մսուրները կարողանան սկսել աշխատանքը . . . . . . -ից։

7. Մսուրի ղեկավար նշանակված ընկեր . . . . վոչ ուշ . . . . ս. թ. գործուղել մսուրային աշխատողների դասընթացները, ապահովելով նրան սննդով ուսման ընթացքում և գնալու ու գալու ճանապարհածախսով։

Դասընթացներն ավարտելուց հետո ընկ . . . . օգտագործել միայն մսուրային աշխատանքների ասպարեզում և աշխատավարձը տալ աշխօրերի հաշվով համաձայն ԽՍՀՄ Հողաշխատավարձը տալ աշխօրերի հաշվով համաձայն ԽՍՀՄ Հողժողկոմատի 1934 թ. մայիսի 14-ի և ՀԽՍՀ Առժողկոմատի և Հողժողկոմատի 1935 թ. մայիսի 31-ի հրահանգի։

8. Մսուրներն ընդունել 2 ամսականից մինչև 4 տարեկան

հասակ ունեցող յերեխաներին, վոչ մի դեպքում չմիացնելով նըրանց մանկհրապարակին։

Ծծկեր յերեխաների համար կազմակերպել առանձին դաշտային մսուրներ։

9. Մսուրը պետք է գոյություն ունենա . . . .
ամսից . . . . մինչև . . . . ամիսը։

10. Կոլտնտեսության վարչությունը պարտավորվում է մըսուրի ամբողջ կահույքը պահպանել և կամպանիայի վերջանալուց հետո գրանցել կոլտնտեսության կահավորության հաշվում մատյանում։

ՇՐՋԱՌԲԱԺԻՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է՝

1. Մսուրի վարիչին ուղարկել յերկամսյա դասընթացներ՝ համապատասխան պատրաստականություն տալու համար։

2. Մսուրների դասընթացներն ապահովել անհրաժեշտ գրքենական պիտույքներով և դասախոսներով ի հաշիվ առողջապահության օրգանների։

3. Մսուրային աշխատանքների նախորյակին անպայման ստուգել մսուրի սանիտարական վիճակը և բժշկական քննության յենթարկել յերեխաներին և աշխատակիցներին։ Հետագայում վոչ ուշ քան ամսորյակը մեկ անգամ կրկին քննել յերեխաներին և մսուրի սանիտարական վիճակը։

4. Կոլտնտեսության հաշվին մսուրն ապահովել դեղարկղիկով։

5. Յուրաքանչյուր 15—20 սեզոնային մսուրներին կցել ֆընջային հրահանգիչ՝ մսուրներում սիստեմատիկ հրահանգչական և ստուգման աշխատանքներ տանելու և մեթոդական նյութերով ապահովելու համար։

Կոլտնտեսության նախագահ՝
Շրջառբաժվար՝

ԱՌԲԱԺԻՆՆԵՐԻՆ, ՀՈՂԲԱԺԻՆՆԵՐԻՆ, ԼՈՒՍԲԱԺԻՆՆԵՐԻՆ

ԽՍՀՄ Ժողկոմխորհի և Համկոմկուսի Կենտկոմի 1935 թ. փետրվարի 7-ին հաստատված գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրությունը բոլորովին նոր ձևով է դնում կոլտնտեսային մսուրների, մանկապարտեզների և մանկհրապարակների կազմակերպման խնդիրը։

Կանոնադրության 6-րդ կետը պարզորոշ կերպով սահմանագծում է կոլտնտեսային մսուրների, մանկ-հրապարակների և մանկապարտեզների արտադրական դերը։ Ցելնելով այդ դրությունից, ձեզ անհրաժեշտ է անպայման մտցնել արտադրական պլանի մեջ մսուրներ, մանկհրապարակներ, մանկապարտեզներ այն կոլտնտեսություններում, ուր աշխատող կոլտնտեսուհիներն ունեն 15-ից վոչ պակաս 4 տարեկան և 25-ից վոչ պակաս 5—8 տարեկան յերեխա։

Պարզված են նույնպես կոլտնտեսային մսուրների, մանկապարտեզների, մանկհրապարակների կազմակերպման և պահպանման անհրաժեշտ միջոցներ ապահովելու խնդիրները։ Անհրաժեշտ է կոլտնտեսային նախահաշիվները հաստատելիս այդ նախահաշիվների մեջ մտցնել գումարներ, վորոնք կապահովեն մսուրների, մանկհրապարակների և մանկապարտեզների կազմակերպման այն նորմատիվները, վորոնք զետեղված են առժողկոմատի ՄՄՊ-ի վարչության օրինակելի պայմանագրի մեջ։

Կանոնադրության 12-րդ կետը վերջնականապես լուծում է կոլտնտեսություններից մսուրների, մանկհրապարակների և մանկապարտեզների համար ձեռք բերվելիք անհրաժեշտ մանուֆակտուրայի և սննդամթերքի (շաքար, կրուպա և այլն) խնդիրը։ Ուստի և անհրաժեշտ է հնարավորության սահմաններում ապահովել կոլտնտեսություններից կազմակերպված ձևով բրինձ, շաքար, խաղալիքներ, մանուֆակտուրա և այլն ստանալը շրջանային առևտրական օրգանների միջոցով, ստանալով այդ իրերը և մթերքները մսուրների, մանկհրապարակների և մանկապարտեզների համար, իսկ առանձին դեպքերում, մանավանդ դեֆիցիտային մթերքները՝ մատակարարման օրգանների միջոցով։ Միջոցներ ձեռք առնել ապահովելու կոլտնտեսային մանկհրա-

պարակները կահավորման անհրաժեշտ առարկաներով և սննդամթերքներով ի հաշիվ կոլտնտեսությունների։

Ձեզ անհրաժեշտ է այժմյանից հաշվառման ենթարկել մանկահրապարակների ունեցած գույքը, պարզել, թե ինչ գույքի կարիք ունեն և այդ բոլորը մտցնել կոլտնտեսությունների հետ կնքվելիք պայմանագրերի մեջ։

Կանոնադրության 6-րդ և 14-րդ կետերը պարզում են կոլտնտեսային կադրերի պատրաստման և ամրացման խնդիրները։ Դուք պետք է հետևվեք, որ կանոնադրության այդ կետերը կիրառվեն մսուրների, մանկահրապարակների, մանկապարտեզների կադրերի նկատմամբ, կոլտնտեսությունները միջոցներ հատկացնեն նրանց պատրաստելու համար և յերկու տարուց վոչ պակաս ժամանակով նրանց կցեն մսուրներին, մանկահրապարակներին և մանկապարտեզներին։

Նպատակ ունենալով խրախուսելու այն լավագույն հարվածայիններին, վորոնք աչքի յեն ընկել իրենց մսուրային, մանկահրապարակային և մանկապարտեզային աշխատանքի ընթացքում, տվել են մսուրային և մանկապարտեզային աշխատանքի լավագույն ցուցանիշներ, ձեզ անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել տարածելու կանոնադրության 15-րդ կետը նաև մսուրային և մանկապարտեզային աշխատանքի վրա։

Նկատի ունենալով այն հանգամանքը, վոր կոլտնտեսության բոլոր ծախսերի և յեկամուտների համար կազմվում է տարեկան նախահաշիվ և միջոցների ծախսումը կատարվում է նախահաշվի հոդվածներով, ձեզ անհրաժեշտ է ամենաակտիվ կերպով մասնակցել կոլտնտեսային արտադրական պլանները և նախահաշիվները կազմելու կամպանիային, մտցնելով արտադրական պլանների մեջ այն բոլոր կետերը, վորոնք կապված են կոլտնտեսային մսուրների, մանկահրապարակների և մանկապարտեզների աշխատանքների բարելավման հետ։

Ուստի ձեզ անհրաժեշտ է մինչև դեկտեմբերի 15-ը պայմանագրեր կնքել կոլտնտեսությունների հետ, ցույց տալով պայմանագրերում մանկհիմնարկների բոլոր ծախսերը, վորպեսզի նրանք այդպիսին մտցնեն արտադրական պլանների մեջ։

Այդ կապակցությամբ մանրամասն հրահանգ տալ տեղական մարմիններին վերոհիշյալ խնդիրների մասին։

Ձեր կողմից ձեռք առնված միջոցների մասին հայտնել Առժողկոմատի ՄՄՊ-ի վարչությանը։

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

1936 թ. գարնանացանի ընթացքում մանկամսուրների աշխատանքի վորակը բարձրացնելու, յերեխաների խնամքը և դաստիարակչական գործը բարձր աստիճանի վրա հասցնելու նպատակով առաջարկվում է՝

1. հողբաժիններին, առբաժիններին և կոլտնտեսություններին միջոցներ ձեռք առնել ներգրավելու մսուրային աշխատողների դասընթացներում ակտիվ յերիտասարդ կոլտնտեսուհիներին, թոշակ սահմանելով ուսուցման ընթացքում կոլտնտեսությունների հաշվին.

2. արագացնել գյուղական և դաշտային մսուրների շենքերի նորոգումը և շրջապատի կանաչապարդումը մինչև 1936 թ. ապրիլի 1-ը.

3. մսուրների նոր շենքերի կառուցում չի թույլատրվում առանց տեխնիկական նախագծի, ուստի և հարկավոր է տեղում առբաժնից պահանջել առժողկոմատի տիպային տեխ. նախագիծը.

4. առանց մսուրների համար հատկացված շենքերը սպիտակացնելու թույլ չտալ, վոր մսուրը տեղավորվեն այնտեղ.

5. մսուրում յերեխաների խնամքը և դաստիարակչական աշխատանքների դրվածքը բարելավելու աշխատանքների մեջ յեղած դիմազրկությունը վերացնելու նպատակով անհրաժեշտ է՝

ա) յերեխաներին ըստ հասակի բաժանել խմբերի, յուրաքանչյուրում 12—15 յերեխա։

բ) I խումբ. յերկու ամսականից մինչև մեկ և կես տարեկան յերեխաներին ընդգրկել դաշտային մսուրում.

II խումբ. մեկ և կես տարեկանից մինչև յերկու և կես տարեկաններին ընդգրկել գյուղական մսուրներում։

III խումբ. յերկու և կես տարեկանից մինչև չորս տարեկաններին՝ գյուղական մսուրներում։

Դաստիարակչուհիներին անհատաբեն կցել խմբերին և նրանց պատասխանատու դարձնել տվյալ խմբի յերեխաների խնամքի և դաստիարակչական վողջ աշխատանքի համար.

գ) սահմանել մսուրների համար հետևյալ որինակելի հաստիքները, յելնելով մսուրների մահճակալների ու խմբերի թվից.

1. պահանջվում է 15 մահճակալ ունեցող մսուրում ունենալ յերկու աշխատակից (մեկ վարիչ-դաստիարակչուհի և մեկ տեխնիկական աշխատող).

2. 30 մահճակալ ունեցող մսուրում՝ չորս աշխատակից.
   1. մեկ վարիչ-դաստիարակչուհի
   2. մեկ քույր »
   3. մեկ խոհարար
   4. մեկ տեխնիկական աշխատակից.

3. 45 մահճակալ ունեցող մսուրում՝ 5 աշխատակից.
   1. մեկ վարիչ-դաստիարակչուհի
   2. յերկու քույր դաստիարակչուհի
   3. մեկ խոհարար
   4. մեկ տեխնիկ. աշխատակից.

4. 60 մահճակալ ունեցող մսուրում՝ 6 աշխատակից.
   1. մեկ վարիչ-դաստիարակչուհի
   2. յերկու քույր-դաստիարակչուհի
   3. մեկ խոհարար
   4. մեկ տեխնիկական աշխատակից.

5. 75 մահճակալ ունեցող մսուրում՝ 9 աշխատակից.
   1. մեկ վարիչ
   2. հինգ քույր-դաստիարակչուհի
   3. մեկ խոհարար
   4. յերկու տեխնիկական աշխատակից։

6. Մսուրների աշխատակիցների աշխատանքի գնահատում կատարել ըստ նրանց վորակի, աշխատանքի ստաժի և յերեխաների թվի, յելնելով հետևյալ նորմաներից։

ա) մսուրի վարիչին 15 – 30 յերեխա ունեցող մսուրում 0,75 աշխոր
բ) » » 30 – 50 » » » 1,0 »
գ) » » 50-ից ավելի » » 1,25 »

2. Մսուրի քույր-դաստիարակչուհիների համար աշխոր սահմանել ըստ աշխատանքի վորակի և կրթության մակարդակի.

ա) մինչև հնգամյա կրթություն ունեցողներին և մսուրային դասընթացներ ավարտածներին, ինչպես և մեկ տարի մսուրային աշխատանքի ստաժ ունեցողներին տալ 0,75 աշխոր որական.

բ) մինչև 7-ամյա կրթություն ունեցող և մսուրային դասընթացներ ավարտածներին 1—2 տարի ստաժով՝ 1 աշխոր որական։

3. Տեխնիկական աշխատակիցներին՝
ա) մսուրային տեխմինիմում անցածներին՝ 0,75 աշխոր որական
բ) » » չանցածներին 0,50 » »

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ,—«ա» և «բ» կետերում հիշված պայմանները չբավարարելու դեպքում քույր դաստիարակչուհուն, յեթե նա ունի 5 տարվա և ավելի յերկարատեվ ստաժ (մսուրային աշխատանքի), տալ մեկ աշխոր որական։

Յելնելով վերոհիշյալ նորմաներից, յուրաքանչյուր կոլտնտեսություն պետք է աշխատանքի գնահատման չափ սահմանի յուրաքանչյուր աշխատանքի համար։

ՍԱՆՄԻՆԻՄՈՒՄ ՄՍՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Դաշտային մսուրներ

1. Վրանի փեշերը պետք է բարձրացրած լինեն, վորպեսզի ներսում տոթ չլինի։ Ցուրտ որերին, քամու կամ անձրևի ժամանակ և գիշերը ամրացնել գետնին։

2. Յուրաքանչյուր յերեխա պետք է ունենա առանձին անկողին և անհատական սրբիչ։

3. Ընդունելության ժամանակ յերեխաները լվացվում են և տնային հագուստը փոխում։

4. Յուրաքանչյուր յերեխայի տնային հագուստը պահվում է առանձին տոպրակում։

5. Շոգ որերին յերեխաներին ամեն որ լողացնել գոլ ջրով։

6. Յերեխաներին կերակրել կրծքով, բոլորին միաժամանակ, յերեք ժամը մեկ անգամ և այդ նպատակի համար դաշտից կանչել մայրերին։

7. Մայրերը մինչև յերեխաներին կերակրելն ամեն անգամ ձեռքերը և կուրծքը (պտուկները) պետք է լվանան։ Այդ նպատակի համար մսուրի աշխատակիցները մինչև մայրերի գալը յեռացրած ջուր են պատրաստում (պտուկների համար)։

8. Վորևե մեկ յերեխայի համար գործածված սպիտակեղենը և սրբիչը մյուսի համար չեն գործածում։

9. Սպիտակեղենը լվացվում է կեղտոտելուց հետո նույն օրը։

10. Մանուկների անկողինները պետք է ամեն օր հողմահարվեն։

ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄՍՈՒՐԻ ՀԱՄԱՐ ԴԱՇՏԱՅԻՆ ՍԱՆՄԻՆԻՄՈՒՄԻՆ ԱՎԵԼԱՑՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԵՏԵՐԸ

1. Ճանճերից և մոծակներից պաշտպանվելու համար պատուհանների վրա ունենալ ցանց կամ մարլա։

2. Պատուհանները բաց անել օրը մի քանի անգամ 15—20 րոպե յուրաքանչյուր անգամ, իսկ շոգ՝ օրերին ամբողջ օրը հետեվել, վոր մսուրում տոթ չլինի։

3. Յերեխաների ձեռքերն ամեն անգամ մինչև կերակրելը և պետքանոթ նստեցնելուց հետո ջրով լվանալ։

4. Յերեխաներին կերակրել չորս ժամը մեկ անգամ։

5. Յերեխաների կերակուրը պատրաստել թարմ մթերքներից։

6. Ամեն օր յերեխաներին տալ թարմ մթերքներ։

7. Կաթը տալ միայն յեռացրած կամ պաստերիզացիայի յենթարկված դրությամբ։ Կաթը պահել սառը տեղում (այնպես, ինչպես շուտ փչացող մթերքները)։

8. Բանջարեղենը և պտուղները լվանալ յեռացրած ջրով։ Մթերքներ պահելու տեղը (պահեստ, նկուղ և այլն) մաքուր պահել։

9. Կերակրի պատրաստումը և կերակրատեսակները համաձայնեցնել մսուրին ամրացրած բուժաշխատողի հետ։

10. Ամանեղենը և մաքուր սպիտակեղենը ծածկած դրությամբ պահել։

11. Հատակը մաքրել օրը յերեք անգամ թաց շորով է, բացի այդ, ամեն օր աշխատանքից հետո հատակը մաքուր ջրով լվանալ։

12. Պատուհանները և դռները լվանալ առնվազն 10 օրը մեկ անգամ։

13. Առաստաղը մաքրել յերեխաների բացակայության ժամանակ առնվազն 5 օրը մեկ անգամ։

14. Ամանեղենը և կաթի շշերը բանեցնելուց հետո անմիջապես 2 անգամ լվանալ յեփած ջրով։

15. Յուրաքանչյուր յերեխայի համար ունենալ առանձին աման, բաժակ և գդալ։

16. Կովի կաթով սնվող (կրծքի հասակի) յուրաքանչյուր յերեխայի համար ունենալ առանձին ծծակ։

17. Ամառը մեծահասակ յերեխաների համար ամեն օր դուշ կազմակերպել. այդպիսին չլինելու դեպքում դույլի կամ վորևե այլ ամանի վրա ցնցուղ հարմարեցնել։

18. Քնելուց առաջ լվանալ վոտքերը։

19. Յերեխաների անկողինները թափ տալ, իսկ 5 օրը մեկ անգամ դուրս հանել և արևի տալ։

20. Մալարիայով վարակված շրջաններում պարտադիր կերպով մահճակալների վրա մառլայե ծածկոց հագցնել։

21. Պետքանոթներն օգտագործելուց հետո պետք է լավ լվանալ։

22. Մսուրի համար արտաքնոց ունենալ և ամեն օր քլորակրով դեզինֆեկցիայի յենթարկել այն։

23. Ամիսը մեկ անգամ շենքը մաքրել։

ՍՆՆԴԱՄԹԵՐՔՆԵՐԻ ՈՐԱԿԱՆ ՆՈՐՄԱՆ ՄՍՈՒՐՆԵՐՈՒՄ

1. Միս	40,0	6. Յուղ	16,0
2. Շաքար	40,0	7. Կաթ	400,0
3. Կրուպա և բրինձ	30,0	8. Մակարոն	10,0
4. Կարտոֆիլի ալյուր	10,0	9. Հաց	150,0
5. Թեյ	2,0	10. Կարտոֆիլ	100,0

11. Ձու	10 հատ	14. Միրգ	150,0
12. Բանջարեղեն	150,0	15. Չոր միրգ	20,0
13. Պանիր	15,0		

Առաջարկվում է ղեկավարվել վերոհիշյալ մինիմումով և նորմաներով։

ՄՍՈՒՐՆԵՐՈՒՄ ՊԱՅՔԱՐ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

1. Յերեխաներին պարտադիր կերպով բժշկական քննության յենթարկել նախքան մսուր ընդունվելը և ապահովել հետագա կանոնավոր բժշկական հսկողություն վոչ սակավ, քան տասնօրյակում մեկ անգամ։

2. Յուրաքանչյուր օր յերեխաների ընդունելության ժամանակ զննել յերեխայի մաշկը, կոկորդը և հարցնել յերեխային բերողին յերեխայի առողջության մասին։

3. Բոլոր այն յերեխաներին, վորոնց ծաղկի պատվաստում չի արված, պարտադիր կերպով անել այդպիսին։ Ծաղկի պատվաստումը նմանապես պարտադիր է մսուրի աշխատակիցների վերաբերմամբ։

4. Մսուրում հիվանդացած յերեխային մինչև ծնողներին հանձնելը պետք է տեղավորել հիվանդանոցում կամ առանձին սենյակում։

5. Յերեխաներին տալ յեռացրած ջուր, վորը պետք է պահվի մաքուր և փակ ամաններում։

6. Ծնողների նկատմամբ սանլուսավորական աշխատանք տանել։

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Որվա բոլոր պրոցեսների (քուն, զբոսանք, խաղեր) և սննդի համար սահմանել պարտադիր ներքին կարգապահություն։

2. Յերեխաներին բաժանել առնվազն յերկու խմբի. 2 ամսականից մինչև մեկ և կես տարեկաններ (վորոնց պետք է քնացնել որը 2 անգամ) ու մեկ և կեսից մինչև 4 տարեկաններ (վորոնց պետք է քնացնել մեկ անգամ)։

3. Մսուրի համար սահմանել որվա ռեժիմ ըստ ժամերի։

4. Մսուրի յերեխաների մեջ սանհիգիենիկ սովորություններ զարգացնել.

ա) ուտելուց առաջ լվանալ ձեռքերը.

բ) ուտել միայն իր ամանից.

գ) ուտել միայն սեղանի շուրջը.

դ) իրենց բնական կարիքը չբավարարել հրապարակի և մսուրի շուրջը և օգտագործել պետքարան կամ արտաքնոց.

ե) յերեխաներին մաքրություն և կարգապահություն սովորեցնել։

5. Յերեխաների մեջ նախաձեռնություն զարգացնել։

6. Ճաշարանում յերեխաների հերթապահություն սահմանել։

7. Բարձր հասակի յերեխաների ինքնասպասարկում կիրառել.—հավաքել անկողինը, հագնվել, լվացվել և այլն (դաստիարակչուհու օգնությամբ)։

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՄՍՈՒՐՆԵՐՈՒՄ

ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ (ԿՈՄՊԼԵԿՏԱՎՈՐՈՒՄԸ) ՄՍՈՒՐՆԵՐՈՒՄ

Երեխաներին խմբերի բաժանելիս պետք է նկատի առնել հետևյալ ժամենտները.

1) Երեխաների տարիքը, 2) նրանց շարժական ունակությունները, 3) երեխայի ֆիզիկական վիճակը, 4) երեխաների փոխհարաբերությունը։

Առաջին խմբի մեջ պետք է տեղավորել այն երեխաներին, վորոնք դեռ չեն կարողանում ինքնուրույնաբար նստել, 2-րդ խմբի մեջ՝ սողացող երեխաներին և այն երեխաներին, վորոնք սկսում են քայլել, 3-րդ խմբի մեջ՝ այն երեխաներին, վորոնք կարողանում են լավ քայլել և 4-րդ խմբի մեջ՝ այն երեխաներին, վորոնք կարողանում են լավ վազել։

Երեխաներին խմբերի բաժանելիս՝ թույլ, հիվանդոտ երեխաները մնում են իրենց տարիքային խմբի համեմատությամբ ավելի փոքր խմբում։ Ավելի փոքր խմբերում վորոշ ժամանակով տեղավորում են նաև անհամարձակ երեխաներին, վորոնք չեն կարողանում պաշտպանել իրենց։ Ընդհակառակը, կուվարար երեխաներին պետք է փոխադրել բարձր տարիքի խմբերը։

Այսպիսով հիշյալ դրույթներն ի նկատի առնելիս ճիշտ պետք է համարել հետևյալ համալրումը.

Առաջին խումբ՝ 2—7 ամսական երեխաները.

2-րդ խումբ—7 ամսականից մինչև մեկ տարի 3 ամսական երեխաները.

3-րդ խումբ—մեկ տարի երեք ամսականից մինչև երկու տարեկանները.

4-րդ խումբ—2-ից մինչև 3 տարեկանները։

Յուրաքանչյուր խմբում միջին թվով 18 երեխայից ավելի չպետք է լինի։

45—50 երեխա սպասարկող մսուրում պետք է լինի երեք տարիքային խումբ. 1-ին խումբ՝ 2-ից մինչև 10—11 ամսական երեխաները, 2-րդ խումբ՝ 11 ամսականից մինչև մեկ տարի 7 ամսականները, 3-րդ խումբ՝ 1 տարի 7 ամսականից մինչև 3 տարեկանները։

Այն մսուրներում, վորոնք սպասարկում են 80-ից ավելի երեխա, պետք է ստեղծվեն գերակշռող տարիքի զուգընթաց խմբեր կամ ենթախմբեր։ Մեկ ենթախմբում պետք է լինեն տվյալ տարիքային խմբի համեմատությամբ ավելի փոքր երեխաները, 2-րդ ենթախմբում—ավելի մեծերը։ Այդ ենթախմբերն ունենում են երկու տարբեր ռեժիմ։ Շենքի մի մասը կարող է լինել ընդհանուր, օրինակ՝ տուալետի սենյակը, խաղարանը։ Ռեժիմի վորոշ մոմենտներին այդ ենթախմբերը կարելի է միացնել (օրինակ՝ երեխաներին ընդունելիս և հանձնելիս)։

ՀՐԱՀԱՆԳ
ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երեխաների կերակրումը կազմակերպելիս մենք պետք է մեր առաջ դնենք հետևյալ խնդիրները.

1. Երեխաների մեջ պատվաստել կուլտուր-հիգիենիկ ունակություններ, ինչպես նաև ինքնասպասարկման սովորություններ.

2. Երեխաներին հաղորդել վորոշ գիտելիքներ, վորոնք կապված են կերակրատեսակների անվան և բաղադրության հետ։ Դրա համար պահանջվում է՝

1. կանոնավոր կերպով կազմակերպել այն ժամանակը, վորը նախորդում է կերակրմանը.
2. համապատասխան կահավորություն.
3. կանոնավոր մանկավարժական աշխատանք կերակրելու ժամանակ։

ԿԵՐԱԿՐՄԱՆ ՆԱԽՈՐԴՈՂ ԺԱՄԱՆԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Կերակրելուց առաջ անհրաժեշտ է յերեխաներին տանել կազմակերպված վոչ-հոգնեցուցիչ զբոսանքի։ Յերեխաներին պետք է հանգիստ զբաղմունք տալ։ Չպետք է յերեխաների կյանքի մեջ վոչ մի այնպիսի նոր բան մտցնել, վոր կարող է նրանց գրգռել (նոր խաղալիքներ, պատվաստումներ և այլն)։

Ճաշարանի կահավորումը

Կահ-կարասին պետք է համապատասխանի յերեխաների հասակին։

Սողացողների խմբի համար, վորոնք չեն կարողանում ինքնուրույնաբար ուտել, հարկավոր են յերկարավուն սեղաններ (4 յերեխայի համար) կամ սեղաններ, վորոնք կորուճներ ունեն (3 յերեխայի համար)։

Նույն այդ խմբում պետք է լինի նաև քառակուսի չորստեղանի սեղան այն յերեխաների համար, վորոնք սովորել են ինքնուրույնաբար ուտել։

Մեծ խմբում հարկավոր են 4 կամ 6 տեղանի սեղաններ։

Աթոռները պետք է համապատասխանեն յերեխաների հասակին և սեղանների բարձրությանը։

Փոքր յերեխաների համար հարկավոր են արմնկակալներ (ПОДЛОКОТНИК) ունեցող աթոռակներ։

Կերակրի բաշխումը պետք է կատարել առանձին սեղանի շուրջը։

Փոքր յերեխաներին հագցնում են մոմլաթե կրծքակալներ, մեծերին՝ քաթանե անձեռոցներ։ Կրծքակալները պետք է պահել հատուկ պահարանում, վորը յուրաքանչյուր յերեխայի համար առանձին բաժանմունք է ունենում։

Յերեխաներին կերակրելու համար անհրաժեշտ է հետևյալ ամանեղենը. փոքր խմբում—վոչ խոր կամ փոքրիկ խոր ափսեներ. մեծ խմբում փոքր խոր ափսեներ. մեծերի համար պետք է գործածել դեսերտի գդալներ, փոքրերի համար՝ թեյի գդալներ. հացի համար՝ հյուսած պաքսիմատամաններ՝ յուրաքանչյուր սեղանի վրա։ Կերակրելու պահին պետք է պատրաստված լինեն փոքր մաքուր ձորձիկներ՝ ուտելու ժամանակ սեղանները սրբելու համար։

Մանկավարժական աշխատանք կերակրելու ժամանակ

Յերեխաների ձեռքերը պետք է լվանալ այն ժամանակ, յերբ ճաշը (նախաճաշը) պատրաստ է։

Յերեխաներին սեղանի շուրջը պետք է նստեցնել միայն այն ժամանակ, յերբ խմբի համար կերակուրը արդեն բերված է։

Ուտելը պետք է տևի միջին հաշվով 30 րոպե։ Չպետք է կերակուրը պատրաստել յերեխաների ներկայությամբ (հաց կտրել, ջուր քսել և այլն), վորովհետև այդ զգալապես յերկարացնում է կերակրման պրոցեսը։ Յերեխաներին սեղանի շուրջը նստեցնելու սկզբունքը տարբեր խմբերի համար տարբեր է։

Սողացող յերեխաների խմբում ցանկալի յե բոլոր յերեխաներին կերակրել միանգամից, բայց քանի վոր գործնականապես այդ դժվար է իրագործել, ապա և յերեխաներին կերակրում են փոքրիկ խմբերով, ըստ վորում յուրաքանչյուր չափահաս միաժամանակ կերակրում է 3—4 յերեխայի։

Միջին և մեծ խմբերում վատ ախորժակ ունեցող յերեխաներին պետք է նստեցնել լավ ուտող յերեխայի կողքին. Ջղային և դյուրագրգիռ յերեխաներին պետք է նստեցնել հանգիստ յերեխաների կողքին։

Մեծ խմբերում կերակուրը բաժանվում է մանկական սեղանների վրա. դրա համար այդտեղ պետք է տեղափոխել սուպամանը և ափսեները գդալներով՝ յերեխաների թվի համեմատ

Փոքր խմբերում կերակուրն ափսեների մեջ պետք է լցնել հատուկ սեղանի վրա։ Ընդսմին դաստիարակչուհին պետք է կանգնի կամ նստի յերեսն արած դեպի յերեխաները։ Յերեխաներին ափսեները տրվում են գդալի հետ միասին։ Չպետք է յերեխա-

ների առաջ դատարկ ափսե դնել կամ գդալներն առանձին բաժանել։ Մեծ և միջին խմբերում հացը պետք է պաքսիմատամանով դնել յուրաքանչյուր մանկական սեղանի վրա։

2-րդ կերակրատեսակը պետք է բաժանել, չսպասելով մինչև բոլոր երեխաները վերջացնեն առաջինը։ Երբ մի սեղանի շուրջը նստած երեխաներն առաջինը վերջացրել են, ապա պետք է նրանց անմիջապես տալ երկրորդ կերակրատեսակը։

Երեխաների համար ափսեների մեջ կերակուր լցնելիս անհրաժեշտ է նկատի առնել երեխայի ախորժակը։ Պետք է խուսափել երեխային մի քանի անգամ կերակուրն ավելացնելուց, քանի վոր այդ կարող է վորոշ երեխաների մեջ ուտելու ագահություն առաջացնել։

Երեխային տրվող կերակուրը պետք է լինի վոչ միայն լավ պատրաստված, այլև գրավիչ տեսք ունենա։ Կարելի յե երեխաներին տալ անհրաժեշտ, թեև նրանց կողմից չսիրված կերակուրներ, բայց փոխելով նրանց արտաքին տեսքը։

Չպետք է երեխային ուժով կերակրել. այն դեպքում, յեթե երեխան ուտելուց հրաժարվում է, պետք է վորպես որինակ ոգտագործել այն երեխային, վորը լավ ախորժակ ունի։ Երբեմն պետք է երեխային, նույնիսկ մեծերին, լրացուցիչ կերպով կերակրել և կուշտ ուտեցնել։

Սեղանի վրայի կեղտոտ տեղերը պետք է անմիջապես մաքրել և այս դեպքում երեխայի ուշադրությունը հրավիրել այդ բանի վրա, վոր այդպես ավելի մաքուր է։

11—12 ամսական երեխաներից սկսած պետք է սովորեցնել ինքնուրույնաբար ուտել։ Այդ արվում է այսպես. սկզբում երեխային կերակրում է քույրը և ափսեի մեջ քիչ կերակուր թողնելով, երեխային առաջարկում է, վոր ինքն ուտի։ Ինքնուրույնաբար ուտել սովորած երեխային սկզբում պետք է լրացուցիչ կերպով կերակրել և կշտացնել, քանի վոր նա հոգնում է և իր բաժինը չի ուտում։

Կերակուրը բաժանելիս և երեխաներին կերակրելիս դաստիարակչուհին պետք է մեծ երեխաներին ծանոթացնի կերակուրների անունների և բաղադրության հետ. որինակ՝ «կորեկաձավարով քաշովի», «մսով կոտլետ» և այլն։

Հերթապահությունը մեծ խմբերում կոլեկտիվ դաստիարակության ձևերից մեկն է։ Իր հերթապահության մասին երեխան իմանում է այն նկարից, վոր կախ է արվում վորոշ տեղում։

Հերթապահն աշխատում է քույր-հրահանգչի ոգնությամբ. պահարանից ափսեներ և հաց է բերում և դնում սեղանի վրա։

Հերթապահն իր արտաքին տեսքով պետք է տարբերվի մյուս երեխաներից. նա պետք է հագնի սպիտակ խալաթ կամ թևքին շոր կապի։

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Երեխաների քունը կազմակերպելու մասին

Երեխաների քունը կազմակերպելիս և անցկացնելիս մենք մեր առաջ խնդիր ենք դնում՝ երեխային սովորեցնել ժամանակին, շուտ և հանգիստ քնել այնքան ժամանակ, վորքան անհրաժեշտ է նրան իր տարիքի համեմատ։

Այդ կարելի յե իրագործել հետևյալ կերպ. պետք է կանոնավոր կերպով կազմակերպել մանկական կյանքի այն մոմենտները, վորոնք նախորդում են երեխայի քնին, այնուհետև՝ երեխայի համար համապատասխան շրջակայություն ստեղծելով, երեխաներին պառկեցնելիս կանոնավոր և ճիշտ մանկավարժական աշխատանք կատարելով։

Քնին նախորդող մոմենտների կազմակերպումը

Վորպեսզի երեխայի քունը շուտ տանի, անհրաժեշտ է քնելուց առաջ կազմակերպել դանդաղ զբոսանք և կանոնավոր կերպով կիրառել երեխաների կերակրման պրոցեսը։

Քնելուց առաջ երեխան պետք է ստանա պարզ, իրեն լավ ծանոթ խաղալիքներ. այդ ժամանակ նրա կյանքի մեջ վոչ մի նորություն չպետք է մտցնել։

Շրջակայություն

Խմբի ննջարանի համար պետք է առանձնացնել մեծ սենյակ՝ ներկված վոչ վառ գույներով։

Ննջարանի կահավորությունը պետք է բաղկացած լինի

ամենաանհրաժեշտ իրերից: Մահճակալների մեծությունը պետք է համապատասխանի յերեխաների հասակին:

Մեծ յերեխաների համար հարկավոր են ցածր մահճակալներ կամ ծալովի մահճակալներ, վորպեսզի յերեխաները կարողանան ինքնուրույնաբար բարձրանալ մահճակալների վրա:

Յերեխայի ներքնակը (խոտկուռ) պետք է համապատասխանի մահճակալի չափին. մոմլաթը կպցնում են խոտկուռին յերիզակներով: Մահճակալները պետք է դնել իրարից այնքան հեռու, վոր յերեխաների ձեռքերը միմյանց չհասնեն:

Մեծ յերեխաների հագուստը հանելու համար անհրաժեշտ է, վոր յուրաքանչյուր մահճակալի մոտ դրված լինի մի աթոռակ և անհատական գորգիկ: Ձմեռն անհրաժեշտ է ցերեկվա քունն անցկացնել բացօթյա՝ ծածկի տակ կամ տերասում:

Քնի տևողությունը և ժամանակը պետք է համապատասխանեն խմբի տարիքին: Վորքան ավելի փոքր է յերեխան, այնքան ավելի շուտ է հոգնում, ուստի և յերեխան պետք է ավելի շատ քնի: Մինչև 7 ամսական յերեխաներն օրվա ընթացքում քնում են յերեք անգամ: Սողացող յերեխաների խմբում (7 ամսականից մինչև մեկ տարի 3 ամսական) ցերեկվա քնի ընդհանուր տևողությունը պետք է լինի $3^1/_2$*—4 ժամ. յերկու ժամ նախաճաշից հետո և յերկու ժամ ճաշից հետո, ըստ վորում ընդմիջումը պետք է կազմի 2—*$2^1/_2$ *ժամ: Մեծ խմբում յերեխաների քունը պետք է անցկացնել ճաշից հետո. քնի տևողությունը* $2^1/_2$*—3 ժամ:*

Մանկավարժական աշխատանք յերեխաներին պառկեցնելիս

Յերեխաներին պետք է ննջարան տանել փոքր խմբերով: Առաջին հերթին պետք է պառկեցնել թույլ յերեխաներին և շուտ քնող յերեխաներին. վերջին հերթին այն յերեխաներին, վորոնք յերկար ժամանակ չեն քնում և խանգարում են ուրիշներին քնել:

Դաստիարակչուհին պետք կամաց խոսի և քայլի, վորքան կարելի յե քիչ խոսի յերեխաների հետ, չպատասխանի յերեխաների դիմումներին և ժպիտներին:

Մեծ յերեխաներին պետք է սովորեցնել ինքնուրույնաբար բարձրանալ և իջնել մահճակալներից: Մեկ տարեկանից մեծ յերեխաներին հագցնելիս և նրանց հագուստը հանելիս պետք է հետզհետե սովորեցնել ինքնասպասարկման:

Յերեխաներին վերկացնելիս պետք է զգուշությամբ արթնացնել այն յերեխաներին, վորոնք ժամանակին չեն արթնանում:

ՀՐԱՀԱՆԳ

Յերեխայի հարդարանքը (տուալետը) կիրառելու մասին

Յերեխայի տուալետը բաղկացած է հետևյալ մոմենտներից՝ հագնվելուց, հանվելուց և լվացվելուց և նպատակ ունի յերեխաների մեջ պատվաստել կուլտուր-հիգիենիկ, ինքնասպասարկման և կոլեկտիվ ունակություններ: Այդ կարելի յե իրագործել՝

1. համապատասխան շրջակայություն կազմակերպելով,

2. յերեխայի հագուստը ինքնասպասարկման հարմարեցնելով,

3. կանոնավոր մանկավարժական աշխատանքով:

Հագնվելը յեվ հանվելը

Յուրաքանչյուր մահճակալի մոտ դրվում է աթոռակ (յեթե հատուկ աթոռակներ չկան, կարելի յե վերցնել ճաշարանից): Յերեխաները հանվելիս պետք է իրենց հագուստը դարսեն աթոռակի թիկնակի վրա:

Հագուստը յերեխաների մեջ պետք է եսթետիկական զգացում զարգացնի, ուստի և յերեխայի հագուստը պետք է կարել գեղեցիկ գունավոր կտորից: Հագուստի և վոտնամանի չափը պետք է համապատասխանի յերեխայի հասակին, չպետք է ճնշի նրան կամ կաշկանդի նրա շարժումները: Ընդ սմին յերեխայի հագուստը պետք է հարմարեցված լինի ինքնասպասարկման. օրինակ՝ շապկի օձիքը պետք է այն չափի լինի, վոր յերեխայի գլուխն ազատ անցնի օձիքի միջով, և յերեխան կարողանա ինքը հագնել իր շապիկը: 3—6 ամսական յերեխաների հագուստը

բաղկացած է վիզը բաց շապիկից, կոֆտայից և բարուրներից։ Սողացող յերեխաներին պետք է հագցնել շապիկ, լիֆ՝ կապաններով՝ չուլքիների համար, չուլքիներ, վարտիկ և կոֆտա։ Աղջիկները և տղաներն այդ հասակում միատեսակ են հագնվում։

Մեծ յերեխաների վրայի հագուստը բաղկացած է վարտիկից և շապիկից տղաների համար, շրջազգեստից՝ աղջիկների համար։

Ամառը յերեխաներին պետք է հագցնել կիսավարտիկ կամ կցազգեստ (կոմբինացիա)։

Յերեխաների զգեստի կամ վարտիկի գրպաններում պետք է ողեր շինել՝ թաշկինակ կապելու համար, վորը (թաշկինակը) այդ նպատակի համար պետք է յերիզակ ունենա։

Հագնվելու յեվ հանվելու մեթոդիկան

Յերեխաներին հագցնելու ժամանակ նրանց զգեստները պետք է կանոնավոր վիճակում լինեն, կոճակները և ողակներն իրենց տեղերում լինեն, զգեստի բոլոր մասերը շրջված լինեն դեպի յերեսի կողմը, չուլքիների կապաններն արձակված, լիֆն արձակված ու բաժանված վարտիկից։ Անհրաժեշտ է հագցնելու վորոշ կարգ սահմանել, վորը պետք է յերեխաներին սովորեցնել։ Սկզբում հագցնում են լիֆը, այնուհետև չուլքիները, վարտիկը, շրջազգեստը, գոգնոցը։ Մինչև մեկ և կես տարեկան յերեխաներին հագցնում են չափահասները։

Մեկ և կեսից մինչև յերկու տարեկան յերեխաներին դաստիարակչուհու ոգնությամբ սովորեցնում են հագնել իրենց չուլքիները, յերկուսից մինչև յերկու և կես տարեկաններին՝ և չուլքիները, և կոշիկները, յերկու և կեսից մինչև յերեք տարեկաններին՝ չուլքիները, կոշիկները, լիֆը և վարտիկը։

Բոլորը կոճկում և կապում է դաստիարակչուհին։

Յերեխաներին ամբողջ հագուստը չի տրվում միանգամից։

Յերեխայի զգեստները հանելիս նրան պետք է սովորեցնել՝ մեկ և կեսից մինչև յերկու տարեկաններին—հանել չուլքիները և արձակած լիֆը, յերկուսից մինչև յերկու և կես տարեկաններին—հանել լիֆը, վարտիկը, չուլքիները, կոշիկները, յերկու և կեսից մինչև յերեք տարեկաններին—հանել գոգնոցը, շրջազգեստը, կոշիկները, չուլքիները, լիֆը և վարտիկը։ Բոլորն արձակում է դաստիարակչուհին։

Այդ ունակությունները յերեխաների մեջ պատվաստվում են աստիճանաբար. մինչև յերեխան չտիրապետի մի ունակության, չպետք է անցնել մյուսին։

Լվացվելու պրոցեսը

Մեծ յերեխաների լվացվելու համար ցանկալի յե ունենալ հատուկ սենյակ, վորը պետքանոթարանից բաժանված լինի ապակե միջնորմով։

Լվացարանները պետք է լինեն ցածր և համապատասխանեն յերեխաների հասակին։ Լվացարանների թիվը միջին տարիքի խմբի համար—1, մեծերի համար—2։ Լվացարանների ծորակները պետք է այնքան բարձր լինեն, վոր յերեխան կարողանա հեշտությամբ ձեռքը հասցնել նրան և ազատ կերպով պտտել և բաց անել։

Սրբիչը պետք է լինի 70 սմ վոչ յերկար։ Սրբիչը պետք է ող ունենա։

Սրբիչների համար յեղած կախարանները պետք է ցածր լինեն։ Յուրաքանչյուր յերեխայի սրբիչի տեղը պետք է նշվի նույն բովանդակությամբ նկարով, ինչ վոր հագուստի համար ծառայող կախարաններինը։ Լվացարանների և սրբիչների կախարանները պետք է դասավորել այնպես, վոր չխանգարեն դաստիարակչուհուն աշխատել։

Աշխատանքի մեթոդիկան

Յերեխաներին պետք է սովորեցնել ինքնուրույնաբար լվացվել՝ սկսած այն ժամանակից, յերբ նրանք սկսեն լավ քայլել, մոտավորապես 1 և կես տարեկան հասակից։ Մեկ և կեսից մինչև 2 տարեկան յերեխաներին սովորեցնում են լվանալ իրենց ափերը և սրբել այն։ 2-ից մինչև 3 տարեկան յերեխաներին լվանալ և սրբել ձեռքերն ու յերեսը։

1 տարի 6 ամսական յերեխաներին պետք է սովորեցնել իմանալ իր սրբիչի տեղը և վերցնել այն։

Չպետք է յերեխաներին նոր առաջադրանք տալ, մինչև վոր նրանք չյուրացնեն նախորդը։

Վորպեսզի յերեխաները շուտ սովորեն լվացվել, անհրաժեշտ է, վոր դաստիարակչուհին ինքը յերեխաների ներկայությամբ լվանա իր ձեռքերը և լվացվի։

Յերեխաներին՝ սկսած յերկու տարեկան հասակից պետք է սովորեցնել ուտելուց հետո բերանն ողողել։

Պետք է յերեխաների մեջ այն սովորությունը պատվաստել, վոր իրենք հետևեն իրենց կարիքներին և սովորեն պետքանոթներից ոգտվել։ Դրա համար անհրաժեշտ են համապատասխան շրջակացություն և պրոցեսի ճիշտ կազմակերպում։

Շրջակացություն

Յուրաքանչյուր խումբ պետք է ունենա առանձին պետքանոթարան (горшечная)։ Այնտեղ, վորտեղ շենքն այդ թույլ չի տալիս, կարելի յե յերկու խմբի համար ունենալ մեկ պետքանոթարան, բայց այս դեպքում այդ խմբերի ռեժիմը պետք է կառուցվի այնպես, վոր յերեխաներին պետքանոթարան տանեն տարբեր ժամանակ և վոր յերկու խմբերն իրար չհանդիպեն։

Փոքր յերեխաների համար անհրաժեշտ են տականոթներ, վորոնք պետք է ունենան վրայից դրվող նստոց-տախտակներ։ Տականոթները պետք է ունենան խոռոռնակ պահանգներ, վորպեսզի յերեխան չընկնի։

Մեծ յերեխաների համար միայն պետքանոթներ են հարկավոր, իսկ յեթե բավարար քանակությամբ պետքանոթներ չկան, ապա պետք է և այսպիսի յերեխաներն անհատական դնովի տախտակներ ունենան։

Աշխատանքի մեթոդիկան

Վորպեսզի յերեխան սովորի պետքանոթ գործածել, անհրաժեշտ է նրան պետքանոթ նստեցնել միշտ վորոշ ժամանակ. ավելի լավ է այդ անել կերակրելուց, քնելուց, զբոսնելուց առաջ և դրանից հետո։

Այն յերեխաներին, վորոնք պետքանոթ նստել են ուզում, պետք է նստեցնել անմիջապես, առանց սպասելու ամբողջ խմբին։ Պետքանոթ նստեցնելու ժամանակը և թիվը կախված է յերեխայի հասակից (տարիքից). վորքան ավելի մեծ է յե-

րեխան, այնքան ավելի քիչ անգամ նա պետք է պետքանոթ նստի։ Յերեխային պետքանոթ պետք է նստեցնել սկսած այն ժամանակից, յերբ յերեխան սկսում է լավ նստել, առանց հենարանի։

Յերեխաներին պետքանոթ նստեցնելիս մեծ նշանակություն ունի յերեխաների ճիշտ խմբավորումը։

Շատախոս յերեխաներին պետք է տեղավորել սակավախոսների մեջ. այն յերեխաներին, վորոնք վատ են պետքանոթ նստում, թռչում են նրանց վրայից, այդպիսիներին պետք է նստեցնել վերջին հերթին և նրանց մենակ չթողնել։

Ձեռնաշարժությամբ պարապող կամ շուտ գրգռվող յերեխաների մոտ միշտ պետք է լինի դաստիարակչուհի։

Չպետք է թույլ տալ յերեխաներին յերկար նստել կամ պետքանոթով ման գալ սենյակում. յերեխան պետքանոթի վրա պետք է նստի հինգ րոպեյից վոչ ավելի։

Յեթե յերեխան պետքանոթի վրա նստում է առանց արդյունքի, բայց վորոշ ժամանակից հետո պարզվում է, վոր նրա վարտիքը կեղտոտած է, անհրաժեշտ է նրան նորից թեկուզ կարճ ժամանակով պետքանոթ նստեցնել։

Այն դեպքում, յեթե յերեխան չի կարողանում մեզը պահել, պետք է այդպիսիներին լրացուցիչ կերպով պետքանոթ նստեցնել, նախապես հետեվելով, թե յերբ է նա միզում։

Գիշերը յերեխաներին պետք է պետքանոթ նստեցնել մեկ անգամ, ըստ վորում յերեխային գիշերը պետքանոթ նստեցնելիս պետք է ըստ հնարավորության անհատական մոտեցում ունենալ (պետքանոթ նստեցնելու ժամանակը վորոշելու մտքով)։

Գիշերը պետքանոթ են նստեցնում ննջարանում։ Մեծ խմբերում պետքանոթ նստեցնելիս ինքնասպասարկումը կայանում է նրանում, վոր յերեխաներն իրենք են պետքանոթ նըստում։

Պետքանոթները պետք է իրարից այնքան հեռու լինեն, վոր յերեխաների ձեռքերը միմյանց չհասնեն։

Հ Ր Ա Հ Ա Ն Գ
ԶԲՈՍԱՆՔ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զբոսանք կազմակերպելիս մենք մեր առաջ խնդիր ենք դնում՝ վորքան կարելի յե յերեխաներին յերկար ժամանակ պահել բացօթյա, ծանոթացնել նրանց չափահասների աշխատանքի հետ, ծանոթացնել նրանց փողոցի, բնության հետ։

Այդ խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է, վոր յերեխայի հագուստը և վոտնամանը համապատասխանեն սեզոնին, վոր զբոսանքի տեղը (հողամասը) կանոնավոր կերպով կահավորված լինի, վոր զբոսանքի ժամանակ մանկավարժական աշխատանք կատարվի։

Յերեխայի վերնազգեստը և վոտնամանը պետք է համապատասխանեն յերեխայի հասակին. յերեխայի գլխարկը չպետք է շարժվի դեպի աչքերը. վերարկուն պետք է ծնկներից քիչ ցածր լինի. վերարկուի թևքերը չպետք է ծածկեն ձեռքերի թաթերը։

Ձմեռը զբոսանքի ժամանակ հարկավոր է, վոր յերեխաները հագած լինեն տակը բամբակ դրած վերարկու, բրդեղեններով կամ ռետինով ռեյտուզ(վարտիկ), ականջապանակներով գլխարկ, բաշլուղ կամ տաք շարֆ, թաթմաններ և այլն։

Աշնանը և գարնանը զբոսանքի ժամանակ հարկավոր է՝ դրապից կարած վերարկու, կրկնակոշիկներ կամ բոտեր, բրդեղենից կարված գլխարկ, թաթմաններ։

Յերեխաների հագուստը և վոտնամանը պահելու համար անհրաժեշտ է վոր լինեն անհատական պահարանիկներ՝ վոտնամանի և գլխարկի բաժանմունքներով։

Հողամաս։ Մսուրին կից պետք է հողամաս լինի յերեխաների զբոսանքի համար։ Հողամասը պետք է ցանկապատված լինի և մաքրված աղբից, մոլախոտերից, կեղտոտ առուներից և փոսերից։ Հողամասը պետք է հատակագծված լինի։

Այն դեպքում, յեթե հողամասը բավականաչափ մեծ է, անհրաժեշտ է յուրաքանչյուր տարիքային խմբի համար առանձին հրապարակ ունենալ։

Խմբական հրապարակը պետք է ունենա բավականաչափ ստվերոտ տեղ կամ տաղավար՝ պարուսինից կամ փաներից, տափանած հրապարակ՝ արևի տակ և շավիղներ՝ զանազան ուղղությամբ։ Ստվերոտ տեղում պետք է դնել կամ գետնի մեջ թաղել սեղաններ և թիկնակներով նստարաններ՝ հանգստանալու և պարապելու համար։

Նստարաններ պետք է դնել նաև հրապարակում։

Անհրաժեշտ է, վոր հողամասը սարքավորված լինի այնպիսի պիտույքներով, վորոնք անհրաժեշտ են խոշոր մոտորիկա զարգացնող պարապմունքների համար։ Այդպիսի պիտույքներ են. սողացող յերեխաների համար վրաքաշ՝ ցածր վոտքերով և բարյերով, գերան, քայլել կարողացող յերեխաների համար հողե լեռնակ՝ փայտե սանդուխքով, հողե փոս՝ կամուրջիկներով, փայտե վեցանիստ, վեցանկյունի նստարաններ, ավազարկղ և ճոճվող տախտակ։

Հողամասում պետք է պատրաստել գազոն, մի քանի փոքր մարգ շուտ հասնող բանջարեղենով, ինչպես և ծաղկոց։ Մարգերը և ծաղկոցը պետք է ըստ հնարավորության հեռու լինեն յերեխաների մշտական ժամանցատեղից։

Ձմեռվա ամիսներին պետք է հրապարակը և շավիղները մաքրել ձյունից։ Ձյունից կարելի յե շինել լեռնակ, ձյան պատ, վորը պետք է անցքեր ունենա և այլն։

Յերեխաները ձմեռը պետք է ունենան բահեր, սահնակներ, ձյան հրիչներ, ավելներ. ամառը՝ ավազարկղներ, սայլակներ, պատգարակներ, ավելներ, ավտոմոբիլներ, պլատֆորմաներ, յերասաններ, լայն անիվներ, գնդակներ և այլն։

Ամառը պետք է յերեխաների կյանքը կազմակերպել բաց ոդում ամբողջ որվա ընթացքում։ Ձմեռը յերեխաները պետք է մաքուր ոդում անցկացնեն (ներառյալ և քունը) առնվազն 3—4 ժամ որական։ Ծծկեր և սողացող յերեխաների համար զբոսանքը փոխարինվում է բացօթյա քնով։

Զբոսանքը կանոնավոր կերպով անցկացնելու համար անհրաժեշտ է կազմակերպել յերեք մոմենտ. զբոսանքի հավաքվելը, զբոսանքը և զբոսանքից վերադառնալը։ Նկատի առնելով այն, վոր յերեխաները զբոսանքի գնալու համար յերկար ժամանակ են հավաքվում, անհրաժեշտ է ոգնելու համար մասնակից դարձնել և մյուս խմբերի անձնակազմին (որինակ՝ դայակին սողացողների կամ ծծկերների խմբից, վորտեղ յերեխաներն այդ ժամանակ քնած են լինում)։

Յերեխաները հագնվում են հետևյալ կարգով. վարտիկ (ռեյտուզ), կաճյակներ, գլխարկ, թաթման, վերարկու, շարֆ։ Ընդ սմին յերեխաներին պետք է սովորեցնել ինքնուրույնաբար

հագնվել։ Այսպես ուրեմն մեծ երեխաները կարող են իրենք հանել իրենց կոշիկները, հագնել կաճկակները և գլխարկը։

Երեխաներին զբոսանքի պետք է դուրս բերել 4—5 հոգուց բաղկացած խմբերով, առաջին հերթին նրանց, ովքեր արդեն հագնված են։ Առաջին խմբի հետ դուրս է գալիս դայակը։ Զբոսանքի հավաքվելիս օգտակար է երեխաների հետ զրուցել այն մասին, թե ուր պետք է գնան նրանք զբոսնելու և ինչ կտեսնեն այնտեղ։

Զբոսանքն անց է կացվում ըստ նախորոք կազմված պլանի։ Զբոսանքի ժամանակ պետք է երեխաների ուշադրությունը դարձնել բնության առանձին երևույթների վրա (ձյուն է գալիս, քամի յե փչում, արևը փայլում է և այլն), զբոսանքն օգտագործելով միաժամանակ՝ երեխաներին չափահասների աշխատանքի և փողոցի շարժման հետ ծանոթացնելու համար։

Ձմեռվա ամիսներին հատուկ ուշադրություն պետք է նվիրել շարժումներ զարգացնող խաղերին (ձի խաղալը, շավիղներով վազելը և այլն)։ Նկատի ունենալով այն, որ երեխաները ձմեռային հագուստով շուտ են հոգնում, անհրաժեշտ է յուրաքանչյուր այդպիսի խաղից հետո երեխաներին հնարավորություն տալ հանգիստ նստել և հանգստանալ։

Էքսկուրսիաներ կազմակերպելիս էքսկուրսիայի վայրը պետք է լինի այնպիսի հեռավորության վրա, որ երեխաները 15 րոպեյում տեղ հասնեն։

Զբոսանքից վերադառնալիս և շորերը հանելիս պետք է այդ մոմենտները կիրառել փոքրիկ խմբերով. ընդ որին առաջին հերթին պետք է տուն բերել այն երեխաներին, որոնք ավելի շուտ են հոգնում և ավելի շուտ են մրսում։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԼԱՆ ԱՄԱՌՎԱ ԱՄԻՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ամառը երեխաների ամբողջ կյանքը պետք է կազմակերպվի շենքից դուրս։ Նկատի ունենալով այն, որ երեխայի միջավայրն օրվա ընթացքում խիստ փոխվում է, ամառվա պայմաններում աշխատանքը պահանջում է ավելի լուրջ մոտեցում։ Ամառային աշխատանքի ճիշտ կիրառումը պահանջում է կազ-

մակերպել ամառային հրապարակ և մշակել ամառվա աշխատանքի բոլոր հատվածների (раздел) մեթոդիկա։

Ամառվա ամիսներին մանկավարժական աշխատանքի պլանավորումը պարունակում է հետևյալ հիմնական մոմենտները.

1. երեխաներին բնության հետ ծանոթացնելը.
2. երեխաներին չափահասների աշխատանքի հետ ծանոթացնելը.
3. խաղեր և պարապմունքներ։

1. ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԾԱՆՈԹԱՑՆԵԼԸ

1. Բնության երևույթներ։ Երեխաների ուշադրությունը դարձնել պայծառ արևի, անձրևի, ամպի, քամու վրա։

2. Բուսական աշխարհ։ Երեխաներին բուսական աշխարհի հետ ծանոթացնելիս պետք է նրանց ուշադրությունը դարձնել այն բանի վրա, որ ծառի տակ կարելի յե պատսպարվել անձրևից, արևի ջեռուցիչ ճառագայթներից. խոտով կարելի յե կերակրել կենդանիներին. ծաղիկներից կարելի յե պսակ հյուսել, փնջեր կազմել սենյակները զարդարելու համար. կեչու կեղևից կարելի յե մակույկիկներ պատրաստել, տերևներից՝ սուլիչներ։

Այն օբյեկտների թիվը, որոնց հետ կարելի յե ծանոթացնել երեխաներին, կախված է նրանց տարիքից։

Սողացող երեխաներին կարելի յե ցույց տալ ծառի ճյուղ, ծաղիկ, այդ բույսերի անունը տալ, տալ երեխաներին այդպիսիք բռնել իրենց ձեռքին։ Մեկ տարեկանից մինչև երկու տարեկան երեխաներին կարելի յե ցույց տալ ծառ, տերևներ, ծաղիկներ. 2-ից մինչև 3 տարեկաններին՝ ծառ, ծաղիկ, տերև, խոտ։

Պարապմունքները պետք է կատարվեն առավոտյան ժամերին։ Օգտակար է, որ այդ պարապմունքների ժամանակ պատրաստված պսակները, ծաղկեփնջերը, մակույկիկները և այլն երեխաներն իրենց հետ բերեն տուն։ Դրա շնորհիվ գիտելիքները ամրապնդվում են երեխայի մեջ։

3. Կենդանական աշխարհ։ Յերեխաներին կենդանիների հետ ծանոթացնելիս պետք է նրանց ուշադրությունը դարձնել այն բանի վրա, վոր ձին իրեր, մարդիկ է փոխադրում, կովը կաթ է տալիս և այլն։

Յերեխաներին շատ հետաքրքրում են միջատները։ Բայց վորոշ յերեխաներ դաժանություն են ցույց տալիս դեպի միջատները. նրանք աշխատում են բռնել միջատին և վոտքով տրորել նրան։ Պետք է աշխատել՝ յերեխաների միջից վերացնել այդ սովորությունը, պատմելով նրանց տվյալ միջատի մասին, այն մասին, թե վորտեղ է այդ միջատն ապրում, ինչ է անում, ինչ է ուտում։

Յերեխաներին նմանապես պետք է ծանոթացնել այն թռչունների հետ, վորոնք մատչելի յեն նրանց դիտողության համար, որինակ՝ ճնճղուկի, ագռավի, աղավնու, տնային թռչունների հետ։ Յերեխաներին պետք է ցույց տալ, թե վորտեղ են ապրում տնային թռչունները, ինչ են ուտում նրանք, յերեխաներին հնարավորություն տալ նրանց կերակրել։

2. ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԶԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՏ ԾԱՆՈԹԱՑՆԵԼԸ

Ամառ ժամանակ հնարավոր է լինում յերեխաներին ծանոթացնել մի շարք աշխատանքային պրոցեսների հետ։ Բանջարանոցում յերեխաները կարող են դիտել, թե ինչպես են նախապատրաստվում բանջարեղեն ցանել, ինչպես են ցանում բանջարեղենը, ինչպես են ջրում, մշակում բանջարանոցը։

Գետի ափին յերեխաները կարող են տեսնել, թե ինչպես են ձուկ վորսում, ինչպես են նորոգում մակույկը, ինչպես են սպիտակեղեն լվանում։ Փողոցում կարելի յե դիտել, թե ինչպես են տուն կառուցում, նորոգում սալարկը, ջրում փողոցը։ Ամառը պետք է յերեխաներին մասնակից անել չափահասների աշխատանքին, յերբ վերջիններս խաղից առաջ ջրում են ավազը, մարգեր են պատրաստում, ջրում են ծաղիկները և բանջարեղենը։

3. ԽԱՂԵՐ ՅԵՎ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ

Խաղ ավազի հետ։ Ավազի հետ խաղալով յերեխաները շատ շարժվում են, վազվզում, կռանում, հաճախակի փոխում են իրենց մարմնի դիրքը և այսպիսով մարզում են իրենց մկանները։ Ավազը պետք է քիչ թրջված լինի։ Այն դեպքում, յերբ համապատասխան նյութ կա—սայլակներ, բահեր, դույլիկներ, պատգարակներ—պետք է պայմաններ ստեղծել յերեխաներին միացնելու համար, նրանց համաշխատակցության համար, այսինքն՝ նրանց մեջ կոլեկտիվ աշխատանքի ունակություններ զարգացնելու համար։

Յերեխաները խաղալիս պետք է ունենան ճյուղեր, տերևներ, ձողիկներ, քարեր, ձկնականջներ, մարդկանց և կենդանիների ֆիգուրաներ, մի բան, վոր սովորեցնում է նրանց իմաստավորել իրենց խաղը, համակարգել այլն և այլն։

Պարապմունք կավով։ Ծեփելու ընթացքում յերեխաների մեջ ստեղծագործական պրոցեսներ են զարգանում։ Ծեփումն անց է կացվում առավոտյան ժամերին. սկզբում յերեխային կավը տրվում է առանց ուրիշ նյութի, հետո վորպես ստեղծագործության խթան ավելացնում են ծաղիկներ, ճյուղեր, ձողիկներ, կաղապարիկներ՝ աղյուսիկներ պատրաստելու համար։ Յերեխաները ծեփելով զբաղվում են միայն մեծ խմբերում։

Պարապմունք ջրով։ Այդ պարապմունքը սովորաբար մեծ հետաքրքրություն է առաջացնում յերեխաների մեջ և մեկն է այն շատ արժեքավոր պարապմունքներից, վորոնք յերեխայի մեջ զարգացնում են մի շարք ոգտակար ունակություններ և գիտելիքներ։

Այդպիսի պարապմունքների անցկացումն ամառային պայմաններում պետք է համարել պարտադիր։ Սողացող յերեխաների խմբում յերեխաների առաջ ջրի վրայով բաց են թողնում լողացող առարկաներ։ Միջին խմբում յերեխաները ջուրը մեկ գավաթից տեղափոխում են մյուս գավաթի մեջ, տիկնիկ են լողացնում, ջրի յերեսին մակույկիկ են բաց թողնում։ Մեծ խմբերում յերեխաները ջուրը տեղափոխում են մի 22ից մյուսը՝ ձագարի միջով, լվանում են իրենց խաղա-

լիքները, տիկնիկները, ջրում են ավազը, բանջարանոցը, ծաղիկները:

Պատմություններ պատմելը: Այն պատմվածքները, նկարները, գրքույկները, վորոնք տրվում են յերեխաներին տվյալ ամիսներին, պետք է լինեն այնպիսին, վոր ամրապնդեն այն գիտելիքներն ու փորձը, վոր յերեխան ձեռք է բերել տվյալ ամիսների ընթացքում: Գրքույկների և պատմվածքների բովանդակությունը—յերեխաների, կենդանիների և թռչունների կյանքը, չափահասների աշխատանքը:

Յերեխաների հետ անցկացնել Մայիսի մեկի տոնակատարությունը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ՊԼԱՆ ԱՇՆԱՆ ՅԵՎ ՁՄՌԱՆ ԱՄԻՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Անձրևային և ցուրտ օրերին յերեխաների հետ կատարվող աշխատանքի բովանդակությունը փոխվում է: Ամենից առաջ փոխվում է խաղի ռեժիմը, վորովհետև վատ յեղանակի պատճառով զբոսանքները կրճատվում են և կարճատև են լինում, իսկ յերբեմն ամենևին չեն լինում: Փոխվում է նաև զբոսանքների մեթոդիկան այն պատճառով, վոր յերեխաները շուտ մրսում և հոգնում են: Ուստի և այդ շրջանի աշխատանքի ճիշտ պլանավորումը շատ կարևոր է: Այդ պլանավորումն անհրաժեշտ է կատարել նույն ուղղությամբ, ինչ և ամառը, բայց ձևափոխված:

ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԾԱՆՈԹԱՑՆԵԼԸ

1. **Բնության յերևույթները:** Յերեխաների ուշադրությունը դարձնել վատ յեղանակի վրա, ամպամած յերկնքի վրա, սառը քամու, անձրևի, չցամաքող լճակների, ձյան և սառույցի վրա: Յերեխաներին զբոսանքի տանելու համար հագցնելիս, նրանց ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, վոր նրանց հագուստը փոխված է: Փողոցում պետք է ցույց տալ սահնակ, չմուշկներով և դահուկներով սողացող և սահող մարդկանց և այլն:

2. **Բուսական աշխարհ:** Յերեխաների ուշադրությունը դարձնել դեղնող տերևների և աշնանային տերևաթափի վրա, իսկ ձմեռը՝ մերկ ծառերի վրա: Այնտեղ, վորտեղ բանջարանոց կա, պետք է յերեխաներին ցույց տալ, թե ինչպես են աճում կաղամբը, կարտոֆիլը և մյուս բանջարեղենները:

3. **Կենդանական աշխարհ:** Յերեխաներին ծանոթացնել կենդանիների կյանքի պայմանների հետ՝ ցուրտ ժամանակ: Յերեխաների ուշադրությունը դարձնել չվող թռչունների յերամների վրա, նրանց հնարավորություն տալ կերակրել ցած իջնող թռչուններին. ծանոթացնել ընտանի թռչունների հետ և հնարավորություն տալ կերակրել նրանց:

ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՏ ԾԱՆՈԹԱՑՆԵԼԸ

Յերեխաներին հնարավորություն տալ (այնտեղ, վորտեղ բանջարանոց, այգի կա), վոր դիտեն, թե ինչպես են բանջարեղեն, միրգ հավաքում, ինչպես են տեղափոխում այն: Յերեխաներին պետք է ցույց տալ, թե ինչպես ձմեռը չափահաս մարդիկ պատուհաններում ձմեռային շրջանակներ են դնում, ինչպես են վառում վառարանները, ինչպես տաք հագուստ են կարում. հնարավորություն տալ տեսնել, թե ինչպես խոհանոցում կաղամբ են աղում, բանջարեղեն մաքրում և յեփում:

Փողոցում պետք է յերեխաների ուշադրությունը դարձնել այն բանի վրա, թե ինչպես են մեծերը ճանապարհները մաքրում ձյունից, ինչպես են ձյունը հավաքում և փոխադրում. բակում պետք է ցույց տալ, թե ինչպես են փայտ կտրում և տեղափոխում հատուկ շենքամասը:

Յերեխաները կարող են նմանապես մեծերին օգնել վորոշ աշխատանքներում:

Աշնանը յերեխաները կարող են մասնակցել տերևներ, կոներ, կաղիններ, քար և բանջարանոցում բանջարեղեն հավաքելու աշխատանքներին:

Ձմեռը յերեխաները կարող են մեծերին օգնել բակի շավիղները ձյունից մաքրելու և ձյունը սահնակով տեղափոխելու աշխատանքներին:

ԽԱՂԵՐ ՅԵՎ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ

Ցուրտ յեղանակներին բակում պետք է գերակշռեն շարժումներ զարգացնող խաղերը. լեռնակներից սահնակով սահելը, մեծյանց շավիղներով սլացնել, ձյունից ֆիգուրաներ, տնակներ, լեռնակներ, ձյունից դռնակներ և բավիղներ (լաբիրինթոս) շինելը, գնացք խաղալը և այլն:

Շենքի ներսում կատարվող պարապմունքները պետք է կապակցված լինեն աշնան և ձմռան աշխատանքի ողջ պլանի հետ: Այդ պարապմունքների ընթացքում պետք է լայն կերպով օգտագործել բնեղեն նյութեր. տերևները մեծյանց կպցնել, տերևներից դրասանգներ (гирлянды) կապել, կոներ. ներկել, քարեր և կաղիններ տեսակավորել:

Կավի կամ շինանյութի հետ կատարվող պարապմունքների ժամանակ դաստիարակչուհին պետք է յերեխաների ստեղծագործությունն ուղղի դեպի ձմեռային թեմաներ:

Պ ա տ մ ու թ յ ու ն ն ե ր պ ա տ մ ե լ ը պետք է կապակցվի տվյալ շրջանի ամբողջ աշխատանքի հետ: Պետք է այնպիսի գրքույկներ և նկարներ ընտրել, վորոնք ամրացնում են այդ շրջանում ստացված գիտելիքները:

Գրքույկների և նկարների որինակելի բովանդակությունը. յերեխաները՝ լեռնակից սահելը, չմուշկներով և դահուկներով սղղալը և սահելը. խաղ ձյան հետ. չափահասների աշխատանք և սպորտ:

Յերեխաների յերաժշտական պարապմունքների մեջ պետք է մտցնել յերգեր աշնան և ձմռան մասին: Ստվերների թատրոնում, լուսապատկերներում պետք է գերակշռեն աշնանային և ձմեռային սյուժեներ:

Դաստիարակչուհիների աշխատանքի մեջ մեծ տեղ պետք է գրավեն յերեխաների հետ անցկացվող անհատական զրույցները. լինի այդ այն ժամանակ, յերբ դաստիարակչուհին յերեխային զբոսանքի յե տանում, թե լինի այդ առավոտյան, յերբ դաստիարակչուհին յերեխային մոր մոտից մոտ է բերում — դաստիարակչուհին պետք է ուշադրություն դարձնի յերեխայի հագուստի առանձնահատկությունների վրա, այն սահնակի վրա, վորով մայրը նրան մոտ բերել է և այլն:

4. ԶԲՈՍԱՆՔՆԵՐ ՅԵՎ ԵՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐ

Աշնան և ձմռան ամիսներին զբոսանքի սովորական վայրն հանդիսանում մսուրի բակը կամ այգին: Բացի դրանից, այդ ժամանակաշրջանում պետք է անցկացնել մի քանի կարճատև եքսկուրսիաներ (մոտավորապես կես ժամ տևող), նպատակ ունենալով յերեխաներին ծանոթացնել բնության յերևույթների հետ, չափահասների աշխատանքի, ինչպես և կենդանական ու բուսական աշխարհի հետ: Եքսկուրսիայի պետք է տանել միայն 2—3 տարեկաններին, առողջ և լավ քայլել կարողացող յերեխաներին:

Անհրաժեշտ է յերեխաների հետ անցկացնել Հոկտեմբերյան հեղափոխության տարեդարձի տոնակատարությունը և տոնածառ:

ԾԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ՅԵՎ ԽԱՂԱԼԻՔՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ 2-ԻՑ ՄԻՆՉԵՎ 7 ԱՄՍԱԿԱՆ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ գունավոր գունդ: Ռետինե և հնչուն չխչխկան, ող (սերսո)՝ բռնելու համար: Մետաղե գունավոր գնդիկ: Կոմպլեկտներ. յերկու գունավոր գնդիկ՝ իրար կապած, մի քանի ող՝ իրար կապած: Ող՝ բոժոժներով: Անձեռոցի ող և գնդիկ:

Յերեխաների բոլոր խաղալիքները պետք է կախել նրա մահճակալի կամ մանեժի վերևից, յեթե յերեխան դեռ նստել չի կարողանում:

Պ ի տ ու յ ք ն ե ր. մանեժ և դրոցներ խաղալիքների համար:

7 ԱՄՍԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵԿ ՏԱՐԻ 3 ԱՄՍԱԿԱՆ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Փայտե չխչխկան: Ռետինե գնդակ: Ներդրովի գավաթ: Բրգիկներ: Տուփիկներ: Բոժոժներ և զանգուլակներ: Գնդակ-ճոճանակ: Հոլեր: Գնդեր: Գլանաձև տուփիկներ: Կոճեր: Փայտե գըդալներ: Ափսեներ (չկոտրվող): Սկահներ: Լաթ: Զանազան չափի բարձիկներ:

Պիտույքներ խոշոր մոտորիկա զարգացնելու համար. բարյեր, լեռնակ՝ սանդուխքով, Նստարանիկներ, արկղներ, զամբյուղներ, մաղեր, սահակողերով գլորաններ, գերան՝ մեկ և կես մետր յերկարությամբ:

Կազմակերպված պարապմունքների համար օգտագործվում են մակույկիկներ, ցելյուլոյիդ խաղալիքներ:

Վերոհիշյալ նյութից կազմվում են կոմպլեկտներ.

1. Մաղեր և գնդեր, 2. ափսեներ և գդալներ, 3. լաթ և բարձիկներ և այլն:

Յուրաքանչյուր յերեխային տրվում է 2—3 առարկայից կազմված կոմպլեկտ:

1 ՏԱՐԻ 3 ԱՄՍԱԿԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ 2 ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Զանազան չափերի ռետինե գնդակներ: Ներդրովի գավաթներ: Բրգեր: Սնկիկներ: Կլոր տուփիկներ: Գրչամաններ: Հոլեր: Գնդեր: Կեգլի: Գլանաձև տուփեր: Կոճեր: Մեծ կոճակներ պարանի վրա: Մաղեր: Տիկնիկներ: Լաթ: Զանազան չափերի բարձեր: Գարկեր՝ ծանրության հետ միասին: Շինանյութ: Ավազամաններ և բահակներ: Սահնակներ, դույլեր, սայլակներ: Զանազան չափերի ավտոմոբիլներ: Պլատֆորմներ: Թռչուններ և կենդանիներ ֆաների վրա: Նկարներ՝ ֆաների վրա:

Հիշյալ նյութերից կոմպլեկտներ են կազմվում, օրինակ՝ 1. պարկեր և պլատֆորմներ, 2. տիկնիկներ, լաթ, բարձեր և այլն: Յուրաքանչյուր յերեխային տրվում 3—4 առարկայից կազմված կոմպլեկտ:

Պիտույքներ խոշոր մոտորիկա զարգացնելու համար. լեռնակ՝ սանդուխքով, զանազան բարձրության նստարանիկներ, արկղներ, զամբյուղներ, գերան, գլորաններ, բոլորակներ:

Կազմակերպված պարապմունքների համար օգտագործվում են ցելյուլոյիդե և ռետինե խաղալիքներ՝ ջրի հետ խաղալու համար: Մեծ կոճակներ և պարանիկներ, կոճեր և պարանիկներ շարելու համար, «փոքրիկներին» լոտո, գրքույկ-նկարներ, դափ-թմբուկ, բոժոժներ, ծնծղաներ:

2-ԻՑ ՄԻՆՉԵՎ 3 ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Պլատֆորմաներ: Զանազան մեծության ավտոմոբիլներ. սահնակներ: Ավելներ: Ձյան հրիչներ: Դույլեր, ցնցուղներ և բահակներ: Ավազամաններ: Շուկայի պարկ: Շուկայի զամբյուղ: Տիկնիկներ: Լաթ: Բուդյոնովկաներ: Կարմիր դրոշակներ: Զանազան ռետինե գնդակներ: Բրգիկներ: Զանազան տուփիկներ: Գնդիկներ: Կեգլի: Պարկեր–ծանրություններ: Շինարարական նյութ: Հոլեր: Ներդրովի գավաթներ: Կոճակներ և պարանիկներ: Կոճեր և պարանիկներ: Թռչուններ և կենդանիներ՝ ֆաների վրա: Նկարներ՝ ֆաների վրա:

Հիշյալ նյութից կոմպլեկտներ են կազմվում: Յուրաքանչյուր յերեխայի տրվում է 3—4 առարկայից բաղկացած կոմպլեկտ:

Խոշոր մոտորիկա զարգացնելու պիտույքներ.

Բոլորակ, լեռնակ՝ սանդուխքով, գերան, տախտակ, սանդուխք-բուրգ, օղեկապեր, մաղեր, յերասաններ:

Կազմակերպված պարապմունքների համար օգտագործվում են՝ կնիքներ, կոճեր և պարանիկներ, «չորս գույն» լոտո, «փոքրիկներին» լոտո, թուղթ և մատիտ, գրքույկ-նկարներ:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ
ԽԱՂԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Խաղը յերեխայի գործունեյության հիմնական ձևն է: Խաղալով, յերեխան զարգացնում է իր լսողությունը, տեսողությունը, շոշափելիքը, մարզում է ձեռքերի և ոտքերի մկանները: Խաղը հարստացնում է յերեխայի փորձը և ծանոթացնում նրան զանազան առարկաների և նրանց հատկությունների հետ: Խաղը զարգացնում է յերեխայի ուշադրությունը և ստեղծագործական ընդունակությունները: Խաղը յերեխաների մեջ առաջացնում է գոհունակության, ուրախության զգացում և առույգ տրամադրություն:

Խաղալով յերեխան զարգանում է վորպես կոլեկտիվի անդամ: Նա սովորում է զիջել ընկերոջը, հաշվի առնել ուրիշների շահերը, սպասել իր հերթին:

Խաղ կազմակերպելու համար անհրաժեշտ է ճիշտ կերպով ընտրած խաղանյութ, ընդարձակ խաղարան, մեթոդապես մտածված աշխատանք դաստիարակչուհու կողմից։

Խաղալիքներն իրենց տեսքով պետք է լինեն հրապուրիչ և բազմազան։ Նրանք պետք է յերեխայի մեջ հետաքրքրություն և զարմանք առաջացնեն և ծանոթացնեն նրան մարմինների հիմնական հատկությունների հետ՝ գույնի, ձևի, մեծության հետ։ Խաղալիքները պետք է յերեխաներին միացնեն կոլեկտիվ խաղի համար, նպաստեն մանկական ստեղծագործության զարգացմանը և թույլ տան խաղալիքներից բազմապիսի համակցություններ (կոմբինացիա) կազմել։ Խաղալիքները պետք է բավարարեն հիգիենիկ պահանջների, դիմացկուն լինեն և պատրաստված լավ լվացվող նյութից, ներկված լինեն անվնաս կայուն ներկով։

ԽԱՂԱՆՅՈՒԹԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ԺԱՄԱՆԱԿԻ

Խաղի տեվողությունը վորոշվում է յուրաքանչյուր խմբի տարիքով, յերեխաների անհատական առանձնահատկություններով, խաղանյութի առանձնահատկություններով (գլխավորապես խաղանյութի նորությամբ և նրա բարդության աստիճանով)։

Բացի այդ մոմենտներից, անհրաժեշտ է նկատի առնել նաև խաղի ծավալումը և յերեխաների վարքը խաղի ժամանակ. յեթե խաղը հետաքրքրականորեն է ծավալվում, յեթե յերեխաներն ուրախ և առույգ են, ապա նյութը մնում է խմբի մեջ ավելի յերկար ժամանակ, իսկ յեթե յերեխաների գործողությունները աննպատակահարմար են դառնում, ապա նյութը պետք է իսկույն վերացնել։

ՇՐՋԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԽԱՂԻ ՀԱՄԱՐ

Խաղարանի համար պետք է ընտրել ամենաընդարձակ և լուսավոր սենյակը։ Այնտեղ, վորտեղ խաղարանը փոքր է, անհրաժեշտ է խաղի ժամանակամիջոցում այնպես դասավորել կահկարասին, վոր յերեխաների խաղալու տեղն ըստ հնարավորության

ընդարձակ լինի։ Վորպեսզի յերեխաները կարողանան փոքր խմբերով խաղալ, անհրաժեշտ է համապատասխան կերպով տեղադրել կահկարասին, առանձին անկյուններ սարքելով։

ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀՈՒ ՎԱՐՔԸ ԽԱՂԻ ԺԱՄԱՆԱԿ

Դաստիարակչուհին ակտիվ կերպով միջամտում է խաղին այն դեպքերում, յերբ յերեխաներն սկսում են կենցաղի բացասական կողմեր արտահայտել (արբեցողություն, հայհոյանք, ծեծ), յերբ խաղը չափազանց միակերպ է ու տաղտկալի, յերբ յերեխաներն աննպատակահարմար կերպով են ոգտագործում նյութը, նետում են հատակի վրա, կոտրում են այն. այս դեպքերում դաստիարակչուհին փոխում է խաղանյութը կամ նույն նյութի ավելի բարդ կոմբինացիաներ է ցույց տալիս։

Դաստիարակչուհին չպետք է թույլ տա, վոր յերեխաներին չափից դուրս շատ խաղալիքներ տան։ Յերեխաները պետք է այնքան խաղալիքներ ստանան, վորքան անհրաժեշտ է նրանց՝ տվյալ պրոցեսի համար։ Խաղանյութը պետք է յերեխաների աչքի առաջ գտնվի միայն խաղի ժամանակ. յերեխաներին լավ ծանոթ խաղալիքների մի մասը պետք է թողնել խաղարանում, ցածր կողապահարանիկներում կամ բազմոցներում, վորպեսզի յերեխաներն իրենք կարողանան վերցնել այն խաղալու համար։

ԽԱՂԱՆՅՈՒԹԸ ՊԱՀԵԼԸ

Խաղանյութի մեծ մասը պետք է պահվի առանձին սենյակում՝ խաղարանից վոչ հեռու։ Բացի դրանից, յուրաքանչյուր խմբի խաղարանում, հատուկ պահարանում պետք է պահվի այն նյութը, վորն ոգտագործում է միայն տվյալ խումբը։ Խաղալիքները պետք է պահվեն պահարաններում որինակելի վիճակում։ Յուրաքանչյուր կոմպլեկտ պետք է ունենա իր վորոշ տեղը։

Ժամանակ առ ժամանակ խաղալիքները պետք է ստուգել և կարգի բերել (նորոգել)։

ԽԱՂԻ ՌԵԺԻՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՄՍՈՒՐՈՒՄ

Խաղի ռեժիմը կազմվում է հիգիենիկ ռեժիմի համաձայն, ըստ վորում նկատի յեն առնվում յուրաքանչյուր խմբի յերեխաների տարիքային առանձնահատկությունները։

Խաղանյութը և կազմակերպված պարապմունքները բաշխելիս (օրվա ընթացքում) անհրաժեշտ է նախ՝ նկատի առնել յերեխաների քնի և կերակրման ժամանակը, վորովհետև քունը և կերակրումը վճռական ազդեցություն են ունենում յերեխայի վիճակի և տրամադրության վրա, և յերկրորդ, նկատի առնել յերեխաների վիճակի և վարքի մեջ յեղած տարբերությունն առավոտյան և յերեկոյան ժամերին։ Ուստի և յերեխաներին լավ ծանոթ խաղերը, վորոնք նրանց ուշադրության լարում չեն առաջացնում, պետք է անցկացնել մինչև կերակրվելը և քնելը։

Ընդհակառակը, յերեխայի օրգանիզմի լարում պահանջող խաղերը պետք է տեղի ունենան քնելուց մի քանի րոպե հետո։

Յերեխաների քունն անցկացնելուց հետո պետք է նրանց տալ համեմատաբար ծանր խաղալիքներ՝ մկանները վարժեցնելու համար։ Վորքան ավելի շատ ժամանակ է անցել յերեխաների քնից և կերակրելուց հետո, այնքան ավելի թեթև նյութ է տրվում յերեխաներին։

Կազմակերպված պարապմունքները բաշխելիս նմանապես անհրաժեշտ է հաշվի առնել յերեխաների քնի և կերակրման ժամանակը. քնելու ժամանակ էներգիա յե կուտակվում. ուստի և քնից հետո յերեխան ընդունակ է կենտրոնացած կերպով աշխատել. նույնը վերաբերում է և կերակրմանը։

Կերակրելուց հետո այն խմբերում, վորտեղ յերեխաներին չեն պառկեցնում քնելու, նրանք պետք է կարճ ժամանակով ստանան թեթև խաղալիքներ՝ սեղանի շուրջը կուտակված էներգիան պարպելու համար. այնուհետև խաղերը փոխարինվում են կազմակերպված պարապմունքներով կամ այնպիսի նյութով, վորը հանգիստ շարժումներ է պահանջում։

Ճաշից առաջ, յեթե յերեխաները զբոսանքից են վերադարձել, պետք է նրանց տալ բոլորովին հանգիստ խաղ կամ պարապմունք տալ։

Անհրաժեշտ է նկատի առնել այն տարբերությունը, վոր լինում է յերեխաների վարքի մեջ առավոտյան և յերեկոյան

ժամերին։ Յերեկոյան յերեխաների մեջ նկատվում է ստեղծագործական ակտիվության անկում, նյութի անկանոն և ստերեոտիպ օգտագործում։ Հոգնածության հետևանքով յերեկոյան սաստկանում է յերեխաների գրգռունակությունը, հաճախակի վեճեր ու կռիվներ են տեղի ունենում նրանց մեջ. յերբեմն հոգնածությունն արտահայտվում է թուլության, ալարկոտության և լալկանության ձևով։ Յերեկոյան յերեխաների մեջ նկատվում է մեծ ցանկություն մոտենալ մեծերին (չափահասներին). յերեկոյան յերեխաները ձգտում են ավելի սերտ շփում ունենալ մեծերի հետ։ Նրանք սկսում են օգնություն սպասել չափահասներից այն բոլոր դեպքերում, յերբ իրենք դժվարին կացության մեջ են լինում։

Յերեկոյան ժամերը կազմակերպելու համար անհրաժեշտ է յերեխաների համար ստեղծել այնպիսի հնարավորություն, վոր նրանք կարողանան խաղալ փոքր խմբերով. ուժեղացնել լուսավորությունը խաղարանում. յերեկոյան պարապմունքների համար անկյուն սարքել. յերեխաների սեղանների վրա սեղանի լամպ դնել. խաղալու համար նրանց ավելի պարզ նյութ տալ։ Դաստիարակչուհին ինքը պետք է պարապմունքներ անցկացնի կամ աշխատի, ըստ վորում յերեխաներն այդ ժամանակ միայն դիտում են։

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ՄՍՈՒՐԻ ՍԵՆՅԱԿՆԵՐԸ ԳԵՂԱՐՎԵՍՏՈՐԵՆ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մանկական սենյակները նկարներով, պաննոյով, վարագույրներով գեղարվեստորեն ձևավորելը վաղ հասակի յերեխաներին դաստիարակելու կարևոր միջոցներից մեկն է։

Գեղարվեստական ձևավորման նպատակն է՝ յերեխաների մեջ էսթետիկ զգացում զարգացնել, ամրացնել այն տպավորությունները ու փորձը, վոր յերեխաներն ստացել են շրջապատող միջավայրից, ընդլայնել յերեխաների մտահորիզոնը, զարգացնել նրանց մեջ խոսելու ակտիվություն, բարձրացնել յերեխաների հուզական (էմոցիոնալ) տոնուսը։

Մանկական սենյակների գեղարվեստական ձևավորման հիմքում պետք է դնել հետևյալ սկզբունքները.

1. Նկարների բովանդակությունը և նրանց փոխումը պետք է կապակցվի տվյալ խմբի մանկավարժական աշխատանքի ամբողջ պլանի հետ։

2. Սեզոնային բնույթ ունեցող նկարները պետք է փոխել յուրաքանչյուր 3—4 ամիսը մեկ անգամ։ Այն նկարները, վորոնք գեղարվեստական տեսակետից լավ են նկարված, կարող են տեղում մնալ շարունակ։

3. Սենյակները չպետք է ծանրաբեռնել խիստ շատ նկարներով (յուրաքանչյուր պատի վրա մեկ-յերկու նկար)։

4. Նկարների բովանդակությունը պետք է համապատասխանե յերեխաների կարիքին։

ՆԿԱՐՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ծծկերների խումբ։ Յերկրաչափական գունավոր ֆիգուրաներ կամ դեկորատիվ բնույթ կրող այլ նկարներ. առանձին առարկաներ պատկերող նկարներ։

Սողացող յերեխաների խումբ։ Դեկորատիվ բնույթի նկարներ, ինչպես նաև առանձին կենդանիներ, յերեխաներ և այլ առարկաներ պատկերող նկարներ։

Միջին տարիքի խումբ։ Առանձին առարկաներ, կենդանիներ (գործողության մեջ) պատկերող նկարներ, փոխադրական միջոցներ (ավտոմոբիլ, տրամվայ, գնացք), խաղեր և սպորտային պարապմունքներ, ինչպես նաև չափահասների աշխատանքը պատկերող նկարներ։

Մեծերի խումբ։ Յերեխաների և չափահասների աշխատանքը, ժամանակակից տեխնիկայի առարկաներ պատկերող նկարներ, յերեխաներին ծանոթ հասարակական մոմենտներ (որինակ՝ տոնակատարություններ, ցույցեր, պիոներներ) պատկերող նկարներ։

Պատուհանների վարագույրների վրա չպետք է լինի վորևէ սյուժե. բաց գույնի ֆոնի վրա պետք է տալ վառ գունեղ յերկրաչափական ֆիգուրաներ, որնամենտներ. վարագույրների ձևավորումը պետք է բացառապես դեկորատիվ բնույթ կրի։

Նկարներ պատրաստելու համար պետք է ոգտագործել վաճառվող պլակատներ, ժուռնալներ, գեղարվեստական բացիկներ, դրանցից անհրաժեշտ նյութեր կտրելով և վորոշ բովանդակության նկար կազմելով։ Բացի այս յեղանակով անձնակազմի միջոցով պատրաստված նկարներից, մսուրը պետք է ձեռք բերի նաև գեղարվեստական տեսակետից լավ կատարված նկարներ։

Մանկական սենյակները պետք է զարդարվեն ծաղիկներով, վորոնք պետք է դնել պատուհաններում, սեղանների վրա և հատուկ դրոցների վրա։

Մանկական սենյակները կարելի յե զարդարել քանդակագործական զարդերով (կարմիր բանակայինի, բանվորի, պիոների ֆիգուրաներ, կենդանիների պատկերումներ)։

ՊՐՈԵԿՑԻՈՆ ԼԱՊՏԵՐ

Պրոեկցիոն լապտերի լուսապատկերները միջոց են ամրացնելու այն տպավորությունները, վոր յերեխաներն ստանում են շրջապատող միջավայրից։ Այդ լուսապատկերների շնորհիվ յերեխաները նոր տպավորություններ են ստանում։ Լուսապատկերներ կարելի յե ցույց տալ մեծերի և միջին տարիքի յերեխաների խմբերում։ Լուսապատկերների ցուցադրումը պետք է մտցնել խմբերի խաղի ռեժիմի մեջ։

Պատկերների բովանդակությունը հետևյալն է. յերեխաների խաղը և աշխատանքը, չափահասների աշխատանքային գործունեությունը, կենդանիների կյանքը։

Մեծ խմբերում ցուցադրվող լուսապատկերների թիվը 6-ից ավելի չպետք է լինի, միջին տարիքի յերեխաների խմբերի համար—4-ից վոչ ավելի մեկ սեանսում։ Միևնույն պատկերը կարելի յե ցույց տալ յերկու անգամ։

Այն մսուրներում, վորոնք աշխատում են ավելի յերկարատև ժամանակամիջոցում, ինչպես և գիշեր-ցերեկ աշխատող մսուրներում և մանկիկի տներում ավելի լավ է լուսապատկերներ ցուցադրել կեսորյակից հետո։

Պատկերների ցուցադրման տևողությունը մեծ խմբերում—մոտավորապես 15 րոպե, միջին տարիքի խմբերում—10 րոպե։

Այն մոմենտին, յերբ յերեխաներին պետք է պատկերներ ցուցադրել, լապտերը պետք է սարքին և պատրաստ լինի (լապտերը յերեխաների ներկայությամբ սարքի գցելը դրգռում և հոգնեցնում է յերեխաներին)։

Առաջին անգամ լապտեր ցուցադրելիս պետք է յերեխաներին նախապատրաստել առաջիկա ցուցադրման համար. պետք է յերեխաներին ցույց տալ լապտերը, նկարները, բացատրել, թե ինչպես այդ նկարները դրվում են լապտերի մեջ, նրանց ուշադրությունը դարձնել պատի վրայի լուսաբոլորակի վրա։ Այդ

անհրաժեշտ է անել նրա համար, որ որոշ յերեխաներ հանկարծ ընկնելով մութ սենյակ վախենում են։ Հետագայում, յերբ յերեխաների համար նորից լուսապատկերներ են ցուցադրվելու, վերոհիշյալ բոլոր նախապատրաստական աշխատանքները կարելի յե կատարել յերեխաների ներկայությամբ, այն է՝ պատուհանները վարագույրով ծածկելը, աթոռները տեղադրելը և այլն։

Թույլ և ջղային յերեխաներին պետք է նստեցնել չափահասների կողքին։ Յերեխաներին հանգստացնելու և նրանց ուշադրությունը լուսաբոլորակի վրա կենտրոնացնելուց հետո դաստիարակչուհին ասում է. «հիմա դուք պատի վրա պատկեր կտեսնեք»․ հետո դաստիարակչուհին դիապոզիտիվը դնում է ապարատի մեջ և, վոչինչ չասելով յերեխաներին, հնարավորություն է տալիս դիտել պատկերը և ցուցաբերել իրենց ակտիվությունը։

Յերեխաները սովորաբար իսկույն ևեթ սկսում են խոսել, մոտենում են պատկերին և շոշափում են։

Յեթե յերեխաները խոսելու մեջ բավականաչափ ակտիվ չեն, պետք է դաստիարակչուհին դրդի նրանց խոսել՝ զանազան հարցեր տալու միջոցով։

Պետք է նմանապես ձգտել, վոր լուսական պատկերների ցուցադրումը՝ բացի տպավորություններ ստանալուց՝ նպաստի նաև յերեխաների խոսելու ընդունակության զարգացմանը։

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ՍՏՎԵՐՆԵՐԻ ԹԱՏՐՈՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ստվերների թատրոնը վաղ հասակի յերեխաների գեղարվեստական դաստիարակության ձևերից մեկն է։ Այդպիսի թատրոն կազմակերպելու համար անհրաժեշտ է ունենալ վարագույր, լույսի աղբյուր և մի շարք պիտույքներ։

Վարագույրը պետք է բաղկացած լինի սպիտակ քաթանից՝ եկրանից, մոտավորապես յերկու և կես մետր լայնությամբ, և կողմնային մութ մասերից, վորոնք յուրահատուկ կուլիսներ են հանդիսանում։ Վարագույրը պատրաստվում է սենյակի ամբողջ լայնությամբ և պետք է հասնի հատակին այն նկատառումով, վոր յերեխաները հնարավորություն չունենան նրա տակից նայել։

Վորպեսզի հատակի և վարագույրի միջև լուսանցք չմնա,

պետք է վարագույրից ծանրություն կախել, վորպեսզի փոթեր և ծալքեր չառաջանան, անհրաժեշտ է վարագույրը լավ ձգել, վորովհետև այլապես ստվերը կարող է աղճատվել։ Ներքևից եկրանին կոճակներով ամրացնում են վորևէ մուգ գույնի գործվածքի զոլակ, ըստ վորում եկրանի վրա ողեր են շինվում, իսկ մուգ գույնի վրա՝ կոճակներ։ Այդ զոլակի յերկարությունը մոտավորապես հավասար է լինում 60—70 սմ, վորպեսզի գործողությունները ցուցադրելիս ցուցադրելի առարկայի ստորին մասը չերևա։

Վարագույրը կախում են լույսի աղբյուրից մոտավորապես 2 և կես մետր հեռավորության վրա։ Վորպես լույսի աղբյուր կարող է ծառայել ելեկտրական լամպը կամ սովորական նավթի լամպը։ Լույսի ուժը պետք է լինի 60 մոմից վոչ պակաս, հակառակ դեպքում ստվերները դժգույն և վոչ բավականաչափ ռելյեֆ կլինեն։

Լամպն ամրացվում է եկրանի կենտրոնի դիմաց։ Գործողության ժամանակ սենյակում պետք է մութ լինի։

Դիտելու դահլիճի համար հատկացված սենյակամասում շարքերով դասավորում են աթոռները, ինչպես թատրոնում, ըստ վորում առաջին շարքը պետք է եկրանից մեկ և կես մետր հեռու լինի։

ԻՆՉ ՊԵՏՔ Է ՑՈՒՅՑ ՏԱԼ ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ

Ա շ խ ա տ ա ն ք ա յ ի ն պ ր ո ց ե ս ն ե ր։ Սպիտակեղեն լվանալը, փայտ կտրելը։ Դռնապանի աշխատանքը ձմռան ամիսներին (ավլում է, ձյուն է քերում), ամառվա ամիսներին (բակը սրբում է, ջրում է)։ Բնության վորևէ անկյունը խնամելը։ Մեծ տիկնիկ լողացնելը։

Կ ե ն ց ա ղ ա յ ի ն տ ե ս ա ր ա ն ն ե ր։ Ուտելու նախապատրաստություն, ուտելը, յերկու մասնակցող անձանց խոսակցություն։ Դահուկներով սահելը, դահուկավորների զրույց։

Կ ե ն դ ա ն ի ն ե ր։ Կենդանիների շարժումն ու կերակրումը (հավի, աքաղաղի, շան, կատվի, ճագարի), կարտոնից կամ ֆաներից կտրած կենդանիներ (նրանց հետ պետք է կատարել նույն գործողությունները, ինչ վոր կենդանիների հետ)։

Հ ա ս ա ր ա կ ա կ ա ն կ յ ա ն ք ի մ ո մ ե ն տ ն ե ր։ Կարմիր բանակ (կարմիր բանակայինների քայլելը, զբոսանք ձիերով, սավառնակներ)։ Պիոներներ (պիոներների յերթը թմբուկի

նվագակցությամբ և դրոշակներով, ֆիզկուլտ մարզանքներ՝ շրջում ավտոմոբիլով)։ Ցույց դրոշակներով։

Խաղեր և ռիթմիկ շարժումներ։ Գնդակախաղ՝ յերգելով։ Խաղ ողեկապերով՝ յերգելով։ Տիկնիկների սահումը լեռնակից՝ ձմռան պահին. տիկնիկների իջնելը՝ լեռնակից՝ սայլակներով, ամառվա պահին։ Զբոսանք ձիերով՝ յերգելով.

Զբոսանք ավտոմոբիլով՝ յերգելով։

Ստվերների թատրոն անցկացնելու մեթոդիկան։ Ներկայացման համար անհրաժեշտ բոլոր պիտույքները պետք է պատրաստվեն նախորոք, վորովհետև ներկայացման ժամանակ հարկավոր առարկաները վորոնելը ձգձգում է ներկայացումը և հաճախ վիժեցնում է գործողությունը։

Յերեխաներին պետք է սենյակ բերել այն ժամանակ, յերբ ամեն ինչ պատրաստ է ներկայացման համար։ Յերեխաներին սենյակում տեղավորելիս պետք է լույս լինի։ Հենց վոր յերեխաները նստում են, պետք է ներկայացումն սկսել։ Չի կարելի յերեխաների ներկայությամբ իրեր տանել եկրանի յետևը։ Ներկայացումը տաս րոպեյից ավելի չպետք է տևի։ Ներկայացումը պետք է բաղկացած լինի յերեք մասից.

1. աշխատանք կամ կենցաղային տեսարան.

2. կենդանիներ (իսկական կամ փաներից, կարտոնից շինված).

3. խաղեր (զբոսանք ձիով, գնդակախաղ և այլն)։

Ներկայացումը վերջանալուց հետո եկրանի յետևի լույսը հանգցնում են, սենյակը լուսավորվում է, և յերեխաներին տանում են իրենց խմբերը։

ՈՐԻՆԱԿԵԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

1. Դռնապանը սրբում է բակը կամ ջրում ծաղիկները։ Յերևում է ճագարը (կարտոնից շինված) և սկսում է խոտ ուտել, դռնապանը ճագարի վրա ջուր է լցնում և փախցնում նրան։

2. Յերկու չափահասներ գնդակ են խաղում, յերգելով։ Այն դեպքերում, յերբ գործողությանը յերաժշտություն կամ յերգ չի ընթացակցում, գործող անձինք պետք է խոսեն։ Համր տեսարաններ չպետք է լինեն։

ՄԱՍՆԱԿՑՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԸ

Մասնակցողը պետք է շարժվի եկրանի յերկարությամբ պրոֆիլով (կիսադեմ) և գրեթե կպած լինի եկրանին։ Գործողության ժամանակ մասնակցողը չպետք է յերևա. նա անցնում է եկրանի յետևը՝ հեռու. բեմի խորքը չպետք է գնալ, վորովհետև այդ դեպքում մնում է մութ, ճապաղ և անբնական մեծության ստվեր։

Յեթե մասնակցողը պետք է անցնի կուլիսների մյուս կողմը, ապա նա պետք է անցնի լույսի աղբյուրի յետևով, կամ անմիջապես նրա տակով. այդ դեպքում եկրանի վրա ստվերը չի յերևա։

Այն դեպքերում, յերբ յերեք-չորս մասնակցողից պետք է եկրանի վրա անընդհատ յերթի տպավորություն ստեղծել, վարվում են հետևյալ կերպ. եկրանի յերկարությամբ մասնակցողները գնում են նորմալ և նույնիսկ քիչ դանդաղեցրած քայլով, իսկ եկրանն անցնելով, լամպի տակով անցնում են մյուս կողմն այն հաշվով, վոր կուլիսների յետևում լինեն այն մոմենտին, յերբ մասնակցողներից վերջինը յերևում է եկրանի վրա։ Մասնակցողը չպետք է մոռանա, վոր նա պետք է ամբողջովին յերևա եկրանի վրա։

Մասնակցողի դիրքը պետք է լինի միայն պրոֆիլով, շարժումները պետք է լինեն պարզ ու վորոշ, յուրաքանչյուր ձեռքը պետք է պարզ յերևա և չծածկի մյուսը։

Ներկայացման համար անհրաժեշտ բոլոր առարկաները պետք է ցուցադրել այնպես, վոր նրանք եկրանի վրա յերևան ռելյեֆ կերպով, վոր պարզ յերևան նրանց բոլոր սպեցիֆիկ մասերը, որինակ՝ ծաղիկներ ջրելիս՝ ցնցուղը ցուցադրելու ժամանակ պետք է ցնցուղին այնպիսի դիրք տալ, վոր եկրանի վրա յերևա և՛ նրա քիթը, և՛ բռնակը։ Բոլոր առարկաները, ինչպես և մարդիկ պետք է շարժվեն եկրանի յերկայնությամբ՝ նրան կպած։

Առանձին զգուշությամբ պետք է ոգտագործել ծավալային առարկաները, որինակ՝ սեղանը, աթոռը։ Անհրաժեշտ է նախապես ստուգել այդ առարկաներն եկրանի վրա և դնել այնպես, վոր նրանք իրենց ձևը չփոխեն։

Այն իրերը, վորոնք եկրանի վրա պարզ չեն յերևում, չպետք է մտնեն ներկայացման մեջ (ծավալային իրն առաջացնում է հավելական, կողմնային, յետևի ստվերներ և առարկան անբնական է դարձնում)։

էկրանի վրա ամենից ավելի լավ ստացվում են տափակ իրերը։ Ուստի և յերբ ատրիբուտներ են պատրաստվում հատկապես թատրոնի համար, այդպիսիք պետք է լինեն տափակ, որինակ՝ ձմեռային սյուժեների համար օգտագործվող տոնածառը պետք է կտրել կարտոնից կամ ֆաներից և ամրացնել փայտե խաչի վրա։ Կենդանիներ պետք է կտրել բարակ կարտոնից, վորը շարժվելով՝ բնական շարժումների իլյուզիա չի ստեղծում. ավտոմոբիլը պատրաստվում է ֆաներից։ Այսպիսի առարկաներ ցուցադրելիս անհրաժեշտ է էկրանի ստորին մասը ծածկել մուգ գոլակով, վորը հնարավորություն է տալիս ձի ցուցադրել առանց վոտքերի և ավտոմոբիլ՝ առանց անիվների։ Մասնակցողը ձի հեծած կամ ավտոմոբիլ նստած մարդու դիրք ընդունելով՝ շարժվում է էկրանի յերկարությամբ, բռնելով այն ձողիկից, վորն ամրացված է առարկաների յետևի կողմից։

Այն կենդանիները, վորոնք պետք է բեմի վրա ինքնուրույնաբար գործեն, պատրաստվում են հետևյալ կերպ. կարտոնից կտրում են կենդանու ստվերագիծը (սիլուետ), վորի յետևի պատին ամրացվում է մի այնպիսի ձողիկ, վոր կենդանու շարժումը ղեկավարող անձնավորությունը կարողանա նստել լույսի աղբյուրի տակ, առանց էկրանի վրա ստվեր ձգելու։

Վորպեսզի յետևի շարքերում նստած յերեխաները լավ տեսնեն, անհրաժեշտ է էկրանի յերկարությամբ մանկական նստարաններ դնել, էկրանի ստորին մասը ծածկել լրացուցիչ գոլակով և կենդանուն տեղավորել սեղանի վրա։ Նույնը պետք է անել և այն դեպքերում, յերբ վողջ կենդանիներ են ցուցադրվում։

Յերեխաների վրա մեծ տպավորություն է գործում գահավիժող ջրի աղմուկը և ջրի վիժակը։ Ուստի և յերբ գործողության ժամանակ անհրաժեշտ է ջուր ցուցադրել, ապա պետք է ջուրը լցնել շատ բարձր տեղից։

Տիկնիկների համար գործածվող լեռնակը պատրաստվում է տաբուրետից, վորին պետք է ամրացնել յերկու ֆաներաթերթ այնպես, վոր յերկու կողմից թեքություն ստացվի. տաբուրետի մեջ յեղած բոլոր լուսանցքները պետք է կարծր նյութով փակել։ Նախքան յերեխաներին տիկնիկների զբոսանք ցուցադրելը, պետք է ստուգել, թե ինչպես են սայլակներն իջնում լեռնակից, վորովհետև չափազանց արագ կամ, ընդհակառակը, չափազանց դանդաղ վայրեջքը համապատասխան տպավորություն չի ստեղծում։

Ձմրան լեռնակ պատկերելու համար պետք է լեռնակի առջևի մասում բամբակ դնել, վորը ձյան տպավորություն է ստեղծում։

Յերեխաներին ձմրան վառ պատկեր տալու համար սահնակով զբոսնելու ժամանակ պետք է տեղացող ձյուն պատկերել։ Էկրանի յերկու կողմից՝ նրա մթագնված մասում տեղավորվում են յերկու մասնակցողներ, վորոնք նախապես պատրաստելով մանր կտրատած պապիրոսի թուղթ, բարձր տեղից փչում են այն դեպի բեմը։ Այս դեպքում անհրաժեշտ է հետևել, վոր էկրանի վրա չերևա թուղթը փչող մարդու ձեռքը կամ գլուխը։

ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԼԱՆԸ ՄՍՈՒՐՆԵՐՈՒՄ

Մսուրում տոնակատարություն անցկացնելու նպատակը յերեխաներին չափահասների տոնական տրամադրությանը հաղորդակից անելն է։ Մսուրներում պետք է անցկացնել մայիսի 1-ի, Հոկտեմբերյան հեղափոխության տարեդարձի տոնակատարությունը և տոնածառ սարքել յերեխաների համար։

Տոնակատարության անցկացման հետ կապված աշխատանքը բաղկացած է յերեք մոմենտից.

1. տոնակատարության նախապատրաստում.
2. տոնակատարության անցկացում.
3. տոնակատարության տպավորությունների ամրացում։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄԵԹՈԴԸ

Մեծ խմբերի հետ տոնակատարության նախապատրաստական աշխատանքները պետք է սկսել տոնակատարությունից յերեք որ առաջ, միջին տարիքի յերեխաների խմբերի հետ՝ մեկ որ առաջ։ Զբոսանքի ժամանակ պետք է յերեխաների ուշադրությունը դարձնել տոնակատարության նախապատրաստական այն աշխատանքների վրա, վորոնք կատարվում են փողոցում, գործարանի բակում, և այլն։ Զբոսանքի տեղը պետք է վորոշվի նախորոք։

Հետո պետք է յերեխաների հետ սկսել շենքը զարդարելու նախապատրաստական աշխատանքները։ Աշխատանքի ժամանակ դաստիարակչուհին զրույց է անում յերեխաների հետ այն մասին, թե ինչպես պետք է շենքը զարդարել։

Յերեխաների մասնակցությունը զարդարանքներ պատրաստելու աշխատանքներին կայանում է նրանում, վոր յերեխա-

ները գլխում են չափահասների աշխատանքը (դրոշակներ, փողկապներ պատրաստելը, պլակատներ նկարելը) և իրենց ուժերի համեմատ մասնակցում են այդ աշխատանքներին (նյութեր են տանում, բերում):

Տոնակատարության նախորյակին տեղի է ունենում շենքի զարդարումը: Զարդարվում են խաղարանները, միջանցքները և ընդունարանները (ննջարանները չպետք է զարդարել): Կախ են տալիս դրոշակներ, կարմիր աստղիկներ, ծառի ճյուղեր, ծաղիկներ, նկարներ, պլակատներ (հեղափոխական տոնը պատկերող), Լենինի և Ստալինի նկարները, լապտերիկներ, ոդապարիկներ:

Յերեխաների ներկայությամբ զարդարվում և ձևավորվում է վոչ ամբողջ սենյակը: Ձևավորման համար ոգտագործվող նյութի մի մասը պետք է ներս բերել յերեխաների հեռանալուց հետո, վորպեսզի տոնակատարության օրը նրանց համար անսպասելի լինի: Դրանով յերեխաների մեջ խոր էմոցիոնալ տրամադրություն է առաջանում:

ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

Տոնակատարության օրը (վոր անց է կացվում ընդհանուր տոնակատարության հաջորդ կամ յերրորդ օրը) յերեխաներին ցերեկվա քնից հետո նոր զգեստներ են հագցնում, նշաններ կպցնում, փողկապներ կապում:

Տոնակատարությունն անց է կացվում յերեկոյան պահին: Տոնի հանդիսավոր մասը պետք է այնպես կառուցվի, վոր այդ մասում յերեխաների համար հետաքրքիր տեսարան լինի:

Կարող են լինել հետևյալ տեսարանները. տիկնիկի թատրոն, ստվերների թատրոն, պրոյեկցիական լապտերի լուսապատկերներ:

Բեմադրությունից հետո յերեխաների համար իրենց մասնակցությամբ կազմակերպվում է յերթ, յերգ, պար և խաղ:

Հանդիսավոր մասում մեծ և միջին տարիքի խմբերը միացվում են:

Տոնակատարության հանդիսավոր մասի տևողությունը պետք է լինի 25 րոպե:

Տոնակատարությունից հետո յերեխաների համար թեյ է կազմակերպվում:

ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՑՈՒՄԸ

Տոնակատարության հետ կապված ձևավորումն ու զարդարանքները մնում են իրենց տեղում 3—4 որից վոչ ավելի: Այդ որերը յերեխաներին խաղալու համար տրվում են դրոշակներ և այլ նյութեր, վորոնք գործածության մեջ են յեղել տոնակատարության ժամանակ: Զարդարանքները հավաքելիս յերեխաներին մասնակից են անում չափահասների աշխատանքին:

Տոնակատարությունը կազմակերպելիս (յերեխաների համար) չափահասների կոլեկտիվը պետք է նախորոք մշակի տոնակատարության ծրագիրը և տոնակատարության առանձին մասերի անցկացման մեթոդիկան: Բացի դրանից, պետք է մշակվեն և վորոշակի բաշխվեն հիմնարկի յուրաքանչյուր աշխատակցի պարտականությունները, վոր նրանք կատարելու յեն տոնակատարության ժամանակ:

Պաշտոն ______ ______________________

Ազգանուն, անուն, հայրանուն ______________________

Կարգադրությամբ ______________________

______________________ խանութում առանց հաշվի

գնել եմ ______ ______________________ հետևյալը

Անուններ	Քանակ	Քաշ	Գինը	Գումար	
				ռ.	կ.

Ընդամենը ______________________

Ընդամենը վճարված ե (գումարը տառերով) ______________________

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«______» ______________________ 193 թ.

Ա Կ Տ

Գույքա-նյութական արժեքներ ընդունելու մասին

«______» ______________________ 193 թ.

Սրա հակառակ յերեսում հիշված առարկաներն ըստ արտաքին զննության պատշաճ վորակի յեն և քանակով—քաշով իրոք համապատասխանում են վավերաթղթի մեջ նշվածին, վորը և մեր ստորագրություններով հաստատում ենք։

Ստորագրություններ 1) ______________________

2) ______________________

Հասարակայնության ներկայացուցիչ ______________________

Պատասխանատվությամբ՝ պահելու համար ______________________

______________________ բաժինն ե ընդունված։

Ստորագրություն ______________________

«______» ______________________ 193 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ԱՌԱՋԱԲԱՆ 3

ՄՍՈՒՐՆԵՐԻ ՇԵՆՔԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄԸ ՅԵՎ ՀԱՍՏԻՔՆԵՐԸ

Մսուրների կառուցման հիմնական կանոնները 5
Առանձին շենքերի մեծությունը և փոխադարձ կապը . . 6
Սանիտարական նորմաներ Մոսկվայի մարզի արտադրական ձեռնարկությունների և խորհտնտեսությունների կից հարմարեցվող շենքերում գտնվող մանկամսուրների համար 9
Մշտական տիպի մսուրների համար կոշտ և փափուկ գույքի նորմաներ 14
Կոշտ կահույքի նորմաները մեկ մսուրային մահճակալի համար 17
Ցերեկային սպիտակեղենի նորմաներ արդյունաբերական մսուրներում 17
Մոսկվայի մարզի արդյունաբերական ձեռնարկներին կից մսուրներ սպասարկող անձնակազմի օրինակելի հաստիք 19

ԲՈՒԺ. ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ՄՍՈՒՐՆԵՐՈՒՄ

Հրահանգ մսուրի բժշկի պարտականությունների մասին . 25
Կանոնադրություն մսուրային քույրերի աշխատանքի մասին 29
Կանոնադրություն մսուրների դայակների աշխատանքների մասին 30
Պատրոնաժ քույրերի պարտականությունները 31
Հրահանգ մսուրի քույր-հրահանգչի իրավունքների և պարտականությունների մասին (ավագ քույր) 33
Մսուրի վարիչի իրավունքները և պարտականությունները (առանց բժշկական կրթության) 35
Մսուրի յերեխաներին ցույց տրվող բժշկական օգնության ձևերը 36

Ոգնություն մսուրում 37
Ոգնություն տանը 37
Մասնագիտական ոգնություն կոնսուլտացիայի կողմից . 38
Հիվանդանոցային ոգնություն 38
Հրահանգ մեկուսարան-ստացիոնարի աշխատանքի մասին 39

ՊԱՅՔԱՐ ՄՍՈՒՐՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

Երեխաների ընդունելության կանոնները 41
Երեխաների սպասարկման կանոնները 43

ՀՐԱՀԱՆԳ ՄՍՈՒՐՆԵՐՈՒՄ ՄԱՇԿԻ ՅԵՎ ԱՉՔԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունելության կանոնները 45
Ընդհանուր պրոֆիլակտիկական միջոցներ և պայքար մաշկի հիվանդությունների դեմ 45
Պայքար աչքի հիվանդությունների դեմ 47
Հրահանգ Պիրկեյի ռեակցիան կատարելու և այն գնահատելու մասին 49
Հրահանգ տուբերկուլինի ներմաշկային փորձ կատարելու և գնահատելու (Մանտուի ռեակցիա) մասին 52

ՊԱՅՔԱՐ ՎԱՐԱԿԻ ԴԵՄ ՄՍՈՒՐՆԵՐՈՒՄ

ՀՐԱՀԱՆԳ ՄՍՈՒՐ ՄՈՒՏՔ ԳՈՐԾՈՂ ՄԱՆԿԱԿԱՆ ՎԱՐԱԿԸ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼՈՒ ՅԵՎ ՆՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդհանուր մաս 57
Կանոններ մսուրում առանձին վարակների դեմ պայքարելու մասին 60
Կարմրուկ 60
Քութեշ 62
Դիֆտերիա 63
Ջրծաղիկ 64
Խոզուկ 65
Կարմրատապ 66
Կապույտ հազ 66
Բնական ծաղիկ 67

Համաճարակային ցերեբրոսպինալ (գանգուղեղա-ողնուղեղային մենինգիտ) 68
Գրիպ 68
Հրահանգ մսուրներում հակակարմրուկային պատվաստումներ կատարելու մասին 69
Հրահանգ գյուղական պայմաններում հակակարմրուկային շիճուկ պատրաստելու համար արյուն վերցնելու և այն փոխադրելու մասին 71
Հրահանգ դիֆտերիայի դեմ պատվաստումներ կատարելու մասին 72
Հակացուցումներ պատվաստում կատարելու նկատմամբ 73
Մսուրներում դիֆտերիայի բացիլակրության դեմ պայքարելու միջոցառումների մասին 77
Ակտիվ իմունացում քութեշի դեմ 78
Հակացուցումներ պատվաստումներ կատարելու նկատմամբ 81
Հրահանգ ծաղկի պատվաստում կատարելու մասին . . . 82
Սուր վարակիչ հիվանդների, նրանց հետ շփում ունեցած անձանց և բացիլակիրների ինկուբացիայի և մեկուսացման ժամկետներ 86
Աղյուսակ՝ անցկացրած վարակիչ հիվանդությունները և ավարտված պրոֆիլակտիկ պատվաստումները ցուցակագրելու համար 92

ՊԱՅՔԱՐ ԱՄԱՌԱՅԻՆ ԼՈՒԾԻ ԴԵՄ

Հրահանգ մսուրներում սուր կոլիտ և դիզենտերիա առաջանալիս լաբորատորական հետազոտություններ կատարելու մասին 93
Հրահանգ ամառային լուծի դեմ մսուրներում պրոֆիլակտիկ միջոցներ ձեռնարկելու մասին 94
Մսուրի շենքում և տերիտորիայի սահմաններում սան.-մինիմում կիրառելու հիմնական միջոցառումներ . . 95
Մսուրի շենքը 96
Երեխաների ընդհանուր և անհատ ռեժիմի ճիշտ դրվածքը 96
Երեխայի մաշկի խնամքը 97
Թարմ օդ շնչելը 97
Երեխայի հագուստը 97
Երեխայի սնունդը 98

Հիմնական միջոցառումներ աղիքային հիվանդությունների դեմ պայքարելու մասին 98
Մի քանի հատուկ կազմակերպչական միջոցառումներ . . 101
Մասսայական սան-կուլտ աշխատանք ծնողների մեջ . . 102
Հրահանգ մսուրներում ճանճերի դեմ պայքարելու մասին . 103
Յերեխաների սնունդը մսուրներում 107
Սննդի օրական նորման մեկից մինչև $1^{1}/_{2}$ տարեկան յերեխաների համար 108
Սննդի օրական նորման $1^{1}/_{2}$ մինչև 3 տարեկան յերեխաների համար 109
Աշնան և ձմռան մենյու 1-ից մինչև $1^{1}/_{2}$ տարեկան յերեխաների համար 110
Գարնան և ամռան մենյու 1-ից մինչև $1^{1}/_{2}$ տարեկան յերեխաների համար 110
Գարնան և ամռան մենյու $1^{1}/_{2}$-ից մինչև 3 տարեկան յերեխաների համար 111
Աշնան և ձմռան մենյու $1^{1}/_{2}$-ից մինչև 3 տարեկան յերեխաների համար 112
Հրահանգ խառնուրդներ և ավելասնունդ պատրաստելու համար 113
Հում բանջարեղենից և մրգերից հյութեր պատրաստելու յեղանակը 125
Բանջարեղենից պյուրե պատրաստելու յեղանակը . . . 127
Հրահանգ մսուրներում խոհանոցներ կազմակերպելու մասին 128

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՄՍՈՒՐՆԵՐՈՒՄ

Հրահանգ դուշ սարքելու մասին 132
Հրահանգ մսուրներում դուշից օգտվելու մասին 133
Հրահանգ յերեխաների քունը բացօթյա կազմակերպելու մասին 134
Հրահանգ արևի վաննաներ ընդունելու մասին 136
Հրահանգ օդի վաննաներ ընդունելու մասին 137

ՀՐԱՀԱՆԳ ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՄԱՌԱՆՈՑ ՏԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մսուրի համար ամառանոց ընտրելը 138
Յերեխաներին ամառանոց տանելու պայմանները . . . 140
Ծնողների այցելության կանոնները 141
Հրահանգ ամառանոցում յերեխաների հետ աշխատանքներ անցկացնելու մասին 141

Շենքի նախապատրաստումը և հարմարեցումը 142
Հողամասի նախապատրաստումը 143
Ամառանոց գնալը 144
Օրվա ռեժիմի հարմարեցումը ամառանոցային կյանքի պայմաններին 145
Առաջին օրերն ամառանոցում 146
Բանվորական ուժի բաշխումը 146

ՌԵԺԻՄԻ ԱՌԱՆՁԻՆ ՄՈՄԵՆՏՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կերակրելը 147
Յերեխաների ազատ ժամերի կազմակերպման առանձնահատկությունները 148
Ծնողների այցելությունների կազմակերպումը 149
Աշխատանքների պլանավորումը և հաշվառումը 150
Սխեմա ամառանոցում կատարած մանկավարժական աշխատանքի եֆեկտիվության հաշվառման համար . . 151

ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՄՍՈՒՐԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Կանոնադրություն մարզի շրջանների բազային մսուրների մասին 152
Կանոնադրություն բազային մսուրներին կից շրջանային մեթոդական բյուրոյի աշխատանքների մասին . . 153
Մեթոդական բյուրոյի կազմը 155
Մեթոդական բյուրոյի աշխատանքի կենտրոնական հարցերը 156
Կանոնադրություն յերեխաներին գիշեր-ցերեկ սպասարկող մսուրների մասին 157
Հրահանգ Մոսկվայի մարզի շրջաններում պատրոնատ կիրառելու մասին 159
Տիպային օրինակելի պայմանագիր կոլտնտեսության հետ 163
Առբաժիններին, հողբաժիններին, լուսբաժիններին . . . 167
Հրահանգ գարնանացանի ընթացքում մանկամսուրների աշխատանքի վորակը, յերեխաների խնամքը և դաստիարակչական գործը բարձր աստիճանի վրա հասցնելու մասին 169
Սան-մինիմում մսուրների համար 171

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՄՍՈՒՐՆԵՐՈՒՄ

Խմբերի համալրումը (կոմպլեկտավորումը) մսուրներում 176
Հրահանգ կերակրելու մասին 177
Կերակրման նախորդող ժամանակի կազմակերպումը, ճաշարանի կահավորումը 178
Մանկավարժական աշխատանք կերակրելու ժամանակ . . 179
Հրահանգ յերեխաների քունը կազմակերպելու մասին . . 181
Քնին նախորդող մոմենտների կազմակերպումը 181
Շրջակայություն 181
Մանկավարժական աշխատանք յերեխաներին պառկեցնելիս 182
Հրահանգ յերեխայի հարդարանքը (տուալետ) կիրառելու մասին 183
Հագնվելը և հանվելը 183
Հագնվելու և հանվելու մեթոդիկան 184
Լվացվելու պրոցեսը 185
Աշխատանքի մեթոդիկա 185
Շրջակայություն 186
Աշխատանքի մեթոդիկան 186
Հրահանգ զբոսանք կազմակերպելու մասին 188
Աշխատանքի օրինակելի պլան ամառվա ամիսների համար 190
Յերեխաներին բնության հետ ծանոթացնելը 191
Յերեխաներին չափահասների աշխատանքի հետ ծանոթացնելը 192
Խաղեր և պարապմունքներ 193
Աշխատանքի օրինակելի պլան աշնան և ձմռան ամիսների համար 194
Յերեխաներին բնության հետ ծանոթացնելը 194
Յերեխաներին չափահասների աշխատանքի հետ ծանոթացնելը 195
Խաղեր և պարապմունքներ 197
Զբոսանքներ և եքսկուրսիաներ 197
Մանկավարժական պիտույքների և խաղալիքների ցուցակ 2-ից մինչև 7 ամսական յերեխաների համար . . 197
Մանկավարժական պիտույքների և խաղալիքների ցուցակ 7 ամսականից մինչև 1 տարի 3 ամսական յերեխաների համար 197
Մանկավարժական պիտույքների և խաղալիքների ցուցակ մեկ տարի 3 ամսականից մինչև 2 տարեկան յերեխաների համար 198
Մանկավարժական պիտույքների և խաղալիքների ցուցակ 2-ից մինչև 3 տարեկան յերեխաների համար . . . 199
Հրահանգ խաղեր կազմակերպելու մասին 199
Խաղանյութի բաշխումն ըստ ժամանակի 200
Շրջակայություն խաղի համար 200
Դաստիարակչուհու դերը խաղի ժամանակ 201
Խաղանյութի պահելը 201
Խաղի ռեժիմի կազմակերպման սկզբունքները մսուրում 202
Հրահանգ մսուրի սենյակները գեղարվեստորեն ձևավորելու մասին 203
Նկարների բովանդակությունը 204
Պրոեկցիոն լապտեր 205
Հրահանգ ստվերների թատրոն կազմակերպելու մասին . 206
Ի՞նչ պետք է ցույց տալ յերեխաներին 207
Օրինակելի ներկայացում 208
Մասնակցողների դերը 209
Տոնակատարության անցկացման պլանը մսուրներում . . 211
Աշխատանքի բովանդակությունը և մեթոդը 211
Տոնակատարության անցկացումը 212
Տոնակատարության տպավորությունների ամրացումը . 213
Հավելված 1-ին (գնումների մասին) 214
Հավելված 2-րդ (արձանագրություն գույքանյութական արժեքներ ընդունելու մասին) 215

Թարգմանիչներ՝ Ա. Շաթիրյան և Կ. Հովհաննիսյան
Պատ. խմբագիր՝ Լ. Խարմանդարյան
Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան
Սրբագրիչ՝ Խ. Այվազյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Վ. Ավագյան

Գավլիտի լիազոր № Ղ—3595
Հրատ. 4367, պատվեր 947, տիրաժ 3000
Հանձնված է արտադրության 1937 թ. դեկտեմբերի 2-ին
Ստորագրված է տպագրության 1938 թ. մարտի 17-ին
Թուղթը 62×94, 14 տպ. մամ., հեղին. 10½ մամ., 1 թերթ. 36480 տպ. նիշ
Գինը 2ռ. 20կ.

Պետհրատի 2-րդ տպարան, Երևան, Նալբանդյան 5

ԿԱՐԵՎՈՐ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
6 ներքևից	8	շենքերը	բաժամունքները
108 վերևից	18	10,41, 1,32, 123,58, 560,3	10,50, 1,41, 127,11, 577,2
108 ներքևից	1	36,7 46,25, 143,59, 1170,7	37,17, 46,30, 147,42, 1187,6
109 վերևից	18	14,26, 4,39, 164,56, 773,9	14,73, 1,60, 168,09, 763,4
109 ներքևից	2	41,9, 46,88, 1383,1	42,37, 44,09, 1338,9
112 »	3	100 գ	200 գ
114 »	10	267,7	267,8
114 »	13	17,5	17,6
115 վերևից	2	1,876	1,588
115 »	3	0,10206	0,102
115 »	4	10,5462	10,546
115 »	8	3,1752	3,176
115 »	9	0,20412	0,204
115 »	10	21,0924	21,092
115 »	14	14,95	13,95
115 »	16	168,7	168,07
116 »	2	18,8	18,07
116 »	4	18,57	18,65
116 ներքևից	6	Գ/բրինձ	այդ խառնուրդը
117 վերևից	5	0,79	0,793
117 »	4	92,95	72,95
117 ներքևից	4	553,74	653,74
117 »	14	Գ/Ո	Վ/Ո
120 »	10	887,9	887,14
120 »	11	312,2	312,9
120 »	8	№ 2	—
121 վերևից	4	1526,9	1528,9
202 »	16	քնելուց	քունն անցկացնելուց

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Մաուրներ—հրահանգչական նյութերի ժողովածու գիրքը, որը թարգմանված է 1937 թվին Մոսկվայում հրատարակված գրքից, հրատարակվում է որոշ փոփոխություններով ու լրացումներով։

ՀՀ Ազգային գրադարան
NL0271015

2100